$$TreeCycles\left(T_\gamma^{(n)}, 4\right) = \\ = \sum_{i_1=1}^{p-3} \sum_{i_2=i_1+1}^{p-2} \sum_{i_3=i_2+1}^{p-1} \sum_{i_4=i_3+1}^{p} \left(\psi_{\gamma,n}(i_1,i_2)\psi_{\gamma,n}(i_2,i_3)\psi_{\gamma,n}(i_3,i_4)\psi_{\gamma,n}(i_4,i_1)\right. \\ + \psi_{\gamma,n}(i_1,i_3)\psi_{\gamma,n}(i_3,i_2)\psi_{\gamma,n}(i_2,i_4)\psi_{\gamma,n}(i_4,i_1) \\ \left. + \psi_{\gamma,n}(i_1,i_2)\psi_{\gamma,n}(i_2,i_4)\psi_{\gamma,n}(i_4,i_3)\psi_{\gamma,n}(i_3,i_1)\right)$$

Число циклов определяется по битовой последовательности вектора связи узла $t_{\gamma}^{(n)}$. Время работы алгоритма подсчета числа циклов по данной формуле равна $O(p^4)$.

Будем говорить, что между узлами x_1 и x_2 сети $G_{p,\Gamma}$ имеется *связь длины 2*, если существует простая цепь длины 2 из узла x_1 в x_2. Обозначим через $|E_2\left(M_{\gamma}^{(n)}\right)|$ - число связей длины 2 в кластере $M_{\gamma}^{(n)}$.

Утверждение 1. $\left|\mathrm{E}_2\left(M_{\gamma}^{(n)}\right)\right| = \sum_{i=1}^{p}\left|\mathrm{E}_2\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right| +$

$$+\sum_{\substack{i,j,k=1\\ i<j<k}}^{p}\left(\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(j,k)+\psi_{\gamma,n}(i,k)\psi_{\gamma,n}(j,k)+\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(i,k)\right)p^{3(\gamma-1)}$$

$$+\sum_{i,j=1}^{p}2\left[\psi_{\gamma,n}(i,j)\left(\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right|+\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right|\right)p^{(\gamma-1)}\right]$$

$$+\sum_{i,j=1}^{p}\left[\psi_{\gamma,n}(i,j)p^{2(\gamma-1)}(p^{(\gamma-1)}-1)\right] \quad (4)$$

где $l=(n-1)p^{\gamma}$.

Доказательство. Доказательство проведем индукцией по уровням иерархии $\gamma, 1\le\gamma\le\Gamma$.

Пусть $\gamma=1$. Связи длины 2 между узлами кластера $\mathrm{M}_1^{(n)}$ являются связями длины 2 между p узлами и их число определяется по вектору связи вершины $t_1^{(n)}$ (числу соединений длины 2 в $T_1^{(n)}$),

$$\left|\mathrm{E}_2\left(M_1^{(n)}\right)\right| = \sum_{\substack{i,j,k=1\\ i<j<k}}^{p}(\psi_{1,n}(i,j)\psi_{1,n}(j,k)+\psi_{1,n}(i,k)\psi_{1,n}(j,k)$$
$$+\psi_{1,n}(i,j)\psi_{1,n}(i,k)).$$

Пусть $\gamma>1$ и выражение (4) верно для кластеров уровня $\gamma-1$. Новые связи длины 2 между узлами кластера $\mathrm{M}_{\gamma}^{(n)}$появляются за счет появления соединений длины 2 между поддеревьями из множества $S(T_{\gamma}^{(n)})$. Доказательство утверждения 6 для кластеров уровня γ следует из ниже перечисленных вариантов.



Рис.2. Формы соединений между поддеревьями множества $S(T_\gamma^{(n)})$, приводящие к связям длины 2 между узлами кластера $\mathrm{M}_\gamma^{(n)}$.

1. Пусть поддеревья $S_i\left(T_\gamma^{(n)}\right)$, $S_j\left(T_\gamma^{(n)}\right)$ и $S_k\left(T_\gamma^{(n)}\right)$ непосредственно соединены и $\psi_{\gamma,n}(i,j)=1$, $\psi_{\gamma,n}(j,k)=1$ (рис.2 (а)). Тогда добавляется $p^{3(\gamma-1)}$ новых путей длины 2:

$$\sum_{\substack{i,j,k=1\\ i<j<k}}^{p}(\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(j,k)+\psi_{\gamma,n}(i,k)\psi_{\gamma,n}(j,k)$$
$$+\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(i,k))p^{3(\gamma-1)}\ . \qquad (5)$$

2. Пусть 2 вложенных поддерева $S_i(T_\gamma^{(n)}), S_j(T_\gamma^{(n)})$ непосредственно соединены и поддерево $S_i\left(T_\gamma^{(n)}\right)$ имеет ребро e (рис.2 (б)). Тогда каждая вершина из $S_j(T_\gamma^{(n)})$ образует с e путь длины 2:

$$2\sum_{\substack{i,j=1\\ i<j}}^{p}\left[\psi_{\gamma,n}(i,j)\left(\left|E\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right|+\left|E\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right|\right)p^{(\gamma-1)}\right]. \qquad (6)$$

3. Пусть 2 вложенных поддерева $S_i(T_\gamma^{(n)}), S_j(T_\gamma^{(n)})$ непосредственно соединены (рис.2 (в)). Тогда каждая вершина из $S_i(T_\gamma^{(n)})$ образует с каждой парой вершин из $S_j(T_\gamma^{(n)})$ путь длины 2:

$$\sum_{\substack{i,j=1\\ i<j}}^{p}\left[\psi_{\gamma,n}(i,j)p^{2(\gamma-1)}(p^{(\gamma-1)}-1)\right]. \qquad (7)$$

Утверждение 1 доказано.

Рассмотрим алгоритм подсчета по приведенной формуле (4). Числа $\left|E\left(M_\gamma^{(i)}\right)\right|$, $1\le\gamma\le\Gamma$, $1\le i\le p^{\Gamma-\gamma}$ вычисляются перед началом работы алгоритма, что требует $O\left(p^\Gamma p\right)=O(Np)$ времени ([4], утверждение 3).

Обозначим через $F(\gamma)$, сложность вычисления $\left|E_2\left(M_\gamma^{(n)}\right)\right|$, $1 \le n \le p^{\Gamma-\gamma}$. Время вычисления выражения (5) O(p^3), а (6) и (7) $O(p^2)$. Таким образом время работы алгоритма подсчета числа связей длины 2 по выражению (4) удовлетворяет следующему рекуррентному соотношению:

$$\begin{cases} F(\gamma) = 0, & \gamma = 0 \\ F(\gamma) = p^3 + p^2 + pF(\gamma - 1), & \gamma > 0 \end{cases}$$

Решив его, получаем $F(\gamma) = (p^2 + p^3)(p^\gamma - 1)/(p - 1)$. При $\gamma = \Gamma$, $O\left(p^{\Gamma+2}\right) = O(Np^2)$. С учетом вычислений $\left|\mathrm{E}\left(M_\gamma^{(i)}\right)\right|$, время работы алгоритма подсчета $\left|E_2\left(M_\gamma^{(i)}\right)\right|$ равно $O(Np^2) + O(Np) = O(Np^2)$.

Утверждение 2. Пусть $T_{p,k}$ - дерево связи блочно-иерархической сети $G_{p,k}$ и $Cycles(\mathrm{M}_\gamma^{(n)}, 4)$ число циклов длины 4 между узлами кластера $\mathrm{M}_\gamma^{(n)}$. Тогда

$$\begin{aligned} Cycles\left(\mathrm{M}_\gamma^{(n)}, 4\right) = \sum_{e=1}^{p} Cycles(\mathrm{M}_{\gamma-1}^{(l+e)}, 4) + TreeCycles\left(T_\gamma^{(n)}, 4\right) p^{4(\gamma-1)} + \\ + \sum_{\substack{i,j,k=1\ldots p \\ i<j<k}} 2\Big(\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(j,k)\psi_{\gamma,n}(i,k)\Big(\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right| + \left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right| \\ + \left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+k)}\right)\right|\Big)\Big) p^{2(\gamma-1)} + \\ + \sum_{\substack{i,j=1\ldots p \\ i<j}} \psi_{\gamma,n}(i,j)\left(\left|\mathrm{E}_2\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right| + \left|\mathrm{E}_2\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right|\right) p^{(\gamma-1)} \\ + 2\psi_{\gamma,n}(i,j)\left(\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right|\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right|\right) + \\ + \sum_{\substack{i,j,k=1\ldots p \\ i<j<k}} \Bigg((\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(j,k) + \psi_{\gamma,n}(i,k)\psi_{\gamma,n}(k,j) \\ + (\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(i,k))\frac{p^{3(\gamma-1)}\left(p^{(\gamma-1)} - 1\right)}{2}\Bigg) + \\ + \sum_{\substack{i,j=1\ldots p \\ i<j}} \left(\psi_{\gamma,n}(i,j)\left(\frac{p^{(\gamma-1)}\left(p^{(\gamma-1)} - 1\right)}{2}\right)^2\right) \end{aligned} \tag{8}$$

где $l = (n-1)p^\gamma$, $1 \le n \le p^{\Gamma-\gamma}$.

Доказательство. Доказательство проведем индукцией по уровням иерархии $\gamma, 1 \le \gamma \le \Gamma$.

Пусть $\gamma = 1$. Множество циклов между узлами кластера $\mathrm{M}_{\gamma}^{(n)}$ состоит только из циклов между p узлами, а количество циклов определяется по вектору связи вершины $t_1^{(n)}$, т.е. $Cycles\left(\mathrm{M}_{\gamma}^{(n)}, 4\right) = TreeCycles\left(T_{\gamma}^{(n)}, 4\right)$.

Пусть $\gamma > 1$ и теорема 2 верна для кластеров уровня $\gamma - 1$. Докажем справедливость теоремы для кластеров уровня γ. Рассмотрим, какие новые циклы появляются при переходе от уровня $\gamma - 1$ к уровню γ. Новые циклы в кластере могут появиться при соединении его вложенных кластеров, что соответствует соединению поддеревьев множества $S(T_{\gamma}^{(n)})$.



Рис. 3. Формы соединений между поддеревьями множества $S(T_{\gamma}^{(n)})$, приводящие к циклам длины четыре в кластере $G_{\gamma}^{(n)}$.

Рассмотрим варианты появления циклов длины 4 в кластере $G_{\gamma}^{(n)}$.

1. Пусть поддеревья $S_i\left(T_{\gamma}^{(n)}\right)$, $S_j\left(T_{\gamma}^{(n)}\right)$ и $S_k\left(T_{\gamma}^{(n)}\right)$ непосредственно соединены и $\psi_{\gamma,n}(i,j) = 1$, $\psi_{\gamma,n}(j,k) = 1$ *(рис.3 (а))*. Если существует поддерево $S_l\left(T_{\gamma}^{(n)}\right)$ такое, что $\psi_{\gamma,n}(k,l) = 1$ и $\psi_{\gamma,n}(i,l) = 1$, то формируется $p^{4(\gamma-1)}$ циклов. Число таких поддеревьев равно $TreeCycles\left(T_{\gamma}^{(n)}, 4\right)$, следовательно число циклов равно

$$TreeCycles\left(T_{\gamma}^{(n)}, 4\right) p^{4(\gamma-1)}. \qquad (9)$$

2. Пусть три вложенных поддерева $S_i(T_{\gamma}^{(n)}), S_j(T_{\gamma}^{(n)})$ и $S_k(T_{\gamma}^{(n)})$ непосредственно соединены и кластер $\mathrm{M}_{\gamma-1}^{(l+i)}$, соответствующий

поддереву $S_i(T_\gamma^{(n)})$, содержит ребро e *(рис.3 (г))*. Тогда каждая пара вершин из $S_j(T_\gamma^{(n)})$ и $S_k(T_\gamma^{(n)})$ образует с e цикл, т.е. добавляется $p^{2(\gamma-1)}$ новых циклов. Число таких циклов равно

$$\sum_{\substack{i,j,k=1\dots p\\ i<j<k}} \left(2 * \psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(j,k)\psi_{\gamma,n}(i,k)\left(\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right| + \left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right| + \left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+k)}\right)\right|\right)\right) p^{2(\gamma-1)}. \quad (10)$$

3. Пусть 2 вложенных поддерева $S_i(T_\gamma^{(n)}), S_j(T_\gamma^{(n)})$ непосредственно соединены и поддерево $S_j\left(T_\gamma^{(n)}\right)$ имеет соединение длины 2 *(рис.3 (б))*. Тогда каждая вершина из $S_i(T_\gamma^{(n)})$ образует с e цикл, всего $p^{(\gamma-1)}$ циклов, т.е. число таких циклов равно

$$\sum_{\substack{i,j=1\dots p\\ i<j}} \left(\psi_{\gamma,n}(i,j)\left(\left|\mathrm{E}_2\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right| + \left|\mathrm{E}_2\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right|\right) p^{(\gamma-1)}\right). \quad (11)$$

4. Пусть 2 вложенных поддерева $S_i(T_\gamma^{(n)}), S_j(T_\gamma^{(n)})$ непосредственно соединены и поддеревья $S_i\left(T_\gamma^{(n)}\right)$ и $S_j\left(T_\gamma^{(n)}\right)$ содержат ребро *(рис.3 (в)*. Число таких циклов равно

$$\sum_{\substack{i,j=1\dots p\\ i<j}} \left(\psi_{\gamma,n}(i,j)2\left(\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+i)}\right)\right|\left|\mathrm{E}\left(M_{\gamma-1}^{(l+j)}\right)\right|\right)\right). \quad (12)$$

5. Пусть вложенные поддеревья $S_i\left(T_\gamma^{(n)}\right)$ и $S_j(T_\gamma^{(n)})$, а также $S_j\left(T_\gamma^{(n)}\right)$ и $S_k(T_\gamma^{(n)})$ непосредственно соединены (рис.*3 (д)),* число таких циклов равно

$$\sum_{\substack{i,j,k=1\dots p\\ i<j<k}} \left(\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(j,k) + \psi_{\gamma,n}(i,k)\psi_{\gamma,n}(k,j) + (\psi_{\gamma,n}(i,j)\psi_{\gamma,n}(i,k)\right) \frac{p^{3(\gamma-1)}\left(p^{(\gamma-1)}-1\right)}{2}. \quad (13)$$

6. Пусть 2 вложенных поддерева $S_i(T_\gamma^{(n)}), S_j(T_\gamma^{(n)})$ непосредственно соединены(рис.3 (е)), число таких циклов равно

$$\sum_{\substack{i,j=1\ldots p\\ i<j}} \left(\psi_{\gamma,n}(i,j)\left(\frac{p^{(\gamma-1)}\left(p^{(\gamma-1)}-1\right)}{2}\right)^2\right). \qquad (14)$$

Утверждение 2 доказано.

Для сети $G_{p,\Gamma}$ будем иметь $Cycles\left(\mathrm{G}_{\mathrm{p},\Gamma},4\right) = Cycles\left(\mathrm{M}_{\Gamma}^{(1)},4\right)$.

Рассмотрим алгоритм подсчета по приведенной формуле (8). Как было рассмотрено выше, все $\left|E_2\left(M_{\gamma}^{(i)}\right)\right|$, а следовательно и все $\left|\mathrm{E}\left(M_{\gamma}^{(i)}\right)\right|$, $1 \le \gamma \le \Gamma$, $1 \le i \le p^{\Gamma-\gamma}$, вычисляются перед началом работы алгоритма, что требует $O(Np^2)$. Время вычисления выражения (9) $\mathrm{O}(p^4)$, выражения (11), (12) и (14) $\mathrm{O}(p^2)$, а для вычисления выражения (10) и (13) $\mathrm{O}(p^3)$. Таким образом время работы алгоритма вычисления числа циклов длины 4 по выражению (8) удовлетворяет следующему рекуррентному соотношению:

$$\begin{cases} F(\gamma) = 0, & \gamma = 0 \\ F(\gamma) = p^2 + p^3 + p^4 + pF(\gamma-1), & \gamma > 0, \end{cases}$$

где через $F(\gamma)$, обозначена сложность $Cycles\left(\mathrm{M}_{\gamma}^{(n)},4\right)$, $1 \le n \le p^{\Gamma-\gamma}$. Решив его, получаем $F(\gamma) = p^2(p^{\gamma}-1)/(p-1) + \gamma p^2(p^3-1)/(p-1)$. Для уровня $\gamma = \Gamma$ имеем $O\left(p^{\Gamma+1} + \Gamma p^4\right) = O(Np + log_p Np^4)$. С учетом вычислений $\left|E_2\left(M_{\gamma}^{(i)}\right)\right|$, время работы алгоритма подсчета $Cycles\left(\mathrm{G}_{\mathrm{p},\Gamma},4\right)$ равно $O(Np^2) + O\left(Np + log_p Np^4\right) = O\left(Np^2 + log_p Np^4\right)$. Заметим, что индекс ветвления p является константой и определяется перед вычислением, что дает оценку $\mathrm{O}\left(\mathrm{N} + \log_{\mathrm{p}}\mathrm{N}\right)$ для всего алгоритма.

Существуют универсальные формулы для числа циклов заданной длины k, в которых подсчитываются все замкнутые маршруты длины k для различных подмножеств вершин графа [6]. Само перечисление указанных подмножеств осуществляется со сложностью $O(n^k)$ или $O(n^{k-1})$, в данном случае $\mathrm{O}(N^4)$.

	Размер сети	Количество циклов порядка 4	Время работы переборного алгоритма	Время работы алгоритма с использованием дерева связи
$\mathrm{G}_{2,5}$	32	102795	100мс	17мс
$\mathrm{G}_{2,7}$	128	6795521	8с, 800мс	18мс
$\mathrm{G}_{2,10}$	1 024	$\approx 33.88 * 10^9$	1ч	20мс
$\mathrm{G}_{2,20}$	1 048 576	$\approx 9 * 10^{18}$	-	2с, 965мс
$\mathrm{G}_{2,25}$	33 554 432		-	1м, 23с, 465мс

$G_{3,15}$	14 348 907		-	27с,46мс
$G_{5,11}$	48 828 125		-	4м, 13с, 244мс

Таблица 1. Время вычисления числа циклов длины 4 для регулярных блочно - иерархических сетей $G_{p,Г}$, при различных p и Г

Таким образом, в таблице 1 приведены результаты вычислений алгоритма подсчета циклов порядка четыре, полученные с использованием предложенного алгоритма и переборного алгоритма. Как видно из таблицы, использование данного алгоритма позволяет исследовать сети, число узлов которых существенно больше 10^7.

Литература

1. *Albert R, Barab´asi A-L* Statistical mechanics of complex networks. Rev. Mod. Phys. 74: 47–97. *(2002).*

2.*V.A. Avetisov, A.V. Chertovich, S.K. Nechaev, O.A. Vasilyev.* On spectra of random hierarchical networks. Stat. Mech:Theory and Exper. 07 07008 (2009).

3.*В.А. Аветисов, А.Х. Бикулов, О. А. Васильев, С. К. Нечаев, А. В Чертович.* О некоторых физических приложений случайных иерархических матриц. ЖЭТФ 136(3) 566 (2009); *V. A. Avetisov, A. Kh. Bikulov, O. A. Vasilyev, S. K. Nechev, and A. V. Chertovich,* JETP, 109(3) 485 (2009).

4. *С. Аветисян, А. Кочарян «*О регулярных блочно-иерархических сетях и их свойствах» ...Ученные записки 1(27) , 2013г., АрГУ.

5. *S. Avetisyan, A.Kocharyan.* The System of Generation of Random Networks and Computation of Their Topological Properties. 9-th International Conference of Computer Science and Information Technologies (CSIT-2013), Yerevan 2013, pp. 381-384.

6. *Воропаев А.Н.,* Вывод явных формул для подсчёта циклов фиксированной длины в неориентированных графах. // Информационные процессы, Том 11, № 1, 2011, стр. 90–113.

Չորս երկարությամբ ցիկլերի մասին ռեգուլյար բլոկ-հիերարխիկ ցանցերում

Ս. Ավետիսյան, Ա.Քոչարյան

Ամփոփում

Տվյալ աշխատանքը հանդիսանում է [4]–ի շարունակություն, որում դիտարկվել է ռեգուլյար բլոկ-հիերարխիկ ցանցերի դասը, և նկարագրվել են նոր ալգորիթմներ, որոնք թույլ են տվել էապես մեծացնել հետազոտվող ցանցերի չափը: Տվյալ աշխատանքում նկարագրված է ռեգուլյար բլոկ-հիերարխիկ ցանցերի դասում 4 երկարությամբ ցիկլերի

քանակի հաշվարկման ալգորիթմ: Ի տարբերություն ցիկլերի քանակի հաշվարկման հայտնի ալգորիթմների [6], դիտարկվող դասի ցանցերի համար ալգորիթմը ավելի էֆֆեկտիվ է ինչպես արագագործության, այնպես էլ համակարգչի օպերատիվ հիշողության օգտագործման տեսանկյունից: Ալգորիթմը իրականացված է մեր կողմից մշակված համակարգում [5], որը ուղղված է պատահական բլոկ-հիերարխիկ ցանցերի էֆֆեկտիվ իմիտացիային:

On Cycles of Length Four in Regular Block-Hierarchical Networks

S.Avetisyan, A.Kocharyan

Summary

The current work is a continuation of the work [4], in which is considered a class of regular Block-Hierarchical networks, and the new algorithms of computation of the network properties are described. The current work describes an algorithm of computation the number of cycles of length 4 in the class of regular Block-Hierarchical networks. In contrast to the known algorithms of calculating the number of cycles [6], the algorithm for considered class of networks is effective both in terms of time, and the operative memory it uses. The algorithm is implemented in the system developed by us [5], which is oriented towards an effective simulation of random Block-Hierarchical networks.

ՀՏԴ 371.31:51 *Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա*

ԹԵՈՐԵՄՆԵՐ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱԶՄԱՆԿՅԱՆ ԴԻՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռ. Առաքելյան

Քառակուսի վանդակներով թղթի վրա դժվար չէ կառուցել քառակուսի այնպես, որ նրա գագաթները գտնվեն թղթի ուղիղների հատման կետերում, այսուհետ մենք դրանց կանվանենք թղթի հանգույցներ: Բնականորեն հարց է ծագում՝ կարելի՞ է արդյոք կառուցել կանոնավոր եռանկյուն այնպես, որ նրա գագաթները ևս պատկանեն թղթի հանգույցներին:



Նկ. 1

Թեորեմ 1: Գոյություն չունի կանոնավոր եռանկյուն, որի գագաթները գտնվում են քառակուսի վանդակներով թղթի հանգույցներում:

Ապացուցում: Ապացույցը կատարենք հակասող ընդունելիության մեթոդով: Թող եռանկյուն ABC այդպիսինն է: Կատարենք նշանակում՝ $LKBN$ ուղղանկյան գունավոր եռանկյունների մակերեսները նշանակենք տառերով՝ S_1, S_2, S_3 (նկ. 1): Այդ թվերը ռացիոնալ են, որովհետև 3 ուղղանկյուն եռանկյունների կողմերը ամբողջ թվեր են: Հավասարակողմ ABC եռանկյան կողմի քառակուսին՝ a^2-ն, ևս ռացիոնալ թիվ է (որպես ամբողջ էջերով ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգ): Հաշվենք եռանկյան մակերեսը.

$$S_{ABC} = 0,5 \cdot a^2 \cdot \sin 60^\circ = a^2\sqrt{3}/4:$$

Ստացված թիվը իռացիոնալ է: Բայց մյուս կողմից

$$S_{ABC} = S_{LKBN} - S_1 + S_2 + S_3 \ :$$

Հավասարության աջ մասում բոլոր մեծությունները ռացիոնալ թվեր են, ստացանք հակասություն, որն էլ ապացուցում է թեորեմը:

Թեորեմ 2: $sin 36^\circ$-ը իռացիոնալ թիվ է:

Ապացուցում. Թող $ABCDE$-ն կանոնավոր հնգանկյուն է, հետևաբար

$\angle EAD = \angle DAC = \angle CAB = 36^\circ$:

$\Delta ABF \sim \Delta ACB$, որտեղից



Նկ. 2

$$\frac{a}{x}=\frac{a+x}{a}\Rightarrow a^2=ax+x^2 \qquad x^2+ax-a^2=0$$

$$x=\ a\sqrt{5}-a\ \Big/2=0,5\cdot a\ \ \sqrt{5}-1\ :$$

$$0,5\cdot a:x=\cos 36^\circ$$

$$cos\,36^\circ=\frac{0,5a}{x}=\frac{0,5a}{0,5a\ \ \sqrt{5}-1}=\frac{1}{\sqrt{5}-1}=\frac{\sqrt{5}+1}{4}:$$

$$\sin^2 36^0=1-\cos^2 36^\circ=1-\left(\frac{\sqrt{5}+1}{4}\right)^2=1-\frac{6+2\sqrt{5}}{16}=1-\frac{3+\sqrt{5}}{8}=\frac{8-3-\sqrt{5}}{8}=\frac{5-\sqrt{5}}{8};$$

$$\sin 36^\circ=\sqrt{\frac{5-\sqrt{5}}{8}}=\frac{1}{2}\cdot\sqrt{\frac{5-\sqrt{5}}{2}} \qquad 1\ :$$

1 -ից երևում է, որ $\sin 36^\circ$-ն իռացիոնալ թիվ է:

Թեորեմ 3: Եթե $ABCDE$ կանոնավոր հնգանկյան DC կողմը ռացիոնալ թիվ է, ապա ADC եռանկյան մակերեսը իռացիոնալ թիվ է (նկ. 2):

Ապացուցում.

$$S_{ADC}=\frac{1}{2}AD\cdot AC\cdot\sin 36^\circ=\frac{1}{2}AC^2\cdot\sin 36^\circ:$$

$$AC=a+x=a+\frac{a\sqrt{5}-a}{2}=\frac{a\ \ 1+\sqrt{5}}{2};$$

$$S_{ADC}=\frac{1}{2}\left[\frac{a\ \ 1+\sqrt{5}}{2}\right]^2\cdot\sin 36^\circ=\frac{a^2}{8}\ \ 6+2\sqrt{5}\ \ \cdot\sin 36^\circ=\frac{a^2}{4}\ \ 3+\sqrt{5}\ \ \cdot\frac{1}{2}\cdot\sqrt{\frac{5-\sqrt{5}}{2}}=$$

$$=\frac{a^2}{8}\cdot\sqrt{\frac{14+6\sqrt{5}\ \ \ 5-\sqrt{5}}{2}}=\frac{a^2}{8}\cdot\sqrt{\frac{40+16\sqrt{5}}{2}}=\frac{a^2}{8}\cdot\sqrt{\frac{8\ \ 5+2\sqrt{5}}{2}}=\frac{a^2}{4}\cdot\sqrt{5+2\sqrt{5}}:\ \ 2$$

Քանի որ 2 -ի մեջ a-ն ռացիոնալ է, ապա եռանկյան մակերեսը իռացիոնալ է:

Թեորեմ 4. Գոյություն չունի կանոնավոր հնգանկյուն, որի գագաթները գտնվում են քառակուսի վանդակներով թղթի հանգույցներում:

Ապացուցում. Ենթադրենք ընդհակառակը, այսինքն գոյություն ունի կանոնավոր հնգանկյուն, որը բավարարում է թեորեմի պայմանին:

Հնարավոր են հնգանկյան դասավորության երկու դեպք:

Դեպք I. Կանոնավոր հնգանկյան կողմերից մեկը պատկանում է քառակուսի թղթի զուգահեռ ուղիղներից մեկին (նկ. 2): Համաձայն թեորեմի պայմանի հնգանկյան A գագաթը նշված DC կողմից հեռացված է ամբողջ թվով արտահայտվող միավորով:

$S_{ADC} = 0,5 \cdot a \cdot h$; որտեղ a -ն և h-ը ամբողջ թվեր են, հետևաբար S_{ADC} ռացիոնալ թիվ է: Բայց ստացվածը հակասում է թեորեմ 2-ին: Հակասությունը ապացուցում է թեորեմ 4-ի ճշմարիտ լինելը:

Դեպք II. Ենթադրենք կանոնավոր հնգանկյունը թերթի վրա ունի (նկ. 3)- ի դիրքը:

Կանոնավոր հնգանկյան կողմը նշանակենք a-ով: Դիտարկենք COD եռանկյունը:



նկ. 3

$$DC = a = 2R \cdot \sin\ 180^{\circ}/5\ = 2R \cdot \sin 36^{\circ}\quad 3\ ,$$

$$DO = CO = R$$

$$r/R = \cos 36^{\circ} \Rightarrow r = R \cdot \cos 36^{\circ};$$

$$S_{\Delta COD} = 0,5 \cdot a \cdot r =$$

$$= 0,5 \cdot 2R \cdot \sin 36^{\circ} \cdot R \cos 36^{\circ} = 0,5 \cdot R^2 \cdot \sin 72^{\circ}:$$

ΔEMD-ից $ED^2 = a^2 = EM^2 + MD^2$,

բայց EM և MD-ն արտահայտվում են ամբողջ թվերով, հետևաբար a^2 - ին ևս ամբողջ թիվ է:

3 - ից $R=\dfrac{a}{2\sin 36^{o}}\Rightarrow R^{2}=\dfrac{a^{2}}{4\sin^{2}36^{o}}$:

$$S_{\Delta COD}=\frac{1}{2}\cdot\frac{a^{2}}{4\cdot\sin^{2}36^{o}}\cdot 2\sin 36^{o}\cdot\cos 36^{o}=\frac{a^{2}\cos 36^{o}}{4\cdot\sin 36^{o}}=\frac{a^{2}}{4}\cdot\mathrm{ctg}36^{o}:$$

a^{2}-ն ամբողջ թիվ է: Ապացուցենք, որ $\mathrm{ctg}36^{o}$-ը իռացիոնալ թիվ է:

$$\mathrm{ctg}36^{o}=\frac{\cos 36^{o}}{\sin 36^{o}}=\frac{\sqrt{5}+1\,/4}{1/2\cdot\sqrt{5-\sqrt{5}\,/2}}=\frac{\sqrt{2}}{2}\cdot\frac{\sqrt{6+2\sqrt{5}}}{\sqrt{5-\sqrt{5}}}=\frac{\sqrt{3+\sqrt{5}}}{\sqrt{5-\sqrt{5}}}=\sqrt{\frac{3+\sqrt{5}}{5-\sqrt{5}}}=$$

$$=\sqrt{\frac{3+\sqrt{5}\quad 5+\sqrt{5}}{20}}=\sqrt{\frac{20+8\sqrt{5}}{20}}=\sqrt{\frac{5+2\sqrt{5}}{5}}=\sqrt{1+\frac{2\sqrt{5}}{5}}:$$

$S_{COD}=a^{2}/4\cdot\sqrt{1+2\sqrt{5}/5}$; $S_{A\ B\ C\ D\ E}=5a^{2}/\ 4\sqrt{\ 1\ \sqrt{+}/2}\quad 5\ \ 5$, որը իռացիոնալ թիվ է:

Մյուս կողմից, նկ.2 - ից երևում է, որ կանոնավոր հնգանկյան մակերեսը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով.

$$S_{ABCDE}=S_{NKIM}-\ S_{1}+S_{2}+S_{3}+S_{4}+S_{5}\ :\quad 5$$

Փակագծի ներսում գրառված մակերեսներն արտահայտվում են ռացիոնալ թվերով՝ $KLMN$ ուղղանկյան կողմերը, S_{1},S_{2},S_{3},S_{5} ուղղանկյան եռանկյունների էջերն, ինչպես նաև S_{4} սեղանի հիմքերը և բարձրությունն, ամբողջ թվեր են:

Հետևաբար նշված պատկերների մակերեսները ռացիոնալ թվեր են: Այսպիսով, 4 հավասարության ձախ մասը իռացիոնալ թիվ է (տես 5 հաշվումները), իսկ աջ մասը՝ ռացիոնալ:

Ստացված հակասությունն ապացուցում է, որ կանոնավոր հնգանկյուն, որի գագաթները գտնվում են վանդակավոր թղթի հանգույցներում, գոյություն չունի:

Այժմ դիտարկենք հաջորդ բազմանկյունը:

Թեորեմ 5. Գոյություն չունի կանոնավոր վեցանկյուն, որի գագաթները գտնվում են քառակուսի վանդակներով թղթի հանգույցներում:



Նկ. 4

Ապացուցում: Ենթադրենք ընդհակառակն, այսինքն, գոյություն ունի կանոնավոր վեցանկյուն, որը բավարարում է թեորեմի պայմանին:

Հնարավոր են վեցանկյան դասավորության երկու դեպք:

Դեպք I. 6 - անկյունը ունի նկ. 4-ի տեսքը:

Թող $ABCDEF$ -ն որոնելի 6 - անկյունն է:

$S_{ABCDEF} = S_{ABDE} + 2 \cdot S_{BCD}$: 6 - անկյան կողմի քառակուսին՝ a^2 -ն ամբողջ թիվ է:



նկ. 5

$$S_{BCD} = \frac{a^2}{2} \cdot \sin 120^\circ = \frac{a^2}{2} \cdot \cos 30^\circ = \frac{a^2}{2} \cdot \frac{\sqrt{3}}{2} = \frac{a^2\sqrt{3}}{4}:$$

Ստացանք իռացիոնալ թիվ:

$S_{ABCDEF} = MP \cdot PN - 4 \cdot S_{CDN}$:

Այս հավասարության աջ մասը ռացիոնալ թիվ է:

$$S_{ABCDEF} = S_{AEDB} + 2 \cdot S_{AFM} = S_{AEDB} + 2 \cdot \frac{a^2}{2} \cdot \frac{\sqrt{3}}{2} = S_{AEDB} + \frac{a^2\sqrt{3}}{2}:$$

Հավասարության աջ մասը իռացիոնալ թիվ է: Ստացվեց հակասություն, որը ապացուցում է թեորեմը:

Դեպք II. Կանոնավոր 6-անկյունն ունի նկ. 5-ի տեսքը:

$$\mathrm{tg}\ \alpha + \beta = \mathrm{tg}\ 180^\circ - 120^\circ = \mathrm{tg}60^\circ;\ \frac{\mathrm{tg}\alpha + \mathrm{tg}\beta}{1 - \mathrm{tg}\alpha \cdot \mathrm{tg}\beta} = \sqrt{3}; \qquad \frac{m/n + q/p}{1 - mq/np} = \sqrt{3};$$

որտեղ m, n, p, q -ն բնական թվեր են.

$\frac{mp + nq}{np - mq} = \sqrt{3}$: Այս հավասարության ձախ մասը ռացիոնալ է, իսկ աջ մասը՝ իռացիոնալ: Ստացված հակասությունն ապացուցում է թեորեմը:

Դպրոցական երկրաչափության դասընթացում կանոնավոր բազմանկյուններից հիմնականում ուսումնասիրում են եռանկյունը, քառակուսին, հնգանկյունը և վեցանկյունը, որոնց մասին էլ տեղադրված են հետազոտությունները:



նկ. 6

Այժմ խոսենք կանոնավոր n-անկյան մասին նույն տեսանկյունից:

Կանոնավոր բազմանկյունը տրոհենք հավասարասրուն եռանկյունների այնպես, ինչպես պատկերված է նկ. 6-ում, որոնք ունեն մակերես՝

$$S_\Delta = 0{,}5 \cdot a^2 \sin\ 360^\circ/n\ ,\ n \geq 3,\ n \in N:$$

Բազմանկյան մակերեսը հավասար է

նշված n եռանկյունների մակերեսների գումարին: S_{Δ} արտահայտության մեջ a^2 ամբողջ թիվ է, հետևաբար բազմանկյան մակերեսի ռացիոնալ լինելը կապված է $\sin 360^{\circ}/n$ արտահայտության արժեքի հետ:

Եթե $ABCD$ քառակուսու մակերեսից հանենք $DA_{10}A_{11}A_nA_1$ բազմանկյան մակերեսի քառապատիկը, ապա կստանանք $A_1A_2A_3...A_n$ բազմանկյան մակերեսը՝

$$S_{ABCD} - 4S_{DA_{10}A_{11}A_nA_1} = S_{A_1A_2A_3...A_n} \qquad 6$$

6 հավասարության ձախ մասի արժեքը ռացիոնալ է, հետևաբար եթե $A_1A_2A_3...A_n$ բազմանկյան մակերեսը ևս ռացիոնալ է, ապա կանոնավոր բազմանկյուն թղթի հանգույցներում գտնվող գագաթներով գոյություն ունի:

Այսպիսով կանոնավոր բազմանկյան կառուցման հնարավոր լինելը կապված է բազմանկյան մակերեսի ռացիոնալ լինելու հետ, իսկ վերջինս կախված է $\sin 360^{\circ}/n$ արտահայտության արժեքից:

Մասնավոր դեպքում, երբ $n = 4$, կստանանք $\sin 360^{\circ}/4 = \sin 90^{\circ} = 1$, քառակուսի, իսկ $n = 12$ դեպքում կստանանք $\sin 360^{\circ}/12 = \sin 30^{\circ} = 1/2$, տասներկու կողմ ունեցող կանոնավոր բազմանկյուն՝ նկ. 6:

Գրականություն

1. Г.Радемахер, О.Теплиц, Числа и фигуры, изд. „Наука’’, М., 1968
2 А.Ероров, Решетки и правильные многоугольники. Квант, N12, 1974
3. index. files/Estrella_3.htm

Теоремы о расположении правильного многоугольника

Р.Аракелян

Резюме

В статье рассматривается задача построения правильного многоугольника, вершины которого расположены в углах бумаги в клетку. Доказываются соответственные теоремы о правильном треугольнике, пятиугольнике и шестиугольнике. Делается обобщение о правильном n-угольнике.

Доказывается, что такое построение возможно для таких n-угольников, для которых значение $\sin 360^{\circ}/n$ является рациональным числом.

Theorems of an Arrangement of the Regular Polygon

R. Arakelyan

Summary

The article considers the task of building regular polygon the tips of which are situated in the angles of cross section paper. Homologous theorems on regular triangles, pentagons and hexagons are proved as well. A summary is made concerning a regular polygon having n-angle.

It is proved that such a construction is possible for those n-angles $\sin 360^{\circ}/n$ of which is rational number.

ՀՏԴ 681 3 Ինֆորմատիկա

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՎՐԱ

Վ.Առստամյան, Ռ.Ավետիսյան

Արդի հասարակության հարստության հիմնական դրսևորումը նրա անդամների ինտելեկտուալ մակարդակն է, ինչի համար պետք է փնտրել և գտնել մասնագետների պատրաստման նոր և արդյունավետ ձևեր ու եղանակներ, օգտագործելով տեղեկատվության փոխանցման և գիտելիքների ձեռք բերման նոր հնարավորությունները, ինչով իսկ կբարձրացվի կրթական գործունեության էֆեկտիվությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսանողին հնարավորություն կտան սովորել և որակավորվելու աշխարհի ցանկացած համալսարանում, դասավանդողին՝արագ ծանոթանալու մասնագիտական առավել հետաքրքիր նորություններին, ինչն էլ առանց ինքնուսուցման գործոնի դժվար է պատկերացնել:

Տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս օպտիմալ ձևով օգտագործել ուսանողի և դասավանդողի ժամանակը:Այսպես, ուսուցման հեռավար եղանակի օգտագործումը թույլ է տալիս ինքնուրույն յուրացնել ծրագրի համապատասխան բաժինները, դասախոսի հետ շփվել էլեկտրոնային փոստի, չաթերի և ֆորումների միջոցով, առաջադրանքները կատարել առավել հարմար ժամանակահատվածում: Հայտնի է նաև, որ այդ տեխնոլոգիաները հարմար են ոչ միայն ուսումնական գործընթացի կազմակերպման համար, այլ նաև կարող են հանդիսանալ ձեռք բերված գիտելիքների ստուգման և ինքնաստուգման համալիր համակարգ [1,էջ 75-80]:

Արդի վիճակում, որպես տեղեկատվության լրացուցիչ աղբյուր, առավել հաճախ կարելի է օգտագործել դասավանդողների ինտերնետային անձնական կայքերը, էլեկտրոնային դասագրքերը, դասընթացները, գրադարանները, ամսագրերը և այլն: Դասախոսների կայքերը ուսանողների համար ծառայում են որպես տեղեկատվության աղբյուր ուսումնական գործընթացի կազմա-կերպման համար, պարունակում են տարբեր տիպի նյութեր դասախոսի կողմից դասավանդվող առարկաների վերաբերյալ, հղումներ էլեկտրոնային ռեսուրսների՝ դասագրքերի, հրապարակումների և այլ աղբյուրների վրա: Դասավանդողի էլեկտրոնային փոստն ուսանողին հնարավորություն կտա լրացուցիչ շփվել դասախոսի հետ, սակայն այդ երկխոսությունն ունի ժամանակի մեջ ընդհատ, ոչ հաստատուն բնույթ, իսկ էլեկտրոնային դասագրքերն ուսումնական գործընթացում հանդիսանում են օժանդակ տարրեր՝որոնք լրացնում է տպագրական համարժեքի բացակայությունը:

Ինտերնետ-տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր է զարգացնել տարբեր կայքերի լայնամասշտաբ օգտագործումը (որպես տեղեկատվության

լրացուցիչ աղբյուր) և բարձրացնել ուսումնական գործընթացի մասնակիցների փոխազդեցության մակարդակը:

Այստեղ կարելի է ընդգծել երեք հիմնական ֆունկցիաներ՝

• ուսանողներին ուղղված տեղեկատվության տարածում (ուսումնական նյութեր, առաջադրանքներ, հարցաթերթեր, հայտարարություններ և այլն)

• տեղեկատվության հավաքում ուսանողներից (կատարված աշխատանքներ, հարցեր, արդյունքներ և այլն)

• ուսանողների ներգրավում տեղեկատվության փնտրման, մշակման և հետազոտման գործընթացի մեջ:

Նման տեխնոլոգիաների իրականացման համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ՝

• ազատ և մատչելի ինտերնետ/ինտրանետ կապ դասավանդողի և ուսանողների համար,

• դասավանդողը պետք է ունենա կարողություններ ցանցում աշխատելու համար, պետք է ծանոթ լինի հատուկ ծրագրային փաթեթների, օգտվի մուլտիմեդիայի պատրաստի լուծումներից և տեխնոլոգիաներից:

Ընդհանրապես, դասավանդողի դերը բուհական կրթության մեջ վերջին ժամանակներս փոխվել է: Դասավանդողի հիմնական խնդիրն այսօր ոչ թէ ուսանողին տեղեկատվություն տրամադրելն է, այլ նրա ձեռք բերման և մշակման գործընթացի կազմակերպումը, ինչի համար շատ հարմար գործիք են հանդիսանում տեղեկատվական տեխնոլոգիաները: Համատեղ գործունեության հետևանքով ստացված տեղեկատվությունը դառնում է ուսանողի անձնական գիտելիքը, դասավանդողը կատարում է ուսանողին օգնողի դեր՝ ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում:

Ինքնուրույն աշխատանքը բուհում համարվում է հատուկ միջոց, որը հնարավորություն է տալիս կազմակերպելու և կառավարելու ուսանողների ինքնուրույն աշխատանքը ողջ ուսումնառության գործընթացում, ինքնակազմակերպումն և ինքնակարգապահությունը [2, էջ 338-339]:

Այս հաղորդակցության արդյունավետությունը բարձրացնելու համար դասավանդողի կայքում պետք է ներկայացվեն՝

• դասընթացի օրացուցային և թեմատիկ պլանները
• կոնսուլտացիաների ցուցակը
• պրեզենտացիոն և օժանդակ նյութերը
• տեղեկություն հետադարձ կապի ձևերի մասին
• հսկման ձևերը, աշխատանքի գնահատման սանդղակը, ընթացիկ և եզրափակիչ ստուգիչ աշխատանքների տեսակները և ժամկետները
• առաջարկվող և խորհուրդ տրվող գրականության ցանկը և ինտերնետ-հղումները:

Այսպիսով, փոխհամագործակցության տեխնոլոգիաներն ինտերնետ/ինտրանետ ցանցում թույլ են տալիս ձևավորել էլեկտրոնային հասարակություններ: Ուսումնական գործընթացում կերտվում են հաղորդակցման երեք կարևորագույն շրջանակներ՝

- դասավանդող–ուսանող
- ուսանող–ուսանող
- դասավանդող–դասավանդող:

Ծրագրային այդ լուծումների գլխավոր առանձնահատկությունն է հանդիսանում օնլայն շփման ապահովումը կրթական հասարակության ներսում: Այսպիսով, հարցի և պատասխանի միջև ժամանակի խզումը վերացվում է, ինչը թույլ է տալիս վարել երկխոսություններ և քննարկումներ իրական ժամանակի ռեժիմում:

Առավել հետաքրքրական կլինեն, եթե անցկացվեն ինտերնետ-սեմինարներ, երբ դասախոսը նախապես տեղեկացնում է ուսանողներին երկխոսության թեմայի, քննարկման ժամանակի մասին, տալիս է հղումներ ուսումնասիրվելիք գրականության վրա, կամ հրապարակում է համապատասխան հոդված, որը պետք է լինի օնլայն քննարկման առարկա: Ինտերնետ-երկխոսության վերլուծության հիման վրա դասախոսը գնահատում է յուրաքանչյուր ուսանողին և նրան է ուղարկում գնահատականը և համապատասխան մեկնաբանությունները:

Անձնական կայքի ստեղծումը թույլ կտա.

- ձևավորել ինտերակտիվ կրթական միջավայր `փոխլրացնող տեղեկատվությամբ
- կուտակել օգտակար տեղեկատվություն
- նվազեցնել լսարանային ժամերի քանակությունը
- կատարել ուսանողների ինքնուրույն աշխատանքի վերահսկում
- բարձրացնել լսարանային/կոնսուլտացիոն ժամանակի արդյունավետությունը:

Տեխնոլոգիական նման միջավայրը հարմար է ինչպես դասավանդողների, այնպես էլ ուսանողների համար, այն պայմանով, որ երկու խմբերն էլ հոգեբանորեն, տեխնիկապես, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպչական առումներով պատրաստ են նման ձևի աշխատանքի:

Ինտերակտիվ գործիքների միջոցով իրականացվող ուսուցումն ունի նմանություններ դասավանդման սովորական եղանակների հետ՝ պարապմունքի հաջող անցկացման հիմքերը նույնն են, անկախ այն տեխնոլոգիաներից և սարքավորումներից, որոնք օգտագործում է դասավանդողը [3,էջ 131-142]: Ցանկացած պարապմունք պետք է ունենա հստակ պլան և կառուցվածք, պետք է հասնի որոշակի նպատակների և արդյունքների: Այդ ամենը ուսանողներին օգնում է ավելի լավ հասկանալ մատուցվող նյութը և հարաբերել այն նրա հետ, ինչը նրանք արդեն գիտեն: Ստանդարտ դասը, հաշվի առնելով կրթական ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական ինտերակտիվ տեխնոլոգիաները, կարող է ընթանալ հետևյալ սցենարով՝

- նախապատրաստում պարապմունքին,
- պարապմունքի նպատակների ներկայացում,
- մուտք նոր թեմա կամ առաջադրանք,

- թեմայի զարգացում ուսանողների մասնակցությամբ,
- նոր յուրացված տեղեկատվության քննարկում:

Դասավանդողը կարող է տարբեր ձևերով դասակարգել տեղեկատվությունը՝ օգտագործելով ինտերակտիվ տեխնոլոգիաների տարբեր հնարավորությունները՝ տեղաշարժել օբյեկտները, աշխատել գույնի հետ, ստեղծել որոշակի կապեր՝ դրանով իսկ հրապուրելով ուսանողներին և ներգրավելով նրանց գործընթացի մեջ [4,էջ 32-38]:Սակայն, կարևոր է հասկանալ, որ աշխատանքի արդյունավետությունը հիմնականում կախված է հենց դասավանդողից, այսինքն ինչպես է օգտագործում ինտերակտիվ տեխնոլոգիաների այս կամ այն հնարավորությունը:

Ինտերակտիվ գործիքներով աշխատելու առավելություններն են.

- ուժեղացնում է նյութի մատուցումը, թույլ է տալիս արդյունավետ աշխատել կայքերի և այլ ռեսուրսների հետ
- մեծացնում է լսարանում փոխազդեցության և քննարկման հնարավորությունները
- ռեսուրսների և նյութերի բազմազան ու դինամիկ օգտագործման շնորհիվ պարապմունքները դարձնում է առավել հետաքրքրական
- թույլ է տալիս նյութերի համատեղ և բազմակի օգտագործումը
- հարմար է մեծ լսարաններում աշխատելու համար
- թույլ է տալիս օգտագործել դասավանդման տարբեր եղանակներ, դիմել տարբեր բնույթի ռեսուրսների
- ներշնչում է ուսուցման նոր մոտեցումների փնտրմանը, խթանում է մասնագիտական աճը:

Ուսանողների համար.

- պարապմունքները դարձնում է առավել հետաքրքիր
- տրամադրում է ավելի մեծ հնարավորություններ կոլեկտիվ աշխատանքի համար, զարգացնում է անձնական և սոցիալական որակները
- խթանում է ստեղծագործական աշխատանքը, մշակում է աշխատանք կատարելու կուլտուրա:

Ինտերակտիվ գործիքները կարող են ձևափոխել դասավանդման եղանակը տարբեր ուղղություններով: Ահա դրանցից երեքը:

1. Պրեզենտացիաներ, դեմոնստրացիաներ և մոդելների ստեղծում: Անհրաժեշտ ծրագրային ապահովման (փաթեթների) օգտագործումը կարող է լավացնել նոր գաղափարների ընկալումը:

2. Ուսանողների ակտիվ մասնակցությունը: Ուսանողների ավելի խորը ներգրավումը և մասնակցության ակտիվությունը կարող են մեծացվել ակնառու և գունեղ վիզուալ պատկերների օգտագործման շնորհիվ:

3. Պարապմունքի տեմպի և ընթացքի բարելավում: Նկատված է, որ ինտերակտիվ գործիքների կիրառումը կարող է լավացնել նաև պարապմունքի պլանավորումը, տեմպը և ընթացքը:

Ինտերակտիվ գործիքներն արժեքավոր միջոց են ամբողջ լսարանի ուսուցման համար: Դրանք հնարավորություն են տալիս ունենալու վիզուալ

ռեսուրսներ, որոնց օգնությամբ դասավանդողը կարող է նոր նյութը մատուցել ակնառու, դինամիկ և հետաքրքրական ձևով: Դասավանդողը կարող է կատարել իր գործողությունների բարձրաձայն մեկնաբանություններ՝ ուսանողներին դրդելով գրի առնել ցուցադրվող գաղափարների նկարագրությունները: Դրանք հնարավորություն են տալիս տեղեկատվությունը ներկայացնել տարբեր մուլտիմեդիա ռեսուրսների միջոցով, դասավանդողները և ուսանողները կարող են մեկնաբանել նյութը և ուսումնասիրել այն առավելագույնս մանրամասնորեն:

Ինտերակտիվ գործիքների ճիշտ օգտագործումը կարող է օգնել դասավանդողին հաջո-ղությամբ ստուգել ուսանողների գիտելիքները: Որոշ գաղափարների բացատրության համար կարելի է ունենալ նախապես մշակված և առաջադրվող կոռեկտ հարցերի շարան, որոնք կզարգացնեն երկխոսությունը և թույլ կտան ավելի լավ ըմբռնել մատուցվող նյութը:

Աշխատանքն ինտերակտիվ գործիքներով ենթադրում է պարզ, բայց ստեղծագործական ընթացք: Ֆայլերը և անհրաժեշտ նյութերը պատրաստվում են նախապես, կապվում են ուրիշ ռեսուրսների հետ, որոնք մատչելի են պարապմունքի ժամանակ:

Նախապես պատրաստված տեքստերը, աղյուսակները, դիագրամները, սխեմաները, ինչպես նաև հիպերհղումները մուլտիմեդիա ֆայլերի և ինտերնետ-ռեսուրսների վրա պարապմունքին կհաղորդեն հաճելի տեմպ՝ դասավանդողն այլևս շատ ժամանակ չի ծախսի գրատախտակի վրա գրառումներ կատարելու համար [5,էջ 54-67]: Բոլոր ռեսուրսները կարելի է մեկնաբանել հենց էկրանի վրա, պահպանել նյութերը ապագա դասերի համար, իսկ նախորդող պարապմունքների ֆայլերը անհրաժեշտության դեպքում հնարավոր է արագ բացել և կատարել կրկնություն:

Կարևոր է հասկանալ, որ միայն ինտերակտիվ տեխնոլոգիաների օգտագործումն ինքն իրենին չի լուծի բոլոր պրոբլեմներն ակնթարթորեն:

Դասընթացի էլեկտրոնային տարբերակ ստեղծելու համար նախ պետք է մշակել առարկայի բովանդակությունն ըստ առարկայական ծրագրի: Դասընթացի նյութը հարմար է ներկայացնել այն բաժանելով մասերի՝ շաբաթ առ շաբաթ, թեմա առ թեմա կամ դաս առ դաս: Յուրաքանչյուր մաս լուսաբանվում է առանձին ֆայլի կամ ֆայլերի փաթեթի միջոցով: Դա հնարավորություն կտա նվազեցնել էլեկտրոնային նյութերի ծավալը և դրանք կդարձնի առավել հարմար օգտագործման, փոխանցման, պահպանման, ինչպես նաև հետագա խմբագրման և լրացումներ կատարելու համար: Յուրաքանչյուր թեմայի կամ դասի բովանդակությունը պետք է ենթարկվի վերլուծության, որպեսզի բացահայտվեն այն մասերը և դրույթները, որոնք առավել հարմար կլինեն ներկայացնել պրեզենտացիոն կամ անիմացիոն եղանակներով, իսկ որոնք՝ սովորական տեքստային ֆորմատով (այսպես կոչված՝ Instructional Design): Նշված գործընթացը կազմակերպելու համար կարելի է առաջարկել համապատասխան թեմայի կամ դասի անվանումը, ուսումնական նյութի վերնագիրը, նրա տիպը, նյութի բովանդակության հակիրճ

նկարագրությունը, թեմայի առանցքային բառերը, հեղինակի անունը, ազգանունը, օգտագործվող համապատասխան ֆայլի անունը, համապա-տաս-խան դասընթացի վերնագիրը, որին պատկանում է տվյալ նյութը, նյութի նշանակությունը և նպատակները:

Պրեզենտացիաների և անիմացիաների ստեղծման նպատակն է բարձրացնել հանգուցային կարևոր նշանակություն ունեցող դրույթների ընկալման մակարդակը, երևան հանել աներևույթ և ստվերի մեջ գտնվող նրբությունները, ուսանողի ուշադրությունը հրավիրել առաջին հայացքից քողարկված գաղափարների վրա:

Պրեզենտացիաներ և հատկապես անիմացիաներ ստեղծելու համար նախապես պետք է մշակվեն դրանց սցենարները, որոնք հստակորեն նկարագրում են ներկայացվող նյութը կադր առ կադր: Սցենարը տրվում է իրար հաջորդող պատկերների միջոցով, որոնք նկարագրվում են տեքստի սխեմայի կամ գծագրի միջոցով: Լրացուցիչ նկարագրվում են նաև տվյալ և հաջորդ կադրերը կապակցող իրադարձությունները, բացատրվում է, թե ինչ է տեղի ունենում տվյալ փուլի ընթացքում: Կադրերը կարող են զուգորդված լինել ինչ-որ աուդիո տեքստով, որը հանդիսանում է տեսածի բացատրությունը և հստակեցնում է կատարվող իրադարձությունները: Բացի վերոհիշյալից, շատ կարևոր է մատնանշել նաև յուրաքանչյուր կադրի տևողությունը:

Շատ հաճախ մատուցվող նյութի ակներևության բարձրացմանը կարելի է հասնել օգտագործելով համակարգչային եռաչափ մոդելավորման հնարավորությունները, որի համար կիրառելի են եռաչափ մոդելավորման հնարավորություն ունեցող ցանկացած փաթեթները, օրինակ՝ PowerPoint, AutoCAD, 3D Studio Max և այլն: Եռաչափ ստատիկ կամ շարժական մոդելի պատրաստումից հետո ընդունված է կատարել համապատասխան ֆայլի ֆորմատի անվանափոխում (սովորաբար դրանք բերվում են MPEG, AVI, WMA, WMV, MOV կամ այլ ֆորմատների), ինչը թույլ է տալիս դրանք օգտագործել անգամ այն մեքենաների վրա, որտեղ չկա տեղադրված մոդելի ստեղծման սկզբնական միջավայրը:

Անցած նյութի ամրացման և կրկնման, լուսաբանված օրինաչափությունների մատնա-նշման համար կարող են ստեղծվել բազմաթիվ և տարբեր բնույթի ինտերակտիվ վարժանքներ: Ինտերակտիվ վարժանքներն ունեն այն առանձնահատկությունը, որ ուսանողին տալիս են հնարավորություն տեսնելու նույն խնդրի լուծումը մուտքային գործոնների տարբեր արժեքների համար: Ինտերակտիվ վարժանքը ստեղծվում է այնպես, որ ուսանողը կարողանա ինքնուրույն փոփոխել համակարգի վրա ազդող պարամետրերի արժեքները և տեսնի թե ինչ երևույթների հանգեցրեց և համակարգի ինչ վիճակի բերեց կոնկրետ պարամետրի արժեքի մեծացումը կամ փոքրացումը:

Այսպիսի նյութեր պատրաստելու համար պիտանի են MATLAB, MathCAD, Mathematica, MS Excel և ցանկացած այլ փաթեթներ, որոնք իրենց միջավայրում թույլ են տալիս կազմել ենթածրագրեր, կատարել հաշվարկներ, իսկ արդյունքները դուրս բերել գրաֆիկական կամ աղյուսակային տեսքով:

Развитие новых методов обучения на базе информационных технологий

В. Арустамян, Р. Аветисян

Резюме

Применение новейших технологий даст возможность формирования интерактивной учебной среды взаимодополняющей информацией, выработает новые возможности самообразования и общения в учебном процессе, созданием презентаций и анимаций повысит уровень восприятия важнейших положений, выявит промежуточные теневые нюансы, привлечет внимание студента на первый взгляд представлениям и повысит в конечном счете результативность обучения.

The Development of Information Technology on the Basis of New Teaching Methods

V. Arstamyan, R. Avetisyan

Summary

The use of new technologies will help to create an interactive learning environment complementary information, the process will be developed for Independent Study and new opportunities creating animations and presentation slot key will raise the level of understanding of important provisions, will find out the nuances in the shade, will hold the student's attention on the first sight, hidden ideas and will raise the effectiveness of learning.

Գրականություն

1. *Хорева Л.В.*, Коротеева О.С. Развитие новых методов обучения на базе информационных технологий. Электронный учебно-методический журнал СПбГУЭиФ. ФИНЕК СПб, 2008.

2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը կրեդիտային համակարգում., Առստամյան Վ.Վ., Ավետիսյան Ռ.Վ., Միջազգային գիտաժողովի նյութեր. նվիրված ԱրՊՀ-ի հիմնադրման 40-ամյակին. Ստեփ. 2009թ էջ 338-339:

3. Интерактивные технологии в образовании. Учебно-методический комплекс.М.,2005. с. 21

4. *Волошинова М.В., Гордин В.Э.* Инновационные системы и технологии в учебном процессе. Электронный учебно-методический журнал СПбГУЭиФ. ФИНЕК СПб, 2010.

5. *Пустыльник П.Н., Эмирова А.Е.* Обоснование необходимости инноваций в вузе с целью повышения конкурентоспособности на рынке образовательных услуг. Электронный учебно-методический журнал СПбГУЭиФ. ФИНЕК СПб, 2009.

УДК 541. 127 *Химия*

ИССЛЕДОВАНИЕ АНТИОКСИДАНТНОГО СВОЙСТВА ЭФИРНОГО МАСЛА ТИМЬЯНА ПОЛЗУЧЕГО (Thymus serpyllum L.), ПРОИЗРАСТАЮЩЕГО НА ТЕРРИТОРИИ АРЦАХА

Л. Варданян, С. Айрапетян, Р. Варданян, А. Аветисян

На примере инициированного окисления кумола исследовано антиоксидантное действие эфирного масла тимьяна ползучего. Установлено, что эфирное масло тимьяна ползучего обладает довольно сильным антиоксидантным свойством. Определены содержание антиоксидантов в одном мг масла (1,43·10^{-3} моль/л) и температурная зависимость параметров k_7 и k_{71}– характеризующая активность антиоксидантов.

Введение

В последние годы наряду с поиском новых лекарственных растений проводится углубленное изучение свойств эфирных масел, традиционно применяемых в медицине парфюмерной и пищевой промышленности. Из эфирных масел лекарственных растений широко используется масло тимьяна ползучего (Thymus serpyllum L.) как лекарственное сырье и пряность в кулинарии.

Эфирное масло тимьяна ползучего (ЭМТ) применяется в традиционной медицине многих стран и народов как ценное лекарственное сырье[1,2]. ЭМТ рекомендуется применять как отхаркивающее и болеутоляющее средство при острых и хронических бронхитах, она обладает антимикробной[3], антиоксидантной[4] и спазмалитической[1] активностью. Столь универсальное

---

[1] Гринкевич Н.И., Ладыгина Е.А. Фармакогнозия. Атлас: Учебное пособие. М.,1989,512 .

[2] Растительные ресурсы СССР: Цветковые растения, их химический состав, использование.
Семейства *Hippuridacea – Lobeliaceae*. СПб., 1991. С. 100–109.

[3] Ismaili H., Sosa S., Brkic D., Fkih-Tetouani S., Ilidrissi A., Touati D., Aquino R.P., Tubaro A. Topical anti-
inflammatory activity of extracts and compounds from *Thymus broussonettii* // J. Pharmacy Pharmacology.
2002. V. 54. №8. P. 137–140.

[4] Sokmen A., Gulluce M., Akpulat H.A., Daferera D., Tepe B., Polissiou M., Sokmen M., Sahin F. The in
vitro antimicrobial and antioxidant activities of the essential oils and methanol extracts of endemic*Thymus*
spathulifolius // Food Control. 2004. №15. P. 627–634.

применение ЭМТ обьясняется содержанием в нем биологически активных веществ. В частности, ЭМТ содержит тимол, карвакрол, бета-кариофилен, гамма-терпинен, пара-цимол, пара-цимен, линалоол, камфору, альфа и бетта-пинен, флавоноиды. По результатам работы[2], установлено, что ЭМТ содержит более 55 химических соединений. Причем, как процентное содержание отдельных компонентов, так и химический состав масел зависит от экологических и природных условий, а также и географических зон произрастания данного растения[3,4]. Следовательно, изучение химических и отдельных эксплуатационных свойств масел и экстрактов лекарственных растений, растущих в данных зонах, является необходимым условием.

В прилагаемой работе нами изучены антиоксидантные свойства ЭМТ ползучего, произрастающего в окрестностях Степанакерта Нагорно-Карабахской республики на высоте 850 м н.у.м.

Экспериментальная часть

Отбор образцов тимьяна ползучего провели в середине июля 2009 и 2012 года в период полного цветения. Подготовку сырья (высушивания до воздушно-сухого состояния), отбор проб и получение эфирного масла производили с использованием общепринятых методов[5]. В состав проб входили стебли молодых побегов (25% от массы собранного сырья), листья и соцветия (соответственно 20 и 40%). Одревесиневшие части растений (15%)

---

[1] Szentandrassy N., Szentesi P., Magyar J., Nanasi P.P., Csernoch L. Effect of thymol on kinetic properties of
Ca and K currents in rat skeletal muscle // BMC Pharmacology. 2003. №3. P. 9.

[2] Алексеева Л.И., Груздев И.В, Быструшкин А.Г., Тетерюк Л.В. Химический состав эфирного масла
эндемичных тимьянов Европейского северо-востока России и Урала // Вестник ИБ, 2011, №10-11.
С. 9.

[3] Корсакова С.П., Работягов В.Д., Виноградов Б.А. Модель эколого-генетического контроля
биосинтеза тимола в эфирном масле Thymus L. //Черноморский ботанический журнал, 2006, Т. 2,
№1. С. 50.

[4] Касумов Ф.Ю. фитоценотическая роль некоторых видов рода Thymus L. в сложении растительного
покрова Кавказа // Бюллетень Ботанического сада – института ДВО РАН, 2008, Вып. 2,
С. 34.

[5] Государственная фармакопея СССР. Вып. 2. Общие методы анализа. Лекарственное растительное
сырье. 11-е изд. 1987. 386 с.

удаляли. Эфирное масло получили водяно-паровым методом из высушенного сырья. Навеску сырья массой 100г погружали в колбу емкостью 1л, заливали водой (0,5л) и доводили до кипения. Длительность отгонки составляла 3 часа. Внешний вид полученного ЭМТ – прозрачная, светло-желтого цвета жидкость, плотность – 0,928 г/мл, показатель преломления – 1,4975. В работе были использованы два образца ЭМТ, соответственно, полученные в 2009 (ЭМТ-09) и 2012 (ЭМТ-12) годах. Антиоксидантную активность и содержание антиоксидантов-ингибиторов цепных процессов определяли на модельной реакции инициированного азо-ди-изобуторинитрилом (АИБН) окисления кумола, в интервале температур 333 – 348 К. Опыты по окислению кумола проводили на газометрической установке с автоматическим регулированием давления. Концентрация кумола во всех опытах составляла 2,87 моль/л, обьем реакционной смеси 5 мл. Растворителем реакционной смеси служил хлорбензол. Кумол и хлорбензол после многократного встряхивания с концентрированной серной кислотой промывали дистиллированной водой, сушили над хлористым кальцием и перегоняли при атмосферном давлении. АИБН очищали пятикратным переосаждением из этанола и высушиванием под вакуумом при комнатной температуре до постоянного веса.

Скорость окисления определяли из кинетических кривых поглощения кислорида с использоваием уравнения (1)

$$V = \frac{\Delta O_2}{\Delta t} \cdot \frac{2{,}65 \cdot 10^{-4}}{T} \qquad (1)$$

Где, $2{,}65 \cdot 10^{-4}$ – постоянная газометрической установки, Т – температура бюретки (комнатная температура).

Обсуждение результатов

На рис. 1 и 2 представлены кинетические кривые поглощения кислорода окисляющегося кумола в отсутствие (1) и в присутствие ЭМТ-12 и ЭМТ-09 (кривые 2 и 3). Из рисунков следует, что в присутствии ЭМТ поглощение кислорода при инициированном окислении кумола осуществляется с явно выраженными периодами индукции, что свидетельствует о содержании антиоксидантных веществ в его составе. Суммарное содержание антиоксидантов определяли с использованием уравнения (2)

$$\tau = \frac{f[InH]}{V_i} = \alpha \frac{m}{V_i} \qquad (2)$$

где, τ - период индукции, f - стехиометрический коэффициент ингибирования (число радикалов обрывающихся на одной молекуле ингибитора) [InH]– суммарное содержание антиоксидантных веществ в исследуемом образце ЭМТ, V_i- скорость инициирования, m- масса использованного ЭМТ в мг –ах. Опыты показали, что обнаруженные периоды индукции описываются

уравнением (2). Результаты расчетов экспериментальных данных приведены в таблице 1. Из таблицы следует, что содержание антиоксидантных веществ в одном мг масла ЭМТ-12 составляет (1,418 ±0,048)·10^{-3} моль/л а в ЭМТ-09 – 1,54·10^{-5} моль/л.



Рис.1. Кинетические кривые поглощения кислорода окисляющегося кумола в отсутствии (1) и в присутствии 0,19мг (2) и 0,38 мг (3) ЭМТ-12. V_i=1.25·10^{-7} моль/л·с, T=348K.



Рис.2. Кинетические кривые поглощения кислорода окисляющегося кумола в отсутствии (1) и в присутствии 6,44мг (2) и 27,5 мг (3) ЭМТ-09. V_i=1.39·10^{-7} моль/л·с, T=348K.

Таблица 1. Содержание антиоксидантных веществ в ЭМТ, T=348K

Навеска ЭМТ в реакционной смеси, мг		τ, мин	Содержание антиоксидантных в-в, f·[InH]·10^4, моль/л	V_i·10^7, моль/л·с	Содержание InH в одном мг экстракте f·[InH]·10^4, моль/л
ЭМТ-09	ЭМТ-12				
6,44	-	12	1,00	1,39	0,155
12,75	-	24	2,00	1,39	0,157
27,50	-	50	4,17	1,39	0,152

38,68	-	70	5,84	1,85	0,151
-	0,1	19	1,43	1,25	14,30
-	0,19	35	2,63	1,25	13,82
-	0,38	73	5,48	1,25	14,42
-	0,19	71	2,66	0,625	14,02
-	0,19	18	2,70	2,50	14,21

Эти данные свидетельствуют, что за три года содержание антиоксидантных веществ, при хранении ЭМТ при комнатной температуре уменьшается примерно в 100 раз ($1{,}418 \cdot 10^{-3}$/ $1{,}54 \cdot 10^{-5}$ = 92). Следовательно, с целью увеличения гарантийного срока и сохранения эксплуатационных свойств ЭМТ необходимо его хранить при минусовых температурах.

При оценке антиоксидантных способностей экстрактов и масел растительного сырья, кроме определения количественного содержания в них антиоксидантных веществ, важным является и установление их антиоксидантных активностей, т.е. определение константы скоростей реакции ингибиторов со свободными пероксидными радикалами (k_7). Для этого величину k_7 определяли по количеству поглощенного кислорода во время периода индукции с использованием уравнения (3)[1]

$$\frac{[O_2]}{[RH]} = -\frac{k_2}{k_7} ln\left(1 - \frac{t}{\tau_1}\right)$$

где [RH] -концентрация окисляемого вещества – кумола (2,87 моль/л), $[O_2]$-концентрация поглощенного кислорода за время $t < \tau_1$, τ_1-период индукции, который немного отличается от τ, приведенной в уравнении (2) и в таблице 1 и определяется графически на кинетических кривых поглощения кислорода по координате точки пересечения двух прямых, для которых тангенсы углов наклона связаны соотношением $tg\alpha_1 = 2tg\alpha_2$ или $V'_{O_2} = 2V''_{O_2}$,где V'_{O_2} –скорость поглощения кислорода после выхода из периодов индукции, V''_{O_2} –в присутствие ингибитора (см. рис.1,кривая 3), k_2 и k_7, соответственно, константы скоростей реакций продолжения

$$RO_2^{\cdot} + RH \xrightarrow{k_2} ROOH + R^{\cdot}$$

и обрыва цепей

[1] Цепалов В.Ф., Харитонова А.А., Гладышев Г.Л., Эмануэль Н.М. Определение констант скорости и коэффициентов ингибирования фенолов – антиоксидантов с помощью модельной цепной реакции //Кинетика и катализ. 1977, Т. 18, №5, 1261 с.

$$RO_2^{\cdot} + InH \xrightarrow{k_7} ROOH + In^{\cdot}$$

Значения k_2/k_7 определяли графически, спрямляя экспериментальные данные в координатах уравнения (3). Откуда, учитывая, что для кумола $k_2 = 4{,}677 \cdot 10^6 \cdot \exp(-9800/RT)$[1] вычисляли абсолютные значения k_7 в интервале температур 333 -348К. Результаты расчетов приведены в табл. 2. Установлено, что k_7 для исследованных ЭМТ в аррениусовых координатах описывается выражением

$$(k_7)_{ЭМТ\text{-}12} = 5{,}87 \cdot 10^{13} \cdot \exp[-(14500 \pm 250)/RT], \quad л/моль \cdot с$$
$$(k_7)_{ЭМТ\text{-}09} = 2{,}77 \cdot 10^{12} \cdot \exp[-(12100 \pm 200)/RT], \quad л/моль \cdot с$$

Из кинетических кривых поглощения кислорода (рис.1 и 2), следует, что скорость окисления кумола после выхода из периодов индукции, в присутствии исследованных масел, остается существенно заниженной по сравнению со скоростью окисления индивидуального кумола (сравни тангенсы углов прямых 1, 2 и3). Обнаруженные предельные скорости окисления описываются уравнением (4)[2] (см.рис.4).

$$\frac{V_o}{V_\infty} - \frac{V_\infty}{V_o} = \frac{k_{71} f[Q]}{\sqrt{k_6 V_i}} \qquad (4)$$

Где V_o и V_∞ -предельные скорости окисления кумола, соответственно, в отсутствие и в присутствие масел тимьяна, k_{71} и k_6 – константы скоростей реакции линейного $RO_2^{\cdot} + Q \rightarrow ROOH + Q^{\cdot}$ и квадратичного $RO_2^{\cdot} + RO_2^{\cdot} \rightarrow$ Молек. продукты обрыва цепей, [Q] – концентрация продуктов превращения исходных антиоксидантов, содержащихся в исследованных маслах. В расчетах предполагалось[3], что Q образуется по реакции $RO_2^{\cdot} + In^{\cdot} \rightarrow Q +$ Молек. продукты, и что [Q] = [InH]. Из рис. 4 видно, что предельные скорости окисления кумола в присутсвие исследованных масел описываются уравнением (4). Пользуясь уравнением (4) и рис.4 определили отношение $k_{71}/\sqrt{k_6}$.

Откуда, учитывая, что для кумола $k_6 = 4{,}74 \cdot 10^5 \cdot \exp(-9800/RT]$[4] определили значения k_{71} в интервале температур 333-348 K. Результаты расчетов

---

[1] Денисов Е.Т. Константы скорости гомолитических жидкофазных реакций. М., Наука, 1971, с.51.

[2] Денисов Е.Т., Азатян В.В. Ингибирование цепных реакций. Черноголовка, 1997, С. 51.

[3] Варданян Р.Л., Варданян Л.Р., Атабекян Л.В. Антиоксидантное действие экстрактов омелы белой произрастающей на различных деревьях // Хим. журнал Армении, 2011, Т. 64, №3, С. 335.

[4] Денисов Е.Т. Константы скорости гомолитических жидкофазных реакций. М., Наука, 1971, с.51.

приведены в табл.2. Спрямляя расчетные данные в координатах lgk_{71} - T^{-1} определили температурную зависимость для k_{71} в аррениусовых координатах, которые выражаются уравнениями:

$(k_{71})_{ЭМТ\text{-}09} = 2{,}24 \cdot 10^{11} \cdot \exp[-(13400 \pm 250)/RT]$, л/моль·с

$(k_{71})_{ЭМТ\text{-}12} = 9{,}92 \cdot 10^{9} \cdot \exp[-(12500 \pm 250)/RT]$, л/моль·с



Рис.3. 1). Зависимость концентрации поглощенного кислорода от параметра -ln(1-t/τ), T=348K.
2). Температурная зависимость константы скорости реакции k_7.



Рис. 4.. Зависимость предельной скорости окисления кумола от содержания ЭМТ-09 (1, 1') и ЭМТ-12 (2, 2'). V_i=1,25·10^{-7} моль/л·с, T=348K.

Таблица 2. Кинетические параметры характеризующие антиоксидантные активности ЭМТ

T, °K	Содержание масла в кумоле, мг		$V_i \cdot 10^7$ моль/л·с	$V_\infty \cdot 10^6$, моль/л·с		$k_7 \cdot 10^{-4}$, л/моль·с		$k_{71} \cdot 10^{-2}$, л/моль·с	
	ЭМТ-09	ЭМТ-12		ЭМТ-09	ЭМТ-12	ЭМТ-09	ЭМТ-12	ЭМТ-09	ЭМТ-12
348	6,44	-	1,38	2,50	-	6,50	-	9,45	-
348	12,88	-	1,38	1,18		6,98	-	9,33	-
348	19,32	-	1,38	0,82		6,72	-	9,51	-
348	27,50	-	1,38	0,73	-	6,66	-	8,50	-

348	-	0,19	1,25	-	2,59	-	6,67	-	1,58
348	-	0,38	1,25	-	1,04	-	4,56	-	1,23
348	-	1,0	1,25	-		-	4,48	-	1,48
348	-	10,0	1,25	-	0,12	-	4,62	-	1,41
343	6,44	-	0,66	1,05	-	5,41	-	6,51	-
343	-	0,19	0,66	-	1,58	-	3,40	-	1,08
338	6,44	-	1,03	1,26	-	4,16	-	4,87	-
338	-	0,15	1,03	-	1,69	-	2,48	-	0,82
333	3,22	-	0,52	0,79	-	3,00	-	3,82	
333	-	0,10	0,52	-	0,91	-	1,79	-	0,62

Արցախում աճող ուրց սողացողի (Thymus serpyllum L.) եթերայուղի հակաօքսիդանտային հատկության հետազոտումը

Լ. Վարդանյան, Ս. Հայրապետյան, Ռ. Վարդանյան, Ա. Ավետիսյան

Ամփոփում

Կումոլի ինիցված ակի վրա հետազոտվել է ուրց սողացողի (Thymus serpyllum L.) եթերայուղի հակաօքսիդանտային ազդեցությունը: Հաստատվել է, որ ուրց սողացողի եթերայուղը օժտված է բավականին ուժեղ հակաօքսիդանտային հատկությամբ: Որոշվել են հակաօքսիդանտների պարունակությունը մեկ մգ եթերայուղում ($1,43 \cdot 10^{-3}$մոլ/լ) և K_7 ու K_{71} պարամետրերի ջերմաստիճանային կախվածությունը, որը բնութագրում է հակաօքսիդանտների ակտիվությունը:

The Antioxidating Actions of Etherous Oil of the Thymus Serpyllum L

L. Vardanyan, S.Hayrapetyan, R. Vardanyan, A. Avetisyan

Summary

On an example initiating oxidation of cumen is investigated the antioxidanting action of the ethereous oil of the thymus serpyllum L.. It is proved, that the ethereous oil of the greeping thymes possesses quite strong antioxidanting property. The contents of antioxidants are defined in one oils gramm(1,43.10-3 mola/l.mg) and temperature dependance of parameters k_7 and k_{71} characterizing the activity of the antioxidents.

ՀՏԴ 595.727 *Կենդանաբանություն*

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՂՈԹԱՐԱՐԸ (MANTIS RELIGIOSA) ԼՂՀ ԷՆՏՈՄՈՖԱՈՒՆԱՅՈՒՄ

Ս. Աղասյան

Աշխատանքում քննարկվում են աղոթարարների կարգին պատկանող սովորական աղոթարարի (Mantis religiosa) տարածվածությունը և էկոլոգիական մի շարք առանձնահատկություններ ԼՂՀ Էնտոմոֆաունայում: Առաջարկվում են այս օգտակար տեսակի պահպանության մի շարք միջոցառումներ:

Աղոթարարները (Mantodea, Mantoptera) թերի կերպարա-նափոխությամբ զարգացող /Hemimetabola/ միջատների կարգ են, որտեղ հայտնի են 20 00, ՀՀ-ում՝ 5 տեսակ[1]: Մեծ կամ միջին մեծության , խիստ երկարավուն մարմնով գիշատիչ միջատներ են: Գլուխը եռանկյունաձև է, խիստ շարժուն: Բերանային մասերը կրծող են: Աղոթարարների մեծամասնության մոտ լավ են զարգացած երկու զույգ թևերը, ընդ որում՝ առաջնաթևերը ավելի նեղ են ու հաստ և կատարում են վերնաթևերի ֆունկցիա: Հետնաթևերը լայն են, թաղանթավոր, հանգիստ վիճակում ծալվում են հովհարաձև ու ծածկվում են վերնաթևերով: Սակայն կան նաև լրիվ անթև, թրթուր հիշեցնող տեսակներ, ինչպես օրինակ՝ միջերկրածովյան երկրներում հանդիպող հողային աղոթարարը (Geomantis larvoides):

Աղոթարարները սնվում են առավելապես լվիճներով, ճանճերով և այլ մանր միջատներով, մեծ չափերի աղոթարարները՝ նաև մորեխներով, թիթեռներով և այլն: Աղոթարարների երիտասարդ թրթուրների սննդային ռացիոնում նկատվում է խիստ որոշակի սննդի գերակշռում և այն կազմում են հիմնականում լվիճները: Աղոթարարները ընդհանրապես խիստ շատակեր են: Այսպես, օրինակ, ծառային աղոթարարի արու թրթուրը (Hierodula tenuidentata) իր զարգացման 85 օրվա ընթացքում ուտում է 147 լվիճ, 41 պտղաճանճ և 266 սենյակային ճանճ: Աղոթարարները սննդի նկատմամբ պահանջկոտ չեն և կարող են դրսևորել նաև հանիբալիզմ. վերջինս նկատվում է նույնիսկ երիտասարդ թրթուրների մոտ միասին ապրելու դեպքում [5]:

Ներկայումս հայտնի 2000 տեսակի աղոթարարների մեծ մասը տարածված են տրոպիկական և սուբտրոպիկական երկրներում: Նախկին ԽՍՀՄ տարածքում հանդիպում են շուրջ 20 տեսակի աղոթարարներ, որոնք պատկանում են երկու ընտանիքներին՝ սովորական աղոթարարների և էմպուզիաների (5): Մեզ մոտ տարածված աղոթարարների մեծ մասը մտնում է իսկական աղոթարարների ընտանիքի մեջ /Mantidae/, որոնց բնորոշ են տիպիկ եռանկյունաձև գլուխը և թելանման բեղիկները: Աղոթարարների կարգի էմպուզիաների ընտանիքի կենդանիների մասին հայտնի ֆրանսիական նատուրալիստ Ֆաբրը գրել է. «Մեր երկրների

միջատների մեջ չկա ավելի տարօրինակ էակ: Դա մի ինչ որ տեսիլք է, սատանայական ուրվական: Էմպուզիայի սրված տեսքը ոչ միայն խորամանկ է, այլև այն օգտակար կլիներ մեֆիստոֆելին»: Նախկին ԽՍՀՄ տարածքում ապրում է էմպուզիայի երկու տեսակ, որոնք երկուսն էլ բավականին մեծ են (47-65մմ): Աղոթարարները միջատներ են բավական լավ տեսողությամբ, նրանք նկատում են ցանկացած անհանգստություն լաբորատորիայում կամ ազատ բնության մեջ, նույնիսկ վառ լույսը կամ տեղաշարժվող գիտնականներին, բացի դրանից աղոթարարները հայտնի միջատներից միակն են, որոնք կարող են նայել իրենց մեջքից հետ :

Գտնված են աղոթարարների շատ քիչ բրածո մնացորդներ, որոնք պատկանում են կավճի , նեոգենի և չորորդական ժամանակաշրջաններին: Վաղ կավճի ժամանակաշրջանում գտնված Ambermantis wozniaki, Eersimantis burmitikus շատ նման են ժամանակակից ընտանիքների տեսակներին, սակայն բավական շատ առանձնահատկություններով նաև նման են խավարասերներին: 20-րդ դարի կեսերին ԽՍՀՄ-ում փորձեր կատարվեցին ուժեղացնելու աղոթարարների օգտակար դերը գյուղատնտեսության մեջ օգտագործելով նրանց վնասատուների դեմ կենսաբանական պայքարում, սակայն այդ փորձերը հաջողությամբ չպսակվեցին: Ամերիկայում, մի շարք հարավ ասիական երկրներում աղոթարարներին պահում են տանը ճանճերին ոչնչացնելու համար, նույնիսկ աղոթարարների օոտեկները վաճառում են ֆերմերներին, որոնք դրանք տեղադրում են այգիներում: Աղոթարարների վտանգված տեսակների ոչնչացման պատճառներից մեկը նրանց բնական բիոտոպերի ոչնչացումն է: Սակայն Եվրոպայում հայտնի բոլոր աղոթարարներից միայն մեկ տեսակ՝ Իսպանիայում ապրող Apteromantis aptera-ն, պահպանության կարիք ունի: Ռուսաստանում կարճաթև բոլիվարիան մտցված է կարմիր գրքի մեջ, որպես պահպանության կարիք ունեցող տեսակ: Բնակլիմայական պայմանների փոփոխությունը տարբեր տարիներին կարող է խթանել աղոթարարների քանակի ավելացմանը, այսպես՝ 2010 թվականին անբնական տաք եղանակի պատճառով Ուկրաինայի Կիև քաղաքում աննախադեպ ավելացել էր աղոթարարների քանակը /8/:

Աղոթարարները կարող են լինել բավականին աննկատ ոչ միայն անշարժ դիրքի պատճառով այլ նաև մարմնի ձևի և գունավորության արդյունքում: Աղոթարարների մեջ հանդիպում են տեսակներ, որոնք ապրում են ծառերի վրա և արտաքինից հիշեցնում են ծառի կեղև, մյուսները ձողիկաձև տեսք ունեն: Լինում են նաև քարաքոսերի, տերևների, ծաղիկների նմանվող տեսակներ: Սովորաբար մարմնի գունավորությունը ունի պաշտպանական բնույթ և հիմնականում գերակշռում են կանաչ, դեղին և մոխրագույն գունավորությունները: Պետք է նշել, որ նույն տեսակի սահմաններում նկատվում են առանձնյակներ, որոնք տարբերվում են իրարից գույնով, այսպես՝ սովորական աղոթարարի /Mantis religioza/ մոտ նկատվում են երեք գունային ձևեր՝ կանաչ, դեղին և գորշ: Անհանգստացած

աղոթարարը կարող է ընդունել վախեցող դիրքեր, որոնք երբեմն խիստ յուրահատուկ կարող են լինել: Առանձնահատուկ է հատկապես արևելյան Աֆրիկայում հանդիպող աղոթարարի Pseudocreobotra Wahlbergi ահաբեկող դիրքը, որը բարձրացնում է մեջքի վրա ազդանշանային դրոշակների նման վերնաթևերը, որոնց վրա կան աչքի ընկնող խոշոր հետքեր՝ աչիկներ:

Երբեմն ահաբեկող դիրքը կարող է ուղեկցվել վախեցնող ձայներով, ինչպես սարավակյան աղոթարարի մոտ (Hestiasula sarawaka), որն ապրում է Կալիմանտան կղզում (Բորնեո): Այս աղոթարարի մարմնի բոլոր մասերն ունեն գորշ կամ մոխրագույն գունավորում: Գրգռման դեպքում միջատը առաջ է բերում առաջին զույգ ոտքերը և կողմ է տանում երկու զույգ թևերը, այս դեպքում արդեն երևում են մարմնի վառ ներկված մակերևույթները՝ առաջին զույգ ոտքերի վառ մորեգույն կոնքերը, դեղին սև եզրագծով ազդրերը և սև դեղին հետքերով թևերը: Միաժամանակ աղոթարարը սկսում է ճռճվել , թափահարել թևերը:

Նախկին ԽՍՀՄ-ում հանդիպող ամենափոքր աղոթարարներից է Armene breviptera տեսակը, որի մարմնի երկարությունը շուրջ 1.5 սմ է: Սա հազվագյուտ տեսակ է և հանդիպում է Տաջիկիստանի լեռնային շրջաններում 2300-2700 մետր բարձրության վրա, թաքնվում է քարերի տակ:

Արցախի կենդանական աշխարհում աղոթարարների կարգի որոշ տեսակների տարածման արեալների, զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրության համար ընտրել ենք ստացիոնարներ՝ Մարտակերտում, Մարտունիում, Ասկերանում, Հադրութում և Շուշիում: Աշխատանքի համար նյութ է հանդիսացել նշված ստացիոնարներում կատարված դաշտային հավաքը:

Ստացված տվյալների մշակումը կատարել ենք կենդանաբանության մեջ ընդունված կենսաչափական մեթոդներով: Աղոթարարների տեսակային կազմը որոշելու համար օգտագործել ենք որոշիչներ/6/:

Սովորական աղոթարարը-Mantis religiosa պատկանում է իսկական աղոթարարների (Mantidae) ընտանիքին, որոնց համար բնորոշ են եռանկյուն գլուխը և թելանման բեղիկները: Սա խոշոր միջատ է՝, կանաչ կամ մոխրադեղնավուն գույնի, լավ զարգացած վերնաթևերով և թևերով: Վերջիններս ապակենման թափանցիկ են և միայն վերին ծայրում ու գագաթում՝ կանաչավուն կամ մոխրագույն: Առջևի ոտքերի կոնքերի ներքին մակերևույթին կա սև հետք: Էգերը զգալիորեն ավելի մեծ են արուներից՝ 48-76մմ, արուները՝ 40-61մմ:

Արցախի Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Ասկերանի, Շուշվա ստացիոնարներում կատարված ուսումնասիրությունների և դաշտային արշավների արդյունքում իսկական աղոթարարների ընտանիքից հայտնաբերել ենք միայն այս տեսակը, ընդ որում Mantis religiosa-ն նշված ստացիոնարներում խիստ տարածված տեսակ է, հանդիպում է Արցախի հարթավայրային , նախալեռնային, լեռնային գոտիներում, սակայն նրան մենք ավելի շատ հանդիպել ենք մեղմ ու տաք կլիմա ունեցող

հարթավայրային գոտիներում: Մեզ մոտ սովորական աղոթարարը ձմեռում է դիապաուզայում գտնվող ձվերի տեսքով:

Նկար 1. Սովորական աղոթարարը
Արցախի տարբեր ստացիոնարներից (կանաչ)

Ձվադրումը սկսվում է ամռանը և ձգվում է մինչև ուշ աշուն: Էգը սկսում է ձվադրել զուգավորումից հետո: Նա հանգիստ նստում է քարին կամ բույսի ցողունի վրա և միայն դանդաղ թեքվում է դեպի առաջ: Այս ընթացքում ձվադիրից ձվերի հետ միասին դուրս է գալիս սոսնձանման հեղուկ, որը, պատելով ձվերը, շուտով չորանում է՝ ձևավորելով քնորոշ կապսուլա՝ օոտեկա, վերջինիս երկարությունը շուրջ 3 սմ-է, լայնությունը՝ 1.5-2 սմ: Օոտեկայի գույնը կարող է լինել բաց դեղինից մինչև շագանակագույն կամ մոխրագույն: Օոտեկայի մեջ գտնվում են երկարավուն ձվերը, որոնց քանակը 100-300-ի է հասնում: Այսպիսի կապսուլայի մեջ ձվերը մնում են մինչև գարուն և կարող են դիմանալ մինչև -18 C^0 ջերմաստիճանին:

Նկար 2. Սովորական աղոթարարի օօտեկան

Գարնանը ձվերից դուրս են գալիս թրթուրները, որոնք հասուն միջատից տարբերվում են ոչ միայն չափերով, այլ նաև կառուցվածքի առանձնահատկություններով: Հատկանշական են թրթուրի կառուցվածքի որոշ առանձնահատկությունները, մասնավորապես, մարմնի ամբողջ մակերևույթը ծածկված է փոքր դեպի հետ ուղղված փշիկներով, փորիկի վերջում գտնվում են երկու երկար թելեր: Մերթ կծկվելով, մերթ երկարացնելով մարմինը՝ թրթուրը աստիճանաբար դուրս է գալիս ձվային խցիկից և ուղղվում դեպի օօտեկի ելանցքը, ընդ որում՝ այս ընթացքում նրան էական օգնություն են ցույց տալիս վերը նկարագրված փշիկները, որոնք թույլ չեն տալիս որպեսզի թրթուրը հետ սահի: Սակայն պոչային թելիկներն այնուամենայնիվ օօտեկի ելանցքից դուրս գալ չեն կարողանում, քանի որ այն կծկվելով սեղմում է նրանց: Թրթուրն այս վիճակում ստիպված է լինում կատարել առաջին մաշկափոխությունը

Ազատվելով հին արտաքին ծածկույթներից նա դառնում է հասուն աղոթարարին նման միայն սաղմնային թևերով և սկսում է վարել ինքնուրույն կենսակերպ: Սովորական աղոթարարի թրթուրը աճում է շատ արագ և ևս չորս անգամ կատարելով մաշկափոխություն, փոխակերպվում է հասուն միջատի: Ուսումնասիրությունների արդյունքում ամռանը այս հասուն աղոթարարներին գտել ենք բոլոր ստացիոնարներում՝ խոտաբույսերի կամ թփերի ճյուղերի վրա ու ավելի հաճախ՝

«դարանակալողի դիրքում»: Աղոթարարները միջատներ են՝ բավական լավ տեսողությամբ: Վարում են ցերեկային կյանք, ջերմասեր են: Սնվում են առավելապես լվիճներով, ճանճերով և այլ մանր միջատներով, կարող են օգտագործել այնպիսի սնունդ, որոնք այլ միջատների համար պիտանի չեն: Ոչնչացնում են առավելապես վնասատու միջատներին և այս տեսակետից կարևոր նշանակություն ունեն բնության մեջ և գյուղատնտեսության համար: Հարկ ենք համարում նշել, որ ներկայումս աղոթարարները տերրարիումիստիկայում օգտագործվող ամենատարածված միջատներն են: Նրանք ունեն պաշտպանական գունավորում և ընդունակ են ստանալ այն միջավայրի գույնը, որտեղ գտնվում են, չնայած այս միջատների մոտ գունափոխության մեխանիզմը մինչև այժմ էլ լրիվությամբ ուսումնասիրված չէ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք նշել, որ սովորական աղոթարարը մեզ մոտ հանդիպում է երկու գունային երանգներով՝ կանաչ և դեղնաշագանակագույն, վերջինս նա սկսում է ձեռք բերել, երբ շրջապատող միջավայրում կանաչ գույնն աստիճանաբար փոխարինվում է դեղինով: Տարվա մեջ աղոթարարները տալիս են մեկ սերունդ:

Արցախի տարբեր ստացիոնարներից հավաքված սովորական աղոթարարների մոտ կատարել ենք մորֆոմետրիկ չափումներ, որը ներկայացնում ենք աղյուսակ 1-ում:

Սովորական աղոթարարի մորֆոմետրիկ չափումները մմ-ով

Աղյուսակ 1

	n	min-max	X	δ	m_x	Cv%	mδ	t
ՄԵ	10♀	48-76	62	14	4,43	22,5	3,13	4,47
	10♂	40-61	50,5	10,5	3,32	20,7	2,34	3,36
ԹԲ	10♀	40-70	55	15	4,74	27,2	3,35	4,47
	10♂	35-56	45,5	10,25	3,24	22,5	2,29	4,47
ԲԵ	10♀	25-30	27,5	2,5	0,79	9	0,55	4,54
	10♂	23-28	25,5	2,5	0,79	9	0,55	4,54

Կատարված հետազոտությունների արդյունքում կարող ենք նշել, որ սովորական աղոթարարը ԼՂՀ էնտոմոֆաունայում բավականին շատ հանդիպող տեսակ է, և մեզ հաջողվել է նրան գտնել բոլոր ստացիոնարներում: ԼՂՀ-ում սովորական աղոթարարի տարածման արեալները ներկայացրել ենք քարտեզ 1-ում:

Քարտեզ 1



● - Սովորական աղոթարարի տարածման արեալները

Գրականություն

1. Հայաստանի բնաշխարհ Ե. 2008
2. *Ե.Ի.Լուկին* – Կենդանաբանություն Ե. 1971
3. *Догель В.Ф* – Зоология беспозвоночных. М; 1975
4. *Наталий В.Ф* – Зоология беспозвоночных. М; 1975
5. Жизнь животных том III ;1985
6. *Мамаев Б.М.* и др – Определитель насекомых европейской части СССР М;1976
7. *Пантелеева Н.Ю.,* Математические методы в зоологии. Воронеж ;2003
8.http://mantis-suport.livejournal.com/3745.html

Богомол обыкновенный (Mantis religiosa) в энтомофауне НКР

С. Агасян

Резюме

В энтомофауне НКР отряд богомоловые представлен одним видом богомол обыкновенный (Mantis religiosa). Этот вид у нас распростронено повсемесно и зимует в фазе диопазирующих яиц. Богомол обыкновенный полезное насекомое, так как питается в основном вредными насекомыми. Для его дальнейшего сохранения в нашей энтомофауне желательно сохранить чистые уголки природы и меньше использовать инсектициды.

The Mantis Ordinary (Mantis religiosa) in Entomofauna of NKR

S. Agasyan

Summary

In the Entomology fauna of NKR Mantisreligiosa is represented by one common species. This species is widespread everywhere. It winters in the phase of diapausing eggs. The Mantis usual is a useful insect as it eats generally deleterious insects. For its further preservation in our Entomofauna it is desirable to keep pure corners of the nature and to use insecticides less.

ՀՏԴ 582. 284 *Մենագրություն*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԺԱՆԳԱՄՆԿԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Գ. Մարգարյան

Ժանգասնկերը (կարգ Uredinales) բարձրակարգ բույսերի օբլիգատ մակաբույծներ են և լայնորեն տարածված են աշխարհագրական տարբեր լայնություններում: Դրանք մահացած սուբստրատի վրա չեն զարգանում, այլ զարգանում են տեր-բույսերի կենդանի հյուսվածքներում, ինչը հատուկ է մակաբույծներին (1):

Դեռևս հին ժամանակներից մշակովի բույսերի վրա զարգացող ժանգ հիվանդությունն ուշադրության է արժանացել իր լայն տարածվածությամբ և վնասակարությամբ: Ժանգասնկերի ուսումնասիրության վերաբերյալ կուտակվել է հարուստ նյութ, և այսօր արդեն կարգը կարելի է համարել լավ ուսումնասիրված, չնայած աշխարհի շատ երկրներում դեռևս արդիական և առաջնային են դրանց տարածվածության, տեսակային կազմի հայտնաբերման և բնորոշ առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները (2-7):

Ուսումնասիրվել են նաև ԼՂՀ-ում տարածված ժանգասնկերը: Հետազոտության նյութ են հանդիսացել 130 տեսակի ժանգասնկերով ախտահարված 315 բուսական նմուշներ: Հայտնաբերված ժանգասնկերն ընդգրկված են 6 ընտանիքների 10 ցեղերում, որոնցից 83 տեսակը պատկանում է *Puccinia*, 20-ը՝ *Uromyces*, 8-ը՝ *Phragmidium*, 6-ը՝ *Melampsora*, 6-ը՝ *Gymnosporangium*, երկուական՝ *Pucciniastrum*, *Aecidium,* և մեկական՝ *Tranzschelia*, *Coleosporium*, *Milesia* ցեղերին:

Դրանցից 44-ը ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ:

Ժանգասնկերի կարգաբանությունը կատարվել է ըստ Զ.Մ. Ազբուկինայի (8):

Սնկերի տեսակների անվանումներում հեղինակների ազգանունների կրճատումները կատարվել են ըստ Պ. Կիրկի և Ա. Անսելի (9):

Տեր-բույսերի լատիներեն անվանումները ներկայացվել են ըստ Ս.Կ. Չերեպանովի (10):

Ցեղ - *Melampsora*

1. *Melampsora caprearum* (DC.) Thuem. - *Salix caprea* L.

ԼՂՀ-ում հայտնաբերվել են *Salix caprea* ծառատեսակների վրա՝ Ասկերանի շրջանի Մադաթաշեն և Ակնաղբյուր գյուղերում:

Հազվադեպ հանդիպող տեսակ է, տարատեր՝ լրիվ զարգացման ցիկլով: Էցիումները զարգանում են Pinaceae ընտանիքից *Larix* ցեղի բույսերի վրա, իսկ ուրեդինիումները և տելիումները՝ Salicaceae ընտանիքից *Salix* ցեղի ներկայացուցիչների վրա:

Ղարաբաղում հայտնաբերվել է միայն սնկի զարգացման ուրեդինիոստադիան:

2. *Melampsora coleosporioides* Dietel - *Salix babylonica* L.

Հայտնաբերվել է *Salix babylonica* ծառատեսակների վրա՝ Ասկերանի շրջանի Նորագյուղ և Ակնաղբյուր գյուղերում:
Սպերմագոնիումները և էցիումները հայտնի չեն, ուրեդինիումները և տելիումները զարգանում են Salicaceae ընտանիքին պատկանող ներկայացուցիչների վրա:
Սունկը Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են միայն ուրեդինիումները, հայտնաբերման պահին վարակն ակտիվ արտահայտված էր:

3. *Melampsora reticulatae* A. Blytt - *Saxifraga aizoides* L.

Հայտնաբերվել է *Saxifraga aizoides* տեր-բույսի վրա՝ Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում 2005թ.:
Սունկը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հայտնաբերվել է միայն մեկ անգամ սպերմագոնիալ և էցիալ փուլում: Սպերմագոնիումները և էցիումները զարգանում են Saxifragaceae ընտանիքից *Saxifraga* ցեղի ներկայացուցիչների վրա, որը հայտնաբերել էր միայն մեկ անգամ Վ.Գ. Տրանշելը 1939թ., իսկ ուրեդինիումները և տելիումները զարգանում են Salicaceae ընտանիքից *Salix . sp* ծառատեսակի վրա:

Ընտանիք - Uropyxidaceae

Ցեղ - *Tranzschelia*

4. *Tranzschelia pruni-spinosae* (Pers.) Dietel - *Prunus divaricata* Ledeb.

Հայտնաբերվել է *Prunus divaricata* տեր-բույսի վրա՝ Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում, *P. domestica* տեսակի վրա՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի շրջանների որոշ գյուղերում և Ստեփանակերտ քաղաքում:
Սունկը Ղարաբաղում տարածված տեսակ է, տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, հայտնաբերվել են միայն ուրեդինիումները և տելիումները:

Ընտանիք - Phragmidiaceae

Ցեղ - *Phragmidium*

5. *Phragmidium mucronatum* (Fr.) Schltdl. - *Rosa alpine* L. *R. canina* L. *R. spinosissima* L. *R. iberica* Stev. ex Bieb. *R. sp.*:

Հայտնաբերվել է *Rosa* ցեղին պատկանող թփատեսակների վրա Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերում և Ստեփանակերտ քաղաքի պուրակներում:
ԼՂՀ-ում այս սունկը շատ տարածված տեսակ է, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, մակաբուծում է Rosaceae ընտանիքին պատկանող բույսերի վրա: Ղարաբաղում հայտնաբերվել են սպերմագոնիումները, էցիումները, ուրեդինիումները և տելիումները:

6. *Phragmidium potentillae* (Pers.: Pers.) P. Karst. - *Potentilla recta* L.

Հայտնաբերվել է *Potentila recta* բույսի վրա Ասկերանի շրջանի Ակնաղբյուր և Խնածախ գյուղերում:
Սունկը Ղարաբաղում հազվադեպ է հանդիպում, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, մակաբուծում է Rosaceae ընտանիքին պատկանող

բույսերի վրա: Ղարաբաղում հայտնաբերվել են սնկի զարգացման բոլոր փուլերը:

7. ***Phragmidium rubi-idaei*** (DC.) P. Karst. - ***Rubus caesius*** L.

Հայտնաբերվել է *Rubus caesius* բույսի վրա Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: ԼՂՀ-ում հայտնաբերվել են զարգացման բոլոր փուլերը: Սպերմագոնիումները, էցիումները, ուրեդինիումները և տելիումները զարգանում են Rosaceae ընտանիքին պատկանող բույսերի վրա:

Այս ժանգասունկը լայնորեն տարածված է Ղարաբաղում: Վարակված օջախներ հայտնաբերվել են հետազոտությունների գրեթե բոլոր տարիներին, վարակվածությունը զգալի էր:

8. ***Phragmidium violaceum*** (Schultz.) G. Winter - ***Rubus idaeus*** L.

Հայտնաբերվել է *Rubus idaeus* բուսատեսակի վրա՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների որոշ գյուղերում և Հադրութ քաղաքում:

Սունկը Ղարաբաղում լայնորեն տարածված է, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են սնկի տելիումները:

Ընտանիք - Pucciniaceae

Ցեղ - *Gymnosporangium*

9. ***Gymnosporangium fuscum*** R. Hedw. - ***Pyrus sp.***

Հայտնաբերվել է *Pyrus sp.* տեսակի վրա՝ Ասկերանի շրջանի Ավետարանոց և Ակնաղբյուր գյուղերում:

Սունկը տարատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով: Սպերմագոնիումները և էցիումները ձևավորվում են *Pyrus* ցեղին պատկանող բույսերի վրա, տելիոսպորները՝ *Juniperus sabinae* տեսակի վրա:

Gymnosporangium fuscum սնկով վարակված տանձենու ծառեր Ղարաբաղի տարածքում հայտնաբերվել են 2005թ.՝ ընդամենը երկու անգամ: Նույնիսկ հայտնաբերման ժամանակ վարակը մեծ տարածում չի ունեցել, և ախտահարված ծառերի վրա հայտնաբերվել են վարակակիր 2-3 տերևներ: Ղարաբաղում տանձենու ժանգասունկը հազվադեպ հանդիպող տեսակ է:

10. ***Gymnosporangium tremelloides*** (A. Braun) R. Hartig - ***Malus domestica*** **Borkh.**

Հայտնաբերվել է *Malus domestica* բույսի վրա միայն մեկ անգամ 2005թ. Ակնաղբյուր գյուղում:

Սունկը Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, տարատեր՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով: Ղարաբաղում հայտնաբերվել են միայն էցիումները:

Ցեղ - *Puccinia*

11. ***Puccinia allii*** (DC.) F. Rudolphi - ***Allium sp.***

Հայտնաբերվել է *Allium sp.* տեսակի վրա միայն Ասկերանի շրջանի Ջրաղացներ և Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղերում:

Ղարաբաղում այդ սունկը հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: Հանրապետության տարածքում հայտնաբերվել են էցիումները և ուրեդինիումները:

12. ***Puccinia annularis*** **(F. Strauss) Rohl. - *Teucrium chamaedrys* L.**

Հայտնաբերվել է *Teucrium chamaedrys* տեսակի վրա՝ Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

ԼՂՀ-ում սունկը հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

13. ***Puccinia arenariae*** **(Schumach.) G. Winter - *Silene cyri* Schischk.**

Հայտնաբերվել է *Silene cyri* բուսատեսակի վրա՝ 2008թ., Շուշի քաղաքում:

Սունկը ԼՂՀ-ում հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

14. ***Puccinia armeniaca*** **Teterevn. - *Carduus sp.***

Հայտնաբերվել է *Carduus sp.* տեսակի վրա՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2007թ.:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

15. ***Puccinia bardanae*** **(Wallr.) Cummins - *Arctium lappa* L.**

Հայտնաբերվել է *Arctium lappa* բույսի վրա՝ Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերում:

Տեսակը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

Սունկը Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են միայն ուրեդինիումները և տելիումները:

16. ***Puccinia bupleuri*** **F. Rudolphi - *Bupleurum rotundifolium* L.**

Հայտնաբերվել է *Bupleurum rotundifolium* տեր-բույսի վրա Շուշիի շրջանի Ղարաղշլաղ գյուղում, 2007թ.:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են միայն տելիումները:

17. ***Puccinia celakovskyana*** **Bubak - *Cruciata taurica* (Pall. ex Willd.)**

Հայտնաբերվել է *Cruciata taurica* տեր-բույսի վրա միայն մեկ անգամ՝ 2008թ., Ակնաղբյուր գյուղում:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, ԼՂՀ-ում հազվադեպ հանդիպող տեսակ է:

18. ***Puccinia chaerophylli*** **Purton - *Chaerophyllum temulum* L.**

Հայտնաբերվել է *Chaerophyllum temulum* բույսի վրա՝ Ասկերանի շրջանի Ջրաղացներ և Բադարա գյուղերում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: Տարածվածությունը համատարած բնույթ է կրում, Ղարաբաղում հայտնաբերվել են սնկի զարգացման բոլոր փուլերը:

19. ***Puccinia conii*** **(F. Strauss) Fuckel - *Conium maculatum* L.**

Հայտնաբերվել է *Conium maculatum* բույսի վրա՝ Մարտունու շրջանի Հաղորտի և Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղերում:

Սունկը Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով: Հայտնաբերվել են սնկի ուրեդինիո և տելիոստադիաները:

20. *Puccinia convolvuli* Alb. et Schwein. - *Fallopis convolvulus* (L.) A. Love

Հայտնաբերվել է *Fallopis convolvulus* բույսի վրա՝ Մարտունու շրջանի Կարմիր գյուղում և Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում՝ 2005թ հուլիս, օգոստոս ամիսներին:

Սունկը զարգանում է լրիվ ցիկլով, միատեր է:

Ղարաբաղում հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

21. *Puccinia dactylidina* Bubak - *Dactylis glomerata* L.

Հայտնաբերվել է *Dactylis glomerata* բույսի վրա՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2007թ.:

Սունկը Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

22. *Puccinia heraclei* Grev. - *Heracleum pastinacifolium* C. Koch

Հայտնաբերվել է *Heracleum pastinacifolium* տեր-բույսի վրա՝ Ստեփանակերտ քաղաքում միայն մեկ անգամ՝ 2007թ.:

Տեսակը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

Չնայած Ղարաբաղում նշված սունկը հայտնաբերվել է միայն մեկ անգամ, բայց վարակը շատ ակտիվ արտահայտված էր: Հայտնաբերվել է սնկի զարգացման տելիոստադիան:

23. *Puccinia hordei* G. H. Otth - *Ornithogalum sp.*

Հայտնաբերվել է *Ornithogalum sp.* տեսակի վրա՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում :

Սունկը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

Սպերմագոնիումները և էցիումները զարգանում են *Ornithogalum sp.* տեսակի վրա (Hiratsuka, Sato, 1958), ուրեդինիումները և տելիումները՝ Hordeum sp. տեր-բույսի վրա: Հեռավոր Արևելքում նշված սնկի հազվադեպությունը բացատրում են էցիալ տիրոջ բացակայությամբ, իսկ սպորների առկայությունը՝ քամու միջոցով սերմերի հետ սպորների տեղափոխմամբ:

Չնայած շատ աշխատություններում նշվում են այս սնկի էցիալ տիրոջ հազվադեպ լինելու մասին, ԼՂՀ-ում նշված սնկով վարակված *Ornithogalum sp.* տեր-բույսեր հաճախ են հանդիպել Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում և, հակառակը, չեն հայտնաբերվել այս սնկով վարակված *Hordeum sp.* բուսատեսակներ: Նշենք, որ ԼՂՀ-ում Hordeum sp. բույսի ցանքատարածությունները շատ չեն:

24. *Puccinia leveillei* Mont. - *Geranium robertianum* L., *G. sanguineum* L.

Հայտնաբերվել է *Geranium robertianum* բույսի վրա՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում և Շուշի քաղաքում, ինչպես նաև *G. sanguineum* տեսակի վրա՝ նույնպես Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում:

Տեսակը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում մեծ տարածվածություն չունի:

25. *Puccinia nigrescens* Kirchn. - *Salvia sp., S. officinale* L.
Հայտնաբերվել է *Salvia officinale* տեսակի վրա՝ Մարտակերտի, Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:
Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հաճախ հանդիպող տեսակ է: Վարակված օջախներ հայտնաբերվել են ուսումնասիրության բոլոր տարիներին, հայտնաբերվել են միայն տելիումները:
26. *Puccinia onopordi* Syd. - *Onopordum acanthium* L.
Հայտնաբերվել է *Onopordum acanthium* տեսակի վրա միայն մեկ անգամ, Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում, 2005թ.:
Հազվագյուտ տեսակ է, միատեր՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:
27. *Puccinia phragmitis* (Schumach.) Koern. - *Phragmites australis* (Cav.) Trin. ex Steud.
Հայտնաբերվել է *Phragmites australis* տեսակի վրա՝ միայն Շուշի քաղաքում:
Տեսակը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:
28. *Puccinia polygoni - amphibii* Pers.: Pers. - *Persicaria maculata* (Rafin,) A & D. Love
Հայտնաբերվել է *Polygonum persicaria* տեսակի վրա՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում, 2005թ.:
Տեսակը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող: Մեզ մոտ հայտնաբերվել են միայն տելիումները:
29. *Puccinia punctata Link - Galium aparine* L.
Հայտնաբերվել է *Galium aparinae* տեսակի վրա՝ Շուշի քաղաքում և Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում:
Տեսակը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:
30. *Puccinia rangiferina* S. Ito - *Rhamnus pallasii* Fisch. & C.A. Mey
Հայտնաբերվել է *Rhamnus pallasii* տեսակի վրա՝ միայն մեկ անգամ Շուշիում, 2006թ.:
Սունկը Ղարաբաղում խիստ հազվադեպ հանդիպող տեսակ է, իսկ ախտահարված օջախներում վարակն ակտիվ արտահայտված էր:
Սունկը տարատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:
31. *Puccinia stachydis* DC. - *Stachys aspera* Michx.
Հայտնաբերվել է *Stachys aspera* տեսակի վրա՝ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում, 2005թ. և 2007թ.:
Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:
32. *Puccina tanaceti* DC. - *Artemisia absintium* L., *A. sp.*, *A. vulgaris* L.
Հայտնաբերվել է *Artemisia absintium, A. dracunculus, A. vulgaris* և *A. sp.* տեսակների վրա՝ Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

33. *Puccinia violae* (Schumach.) DC. - *Viola alba* Bess., *V. somchetica* C. Koch.,

Հայտնաբերվել է *Viola alba* և *V. somchetica* տեսակների վրա՝ Մարտունու և Ասկերանի շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հաճախ հանդիպող տեսակ է: Ղարաբաղում հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

34. *Puccinia xanthii* Schwein. - *Xanthium strumarium* L.

Հայտնաբերվել է *Xanthium strumarium* տեսակի վրա Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

Ցեղ - *Uromyces*

35. *Uromyces appendiculatus* (Pers.) Unger - *Phaseolus vulgaris* L.

Հայտնաբերվել է *Phaseolus vulgaris* տեսակի վրա Ասկերանի, Մարտունու շրջանների որոշ գյուղերում և Ստեփանակերտ քաղաքում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են միայն ուրեդինիումները և տելիումները:

36. *Uromyces coronillae - variae* Vienn. - Bourg. - *Coronilla varia* L.

Հայտնաբերվել է *Coronilla varia* տեսակի վրա՝ Մարտունու շրջանի Հաղորտի և Կարմիր շուկա գյուղերում:

Սունկը միատեր է, Hemi- զարգացման ձևով: Սնկի տարածվածությունը համատարած բնույթ չի կրում: Ղարաբաղում հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

37. *Uromyces fallens* (Desm.) F. Kern. et Barth - *Trifolium pratense* L.

Հայտնաբերվել է *Trifolium pratense* տեսակի վրա Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Տեսակը մակրոցիկլիկ է և միատեր՝ Ղարաբաղում հաճախ հանդիպող տեսակ է:

Հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

38. *Uromyces heimerlianus* Magnus - *Vicia cracca* L.

Հայտնաբերվել է *Vicia cracca* և *V. sp.* տեր-բույսերի վրա՝ Շուշիի և Մարտունու շրջաններում :

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող:

39. *Uromyces onobrychidis* (Desm.) Lev. - *Onobrychis cornuta* (L.) Desv.

Հայտնաբերվել է *Onobrychis cornuta* տեսակի վրա՝ Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

40. *Uromyces rumicis* (Schumach.) G. Winter - *Rumex crispus* L., R. sp.,

Հայտնաբերվել է *Rumex crispus* և *R. sp.* տեսակների վրա՝ Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների որոշ գյուղերում:
Հայտնի են միայն ուրեդինիումները և տելիումները:
Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են միայն տելիումները:

41. *Uromyces thapsi* (Opiz.) Bubak - *Verbascum thapsus* L.

Հայտնաբերվել է *Verbascum thapsus* տեսակի վրա՝ Մարտունու շրջանի որոշ գյուղերում:
Նշված սունկը Ղարաբաղում խիստ հազվադեպ հանդիպող տեսակ է:
Վարակված օջախներ սպերմագոնիալ և էցիալ փուլերով հայտնաբերվել են 2005-06 թթ.:
Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

42. *Uromyces viciae-fabae* (Pers.) J. Schroet. - *Lathyrus sp.*

Հայտնաբերվել է *Lathyrus sp.* տեսակի վրա՝ Ակնաղբյուր գյուղում 2005թ.:
Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են ուրեդինիումները և տելիումները:

Անամորֆ ձևեր

Ցեղ - *Aecidium*

43. *Aecidium euphorbiae* J.F. Gmel. - *Euphorbia sp.*

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Euphorbia sp.* տեսակի վրա՝ Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում 2005թ.:
Սունկը Ղարաբաղում հազվագյուտ տեսակ է:

44. *Aecidium primulinum* Azbukina - *Primula sp.*

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Primula sp.* տեսակի վրա՝ միայն մեկ անգամ 2005թ. աշնանը՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտակա անտառում:
Սունկը Ղարաբաղում շատ հազվագյուտ տեսակ է:

Այսպիսով, ԼՂՀ-ում առաջին անգամ նկարագրված ժանգասնկերը թվով 44-ն են, որոնցից 24-ը պատկանում են *Puccinia*, 8-ը՝ *Uromyces*, 4-ը՝ *Phragmidium*, 3-ը՝ *Melampsora*, երկուական՝ *Gymnosporangium*, *Aecidium* և մեկը՝ *Tranzschelia* ցեղերին: Միաժամանակ, ԼՂՀ-ում առաջին անգամ հայտնաբերված ժանգասնկերը խմբավորելով ըստ զարգացման առանձնահատկությունների՝ բացահայտել են, որ ներկայացված 44 տեսակներից 33-ը միատեր են և զարգացման ողջ գործընթացն անց են կացնում մեկ տեր-բույսի վրա, իսկ 9-ը տարատեր են, այսինքն՝ զարգացման ցիկլն ընթանում է 2 տեր-բույսի վրա: Ընդ որում հայտնաբերված 33 միատեր ժանգասնկերից 16-ը զարգանում են ոչ լրիվ, իսկ 17-ը՝ լրիվ զարգացման կենսացիկլով: Տարատեր ժանգասնկերից 6 տեսակների կենսացիկլն ընթանում է լրիվ, և 3-ը՝ ոչ լրիվ զարգացմամբ:

Գրականություն

1. *Лекомцева С.Н.* Грибы рода *Puccinia Pers.* (*Uredinales, Basidiomycota*). Таксономический анализ // Сб. Новое в систематике и номенклатуре грибов. Под ред. Дьякова Ю.Т., Сергеева Ю.В. - М.: Медицина для всех. - 2003. - С. 402 - 417.
2. *Абиев С.А.* Ржавчинные грибы злаков Казахстана. - Алма - Ата: НИЦ Фылым, - 2002. - 296 с.
3. Волкова Г.В., Антилогова Л.К., Шаповалова О.Ю. Мониторинг популяции возбудителя бурой ржавчины пшеницы на северном Кавказе // Микол. и фитопатол. - 2002. - Т. 36, вып. 5. - С. 77 - 80.
4. Лекомцева С.Н., Волкова В.Т., Зайцева Л.Г., Чайка М.Н. Патотипы возбудителя стеблевой ржавчины пшеницы *Puccinia graminis f. sp. tritici,* выделенные с различных растений - хозяев в 1996 - 2000г.г. // Микол. и фитопатол. - 2004. - Т. 38, вып. 5. - С. 68 - 73.
5. *Лекомцева С.Н., Волкова В.Т., Зайцева Л.Г., Чайка М.Н.* Вирулентность возбудителя стеблевой ржавчины пшеницы *Puccinia graminis* в некоторых регионах России в 2006 году // Микол. и фитопатол. - Современная микология в России. - М. - 2008. - Т. 2. - С. 186 - 187.
6. *Карпенко Т.В., Русанова В.А.* Ржавчинные грибы - паразиты цветочно - декоративных растений Нижнего Дона // Современная микология в России. - М. - 2008. - Т. 2. - С. 180.
7. *Гультяева Е.И.* Вирулентность популяций в северо - западном регионе РФ в 2001 - 2003 годах // Биологическая защита растений-основа стабилизации агроэкосистем¦: Сб. докл. Междунар. Научн.-практ. Конф. Краснодар, - 2004. - С. 132 - 133.
8. *Азбукина З.М.* Ржавчинные грибы (Низшие растения, грибы и мохообразные). - Владивосток: Дальнаука. - 2005. - 615 с.
9. *Kirk P.M., Ansell A.E.* Authors of fungal names. - 2003. - 84 p. http://www.index fungorum.org/Names/AuthorsOfFungalNames.asp
10. *Черепанов С.К.* Сосудистые растения России и сопредельных государств. - Санкт-Петербург. - 1995. - 990 с.

Краткое описание ржавчинных грибов, впервые обнаруженных на территории НКР

Г. Маркарян

Резюме

Впервые описаны 44 вида ржавчинных грибов на территории НКР, 24 из которых принадлежат к роду *Puccinia*, 8- *к Phragmidium,* 3- к *Melampsora, 2- к Gymnosporangium, Aecidium и* 1- к *Tranzschelia.* Определяя виды ржавчинных грибов по особенностям развития, выявилось, что, из представленных 44 видов 33-однохозяйные, а 9 разнохозяйные. Из

однохозяйных грибов 16-развиваются неполным, а 17-полным циклом. У 6-ти видов разнохозяйных грибов протекает полный биоцикл, а у 3- неполный.

The Short Survey of the Rust Fungi
Revealed in the NKR for the First Time

G.Margaryan

Summary

SUMMARY

For the first time 44 species of rust fungi on the NKR territory have been examined. Among the revealed species 24- belong to the *Puccinia*, 8 *to Phragmidium*, 3 to *Melampsora*, *2 to Gymnosporangium*, *Aecidium* and 1 to *Tranzschelia* generas. Determining the types of rust fungi according to the specific characteristics we have revealed that 33 out of 44 species are audacious, 9 are heteroecious. 16 species out of audacious ones develop through the full cycle, 17 through biocycle. 6 heteroecious rust fungis have full biocycle, 3- don't.

ՀՏԴ 582. 736 *Բուսաբանություն*

ԼՂՀ-ՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՐՈՇ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ա. Հակոբյան

Լեռնային Ղարաբաղի բուսականությունը աչքի է ընկնում իր բազմազանությամբ ու հարստությամբ: ԼՂՀ-ի տարածքում հանդիպում են 2000-ից ավելի բուսատեսակներ, որոնց թվում քիչ չեն դեղաբույսերը (1): Դարեր շարունակ մարդու կյանքում սնունդ և դեղաբույս հասկացությունները հաճախ նույնացվել են:

Համաշխարհային մասշտաբով ներկայումս կիրառվող բոլոր դեղամիջոցների 40%-ը ստացվում են բույսերից, ավելին՝ սրտանոթային հիվանդությունների բուժման բնագավառում գոյություն ունեցող բոլոր դեղամիջոցների 90%-ն ունի բուսական ծագում: Եվ պատահական չէ, որ այսօր բժշկագիտությունը դարմանելու իր արվեստը փորձում է «խարսխել» բուսական աշխարհի վրա(2):

Որպես բնական միջոցներ՝ բույսերից ստացված դեղամիջոցները օրգանիզմում կողմնակի, անցանկալի երևույթներ քիչ են առաջացնում, կարելի է դրանք երկարատև օգտագործել, որի շնորհիվ հիվանդության ընթացքի վրա ավելի արդյունավետ են ներգործում:

Բնության մեջ բուսապաշարները անսպառ չեն: Վայրի բույսերի ներգրավումը մարդու կենսագործունեության մեջ, առանց կենսապաշարների վերարտադրության բնական հնարավորությունները հաշվի առնելու, հասցրել է տեսակների աղքատացման: Ուստի կենսաբազմազանության պահպանությունը և շարունակական օգտագործման ապահովումը դարձել են առաջնահերթ խնդիրներ(3):

Քանի որ բնության մեջ բուսապաշարներն անսպառ չեն, ապա արժեքավոր վայրի դեղաբույսերը պետք է գտնվեն առանձին հսկողության տակ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Արցախում տարածված և ժողովրդի կողմից հաճախակի օգտագործվող որոշ դեղաբույսերի մորֆոկենսաբանական հատկությունները, կատարել ֆենոլոգիական դիտումներ, որոշել դրանց առատության աստիճանը, կազմել դեղաբույսերի հավաքման օրացույց:

Հետազոտությունները կատարվել են Արցախի տարածքում՝ 2009-2013թթ-ին, և տարվել են մի շարք մեթոդներով՝ երթուղաարշավային, դաշտային.վեգետացիոն, նկարագրական, քանակական :

Հետազոտվող բույսերի տեսակների քանակական ցուցանիշները որոշել ենք հիմնականում տեսողական (վիզուալ) եղանակով: Հաշվարկը կատարել ենք հետևյալ միավորների հաշվով՝ մակերեսի (դմ, մ^2, կմ^2, հա), երկարության (մ, կմ), ծավալի (մ^3, դմ^3), ժամանակի (ժամ, օր) և այլն:

Տեսակի քանակությունը հաշվելու հիմնական ցուցանիշներից է տեսակի հանդիպումը, որն արտահայտվում է հանդիպման հաճախականությամբ և գործակցով: Վերջինս ընտրված տարածքների հարաբերական քանակն է, որտեղ հանդիպում է տվյալ տեսակը: Եթե ընտրված տարածքը կազմված է 100 հաշվարկային մակերեսից, իսկ տեսակը նշված է 43-ում, ապա տարածվածությունը կազմում է 43%:

Բույսի առատությունը (обилие) միավոր մակերեսում կամ ծավալում տեսակի քանակն է: Այն բնութագրելու համար հաճախ օգտվում են Դրուդի և Խուլտի առատության սանդղակից (շկալայից) (աղ.1):

Աղյուսակ 1

Բույսի առատության սանդղակ

Դրուդի առատության սանդղակ (% -ով)	Խուլտի առատության սանդղակ (բալերով)
1. շատ առատ, համատարած բուսածածկը 90-ից ավելի է	5 (շատ առատ)
2. առատ, ըստ առատության ցուցանիշի տարբերում են բուսածածկի 3 տեսակ՝ 30-40%; 50-60%; 70-80%:	4 (առատ)
3. սովորական տարածված, համատարած բուսածածկ չկա, այն 10-20% է	3 (ոչ առատ)
4. ցրված աճ, բուսածածկը 3-5% է	2 (քիչ)
5. տեսակը հանդիպում է մեկ տեղ, բուսածածկը փոքր է 1%-ից	1 (շատ քիչ)

Ֆենոլոգիական դիտումներով բացահայտել ենք հետազոտվող դեղաբույսերի զարգացման փուլերը: Հետազոտությունները կատարել ենք Արցախի նախալեռնային, միջին և բարձր լեռնային գոտիներում:

Արդյունքները բերված են համապատասխան աղյուսակներում: (աղ.2,3,4,)

Աղյուսակ 2

Հետազոտվող բույսերի ֆենոլոգիական դիտումը 2009-2013թթ. Արցախի նախալեռնային գոտում

Բույսի անունը	զարգաց-ման փուլեր	հասունա-ցման	ծերացման	սաղմնային	երիտասարդացման	
	ամիսներ	սեպտեմբեր	հոկտեմբեր	մարտ	ապրիլ	մայիս
	միջին ջերմաս-տիճան	20-21 ^{O}C	15-16 ^{O}C	10 ^{O}C	8-9 ^{O}C	20 ^{O}C
Ծիծեռնա-խոտ մեծ	պտուղների հասունացում		նոր սաղմի հիմնադրում	վեգետատիվ օրգանների առաջացում	ծաղկում	ծաղկում
Խնկածաղիկ սովորական	ծաղկում		ծաղկում	վեգ. օրգ. առաջացում.	վեգետա-տիվ օրգանների աճ	վեգետա-տիվ օրգանների աճ
Անանուխ	նոր սաղմի հիմնադրում		պտղակալում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ.օրգ.աճ
Առյուծագի	նոր սաղմի հիմնադրում		հանգ. շրջ. անց.	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ.օրգ.աճ
Երիցուկ	պտղակալում		հանգ. շրջ. անց.	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Ուրց սողացող	հանգստի շրջանի անցում		նոր սաղմի հիմնադրում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	ծաղկում
Հազարա-տերևուկ հատվածա-տերև	հանգստի շրջանի անցում		հանգ. շրջ. անց.	վեգ. օրգ. առ.	վեգ. օրգ.աճ	ծաղկում

Խոնդատ	ծաղկում	պտղակա-լում	վարդակի առաջացում	վարդակի աճ լայնությամբ	ցողունի առաջացումը
Եղինջ երկտուն	նոր սաղմի հիմնադրում	սերմա-կալում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	ծաղկում
Ավելուկ	հանգստի շրջանի անցում	հանգ. շրջ. անց.	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Թուրինջա խոտ	պտղակալում	սերմա-կալում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ

Աղյուսակ 3
Հետազոտվող բույսերի ֆենոլոգիական դիտումը 2009-2013թթ. Արցախի միջին լեռնային գոտում

Բույսի անունը	զարգացման փուլեր	հասունացման	ծերացման	սաղմային	երիտասարդացման	
	ամիսներ	սեպտեմբեր	հոկտեմբեր	մարտ	ապրիլ	մայիս
	միջին ջերմաստիճան	18-19 ^{O}C	13,5-14 ^{O}C	8-9 ^{O}C	7-8 ^{O}C	19,4 ^{O}C
Ծիծեռնա-խոտ մեծ	պտուղների հասունացում		նոր սաղմի հիմնադրում	վեգետատիվ օրգանների առաջացում	բողբոջում	ծաղկում
Խնկածաղիկ սովորական	ծաղկում		պտղակալում	վեգ. օրգ.առ.	վեգետատիվ օրգանների աճ	վեգետատիվ օրգանների աճ
Անանուխ	ծաղկում		նոր սաղմի հիմնադրում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ.օրգ.աճ
Առյուծագի	ծաղկում		նոր սաղմի հիմնադրում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ.օրգ.աճ

Երիցուկ	պտղակալում	հանգ. շրջ. անց.	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Ուրց սողացող	պտղակալում	հանգ. շրջ. անց.	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Հազարա-տերևուկ հատվածա-տերև	ծաղկում	հանգ. շրջ. անց.	վեգ. օրգ. առ.	վեգ. օրգ.աճ	բողբոջում
Խռնդատ	ծաղկում	ծաղկում	վարդակի առաջացում	վարդակի աճ լայնությամբ	վարդակի աճ
Եղինջ երկտուն	նոր սաղմի հիմնադրում	սերմակալում	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Ավելուկ	սերմակալում	հանգ. շրջ. անց.	վեգ.օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ

Աղյուսակ 4

Հետազոտվող բույսերի ֆենոլոգիական դիտումը 2009-2013 թթ. Արցախի բարձր լեռնային գոտում

Բույսի անունը	զարգացման փուլեր	հասունա-ցման	ծերացման	սաղմային	երիտասարդացման	
	ամիսներ	սեպտեմ-բեր	հոկտեմ-բեր	մարտ	ապրիլ	մայիս
	միջին ջերմաստիճան	16-17 ^{O}C	12-13 ^{O}C	5-6 ^{O}C	6-7 ^{O}C	18-19 ^{O}C
Ծիծեռնախոտ մեծ	պտուղների հասունացում		նոր սաղմի հիմնա-դրում	վեգետա տիվ օրգան-ների առաջա-ցում	վեգետա-տիվ օրգանների աճ	բողբո-ջում

Խնկածա-ղիկ սովորական	ծաղկում	ծաղկում	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ. աճ	վեգ. օրգ.աճ
Անանուխ	ծաղկում	ծաղկում	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Առյուծագի	ծաղկում	պտղակա լում	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Երիցուկ	պտղակալում	հանգ. շրջ. անց.	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Ուրց սողացող	պտղակալում	հանգ. շրջ. անց.	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Հազարա-տերևուկ հատվածա-տերև	ծաղկում	պտղակալ ում	վեգ. օրգ. առ.	վեգ. օրգ.աճ	ցողունի առաջա ցում
Խռնդատ	բողբոջում	ծաղկում	վեգ. օրգ. առ.	վարդակի ձևավորում	վարդակի աճ
Եղինջ երկտուն	նոր սաղմի հիմնադրում	սերմակալ ում	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Ավելուկ	ծաղկում	սերմակալ ում	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ
Թուրինջա խոտ	ծաղկում	պտղակալ ում	վեգ. օրգ.առ.	վեգ. օրգ.աճ	վեգ. օրգ.աճ

Ֆենոլոգիական դիտումներից երևում է, որ նախալեռնային գոտում հետազոտվող դեղաբույսերի ֆենոփուլերի հերթագայումը, համեմատած միջին լեռնային գոտու հետ, 6-15 օր ավելի շուտ է կատարվում: Պատճառը ջերմաստիճանի տարբերությունն է: Հայտնի է, որ յուրաքանչյուր 100 մ բարձրանալիս ջերմաստիճանը իջնում է 0,6˚C աստիճանով: Հենց դա էլ ուշացնում է բույսերի զարգացման փուլերը:

Համեմատելով աղյուսակների (2,3,4) տվյալները՝ եզրակացնում ենք, որ բարձր լեռնային գոտում համեմատաբար ցածր ջերմաստիճանի պատճառով միևնույն բույսի զարգացման փուլերը ձգձգվում են:

Մի քանի տարիների ընթացքում համեմատելով տարբեր բույսերի զարգացման փուլերի ժամկետների ֆենոլոգիական դիտումները, կարելի է կազմել բնության օրացույց, որը ցույց կտա բուսական կյանքի երևույթների ընթացքը տարվա որոշակի ժամանակի ընթացքում: Իսկ դրա նշանակությունն այն է, որ նախօրոք կարելի է պլանավորել դեղաբույսերի հավաքման ու չորացման գործընթացը:

Ֆենոլոգիական դիտումների հիման վրա կազմել ենք հետազոտվող դեղաբույսերի հավաքման օրացույց:

Աղյուսակ 5

Հետազոտվող դեղաբույսերի հավաքման օրացույց

Բույսի անունը	Հումքը	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Անանուխ	վերգետնյա մասը						*	*	*				
Առյուծագի	վերգետնյա մասը						*	*					
Երիցուկ բժշկական	ծաղիկներ					*	*	*	*				
ՈՒրց սողացող	վերգետնյա մասը						*	*					
Խնկածաղիկ սովորական	վերգետնյա մասը							*	*				
Հազարտերևուկ հատվածատերև	վերգետնյա մասը						*	*	*				
Խռնդատ	ծաղկաբույլեր								*	*			
Եղինջ երկտուն	արմատներ								*	*	*		
	տերևներ						*	*	*				
Ավելուկ	կոճղարմատ				*	*			*	*			
Թուրինջախոտ բժշկական	վերգետնյա մասը						*	*					
Ծիծեռնախոտ մեծ	վերգետնյա մասը				*	*	*						
Պատրինջ	վերգետնյա մասը					*							
Հոնի	տերևները, պտուղը									*			
Մասրենի	պտուղը										*		
Սերկևիլ	պտուղը, տերևները										*		
Սեզ	պտուղը, ճյուղեր,պտուղները										*		
Վարդ	ծաղիկը					*	*	*	*	*	*		
Մոշենի	պտուղը, տերևները							*	*	*			
Մորի անտառային	պտուղը					*			*				

Բալ	պտուղը						*	*					
Ձկռենի	պտուղը										*		
Ծորենի	պտուղը									*	*		
Լորենի	տերևները										*		
Եղրդակ սովորական	ծաղիկը					*				*	*		
Երեքնուկ մարգագետնային	ծաղիկը									*	*		
Նռենի	պտուղը										*		
Չիչխան սովորական	պտուղը									*	*		
Սրոհունդ խոցված	վերգետնյա մասը						*	*					

Հետազոտվող բույսերի տեսակների քանակական ցուցանիշները որոշել ենք հիմնականում տեսողական (վիզուալ) եղանակով, որը բնութագրելու համար օգտվել ենք Դրուդի և Խուլտի առատության սանդղակից (շկալայից): Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են աղյուսակ 6 –ում:

Աղյուսակ 6

Հետազոտվող բույսերի տարածման առատության աստիճանը

Բույսի անունը	Նախալեռնային գոտի (Բերդաշեն, Գիշի, Ասկերան Մաճկալաշեն)		Միջին լեռն. գոտի (Նորագյուղ, Շոշ, Ակնաղբյուր, Սարուշեն, Բադարա)		Բարձր լեռն. գոտի (Ստեփանակերտ, Ազոխ, Տող)	
	ըստ Դրուդի (%)	Ըստ Խուլտի (բալ)	ըստ Դրուդի (%)	Ըստ Խուլտի (բալ)	ըստ Դրուդի (%)	Ըստ Խուլտի (բալ)
Ծիծեռնախոտ մեծ	3-5	2	10-20	3	10-20	3
Խնկածաղիկ սովորական	10-20	3	30-40	4	30-40	4
Անանուխ	30-40	4	10-20	3	10-20	3
Առյուծագի	30-40	4	10-20	3	3-5	2
Երիցուկ	30-40	4	30-40	4	30-40	4
Ուրց սողացող	10-20	3	30-40	4	30-40	4
Հազարատերևուկ հատվածատերև	30-40	4	30-40	4	30-40	4
Խռնդատ	10-20	3	30-40	4	30-40	4

Եղինջ երկտուն	30-40	4	30-40	4	30-40	4
Ավելուկ	30-40	4	10-20	3	10-20	3
Թուրինջախոտ	10-20	3	10-20	3	10-20	3

Աղյուսակ 6 –ի թվային տվյալներից երևում է, որ ԼՂՀ-ում դեղաբույսերի տարածվածությունն ըստ Խուլտի և Դրուդի սանդղակի գնահատվում է հիմնականում 4 (առատ) և 3 (ոչ առատ) բալերով: Ոստի դեղաբույսերը հավաքելիս պետք է հաշվի առնել այդ հանգամանքը, տվյալ տարածքում անպայման թողնել դեղաբույսերի գոնե 30 տոկոսը՝ վերականգնման նպատակով:

Գրականություն

1. *Լ. Վ. Հարությունյան, Ա.Լ. Հարությունյան, Լ. Ռ. Իսրայելյան,* Արցախի ֆլորան, Հատոր I, Երևան, 2007, էջ 8-10
2. *Ա. Ա. Թորոսյան,* Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983.
3. *Է. Գ. Ղուկասյան,* Բուժում դեղաբույսերով, Երևան, 1992.

Фенологические наблюдения и определение степени обилия некоторых лекарственных растений, распространенных в НКР

А.Акопян

Резюме

В настоящей работе предоставлены степень обилия широко применяемых населением Арцаха лекарственных растений, и результаты их фенологических наблюдении, на основании которых был составлен календарь сбора.

В результате исследовании выяснилось, что степень обилия исследуемых растений оценивается в 4 /обильно/ и 3/ необильно/ бала.

Phenological observations and identifying the abundance of some medicinal plants common in NKR

A.Hakobyan

Summary

In this paper, given the degree of the abundance of the population of Artsakh widely used medicinal plants, and the results of phenological observations on which was drawn up calendar collection.

The study found that the degree of the abundance of the test plants is estimated at 4/rich / and 3/ scant / ball.

ՀՏԴ 575 *Գենետիկա*

ԱՆՊՏՂՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Ա.Թորոսյան

Անպտղությունը ներկայումս հանդիպող ամենատարածված աղետներից է: Այն ոչ միշտ է պայմանավորված ֆիզիոլոգիական խնդիրներով: Քիչ չեն դեպքերը, երբ պատճառները հանգում են մի շարք գիտակցված և չգիտակցված հոգեբանական բարդությունների:

Հաճախ չբերության ախտորոշումն ընկալվում է որպես դատավճիռ, պատիժ, դառնում է ընտանեկան կյանքի փլուզման պատճառ: Խնդրի կարևորությունը ստիպում է բժիշկներին անընդհատ փնտրել դրա լուծման նորանոր ուղիներ: Իհարկե, որքան բարդ է խնդիրը, այնքան ուժ, հնարավորություն և ժամանակ է պետք դրա լուծման համար:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշմամբ՝, անպտղությունը վերարտադրողական տարիքի զույգի մոտ առանց հակաբեղմնավորիչների օգտագործման, 1 տարվա ընթացքում կանոնավոր սեռական կյանքի պայմաններում հղիության բացակայությունն է: «Անպտուղ ամուսնություն» հասկացությունը օգտագործվում է ժողովրդագրության մեջ և ներառում է հղիության մեռելածնությունը, երեխաների մահը և երեխա չունենալու ցանկությունը: Ահա թե ինչու չբերության բուժումը պետք է դիտարկել որպես բնակչության վերարտադրողական պոտենցիալի հեռանկարային աճի ռեզերվ [1.4]:

Չբերության խնդիրն իր յուրահատուկ տեղն ունի բժշկության մեջ: Բժշկասոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ կանանց 93%-ի մոտ այն բերում է հոգեկան և սոցիալական դիսկոմֆորտի, նվազեցնում սոցիալական ադապտացիան, մասնագիտական ակտիվությունը, բարձրացնում ամուսնալուծությունների հաճախականությունը: XX դարի վերջին տասնամյակները բնութագրվում են չբերության տարբեր ձևերի ախտորոշման և բուժման բնագավառում ձեռք բերված զգալի հաջողություններով [2.3]:

Աշխարհում այսօր շուրջ 80 մլն մարդ տառապում է չբերությամբ և նրանց մեծամասնությունն ապրում է զարգացող երկրներում [4]:

ԼՂՀ-ում 2009 թվականից սկսել են հետազոտություններ կատարվել անպտղության վերաբեր-յալ, բայց դեռևս 1990 թ թվականից արդեն ի հայտ են գալիս զույգեր, որոնց մոտ հանդիպում էր ուշ հղիանալու երևույթները, բայց այդ ժամանակ չկային մասնագետներ և բժիշկներ, որոնք զբաղվում էին միայն այդ ուղղությամբ: Միայն 2009թ. կեսերից սկսած՝ ստեղծվեց անպտղության հարցերով զբաղվող առանձին բաժանմունք, որը կարծես թե լուրջ առաջընթաց էր:

2009-2013 թթ. ԼՂՀ անպտղության բաժանմունք այցելել են 400 զույգեր (800 անհատ), որոնք ունեցել են տարբեր հիվանդություններ: Հարկ է նշել, որ

ոչ բոլոր հիվանդներն են դիմում նշված բաժանմունք, ոմանք բուժման համար մեկնում են ՀՀ:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի ծննդատան անպտղության բաժանմունք դիմած հիվանդների տվյալների՝, խոզուկով հիվանդ տղամարդիկ կազմել են 12 հոգի՝ 1.5%:

Հորմոնալ խանգարումներով կանանց թիվը կազմել է 200 հոգի՝ 2.5%: Ձվարանի պոլիկիստոզով հիվանդ կանանց թիվը կազմել է 168 հոգի՝ 21%:

Արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

ԼՂՀ ծննդատան անպտղության բուժման բաժանմունք դիմած տարբեր հիվանդություններով հիվանդների հանդիպման հաճախականությունը (2009-2013 թթ)

(աղյուսակ 1)

N	Հիվանդությունը	Հիվանդությունը տոկոսով(%)	Հիվանդների քանակը (400 զույգ անհատի հաշվով)	Տղամարդ	Կին
1	Խոզուկ (պարոտիտ)	1,5	12	12	-
2	Հորմոնալ խանգարումներ	25	200	-	200
3	Ձվարանի պոլիկիստոզ	21	168	-	168

Աղյուսակ 1-ի վերլուծությունից երևում է, որ բաժանմունք դիմած 400 զույգերից հետազոտված տղամարդկանց 1,5%-ի մոտ խոզուկ (պարոտիտ) հիվանդության պատճառով լրիվ բացակայել է սպերմատոգենեզը: Իսկ հայտնի է, որ տղամարդկանց արական սեռական գեղձերում՝ սերմնարաններում հասունանում են սպերմատոզոնիումները: Բազմացման, աճման և հասունացման փուլից հետո ձևավորվում են հասուն սպերմատոզոիդներ: Այս ժամանակահատվածում, երբ տղաները հիվանդանում են խոզուկով, ընկճվում է սպերմատոգենեզի ընթացքը, և վերջնական փուլում առաջանում են ոչ կենսունակ սպերմատոզոիդներ կամ ընդհանրապես նրանց հասունացումը դադարում է, որի հետևանքով դեռահասի սերմնարանում չեն լինում կենսունակ սպերմատոզոիդներ: Ինչքան վաղ են ախտորոշվում սպերմատոգենեզի խանգարումները, այնքան բուժման հավանականությունը ավելի մեծ է:

Զույգերի 25%-ի մոտ անպտղության պատճառը հորմոնալ խանգարումներն են: Կանանց 42-45%-ի մոտ հայտնաբերվել է ձվարանի պոլիկիստոզ: Այն լինում է առաջնային և երկրորդային: Առաջնային

պոլիկիստոզը դիտվում է այն կանանց մոտ, ովքեր ունեն մարմնի ավել քաշ և արյան շիճուկում ինսուլինի բարձր մակարդակ, որն ավելի քիչ ծանր ընթացք է ունենում: Իսկ երկրորդնային պոլիկիստոզը դիտվում է ավելի ուշ հասակում, որի պատճառը հանդիսանում են կանանց սեռական ոլորտի հաճախակի քրոնիկ բորբոքային հիվանդությունները: Ձվարանների պոլիկիստոզը կարող է զարգանալ նաև ժառանգական հակվածության պատճառով: Կինը պետք է ուշադրություն դարձնի՝ հիվանդացե՞լ են արդյոք նրա բարեկամները հիպերտոնիկ հիվանդությամբ, երկրորդ տիպի շաքարային դիաբետով, ճարպակալումով: Տվյալ հիվանդությունների առկայության դեպքում մեծանում է ձվարանների պոլիկիստոզի զարգացման ռիսկը:

400 զույգից միայն մեկի մոտ է գրանցվել ժառանգական գործոնով պայմանավորված անպտղություն, որի հետագա բուժումը շարունակվել է ՀՀ-ում:

Ըստ ԼՂՀ բնակչության թվի, որը կազմում է մոտ 150 հազար մարդ, ըստ մեր ունեցած տվյալների, որոշել ենք անպտղության տոկոսը: Ունենալով 400 անպտուղ զույգ (800 անհատ) անպտղությունը կազմել է ընդհանուր բնակչության

$$\frac{800 * 100\%}{150000} = 0.53\%$$ (առաջնային անպտղություն)

Մեր կողմից հետազոտություններ ենք կատարել նաև բնակչության շրջանում (թվով 5 զույգի մոտ), որոնց մոտ անպտղությունն ի հայտ է եկել տարբեր տարիքում և ունեցել են տարբեր բնույթի հիվանդություններ: Միաժամանակ պարզել ենք, որ տվյալ հիվանդները հիվանդ բարեկամներ չունեին, չկային նաև տոհմում: Ուրեմն այս հիվանդների անպտղությունը ձեռքբերովի է: Մեր կարծիքներն ու հետևությունները հաստատելու համար կատարել են առանձին անհատների հետազոտություններ: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Ստեփանակերտ քաղաքի բնակչության շրջանում անպտղության վերաբերյալ կատարած հետազոտությունների հանդիպման հաճախականությունը (2009-2013 թթ)

(աղյուսակ 2)

	Հիվանդությունը (կանանց շրջանում)	Ամուսնացել է (տարիքը)	Բուժման ժամանակա-հատվածը (տարի)	Հղիանալու տարիքը	Այժմյա տարիքը	Երեխա-ների քանակը
1	Պոլիկիստոզ	19	2	24	29	2
2	Էնդոմետրիոզ	21	5	31	40	2
3	Հորմոնալ խանգարում	18	4	24	38	3
4	Արգանդափողի անանցանելիություն	20	3	23	27	1
5	Արգանդի բորբոքում	19	1	22	22	հղի է

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների՝, հիվանդ կինն ամուսնությունից մեկ տարի հետո, չհղիանալու պատճառով, դիմել է բժշկի՝ Ստեփանակերտ քաղաքում: Հետազոտությունից պարզվել է, որձվարանների վրա կան բորբոքային բշտեր: Վերջնական ախտորոշումը դրվեց առաջնային պոլիկիստոզ: Բուժումից հետո կնոջ մոտ ի հայտ եկավ առաջին հղիությունը:

Երկրորդ հիվանդն ամուսնությունից հետո ևս դիմել է բժշկի Ստեփանակերտ քաղաքում:Հետազոտությունից պարզվել է, որ կինը հիվանդ էր էնդոմետրիոզով: Հայտնի է, որ էնդոմետրիոզը դիտվում է որպես կանանց մոտ չբերության պատճառներից մեկը:Այն ախտաբանական պրոցես է, որը բնութագրվում է էնդոմետրիումի՝ արգանդի լորձաթաղանթի գործող հյուսվածքի բորբոքային օջախի առաջացմամբ:

Երկարատև բուժումից հետո նրա մոտ գրանցվել է առաջին հղիությունը:

Հաջորդ հետազոտվող հիվանդի մոտ դաշտանային ցիկլը խանգարված էր, որի պատճառով հորմոնալ խանգարումներն էին: Կնոջ դաշտանային ցիկլը մինչև ամուսնանալը անկայուն էր հենց սկզբից, կրկնվում էր երեք, նույնիսկ չորս ամիսը մեկ ու ցիկլը տևում էր տասն օր: Ամուսնությունից հետո երբ չի հղիացել, դիմել է բժշկի: Կրկնվող բուժումից հետո նրա մոտ գրանցվել է առաջին հղիությունը:

Ըստ աղյուսակ 2-ի՝ չորրորդ հիվանդի մոտ կար արգանդափողերի անանցանելիություն, որը դժվարացնում է ֆալոպյան փողերով սպերմատազոիդի շարժունակությունը:

Արգանդափողերի անանցանելիությունը կապված է մի շարք սեռավարակների հետ (գոնորեա, տրիխոմոնազ, խլամիդիոզ, ուրեապլազմոզ, միոպլազմոզ):Բուժման կուրսից հետո կնոջ մոտ գրանցվել է առաջին հղիությունը:

Հաջորդ հիվանդի մոտ արգանդի բորբոքումը կապված էրաշխատանքի վատ պայմանների հետ, որի հետևանքով էլ առաջացել է արգանդի բորբոքում: Բուժվելուց հետոնա հղիացել է:

Հայկական ասոցիացիայի նախագահ, գինեկոլոգ Է. Համբարձումյանը համեմատելով ՀՀ-ի տվյալները ԼՂՀ-ի տվյալների հետ, նշել է, որ ԼՂՀ-ում անպտղության տոկոսն ավելի մեծ է, քան ՀՀ-ում: Ըստ մասնագետի՝ ՀՀ-ում անպտղությունը կազմում է 18%, իսկ ԼՂՀ-ում՝ 20-21%: Բժշկի կարծիքով դրա պատճառն այն է, որ Արցախի այսօրվա երիտասարդ սերունդը պատերազմի հետևանքով վախի, ցրտի ու մթության մեջ մեծացած երեխաներն են: Սակայն, քանի որ ԼՂՀ-ում 2009 թ-ից է սկսվել անպտղության վերաբերյալ հետազոտությունների կատարումը, այն էլ՝ 400 զույգի մոտ, ուստի առաջնային անպտղությունը կազմել է 0,53%:

Խորհուրդ ենք տալիս կանանց, որպեսզի հղիանան ու ծննդաբերեն մինչև 30 տարեկանը, որովհետև 35 տարեկանից հետո հղիանալու հավանականությունը նվազում է շատ անգամ, աճում է ախտածնությունը:

Բժիշկներն անընդհատ փնտրում են դրա լուծման նորանոր ուղիներ: Իհարկե, որքան բարդ է խնդիրը, այնքան հնարավորություն, ժամանակ և համբերություն է պետք անպտղության բուժման համար:

Գրականություն

1. *Հակոբյան Ա. Է., Ներսիսյան Ն. Լ.*, Կլինիկական սեքսոլոգիա, Երևան 2006 թ. էջ 48-62:
2. *Հակոբյան Ա. Է., Զաքարյան Մ.Հ.,* Ներսիսյան Ն. Լ., Սեքսոպաթոլոգիա, ռեպրոդուկտոլոգիա, Երևան, էջ 50-61:
3. *Вихляева Е.М.,* Руководство по эндокрингинекологии - Медицинское информационное агенство 2002 г. с. 432-433.
4. *Селезнева Н. Д.,* Бесплодие в браке, 2006 г. с. 87-93.

Бесплодие, причины и распространенность в НКР

А.Торосян

Резюме

Бесплодие на сегодняшний день является одним из наиболее распространенных бедствий. Исходя из важности проблемы, в НКР было открыто отделение по вопросам бесплодия. Нами было выяснено, что у обратившихся в отделение 400 пар, первичное бесплодие составило 0.53% (15000) от общего числа населения. При этом число мужчин, переболевших паротитом, составило 12 человек (1,5%), число женщин с гормональными нарушениями - 200 человек (25%), число женщин, больных поликистозом яичника 165 человек (21%).

Infertility: its Causes and Incidence in NKR

A.Torosyan

Summary

Infertility is the most widespread disaster nowadays. Based on the importance of the problem of infertility in NKR a special department was opened. We have found out that among 400 couples that came to the department with that problem, only 0.53% (15000) of the total population was with primary infertility. Moreover, the number of men who suffered from mumps consisted 12 people (1.5%), the number of women with hormonal disorders – 200 (25%) and with polycystic ovary – 165 people (21%).

ՀՏԴ *Բնապահպանություն*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Լ. Ղուկասյան, Գ. Մարգարյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) բնաշխարհը շատ հարուստ է բնության՝ հատուկ պահպանման ենթակա տարածքներով, բնապահպանական, ռեկրեացիոն և սոցիալ-տնտեսական բացառիկ արժեք ներկայացնող բնության հուշարձաններով:

Բնության հատուկ պահպանվող տարածքները ցամաքի և համապատասխան օդային ավազանի բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, գբոսաշրջության, գեղագիտական արժեք ներկայացնող առանձնացված տարածքներ և բնական օբյեկտներ են (1):

ԼՂՀ - ում վերջին տասնամյակում սկսել են մեծ ուշադրություն դարձնել բնության հատուկ պահպանվող տարածքների ուսումնասիրման, անձնագրավորման և պահպանման խնդրին: Հատուկ ուշադրության է արժանի ԼՂՀ-ում բնության հուշարձանների ուսումնասիրման հարցը (2):

Բնության հուշարձանները գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են :

Բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև բնական և մարդածին տարբեր աստիճանի ազդեցության ենթարկված էկոհամակարգերը, լանդշաֆտները կարող են միավորվել մեկ ամբողջական համակարգի՝ կենսոլորտային տարածքների մեջ, որոնք ստեղծվում են համընդհանուր էկոլոգիական մոնիթորինգի իրականացման և բնօգտագործման արդյունավետ մեթոդների, ձևերի մշակման ու ներդրման նպատակով: Կենսոլորտային տարածքում ընդգրկված տարբեր կատեգորիաների բնության հատուկ պահպանվող տարածքներ գործում են այդ կատեգորիաների համար նախատեսված ռեժիմները և սահմանափակումները (3-4):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են հետևյալ կերպ.

- ըստ նշանակության՝ միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների
- ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկ, պետական արգելավայրի և բնության հուշարձան:

ԼՂՀ բնության հուշարձաններն ըստ ծագման դասակարգվել են հետևյալ հիմնական խմբերի մեջ՝

- երկրաբանական և երկրաձևաբանական
- ջրագրական
- ջրաերկրաբանական
- կենսաբանական
- բնապատմական

ԼՂՀ բնության հուշարձանների դասակարգումն՝ ըստ վերը նշված տիպերի, ներկայացվում է աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1

Ց Ա Ն Կ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

I. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

N	Անվանումը /նկարագիրը/	Տեղադիրքը
1	«Հացոտ» քարանձավ-սրբատեղի	*Ասկերան քաղաքից 2կմ հարավ-արևմուտք*
2	«Մեծ Նան» քարանձավ-աղբյուր	*Ասկերանի շրջան, Խնապատ գյուղից մոտ 2-2.5կմ հարավ-արևմուտք*
3	«Իծատանը տոն» քարանձավ	*Ասկերանի շրջան, Խնապատ գյուղից 2-2.5կմ հարավ-արևմուտք*
4	«Բլեն ծակ» քարանձավ	*Ասկերանի շրջան, հին Նորագյուղի մոտ, «Բլեն ծակ» կոչվող տեղամասում*
5	«Քարե տուն» քարանձավ	*Ասկերանի շրջան, Սարդարաշեն գյուղի մոտ, Չնգլ կոչվող տեղամասում*
6	«Խազան աղբյուր» քարանձավ	*Ասկերանի շրջան,Վարդաձոր գյուղի մոտ*
7	«Սվքարեր» քարանձավ	*Ասկերանի շրջան, Պատարա գյուղի մոտ, Սվքարեր կոչվող տեղամասում*
8	«Սև» քարանձավ	*Ասկերանի շրջան, Պատարա գյուղի մոտ, Ղրլխ կոչվող տեղամասում*
9	«Պերթ» քարանձավ	*Ասկերանի շրջան, Պատարա գյուղի մոտ, Պորթ կոչվող տեղամասում*
10	«Ծակ քերծ» քարանձավ	*Ասկերանի շրջան, Խնածախ գյուղի մոտ*
11	«Հարու» քարանձավ	*Ասկերանի շրջան, Հարավ գյուղի մոտ*
12	«Անանուն» քարանձավ	*Ասկերանի շրջան, Կարկառ գետի աջ ափին, Քարին տակ գյուղից 500մ հյուսիս -արևելք, երկարությունը՝ 72մ*

13	«Ճգնավորի» քարանձավ	*Մարտակերտի շրջան, Կիչան գյուղից 1,5կմ արևմուտք*
14	«Ազոխի» քարանձավ	*Հադրութի շրջան, Ազոխ գյուղից 1կմ հարավ-արևելք, երկարությունը՝ 190մ, ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա*
15	«Ծծախաչ» քարանձավ	*Հադրութի շրջան, Մեծ Թաղեր գյուղի հարավային մասում, երկարությունը 22մ, ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա*
16	«Անանուն» քարանձավ - բնակարան	*Քաշաթաղի շրջան, Մազրա գյուղի մոտ*
17	«Զոբան գյուներ» քարանձավ	*Քաշաթաղի շրջան, Բերդաձոր գյուղից 3-3,5կմ հյուսիս-արևմուտք*
18	«Տանձուտ» քարանձավ	*Քաշաթաղի շրջան, Տանձուտ գյուղի մոտ*
19	«Անանուն» քարանձավ	*Շուշիի շրջան Կարկառ գետի ձախ ափին, Քարին տակ գյուղի հյուսիսային մասում, երկարությունը 114մ, ծովի մակերևույթից 1365մ բարձրության վրա*
20	«Աստղաշենի» բրածո ֆաունա	*Ասկերանի շրջան, Աստղաշեն գյուղի հյուսիս-արևմտյան եզերքում*
21	«Հոնուտի ձոր» կիրճ	*Շուշիի շրջան, Կարկառի գետահովտի՝ Քարին տակ-Մխիթարաշեն գյուղերի հատվածում*
22	«Փանջակ քար» (Դեղ-Նատարին ամրոց) ժայռագագաթ	*Մարտակերտի շրջան, Գառնաքար գյուղից 6.5 կմ հարավ-արևմուտք*
23	«Զրաբերդի» կիրճ	*Մարտակերտի շրջան, Թարթառ գետի հետ նրա Թրղի վտակի միացման հատվածում*
24	«Կաչաղակաբերդ» ժայռագագաթ	*Մարտակերտի շրջան, Քոլատակ գյուղից 3,5կմ հարավ-արևելք*
25	«Մուղդուսի քար», (Խոխանաբերդ) ժայռագագաթ	*Մարտակերտի շրջան, Գառնաքար գյուղից 6կմ արևմուտք (Վանք գյուղից 3կմ հարավ արևելք)*
26	«Ալ լճեր» հրաբուխ	*Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 22 կմ հյուսիս-արևմուտք*
27	«Իշխանասար» հրաբուխ (Կարադաղ լեռ)	*Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 15 կմ արևմուտք*
28	«Քառման» հրաբուխ (Քարմանբերթափե լեռ)	*Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 25 կմ հյուսիս-արևմուտք*
29	«Ծրմանա քար» ժայռագագաթ	*Մարտունու շրջան, Գիշի, Մուշկապատ, Ճարտար գյուղերի արանքում*

30	«Աղջկաբերդ» (Կուսաբերդ) ժայռաքանդակ	*Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղից 2 կմ հյուսիս*
31	«Ալսար» հրաբուխ	*Շահումյանի շրջան, Մեծ Ալ լճից 4 կմ հարավ-արևմուտք*
32	«Քարախաչ» հրաբուխ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր», նախկին առողջարանից 11կմ արևմուտք*
33	« Բյուրակն» հրաբուխ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր» նախկին առողջարանից 11կմ հարավ-արևմուտք*
34	«Աղահեճք» հրաբուխ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր» նախկին առողջարանից 11կմ հարավ*
35	«Անանուն» այնուածն բազալտների անջատումներ	*Շահումյանի շրջան, Թարթառ գետի հյուսիս-արևմտյան գառիթափ լանջին՝ Քարվաճառ շրջկենտրոնի մոտ*
36	«Տրտուի» կիրճ	*Շահումյանի շրջան, Տրտուի գետահովտի Նոր Գետաշեն-Դադիվանք հատվածում*
37	«Դուլթխուի» կիրճ	*Շահումյանի շրջան, Թուլթխունի գետահովտի ստորին հոսանքի՝ Տրտու գետի հետ միացման հատվածում*
38	«Լևի» կիրճ	*Շահումյանի շրջան, Լևի գետահովտի ստորին հոսանքի՝ Տրտու գետի հետ միացման հատվածում*

II. ՋՐԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

39	«Գանձակի» ջրվեժ	*Մարտակերտի շրջան, Վանք գյուղի մոտ*
40	«Ծապին ձոր» ջրվեժ	*Մարտակերտի շրջան, Առաջաձոր գյուղի մոտ, 20-25 մ բարձրությամբ*
41	«Մեծ Ալ» լիճ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր» նախկին առողջարանից 24կմ հյուսիս-արևմուտք*
42	«Փոքր Ալ» լիճ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր» նախկին առողջարանից 20կմ հյուսիս-արևմուտք*
43	«Սև» լիճ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր» նախկին առողջարանից 10կմ հարավ-արևմուտք*
44	«Ծալք» լիճ	*Շահումյանի շրջան, «Զերմաջուր» նախկին առողջարանից 13կմ հարավ-արևմուտք*
45	Ակնալիճ	*Շահումյանի շրջան, Դադիվանքից 17կմ հյուսիս*
46	«Սև» լիճ	*Քաշաթաղի շրջան, Հոչազ գետի աջ վտակ Ծարաձորի ակունքների մոտ*
47	«Այլախ» լիճ	*Քաշաթաղի շրջան, Հոչազ գետի աջ վտակ Ծարաձորի ակունքների մոտ*
48	«Զոֆլիգյոլ» լիճ	*Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 9կմ հյուսիս-արևմուտք*
49	«Մեծ» լիճ	*Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 6կմ հարավ-արևմուտք*
50	«Սև» լիճ	*Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 10կմ արևմուտք*

III. ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

51	«Չիչքարի ձոր» սառնատուն	*Մարտակերտի շրջան, Առաջաձոր գյուղի մոտ*
52	«Թթու ջուր» հանքային աղբյուր	*Թբղլու գյուղի արևմտյան եզրին*
53	«Մթնաձորի» աղբյուր	*Մարտակերտի շրջան, Հաթերք գյուղից 7,5կմ հյուսիս*
54	«Հացի» աղբյուր	*Մարտակերտի շրջան, Վանք գյուղի արևմտյան եզերքում, Խաչեն գետի աջ ափ*
55	«Յուրտ» աղբյուր	*Մարտակերտի շրջան, Մեծ շեն գյուղից 3կմ հարավ*
56	«Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր	*Շահումյանի շրջան, Զուար գյուղից 3,5կմ հարավ, Թութխուն գետի ձախ ափին*
57	«Խոլոզանց ջերմաղբյուր» հանքային աղբյուր	*Շահումյանի շրջան, Քարվաճառ շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք, Թարթառ գետի ձախ ափին*
58	«Դութխուի» հանքային աղբյուր	*Շահումյանի շրջան, Թութխուն գետի միջին հոսանքում, Զուար գյուղից 6 կմ հարավ, Թութխուն գետի ձախ հովտալանջում*
59	«Ներքին ջերմաջուր» հանքային աղբյուր	*Շահումյանի շրջան, («Ջերմաջուր» նախկին առողջարանից 2 կմ հյուսիս)*
60	«Վերին ջերմաջուր» հանքային աղբյուր	*Շահումյանի շրջան, («Ջերմաջուր» նախկին առողջարանի մոտ)*
61	«Բաղրսաղ» հանքային աղբյուր	*Շահումյանի շրջան, («Ջերմաջուր» նախկին առողջարանից 2 կմ հարավ)*
62	«Կոմկեռ» ջրվեժ	*Շահումյանի շրջան, Դադիվանքի և Սբ. Աստվածածին վանքի միջև, Տրտու գետի ձախ գառիթափ լանջին*
63	«Թուրշսու» հանքային աղբյուր	*Շուշիի շրջան, Լիսագոր գյուղի հյուսիսային եզերքում*
64	«Շրլան» հանքային աղբյուր	*Շուշիի շրջան, Շրլան գյուղի մոտ*
65	«Պեխի» աղբյուր, (Եսայի աղբյուր)	*Շուշիի շրջան, Շուշի քաղաքից 3 կմ հարավ արևմուտք*
66	«Հերիկ» հանքային աղբյուրներ	*Քաշաթաղի շրջան, Հերիկ գյուղի մոտակայքում*
67	«Բերձոր» հանքային	*Քաշաթաղի շրջան, Բերձոր շրջկենտրոնից 3 կմ հարավ-արևելք*

	աղբյուր	
68	«Ճահիբուլաղ» աղբյուր	*Ասկերանի շրջան, «Տիգրանակերտ» պատմական տեղավայրի մոտ*
69	«Նահապետ Քուչակի» աղբյուր	*Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղում*
70	«Անահիտի» աղբյուր	*Մարտունու շրջան, Հացի գյուղում*
71	«Թաս» աղբյուր	*Մարտունու շրջան, Թաղավարդ գյուղից 2,5կմ հյուսիս-արևմուտք, Վարանդա գետի ափին*

IV. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

72	«Սոսի արևելյան» ծառ	*Հադրութի շրջան, Տյաք գյուղի մոտ*
73	«Սոսի արևելյան» ծառ	*Հադրութ քաղաքի կոլտուրայի տան մոտ, տրամագիծը՝ 120սմ, բարձրությունը՝ 29մ, տարիքը՝ 600 տարի*
74	«Հարբած ծառեր»	*Հադրութի շրջան, Վարդաշատ գյուղ, ճեղքված բներով ծուռումուռ ծառեր*
75	«Թաղարնի» (Զելկվա) ծառ	*Հադրութի շրջանի Տումի գյուղի «Կարմիր Խաչ» կոչվող տեղամասում, տրամագիծը՝ 60սմ, բարձրությունը՝ 27մ, տարիքը՝ 600 տարի*
76	«Սոսի արևելյան» ծառ	*Մարտակերտի շրջան, Հաթերքի անտառպետություն, Թարթառի ավազան, կաղնու և հաճարենու խառը անտառում*
77	«Սոսի արևելյան» ծառ	*ք. Մարտակերտ, տրամագիծը՝ 200սմ, բարձրությունը՝ 25մ, տարիքը՝ 200 տարի*
78	«Բոխի» ծառ	*Մարտակերտի շրջան, Թալիշ գյուղ, հիմքից աղեղնաձև աճել և ետ վերադարձել է իր տեղն ու վեր խոյացել*
79	«Հացի» ծառ	*Մարտակերտի շրջան, Թալիշ գյուղ, հիմքից աճել ու բաժանվել է 2 մասի, այնուհետև միացել և նմանվել է շեղանկյան*
80	«Կաղնի» ծառ	*Մարտակերտի շրջան, Վարդաձոր գյուղ, բնի մեջ մխրճված է խաչքար*
81	«Սոսի արևելյան» ծառ	*Ասկերան քաղաքում*
82	«Սղոցի» ծառերի ենթաանտառ	*Ասկերանի շրջան, 20 հա սղոցու ենթաանտառ հաճարենու և բոխենու խառը անտառում*
83	«Սոսի արևելյան» (Սխտորաշենի «Տնջրի») ծառ	*Մարտունու շրջան, Սխտորաշեն գյուղի մոտ, տրամագիծը՝ 600սմ, բարձրությունը՝ 25մ, տարիքը՝ 2020 տարի*
84	«Թաղարնի» (Զելկվա) 0,5 հա	*Մարտունու շրջան, Տառնավարգի անտառպետությունում*
85	«Ծառերի մատուռ»	*Մարտունու շրջան, Նենգի գյուղում*

86	«Ընտլիազ» ծառ	*Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղում*
87	«Թաղարնի» (Ձելկվա) տասնյակով	*Մարտունու շրջան, Գիշի գյուղում*

V. ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

88	*«Դիզակ» բնապատմական տարածք (Տողաձոր)*	*Հադրութի շրջան, Տումի գյուղից մոտ 4-5 կմ հարավ-արևմուտք*
89	*«Ականայի հովիտ» բնապատմական տարածք*	*Մարտակերտի շրջան, Ականաբերդ գյուղի շրջակա տարածք*
90	*«Դիցմայրի» սոսիների պուրակ բնապատմական տարածք*	*Քաշաթաղի շրջան, Դիցմայրի գյուղից արևմուտք՝ ՀՀ սահմանամերձ մասում*
91	*«Պատարայի գետահովիտ» (Կուսանաց բնապատմական տարածք)*	*Ասկերանի շրջան, Պատարա գյուղից 7կմ հարավ-արևմուտք*

Բնության հուշարձանների ներկայացված տիպաբանական դասակարգումը պայմանական է, դրանցից շատերն ըստ ծագման կարող են ունենալ հետերոգեն բնույթ, սակայն որոշակի դասակարգումը նպաստում է հուշարձանների վերաբերյալ իրականացվող աշխատանքների և տվյալների բազաների համակարգմանը:

Ընդհանուր առմամբ ցանկում հիմնականում ընդգրկված են այն հուշարձանները, որոնք գտնվելով մարդու տնտեսական գործունեության ոլորտում, զանգվածային զբոսաշրջության օբյեկտների մոտակայքում և այլ կարգի անթրոպոգեն ճնշումների գոտում կարող են ենթարկվել տարբեր տեսակի բացասական ազդեցությունների: Ցանկում ընդգրկված չեն միայն նեղ մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող օբյեկտները, ինչպես նաև անմատչելի կամ սահմանամերձ վայրերում գտնվող հուշարձանները, որոնց համար պահանջվում են լրացուցիչ ուսումնասիրություններ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական մարդածին ներգործությունը նվազեցնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը սահմանել է պահպանման գոտի:

Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում արգելվում է որևե տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը (5):

Հանրապետության տարածքում հայտնի 91 անուն բնության հուշարձաններն ըստ ծագման դասակարգելով՝ բացահայտվել է, որ

դրանցից 38-ը երկրաբանական և երկրաձևաբանական ծագման են, 12-ը՝ ջրագրական, 21-ը՝ ջրաերկրաբանական 16-ը՝ կենսաբանական, 4-ը՝ բնապատմական:

ԼՂՀ տարածքում հայտնի բնության հուշարձաններն ըստ ծագման առանձնահատկությունների դասակարգելուց բացի անհրաժեշտություն ենք համարել նաև դասակարգումն ըստ հանրապետության շրջանների (աղ. 2):

Աղյուսակ 2

ԼՂՀ տարածքում հայտնի բնության հուշարձանների դասակարգումն ըստ ծագման առանձնահատկությունների և խմբավորումն ըստ շրջանների

բնության հուշարձանների խմբավորումն ըստ շրջանների հուշարձանների դասակարգումն ըստ ծագման	Ասկերան	Մարտունի	Մարտակերտ	Շուշի	Շահումյան	Քաշաթաղ	Հադրութ	Ընդամենը
Երկրաբանական, երկրաձևաբանական	13	2	5	2	8	6	2	38
Ջրագրական	-	-	2	-	5	5	-	12
Ջրաերկրաբանական	1	3	5	3	7	2	-	21
Կենսաբանական	2	5	5	-	-	-	4	16
Բնապատմական	1	-	1	-	-	1	1	4
Ընդամենը	17	10	18	5	20	14	7	91

Վերլուծելով վերը նշված աղյուսակում զետեղված ցուցանիշները՝ կարող ենք տալ հետևյալ մեկնաբանությունները.

ԼՂՀ տարածքում հայտնի 38 երկրաբանական և երկրաձևաբանական բնության հուշարձաններից 13-ը գտնվում են Ասկերանի շրջանի վարչական տարածքներում, 2-ը՝ Մարտունու, 5-ը՝ Մարտակերտի, 2-ը՝ Շուշիի, 8-ը՝ Շահումյանի, 6-ը՝ Քաշաթաղի և 2-ը՝ Հադրութի վարչական սահմաններում:

Ջրագրական ծագման բնության հուշարձանները թվով 12-ն են, որոնցից 2-ը՝ Մարտակերտի վարչական սահմաններում են, հինգական՝ Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում:

Զրաերկրաբանական 21 բնության հուշարձաններից 1-ը գտնվում է Ասկերանի, 3-ը՝ Մարտունու, 5-ը՝ Մարտակերտի, 3-ը՝ Շուշիի, 7-ը՝ Շահումյանի և 2-ը՝ Քաշաթաղի շրջաններում:

Կենսաբանական ծագման բնության հուշարձանները թվով 16-ն են, որոնցից 2-ը տեղակայված են Ասկերանի, 5-ը՝ Մարտունու, 5-ը՝ Մարտակերտի և 4-ը՝ Հադրութի շրջանի վարչական սահմաններում:

ԼՂՀ-ում հայտնաբերված բնապատմական ծագման հուշարձանները 4-ն են, որոնք մեկական տեղակայված են Հադրութի, Մարտակերտի, Քաշաթաղի և Ասկերանի շրջաններում:

Այսպիսով, ԼՂՀ տարածքում հայտնի 140 անուն բնության հուշարձաններից 27-ը գտնվում են Ասկերանի շրջանի սահմաններում, 11-ը՝ Մարտունու, 35-ը՝ Մարտակերտի, 8-ը՝ Շուշիի, 27-ը՝ Շահումյանի, 19-ը՝ Քաշաթաղի և 13-ը՝ Հադրութի շրջանում:

Գրականություն

1. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ԼՂՀ օրենք, դեկտեմբերի 12, 2007թ.
2. «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշում, 30 դեկտեմբերի, 2011թ., N 1053 Ն
3. А.С.Степановских , Биологическая экология. Теория и практика: учебник, Издательство: ЮНИТИ-ДАНА, 2009 г.
4. А.С.Степановских , Охрана окружающей среды: Учебник для вузов, 2002г.
5. Д.Н. Николаевич, М. А. Кузьмич, Редактор: Куровский К.И.,Охрана природы Издательство: Мнемозина, 2012 г.

Классификация известных природных памятников на территории НКР

Л.Гукасян, Г.Маркарян

Резюме

При классификации 91 природных памятников на территории республики, выяснилось, что 38 из них имеют геологическое и геоморфологическое происхождение, 12 - гидрографическое, 21- гидрогеологическое, 16 - биологическое и 4 – природно-историческое. Из 91 описанных нами памятников, 17 находятся в пределах Аскеранского района, 10 - в Мартунинском, 18 - Мартакертском, 5 - Шушинском, 20 - Шаумянском, 14 - Кашатагском, 7 - Гадрутском районах.

The Classification of Natural Monuments in the NKR

L.Ghukasyan, G.Margaryan

Summary

While classifying a total of 91 natural monuments in the NKR we have revealed, that 38 of them are of geological and geomorphological origin, 12 are of hydrographical, 21 – of hydrogeological, 16 are of biological origin and 4 are of nathional historik. Among the analyzed monuments 17 were found in Askeran region, 10 in Martouni region, 18 in Martakert region, 5 in Shushi, 20 in Shahumyan, 14 in Kashatagh and 7 in Hadrout regions.

ՀՏԴ Աշխարհագրություն

ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՈՒԾ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ՎԱՂ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՐՈԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հ.Կարապետյան

ՀՀ ագրոէկոհամակարգերը զգալի վնաս են կրում եղանակի այնպիսի անբարենպաստ երևույթներից,ինչպիսիք են՝ ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարությունները, ձմեռային ուժեղցրտերը, երաշտներն ու խորշակները, կարկտահարությունը, ուժեղ քամիները, երկարատև անձրևները, թաց, առատ ձյունը և այլն:

Դրանցից յուրաքանչյուրն ունիիրհիմնական պատճառա-հետևանքային առանձնահատկությունները, որոնք հանդես են գալիս մի դեպքում՝ մակրո, մյուս դեպքում՝ միկրոմասշտաբներով:Սակայն ամեն դեպքում աշխարհագրական լայնությունը, լեռնայնությունը, մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը, տեղական որոշ գործոններիրենցկնիքն են թողնում՝ ինտենսիվացնում են նշված երևույթները ՀՀ տարածքում:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ կլիմայի գլոբալ փոփոխության հետ կապված ամենից նշանակալից փոփոխություններ սպասվում են հենց արտակարգ օդերևութաբանական երևույթներիռեժիմում[1]: Դա նշանակում է, օրինակ, որ կլիմայի տաքացման շնորհիվձմեռներըպետք է մեղմանան, հետևաբար պտղատու կուլտուրաների վեգետացիան (հատկապես ծաղկումը) պետք է նկատվի սովորականից ավելի վաղ, որի հետևանքով ցրտահարության վտանգն ավելի է մեծանալու: Նույնը կարելի է ասել նաև երաշտների, կարկտահարության և այլ անբարենպաստ երևույթների մասին: Դա հիմնականում պայմանավորված է մթնոլորտի ընդհանուր շրջանառության, ինչպես նաև տեղական օթերևութաբանական դաշտերի՝ բարիկական համակարգերի, մթնոլորտային ճակատների և օդային զանգվածների դեֆորմացիաների հետ, որոնց ազդեցությամբ հանրապետության կլիման նոր որակ կստանա:

Սույն աշխատանքում որպես եղանակային անբարենպաստ պայմաններ քննարկել ենքուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարությունները: Ակտիվ վեգետացիոն ժամանակահատվածի գնահատման ժամանակ չպետք է բացառել նաև գյուղմշակաբույսերի համար անբարենպաստ երևույթների, մասնավորապես ուշ գարնանային ցրտահարությունների ժամկետների քննարկումը, որոնք հանրապետության տարբեր շրջաններում ունեն տարբեր հավանականություն: Ինչպես ցրտահարությունները, այնպես էլ մյուս անբարենպաստ պայմանները հանդես են գալիս որպես »հակառեսուրսներ«, որոնքլրջորեն կրճատում, նվազեցնում են կլիմայական ռեսուրսների դերը[3]:

Վեգետացիոն ժամանակահատվածում գյուղմշակաբույսերի նորմալ աճն ու զարգացումն ապահովված է միայն այն դեպքում, երբ դրանց զարգացման գլխավոր ցիկլերը համընկնում են բարենպաստ եղանակային

պայմանների հետ: Գյուղատնտեսական նպատակներով ցրտահարությունները լիարժեք գնահատելու համար կառուցվել են կորելիացիոն կապեր անսառնամանիքային ժամանակահատվածի տևողություններիմիջև (նկ. 1):



Նկար 1. Անսառնամանիքային և 10°-ից բարձր ջերմաստիճաններով ժամանակահատվածների տևողության կապը: 1-գոգավորություններ, 2-սարավանդներ, թեք հարթություններ, 3-լանջեր, 4-մերձլճային կայաններ:

Վերլուծելով ՀՀ 78 օդերևույթաբանական կայանների տվյալները պարզվել է, որ գոգավորությունների հատակում տեղադրված կայաններում անսառնամանիքային ժամանակահատվածը 2-26 օրով երկար է 10-ից բարձր ջերմաստիճաններով ժամանակահատվածի տևողությունից: Այսինքն՝ նշված կայաններում գյուղմշակաբույսերի բերքը հաճախ է վնասվում ցրտահարություններից: Միայն լանջերում, տաք գոգավորություններում, մերձլճային կայաններում սառնամանիքային ժամանակահատվածի տևողությունը գրեթե միշտ կարճ է վեգետացիոն ժամանակահատվածի տևողությունից:

ՀՀ տարածքում ամենացածր օդի միջին օրական ջերմաստիճանները, որոնց դեպքում սկսվում կամ ավարտվում են ցրտահարությունները, դիտվում են Սևանի ափամերձ գոտում, ինչպես նաև Ֆանտան, Մարտիրոս, Ամբերդ կայաններում (5-6° գարնանը և 6-7° աշնանը): Սրանք այն շրջաններն են, որտեղ ցրտահարությունները գյուղմշակաբույսերի համար քիչ վտանգավոր են, քանի որ այդպիսի ջերմաստիճանների ժամանակ գարնանը վեգետացիան դեռ նոր է սկսվում, իսկ աշնանը ավարտված է լինում, և գյուղմշակաբույսերի բերքը երկու դեպքում էլ լուրջչիտուժում [4]:

Այն կայանները, որոնք գտնվում են գոգավորությունների հատակում կամ ընդարձակ հարթավայրում, վերջին գարնանային ցրտահարությունները դադարում են մոտավորապես 10-11° օդի միջին օրական ջերմաստիճանի, իսկ աշնանը՝սկսվում 11-13°-ի պայմաններում: Այս շրջանները ցրտահարությունների տեսակետից խիստխոցելի են, որոնցից հատկապես աչքի են ընկնում Արարատյան դաշտը, Շիրակի, Ապարանի, Սիսիանի, Սևանի և այլ գոգավորություններ:

Միջլեռնային գոգավորությունների հատակում գարնանը ջերմասեր մշակաբույսերի ցանքն ու վեգետացիան սկսվում է օդի միջին օրեկան ջերմաստիճանը 10°–ից անցնելուց հետո, իսկ աշնանը նույն ջերմաստիճանային պայմաններում վեգետացիան դեռևս շարունակվում է, և բերքահավաքը դեռևս ավարտված չիլինում: Այդ պատճառով նույնիսկ կարճատև ցրտահարությունները տնտեսություններինմեծ վնաս են հասցնում: Երկու դեպքում էլ օգտակար ջերմաստիճանների մի զգալի մասը » կորչում է« :

Այդպիսի կայանների թվին են պատկանում Պաղակն, Գոռհայք, Աշոցք, Մազրա, Գավառ, Ապարան, Գյումրի, Ստեփանավան, Արտաշատ, Արմավիր և այլն:

Այս տարածքները ոչ միայն լուրջկորուստներ են կրում ցրտահարություններից, այլ ջերմասեր կուլտուրաները զրկվում են օգտագործելու գարնանը նախորդող, իսկ աշնանը հաջորդող տաք օրերի ջերմային ռեսուրսները՝ բերքի քանակը և որակը բարձրացնելու համար: Օրինակ, Արարատյան դաշտում ակտիվ վեգետացիոն ժամանակահատվածը տևում է մոտ 206 օր, մինչդեռ առանց ցրտահարություններով ժամանակահատվածը՝ 196-200 օր է, այսինքն՝ ջերմասեր մշակաբույսերըչեն կարողանում օգտագործել ակտիվ ջերմաստիճանների մի մասը: Հաշվարկներով պարզվել է, որ վաղ աշնանային և ուշգարնանային ցրտահարությունների հետևանքով գյուղմշակաբույսերն Արարատյան դաշտում չեն հասցնում օգտագործել մոտ 100-110°, Շիրակում 115° ակտիվ ջերմաստիճանների գումար (աղյուսակ1): Նշված հանգամանքը բնականաբար նվազեցնում է կեռնային գոգավորությունների հողահանդակների (հողատիպերի) բալային գնահատականը, որը ցավոք դեռ հաշվի չի առնվում հողերի բոնիտետրորոշելիս:

Աղյուսակ 1.

Կայաններ	Գարնանը	Աշնանը	Ողջ վեգետացիայի ընթացքում
Գոռհայք	93	175	268
Պաղակն	10	105	115
Գավառ	0	103	103
Մազրա	10	10	20

Սիսիան	11	54	65
Գյումրի	116	173	289
Տաշիր	20	88	108
Ստեփանավան	30	30	60
Արտաշատ	60	43	103
Արմավիր	40	10	50

Գոգավորությունների հատակում գտնվող մի քանի կայաններում ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարությունների հետևանքով չօգտագործված ակտիվ ջերմաստիճանների գումարը:

Մշակաբույսերի ջերմային պահանջների համեմատումը նրանց մշակման արդի վերին սահմանի հետ պարզվել է, որ ՀՀ –ում աճեցվող մի քանի կուլտուրաների մշակման վերին սահմանը կարելի է բարձրացնել վեր, քանի որ բերքի հասունացման համար տարածքն ապահովված է ջերմաստիճանների անհրաժեշտ գումարով: Սակայն մշակման վերին սահմանի հետագա բարձրացմանը մի կողմից խոչընդոտում են ձմեռային սառնամանիքները, իսկմյուսկողմից՝ վեգետացիոն ժամանակահատվածում դիտվող ցրտահարությունները: Այդ պատճառով նշված խնդիրների լուծման ժամանակ անհրաժեշտ է մտածել նոր ցրտադիմացկուն, ուշ ծաղկող, ինչու չէ, նաև գերվաղահաս սորտերի ներդրման մասին (խաղող, դեղձ, եգիպտացորեն, ծիրան, պոմիդոր և այլն):

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել նաև առաջավոր երկրների փորձը, որտեղ ցրտահարությունների կանխումն իրականացվում է գազով, էլեկտրականությամբ, արհեստական անձրևացման, քամահարման և այլ միջոցներով, որոնք լայն կիրառում են գտել:

Այս մեթոդների էֆեկտիվությունն անկասկած է, միայն թե անհրաժեշտ է ջեռուցման սարքերը տեղակայելուց առաջ մանրակրկիտ հետազոտվեն դաշտերի միկրոկլիմայական առանձնահատկությունները:

Ցրտահարության դեմ պայքարի այլ միջոցառումներ էլ կան, այն է սելեկցիոն մեթոդը, որիշնորհիվստեղծվում են ցրտադիմացկուն սորտեր: Սակայն այս մեթոդի կիրառումը երկար ժամանակ է պահանջում, միևնույն ժամանակ ցրտադիմացկուն սորտերնիրենց լավ են դրսևորում ձմռանը, իսկ վեգետացիոն շրջանում մեծ տարբերություններ չկան ցրտադիմացկուն սորտերիմիջև:

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ առայժմ ցրտահարություններին դեմ պայքարի ֆիզիկական մեթոդները (ջերմության և խոնավության բարձրացում, գետնամերձ օդի շարժունակության բարձրացում և այլն) ավելի դյուրին են, քան կենսաբանական մեթոդները:

Агроэкологическая оценка поздневесенних и раннеосенних заморозков на территории РА

Э.Карапетян

Резюме

В этой статье мы обращаем особое внимание на поздневесенние и раннеосенние заморозки в разных районах Республики Армения.

Заморозки, наряду с другими неблагоприятными условиями являются «антиресурсами», серьезно уменьшающими роль климатических ресурсов.

Agroecological Assessment of the Late Spring and Early Autumn Frosts in the territory of RA

H.Karapetyan

Summary

In this article we pay special attention to the late spring and early autumn frosts in different regions of the Republic of Armenia.

The frosts, like the other unfavourable conditions are presented as «antiresourses» which seriously reduce the role of climatic resourses.

Գրականություն

1. Զաքարյան Բ.Գ., Հայաստանի Հանրապետության ձնածածկույթի դերը և նրա ջրաբանական նշանակությունը, Ատենախոսություն 2004թ., 176 էջ:
2. Թորոսյան Ա.Ս., Մելքոնյան Հ.Ա., Կլիմայի փոփոխության ազդեցությունը ՀՀ տարածքում առավել վտանգավոր կամ տարերային հիդրոօթերևույթաբանական երևույթների փոփոխության վրա:Կլիմայի փոփոխության հիմնահարցերը, Երևան 1999թ., էջ 59-63:
3. Խաչատրյան Լ.Հ., Կլիմայի փոփոխության հետևանքով հողի խոնավության պաշարների կանխատեսվող փոփոխությունները, որպես գյուղատնտեսական կուլտուրաների խոցելիության ցուցանիշ: Կլիմայի փոփոխության հիմնահարցերը, Երևան 1999թ., էջ 183-187:
4. Հայրապետյան Կ.Հ. Գնահատել մթնոլորտային տեղումների կանխատեսվող փոփոխությունները ՀՀ տարածքում: Կլիմայի փոփոխության հիմնահարցերը, Երևան 1999թ., էջ 50-57:

ՀՏԴ *Պատմություն*

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Վ. Բալայան

20-րդ դարի սկզբներին հայությունն իր ազատության և անկախության ուղիներում հանդիպեց առավել ծանր իրավիճակների: Եթե նախկինում ցարական իշխանությունները հայության դեմ պայքարում էին ավելի «քաղաքակիրթ» միջոցներով, ընդունվում էին որոշումներ, օրենքներ, կամ էլ հետապնդվում էին առանձին անհատներ, կազմակերպություններ, ապա այս անգամ բռնարարքների ենթարկվեց ողջ ժողովուրդը:

Դարասկզբին դա հիմնականում կապված էր 1903թ. հունիսի 12-ի՝ Նիկոլայ Երկրորդի տխրահռչակ հրամանագրի հետ, որով բռնագրավվեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Հայ պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ ցարական արքունիքն այդ օրենքով փորձում էր փակել հայկական դպրոցները, մշակութային հաստատությունները և սահմանափակել եկեղեցու ինքնուրույնությունը[1]:

Մինչդեռ իրականում այն հետագնա նպատակներ ուներ: Ցարական իշխանությունները լավ հասկանում էին, որ դարերի ընթացքում պետականությունից զրկված հայության համար եկեղեցին ազգային ինքնության և ինքնուրույնության ջատագովն ու դրան հասնելու կազմակերպիչն էր: Մյուս կողմից էլ կրթական հաստատություններում երիտասարդների և ուսուցիչների մեջ խմորվում էին ազատագրական գաղափարները:

Այս հարցում չի կարելի թերագնահատել դարասկզբին Արևմտյան Հայաստանում ծայր առած հակասուլթանական նոր շարժման դերը: Ցարական կառավարությունը մտահոգ էր, որ այդ պայքարի ալիքը կտարածվի նաև Արևելյան Հայաստանում: Մանավանդ տարածաշրջանում, մեծ տերությունների ակտիվացման պայմաններում, կարող էին Ռուսաստանի համար հետևանքներն անկանխատեսելի դառնալ: Հնարավոր զարգացումները կանխելու նպատակով ցարական արքունիքը վաղօրոք փորձում էր ոչնչացնել իր համար վտանգավոր թիրախները:

Մինչև վերոհիշյալ օրենքի ընդունումը՝ Գ.Գոլիցինը Նիկոլայ Երկրորդին հավաստիացնում էր, որ «մեծ և միացյալ Հայաստան»-ի ստեղծման գործի գլուխ կանգնած է լուսավորչական եկեղեցին և տարեկան հարյուր հազարավոր ռուբլիներ են ծախսվում զենք ու զինամթերք ձեռք բերելու համար[2]:

Գ.Գոլիցինի այս հիմնավորումներին գումարվեց Նիկոլայ Երկրորդի հակահայ տրամադրվածությունը: Նա մի առիթով ասել է. «Իմ անձնական և

---

[1] Տես՝ ՀԺՊ, հ. 6, Երևան, 1981, էջ 353; Պարսամյան Վ., Հարությունյան Ճ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 305:

[2] Ակնունի Է., Դեպի կռիվ, Ժնև, 1904, էջ 20-24:

վաղեմի կարծիքով հայերի հանդեպ ոչ մի վստահություն տածել չի կարելի: Անշուշտ նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում»[1]:

Եվ այսպես, 1903թ. հունիսի 12-ի օրենքը գործածության մեջ դրվեց: Բռնագավթվեց եկեղեցուն պատկանող 1.775.905 ռուբլու արժողության ունեցվածքը[2]: Հայ ժողովուրդն ապրում էր տագնապալի ու խռովահույզ ժամանակներ: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություն էր տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներառվեց նաև արցախահայությունը: Ցույցեր և ընդհարումներ տեղի ունեցան նաև Արցախի մի շարք բնակավայրերում[3]:

Ցարական իշխանությունների դեմ դիմակայության ալիքը չէր մարել, երբ 1905-1906թթ. նույն ուժերի կողմից սանձազերծվեցին ազգամիջյան ընդհարումներ:

Հարկ է նկատել, որ 1880-ական թվականներից սկսած՝ Ռուսաստանի ազգայնական տրամադրություն ունեցող գործիչները, որոնք հիմնավորվել էին իշխանական-պետական համակարգում, դարձան պանսլավոնիզմի գաղափարախոսները: Կայսրության տարածքում ապրող փոքր ազգերի ներքին ինքնավարության ամեն մի ձգտում նրանց կողմից գնահատվում էր որպես ռուսական պետության նկատմամբ թշնամական վերաբերմունք:

Ռուս բարձրաստիճան պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները ցարին համոզում էին, որ Այսրկովկասում կապիտալի կուտակումը հայ գործարարների ձեռքում, կրթական ու հանրային կյանքի զարթոնքը, քաղաքական կուսակցությունների եռանդուն գործունեությունը, Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի աննախադեպ վերելքը վաղ թե ուշ իրականություն կդարձնեն հայկական պետության վերականգնման ձգտումը:

Դեռ ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է Հ.Սիմոնյանը Հայկական ինքնավարության պահանջն, ըստ իշխանությունների, լինելու էր «Անդրկովկասի համար ինքնավարություն ձեռք բերելու պահանջի մի մասը: Հետևապես, երկրամասի ժողովուրդների պառակտման պայմաններում ընդմիշտ կթաղվեր ոչ միայն հայկական ինքնավարության, այլև Անդրկովկասի ինքնավարության գաղափարը»[4]:

Ըստ էության՝ ռուսական պետության ամենաջերմ պաշտպան և բարեկամ ժողովուրդը թշնամու կերպարանք ստացավ և իր մաշկի վրա զգաց կայսրության մամլիչի սարսափազդու ուժը: Նույնիսկ Գ.Գոլիցինն առաջարկում էր հայ «անջատողականներից» ազատվելու նպատակով ազգովի

[1] Հեղափոխական պայքարի վավերագրեր, Երևան, 1984, էջ 333:
[2] Тунян В., Русская политика в Армении: мифы и реалии (конец XVIII – начала XXвв), Ереван, 1998, с. 40.
[3] Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 218-221, 235-241, «Դրոշակ», թիվ 2, 1905, էջ 31:
[4] Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003, էջ 42:

նրանց աքսորել Սիբիր[1]: Սակայն զինվորական նախարար Կուրոպատկինը կանխեց խելահեղ այդ ծրագիրը[2]:

Անկախ և միացյալ Հայաստանի գաղափարը կատաղության էր հասցնում ինչպես Աբդուլ Համիդին, այնպես էլ՝ Նիկոլայ Երկրորդին: Պատահական չէր, որ 1905-1920թթ. հայկական ջարդերի կազմակերպման մեջ որոշակի դեր խաղաց օսմանիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

Այսրկովկասի տարածքում հայ-թաթարական կռիվները ոչ մի տեղ այնքան կատաղի չեն եղել, որքան Ղարաբաղում և, մանավանդ, նրա կենտրոն Շուշիում: Դա պատահական չէր, որովհետև բազում դարերի ընթացքում թուրք գործիչները համոզվել են, որ դեպի իրենց հայրենիքը՝ Միջին Ասիա ձգվող ճանապարհն անցնում է Նախիջևանով և միատարր հայ բնակչություն ունեցող Ղարաբաղով, որտեղ, մանավանդ, իշխանության առկայությունը համարյա թե անհնարին է դարձնում իրենց դիվային ծրագրերի իրագործումը և հատկապես՝ արևմտյան Այսրկովկասը թուրքացնելու ու վերջնականապես կլանելու գործը:

1905-1906թթ. Լեռնային Ղարաբաղում հայկական կոտորածների ժամանակ մոլեռանդ ամբոխը վանկարկում էր պանիսլամիստական և պանթուրքիստական կարգախոսներ[3]:

Այդ օրերին «Русские ведомости» թերթը գրել է. «Գերմանիայի իմացությամբ Կոստանդնուպոլսում ձեռնարկվել է մի դավադրություն, որին մասնակցել են հիշյալ խաներն ու բեկերը (խոսքը վերաբերում է Ղարաբաղի խաներին ու բեկերին – Վ.Բ.)՝ նպատակ ունենալով գլխովին բնաջնջել Կովկասում ապրող հայերին ու ջարդել մյուս ազգություններին, որպեսզի թուրքերի համար ճանապարհ բացվի դեպի Կովկաս, և կազմավորվի Նախիջևանի խանությունը …»[4]:

Քաջածանոթ լինելով պանիսլամիստական և պանթուրքիստական գաղափարներով առաջնորդվող թուրք առաջնորդների գործելակերպին՝ արցախահայության ծոցից ծնված մեծ ֆիդայի, ռազմական և քաղաքական գործիչ Նիկոլ Դումանը 1905-1906թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ կանխատեսել էր Մեծ եղեռնը և հորդորել արևմտահայությանը՝ օգտագործել արևելահայության ինքնապաշտպանության մարտավարական փորձը: 1907թ. Ժնևում հրատարակած իր «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքույկի մեջ Ն.Դումանը գրել է. «Նույն փոթորիկը ըստ իս կրկնվելու է Տաճկահայաստանում, ավելի ահավոր կերպով: Մեզ կմնա ինքնապաշտպանությունը դնել ամուր հիմքերի վրա»[5]:

---

[1] «Վերածնություն», թիվ 40, 1904:

[2] Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 84:

[3] Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 273: «Դրոշակ», թիվ 11(164), նոյեմբեր, 1905, էջ 167: «Всеподданейшая записка, содержащая главнейшие выводы отчета о произведенной в 1905 году, по высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии», СПб., 1905, с. 4-5.

[4] «Русские ведомости», N 173, 1905.

[5] Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան, Ժնև, 1907, էջ 64:

Ցավալիորեն, մեծ հայրենասերի հորդորներն ու խորհուրդները 1915թ. արև-մտյան Հայաստանում անտեսվեցին, և հարյուր հազարավոր երիտասարդներ, թշնա-մուն դիմադրելու փոխարեն, հլու հնազանդ մորթվեցին Միջագետքի անապատներում:

1905-1906թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ հայությունն ստիպված էր կռվել երկու ճակատով՝ ինչպես թուրքերի, այնպես էլ՝ կառավարության կանոնավոր զորքերի դեմ:

Հարկ է նկատել, որ 1905-1906թթ. ծանր ու տագնապալի օրերին պետականությունից ու սեփական իշխանություններից զուրկ հայ ժողովրդի ինքնա-պաշտպանությունը կազմակերպելու բարդ ու պատասխանատու գործը ստանձնել էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում»- գրել է Նիկոլ Դումանը[1]: Նման գործելակերպի շնորհիվ հայությունը փրկվեց վերահաս մասսայական ջարդերից:

Չնայած 1903-1905թթ. եկեղեցական գույքի պետականացման և 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայ ժողովուրդը մարդկային և նյութական մեծ կորուստներ ունեցավ, այնուամենայնիվ, ինքնապաշտպանական մղումները նոր լիցք հաղորդեցին հայկական պետականության վերականգնման գաղափարին:

Ցարական արքունիքի բռնի մեթոդները հակառակ ազդեցությունն ունեցան: Հայ ժողովուրդը գիտակցեց, որ անկախ ազգային պետությունը միայն կարող էր դառնալ լիիրավ և ստեղծագործ կյանքի միակ երաշխավորը:

Այս երկու ազդակները մեծապես հեղաշրջեցին կովկասահայության կյանքը: Հայ մարդու մեջ սպանվեց ստրուկի հոգեբանությունը: Հայ ժողովուրդը համոզվեց, որ սեփական ներուժի վրա հենվելով՝ կարելի էր լուծել թերևս անլուծելի համարվող ամեն մի խրթին հարց:

Մարտական գործողությունների ընթացքում հայ ժողովուրդը մեկ միասնական ճակատ հարդարեց: Ազգային շաղախով իրար կապվեցին արևմտահայերն ու արևելահայերը: «Հայությունը մեկ է, - ասում է Անդրանիկը, - ըլլայ Կովկաս թե Տաճկահայաստան…: Ազգային վտանգն ուր որ ծայր տար՝ ամեն հայու պարտականությունն է փութալ դեպի վտանգը…»[2]: Այդ օրերին անուշի էին եկել հայ հանրության բոլոր շերտերը՝ դրամատեր-գործարարն ու բանվորը, շինականն ու մտավորականը, ասպարեզում գտնվող քաղաքական հիմնական ուժերն ու հասարակական-բարեգործական հաստատությունները:

Ցարական արքունիքը և թրքությունը հասկացան, որ ներդաշնակ միասնականությամբ հայությունն անպարտելի ուժ է: Տարեցտարի այդ ուժը տարածաշրջանում դառնալու էր գործոն:

---

[1] Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության, Երևան, 1992, էջ 7:
[2] «Ռազմիկ», թիվ 93, 20 սեպտեմբերի, 1906:

Պատմական այս դասերը, ինչպես 1917-20թթ., այնպես էլ՝ նորօրյա ժամանակներում իրենց դրական ազդեցությունն ունեցան հայկական պետականության կերտման գործում:

1903 թվականից մինչև 1907թ. հայ ժողովուրդը, ինքնապաշտպանական պայքարում թրծված և քաղաքական որոշ փորձառություն ստացած, 1906 թվականից կրկին օրակարգի հարց դարձրեց ազգային ինքնավարության գաղափարը: Այս անգամ նորից ՀՅԴ-ն առաջին շարքերում էր: 1905թ. դաշնակցությունը քննարկման նյութ դարձրեց ոչ միայն Հայաստանի, այլև Այսրկովկասի քաղաքական կարգավիճակի հարցը:

Ըստ ՀՅԴ տեսլականի՝ 1. Անդրկովկասը պետք է դառնա Ժողովրդավարական հանրապետություն՝ հիմնված ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվության վրա: 2. Անդրկովկասի Ժողովրդավարական հանրապետությունը դառնալու է ապագայում ստեղծվելիք Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության անբաժան մասը: 3. Անդրկովկասի հանրապետությունը ՌՖՀ-ի հետ կապված է լինելու ընդհանուր պետական ինքնապաշտպանության, դրամական և միասնական համակարգի և արտաքին քաղաքականության խնդիրներով: 4. Ներքին վարչական և տնտեսական բոլոր հարցերում Անդրկովկասի հանրապետությունն անկախ է լինելու: Հանրապետությունն ունենալու է իր պառլամենտը և կառավարությունը: 5. Անդրկովկասից ընտրված պատգամավորները դառնալու են Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության պառլամենտի անդամներ: 6. Անդրկովկասյան հանրապետությունը բաժանվելու է կանտոնների և համայնքների, որոնք ունենալու են լայն ինքնավարության իրավունքներ: 7. Կանտոնների կազմավորման հիմքում ընկած են լինելու միատարր ազգաբնակչություն ունեցող տարածքները: Կանտոնները կամ գավառներն ունենալու են իրենց օրենսդրությունը: Դպրոցներում կրթությունը տարվելու էր մայրենի լեզվով: 8. Դաշնային հանրապետության մեջ բոլոր ազգերն ու կրոնական փոքրամասնությունները հավասար են լինելու: Վերացվելու են բոլոր դասային և այլ կարգի արտոնությունները: 9. Բոլոր պաշտոնյաներն ընտրվելու են ժողովրդի կողմից[1]:

1906թ. նոյեմբերի 12-ին հրավիրվեց հայ սահմանադիր-ռամկավար (դեմոկրատական) կուսակցության հիմնադիր ժողովը, որը Կովկասի և կովկասահայության վերաբերյալ սահմանեց հետևյալ սկզբունքները.

1. Հասնել նրան, որ Այսրկովկասը ստանա ինքնավար կարգավիճակ, որը պիտի ունենա օրենսդիր մարմին՝ համաանդրկովկասյան սեյմ: 2.Հայկական բոլոր հիմնարկությունները վերակազմակերպել ժողովրդավարական հիմունքներով: 3. Հայությունը պիտի ունենա ազատ կուլտուրական

[1] Նյութեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, Պեյրութ,1976, էջ 326:

ինքնորոշման իրավունք: 4. Կովկասի բոլոր ազգերը պետք է ապրեն համագործակցաբար՝ առանձնակի տեղ տալով մշակութային ասպարեզին[1]:

Քաղաքական այս խմորումների հիմքերի վրա 1916թ. նորից վիճաբանությունների առարկա դարձավ Այսրկովկասի նոր սահմանագծման հարցը: Հայ հանրությունը դժգոհ էր խառը ազգային կազմ ունեցող վարչական միավորների գոյության փաստից: Հայ գործիչները քաջ գիտակցում էին, որ նման վարչական միավորներով անհնարին էր Այսրկովկասում ազգերի միջև համերաշխություն պահպանել, իսկ ապագայում ֆեդերատիվ պետություն ունենալու գաղափարի իրագործումը փաստացի անհասանելի էր դառնում:

1916թ. տվյալներով Ելիզավետպոլի նահանգում 911.684 մարդ էր ապրում, որից 320.980-ը շիա մահմեդականներ էին (35.2 տոկոս), 274.431-ը՝ սուննի մահմեդականներ (30.1 տոկոս), 256.207-ը՝ հայեր (28.1 տոկոս), իսկ 60.056-ը այլազգիներ էին (6.6 տոկոս), որոնց մեծամասնությունը քրիստոնյաներ էին[2]:

Այդպիսի խայտաբղետ ազգաբնակչություն ունեցող նահանգում ցարական կառավարության համար »դատավորի« կարգավիճակը մշտապես ապահովված էր: Նույն ժամանակահատվածում Ելիզավետպոլի նահանգի կազմում հայտնված Արցախի պատկերն այլ էր: Այստեղ ապրում էր 294.857 մարդ, որից 207.160-ը (70 տոկոս) հայեր էին, 50.000-ը (16.4 տոկոս)՝ շիա մահմեդականներ, 25.000-ը (9.1 տոկոս)՝ սուննի մահմեդականներ, իսկ 12.697-ը (4.5 տոկոս) այլազգիներ էին[3]:

«Теперь, на излете эпохи модерна, культурное сознание пришло к отчетливому пониманию ценности хаоса, его продуктивности и эвристичности. На этой волне стала успешно набирать силу новая научная дисциплина синергетика, а в метафизической сфере широко распространился особый стиль философствования в виде склонности к манипуляциям "обломками" смысловых, ценностных, нормативных структур и извлечениям из этих игр разных по своей значимости познавательных и эстетических эффектов. <…> Для постмодерна характерна совершенно особая атмосфера интеллектуальных игр как с "обломками" классических артефактов, так и с подложными разновидностями общепринятых ценностей. Типичной формой постмодернистского культуротворчества становится жонглирование фальшивыми двойниками ("симулякрами") бытующих смыслов, ценностей и норм» [5: 67].

Теперь человек не стремится «схватить историю» – его вполне удовлетворяет инкорпорирование в ткань современности элементов истории [2: 12]. Оторванность от Традиции не может обнаружить фальсификацию, и наиболее талантливый конструктор-интерпретатор вполне может претендовать на роль воскресителя/продолжателя Традиции.

Таково ви́дение пострелигиозности с традиционалистической точки зрения. Методологические проблемы этого подхода многократно названы по ходу текста, однако, традиционалистическая точка зрения вполне обнаруживает сильнейшую и не имеющую аналогов в истории

трансформацию религиозности – появление *пострелигии* как особенного мироощущения *поствeрующего*, являющегося вершиной десакрализации, наполнявшей всю западную историю.

Библиография

1. *Аверьянов В.В.* Сверим понятия (определения от противного). Консерватизм-традиционализм-национализм / Фонд Питирима Сорокина [М., 2007] URL: http://www.sorokinfond.ru/index.php?id=286 (дата обращения 26.09.12).
2. *Анкерсмит Ф.Р.* История и тропология: взлет и падение метафоры. – М.: Прогресс-Традиция, 2003. – 496 с.
3. *Антропов В.В.* Этика и религия в "безрелигиозном христианстве" Дитриха Бонхёффера // Вестник Московского университета. Серия 7. Философия. - 2005. – № 6. – С. 58-72.
4. *Барт Р.* От произведения к тексту // Барт Р. Избранные работы: Семиотика. Поэтика. – М.: Прогресс, 1989. – С. 413-432.
5. *Бачинин В.А.* Постмодернизм и христианство // Общественные науки и современность. – 2007. – № 4. – С. 65-79.
6. *Бурдьё П.* Социология политики. – М.: Socio-Logos, 1993. – 263 с.
7. *Бурдьё П.* Социология социального пространства. – СПб.: Алетейя, 2007. – 288 с.
8. *Ваторопин А.С., Ольховиков К.М.* Перспективы секуляризма и религии в эпоху постмодерна // Общественные науки и современность. – 2002. – № 2. – С. 136-145.
9. *Ваттимо Д.* Насилие – это то, что препятствует задавать вопросы / Индекс [М., 1997-2011] URL: http://index.org.ru/infospace/398vatt.html (дата обращения 26.09.12).
10.*Генон Р.* Кризис современного мира. – М.: Эксмо, 2008. – 784 с.
11.*Дебор Г.Э.* Общество спектакля. – М.: Логос, 2000. – 184 с.
12.*Делёз Ж.* Платон и симулякр / Philosophy.ru [М., 2007] URL: http://philosophy.ru/library/intent/07deleuze.html (дата обращения 26.09.12).
13.*Дугин А.Г.* Постфилософия. Три парадигмы в истории мысли. – М.: Евразийское движение, 2009. – 744 с.
14.*Дугин А.Г.* Философия политики. – М.: Арктогея, 2004. – 616 с.
15.*Дугин А.Г.* Философия традиционализма. – М.: Арктогея-Центр, 2002. – 624 с.
16.*Жижек С.* Добро пожаловать в пустыню Реального. – М.: Прагматика культуры, 2002. – 160 с.
17.*Иноземцев В.Л.* Вестернизация как глобализация и "глобализация" как американизация // Вопросы философии. – 2004. – № 4. – С. 58-69.
18.*Костюк К.Н.* Архаика и модерн в российской культуре / Наука – Интернет – Россия [б/м, б/г] URL: http://www.nir.ru/sj/sj/sj3-4-99kost.html (дата обращения 26.09.12).

19.*Легенгаузен М.* Современные вопросы исламской мысли. – М.: Феория, ДИК, 2009. – 210 с.
20.*Макаров Н.О.* Религиоведческое наследие Аврелия Августина // Религиоведение. – 2006. – № 4. – С. 126-138.
21.*МакГрат А.* Плюрализм: вызов современной христианской церкви // Христианская культура. – 2002. – № 2. – С. 12-23.
22.*Маркова Л.А.* Философия из хаоса. Ж. Делёз и постмодернизм в философии, науке, религии. – М.: Канон+, 2004. – 384 с.
23.*Разумовский Д.А.* Метаморфозы постмодернистской церкви в интерьере "ретро-духовности" / Богослов.Ru [М., 2007-2012] URL: http://www.bogoslov.ru/text/277615.html (дата обращения 26.09.12).
24.*Фуко М.* Theatrum philosophicum // Делёз Ж. Логика смысла; Фуко М. Theatrum philosophicum. – М.: Раритет, Екатеринбург: Деловая книга, 1998. – С. 431-457.
25.*Фуко М.* Археология знания. – Киев: Ника-Центр, 1996. – 308 с.
26.*Эвола Ю.* Люди и руины // Эвола Ю. Люди и руины. Критика фашизма: взгляд справа. Ориентации. – М.: АСТ, 2007. – С. 5-268.
27.*Altizer T.J.J.* Apocalypticism and Modern Thinking // Journal for Christian Theological Research. – 1997. – # 2. – P. 36.
28.*Caputo J.D.* After Jacques Derrida Comes the Future / The Journal for Cultural and Religious Theory [Denver, 1999-2012] URL: http://www.jcrt.org/archives/04.2/caputo.shtml (дата обращения 26.09.12).
29.*Caputo J.D.* What Do I Love When I Love My God? Deconstruction and Radical Orthodoxy // Questioning God / Ed. Caputo J.D., Dooley M., Scanlon M.J. – Bloomington: Indiana University Press, 2001. – P. 301-325.
30.*Charlesworth M.J.* Philosophy and Religion: From Plato to Postmodernism. – Oxford: Oneworld, 2002. – 312 pp.
31.*Cutsinger J.S.* An Open Letter on Tradition // Modern Age. – 1994. – # 36:3. – P. 10-20.
32.*Cutsinger J.S.* The Yoga of Hesychasm / Sacred Web: A Journal of Tradition and Modernity [Vancouver, 2012] URL: http://www.sacredweb.com/online_articles/sw10_cutsinger.html (дата обращения 26.09.12).
33.God, the Gift, and Postmodernism / Ed. Caputo J.D., Scanlon M.J. – Bloomington: Indiana University Press, 1999. – 527 pp.
34.*Hassan I.H.* The Postmodern Turn: Essays in Postmodern Theory and Culture. – Columbus: Ohio State University Press, 1987. – 215 pp.
35.*Lakhani M.A.* What is Normal? // Sacred Web. – 2006. – Vol. 17. – P. 7-15.
36.*Taylor M.C.* Erring: A Postmodern A/theology – Chicago: University of Chicago Press, 1987. – 218 pp.

37.*Van Buren P*. Theology Now? / Religion-online.org [Claremont, 2012] URL: http://www.religion-online.org/showarticle.asp?title=1609 (дата обращения 26.09.12).
38.*Vanhoozer K.J*. Theology and the condition of postmodernity: a report on knowledge (of God) // The Cambridge companion to Postmodern Theology / Ed. Vanhoozer K.J. – Cambridge: Cambridge University Press, 2003. – P. 3-25.
39.*Vattimo G*. The Age of Interpretation // Rorty R., Vattimo G. The Future of Religion. – NY.: Columbia University Press, 2005. – P. 43-54.
40.*Ward G*. Deconstructive theology // The Cambridge companion to Postmodern Theology / Ed. Vanhoozer K.J. – Cambridge: Cambridge University Press, 2003. – P. 76-91.
41.*Wuthnow R*. Church Realities and Christian Identity in the 21st Century // The Christian Century. – 1993. – May, 12. – P. 520-572.

Post-modern Religiousness from the Point of Traditional School

K.Tovbin

Summary

In article is considered notion Post-religion, constructed, coming from methodological basis of the Traditionalist school. Post-religion is shown with different sides, allowing judge about its de-sacred function.

Պոստմոդեռն կրոնականությունը ավանդական դպրոցի տեսանկյունից

Կ.Տովբին

Ամփոփում

Հոդվածով քննարկվում է պոստ -կրոնը հասկացությունը, կառուցված, մեթոդաբանական հիմք ընդունելով ավանդապաշտ դպրոց: պոստ-կրոն ցուցադրվում է տարբեր կողմերից, ինչը թույլ է տալիս դատավորին այն իր դե -սուրբ գործառույթի մասին:

ՀՏԴ Քաղաքագիտություն

ՆԵՐՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ն.Իշխանյան

Յալթա-պոտսդամյան համակարգի անկումով նորագույն շրջանի աշխարհակարգն առաջադրեց պետությունների ինքնիշխանության պահպանման նոր խնդիրներ: 90-ականների սկզբին ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհաքաղաքական քարտեզի վրա հայտնված նոր պետությունները կանգնեցին արտաքին քաղաքականության վեկտորների ընտրության խնդրի առջև: Հարավային Կովկասն, (ՀԿ) այդ շրջանում լինելով զինված հակամարտությունների էպիկենտրոն, առաջնային խնդիր ուներ մշակել արտաքին փոխհարաբերությունների ռազմավարություն առաջին հերթին՝ ներտարածաշրջանային մակարդակում: Այդուհանդերձ, նորանկախ պետությունները քայլեցին հակառակ ճանապարհով, այն է՝ համագործակցություն և ինտեգրում ոչ թե տարածաշրջանի ներսում, այլ վերազգային և միջազգային կառույցներին:

Տարածաշրջանում կայունության՝ պետությունների բազմակողմ փոխհարաբերությունների չափումը ներկայում ռազմավարական կարևորություն ունի հակամարտությունների առատությամբ աչքի ընկնող տարածաշրջանների համար: ՀԿ-ում երկու տասնամյակից ավելի շարունակվող հակամարտային իրավիճակը տարածաշրջանում բաժանարար գծերի պարարտ հող է հանդիսանում, ինչը զրոյացնում է երկխոսության միջոցով կայունության ապահովման հնարավորությունները:

Ներկայիս աշխարհակարգում ընթացող ինտեգրացիոն գործընթացների ետնապատկերում կարելի է նկատել «տարածաշրջանային ինտեգրացիա» և «տարածաշրջանային համագործակցություն» հասկացությունների սերտաճած գործածում, ինչը, սակայն, մակերեսային մոտեցում է տարածաշրջանային գործընթացների ուսումնասիրման առումով, հատկապես երբ խոսքը գնում է անկայունության և խոցելիության բարձր ցուցանիշ ունեցող տարածաշրջանների մասին, ինչպիսին ՀԿ-ն է:

Տարածաշրջանային համագործակցությունը կարող է ընթանալ որևէ կազմակերպության կազմում կամ դրանից դուրս, սակայն դրա հրամայականն է տարածաշրջանի երկրների կամավորության, միասնականության և այդ համագործակցությունը շարունակելու ցանկության արտահայտումը: Սակայն այսօրինակ համագործակցությունը առաջ է գալիս ըստ անհրաժեշտության՝ կապված կանխավ որոշված և պայմանականությունների վրա հիմնված խնդիրների լուծման հետ:

Տարածաշրջանային ինտեգրումն առաջ է գալիս այն ժամանակ, երբ դրա անդամներն ինքնակամ նախաձեռնություններով են հանդես գալիս, որոշումներ են ընդունում և ըստ անհրաժեշտության համագործակցության

գործընթացը վերափոխվում է առանց պայմանականությունների համագործակցության՝ տարածաշրջանի բոլոր անդամների մասնակցությամբ:

Մի շարք հեղինակներ տարածաշրջանը սահմանում են որպես «որոշակի քանակի պետություններ, որոնք միմյանց են կապված աշխարհագրական փոխհարաբերություններով և փոխադարձ կախվածությամբ» (Ջ. Նայ), որպես աշխարհագրորեն մոտ գտնվող պետությունների միջև անվտանգության հարաբերությունների նշանակալի ենթահամակարգ (Բ. Բուզան), որպես միավորներ կամ գոտիներ՝ հիմնված խմբերի, պետությունների կամ տարածքների վրա, որոնց անդամները կիսում են որոշակի նույնականացնող հատկանիշներ (Լ. Ֆոուսեթ):

Ըստ Հ. Հարթի՝ տարածաշրջանները ֆորմալ կազմակերպություններ չեն. դրանք կառուցված, ապակառուցված և վերակառուցված են տարբեր դերակատարների փոխգործակցության արդյունքում՝ ի պատասխան դրանց ներքին և արտաքին միջավայրի փոփոխությունների:

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի՝ որպես մեկ միասնական տարածաշրջանի դիտարկումը պայմանավորված է պատմական մի շարք գործոններով, ինչը բացատրում է մասնագետների տարակարծությունը Հարավային Կովկասը որպես բնական տարածաշրջան ընդունելու և դրա գոյության հեռանկարների վերաբերյալ: Ռուսական Կայսրության, ապա ԽՍՀՄ իշխանությունների կողմից ուղղահայաց տարածաշրջանայնացման պատմական փորձերը փաստում են Հ. Հարթի սահմանման կիրառելիությունը ՀԿ ձևավորումը բնորոշելիս:

ԽՍՀՄ փլուզումից հետո նրա տարածքը դադարեց գոյություն ունենալ որպես միասնական աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հարթակ, որի հետևանքով Հարավային Կովկասը դեմ առ դեմ դուրս եկավ ներքին ճգնաժամերին և նոր աշխարհակարգով պայմանավորված արտաքին վերադասավորումներին: ՀԿ պետությունների համար արտաքին (տարածաշրջանի ներսում և դրանից դուրս) կայունության հասնելու գրավականը դարձավ ներքին կայունության ապահովումը, ինչը լուրջ մարտահրավեր է պետության գոյատևման համար կենսական ոլորտների խարխլվածության և հաստատութենական համակարգի քաոսի պայմաններում:

Տարածաշրջանի պետությունների համագործակցության կառուցվածքային բաղադրիչների բացակայությունը անկայունության լուրջ ռիսկեր է պարունակում: Տարածաշրջանային կայունությանը Թ. Ուիլքորնը սահմանում է որպես միջավայր, որտեղ տարածաշրջանի առաջնորդներն իրենց երկրների դրությունը համարում են բավականաչափ անվտանգ, որպեսզի առաջ շարժվեն դեպի ազգային և միջազգային նպատակների իրականացում՝ առանց վախենալու արտաքին սպառնալիքներից և սպառազինությունների ու ռազմական կարիքների համար հսկայածավալ միջոցների տրամադրումից:

ՀԿ-ում առկա իրավիճակը Ուիլբորնի թեզի մասնակի հակասականության արտացոլումն է: Թեև ՀԿ երկրներում դրությունն անվտանգ չէ, այդուհանդերձ պետություններն առաջ են շարժվում իրենց անվտանգության հայեցակարգերով սահմանված արտաքին քաղաքականության գերակայություններով: Այսպես, ՀԿ երկրները շարունակում են ներգրավվածությունը ԵՄ նախաձեռնություններին, գործընկերությունը ՆԱՏՕ-ի հետ, անդամակցումը մի շարք միջազգային կառույցների՝ չնայած տարածաշրջանում անկայունության մեծաթիվ գործոններին: Այնուամենայնիվ, ՀԿ-ում առկա խոցելի իրավիճակը մեծապես խոչընդոտում է ազգային նպատակների իրականացմանը, քանի որ ՀՀ տնտեսության զարգացման էական խոչընդոտ են հանդիսանում փակ սահմանները:

Այսօր ՀԿ-ն կազմված է անկախ և ինքնորոշված Հայաստան, Վրաստան, Ադրբեջան և դե ֆակտո՝ ԼՂ, Աբխազիա, Հարավային Օսեթիա, պետություններից: ՀԿ-ում համագործակցության առանցքային ռազմաքաղաքական և հոգեբանական խոչընդոտ են հանդիսանում հարավ-կովկասյան տարածաշրջանի երեք չճանաչված և մասամբ ճանաչված պետությունների կամ էթնիկ խմբերի հետ կապված հիմնախնդիրները: Բայցևայնպես, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմնախնդիրները չեն խոչընդոտում Վրաստանի հարաբերություններին Հայաստանի և Ադրբեջանի հետ, ուստի ՀԿ-ում բաժանարար գծերի հիմնական աղբյուրը մնում է ԼՂ հակամարտությունը:

Համագործակցությունը ՀԿ-ում հարկ է դիտարկել երկու տեսանկյունից՝ տարածաշրջանի երկրների համաձայնեցված և արտաքին դերակատարների «ներմուծած» ուղղություններով:

Ուշադրության է արժանի ՀԿ-ում կայունության հաստատմանն ուղղված արտաքին դերակատարնգրի կողմից առաջ քաշված հաստատութենական ուղղվածության առաջարկները, դրանցում ներգրավված սուբյեկտների և դրանց ժամանակագրության առանձնահատկությունները:

ՀԿ-ում կայունության պահպանմամբ շահագրգռված մի շարք արտաքին դերակատարներ պարբերաբար հանդես են գալիս տարածաշրջանում կայունության համակարգված սխեմայի մշակման նախաձեռնությամբ: Դեռևս 1996 թ. ՌԴ-ի նախաձեռնությամբ ստորագրվեց «Հանուն Կովկասի ազգամիջյան համաձայնության, խաղաղության, տնտեսական և մշակութային համագործակցության» հռչակագիրը, ավելի հայտնի «Կովկասյան քառյակ» անվանմամբ, ինչը ենթադրում էր համագործակցություն 3+1՝ ՀԿ-ՌԴ ձևաչափով՝ անտեսելով միջազգային խաղատախտակի մյուս դերակատարներին: 1999 թ. ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ընթացքում ԱՄՆ-ը հանդես եկավ «Կովկասյան համագործակցության ֆորումի» ստեղծման նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով հասնել խաղաղության տնտեսական համագործակցության միջոցով: Նույն

թվականին ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովի ընթացքում ՀՀ և Ադրբեջանի նախագահները դրական կարծիք հայտնեցին «Հարավային Կովկասում անվտանգության և համագործակցության պակտի» վերաբերյալ: Պակտում արտաքին դերակատարների ներգրավման հարցում առաջ եկան հակադրություններ ադրբեջանական և հայկական մոտեցումներում՝ կապված Իրանի ներգրավման հայկական կողմի առաջարկով և ԵՄ, ԱՄՆ դերի հստակեցմամբ:

2000թ. ԵԱՀԿ հովանու ներքո և Իրանի մեկուսացմամբ Կայունության պակտի ստեղծման առաջարկով հանդես եկավ Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրգլը: Հատկանշական է, որ Զ. Բժեզինսկին առանձնացնում է ՌԴ-ին և Թուրքիային զուգահեռ Իրանի մասնակցության անհրաժեշտությունը այս նախաձեռնության շրջանակներում: 2006թ.-ին տեղի ունեցավ ԵԽԽՎ «Հարավային Կովկասում կայունության պակտի ստեղծման» թեմայով զեկույցը՝ «Ընդլայնված Եվրոպա՝ նոր հարևաններ» ծրագրին զուգահեռ: 2008թ. վրաց-ռուսական պատերազմին հաջորդեց Թուրքիայի ակտիվացումը ՀԿ-ում իր ազդեցության ամրապնդման ուղղությամբ՝ հանդես գալով ՀԿ-ում «Կայունության և համագործակցության պլատֆորմի» (CSCP) ստեղծման առաջարկով՝ 3+2՝ ՀԿ, Ռուսաստան, Թուրքիա ձևաչափով, ինչը ևս մնաց հայտարարությունների տիրույթում:

Գտնվելով Սև և Կասպից ծովերի, Եվրոպայի և Ասիայի միջև, ինչպես նաև սահմանակից լինելով Ռուսաստանին, Թուրքիային և Իրանին՝ ՀԿ-ն գտնվում է արտաքին դերակատարների շահերի բախման կիզակետում, ուստի պատահական չէ, որ այս նախաձեռնություններից ոչ մեկը չկարողացավ կենսունակ գտնվել ՀԿ-ում կայունության և համագործակցային մթնոլորտի հաստատման առումով: Ավելին, արտաքին դերակատարների շահերի բախումն էլ ավելի է թեժացնում անկայունության սպառնալիքները տարածաշրջանում:

Դրա հետ մեկտեղ, վերոնշյալ նախաձեռնությունների ձախողումը փաստում է, որ տարածաշրջանում բացակայում է համընդգրկուն մտածողությունը: Տարածաշրջանային նախաձեռնությունների մեծ մասը որոնք ի հայտ են եկել վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում, բացառել են կամ ՀԿ երկրներից մեկին, կամ որևէ արտաքին կարևոր դերակատարի:

ՀԿ-ում Ադրբեջանի և Վրաստանի համագործակցությունը ռազմական-պաշտպանական ոլորտում տարածաշրջանային կայունության ճարտարապետության և եռակողմ համագործակցության ձախողմանն սպառնալիք է: ՀԿ-ում առկա «սառեցված» հակամարտությունների պայմաններում այս ոլորտում երկկողմ համագործակցությունը տարածաշրջանն ապակայունացնող որոշիչ գործոններից է, ինչի պատճառը Վրաստանի և Ադրբեջանի ռազմավարական գործընկերության ամրապնդմանն ուղղված քայլերն են: Թբիլիսին հաճախ է հանդես գալիս Բաքվի հետ միևնույն սպառնալիքների վերաբերյալ հայտարարություններով՝ կապված ԼՂ, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմնախնդիրներով և

միասնական գազատարի և նավթատարի պաշտպանությամբ հիմնավորվող գործընկերության կոչերով: Այս հանգամանքը պայմանավորված է Թուրքիայի անմիջական մասնակցությամբ Հայաստանը ներտարածաշրջանային ծրագրերից դուրս թողնելու Վրաստանի և Ադրբեջանի փորձերով:

Այս է վկայում նաև Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա էներգետիկ-տրանսպորտային համագործակցությունը: «Այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը, Բաքու-Թբիլիսի-Էրզրումը, Բաքու-Թբիլիսի-Կարսը և Անդրանատոլիական գազատարը (TANAP) փաստում են Ադրբեջանի, Թուրքիայի և Վրաստանի միջև գործընկերությունը»: Թբիլիսիի և Բաքվի այս դիրքորոշումը խոչընդոտում է ոչ միայն տարածաշրջանային կայունության ջանքերին, այլև նպաստում է Երևան-Թբիլիսի փոխհարաբերությունների խարխլմանը:

Տնտեսական համագործակցությունը տարածաշրջանում և ներտարածաշրջանային նախաձեռնությունների, և արտաքին դերակատարների խթանիչ գործողությունների արդյունք է: ՀԿ-ն ԽՍՀՄ-ից չժառանգեց միասնական տնտեսական և առևտրային տարածք, ինչը կարող էր հիմք դառնալ միասնական տարածաշրջանային տնտեսական տարածքի հիման վրա համագործակցային շուկայական տնտեսություն կառուցելու համար: Մյուս կողմից, Վրաստանն ու Ադրբեջանն ունեն տրանսպորտային-էներգետիկ համագործակցության լուրջ հիմքեր, ինչը ներտարածաշրջանային հարաբերություններում կարող է հաճախ պայմանավորել այլ ոլորտներում երկկողմանի գործընկերության բաղադրիչների ամրապնդումը:

Տնտեսական եռակողմ համագործակցությունը կարող է էական գործիք հանդիսանալ խաղաղության ապահովման համար: Տնտեսական փոխգործակցությունը կարող է միաժամանակ դրականորեն ազդել կողմերի միջև հաղորդակցության և փոխվստահության մթնոլորտի ստեղծման համար՝ նկատի առնելով ԵՄ ստեղծման՝ տնտեսական կայունության ապահովմամբ պայմանավորված համախմբման նախադեպը: Բայցևայնպես, սառեցված հակամարտությունների և փակ սահմանների գործոնները զրոյացնում են տարածաշրջանում եռակողմ տնտեսական համագործակցության հնարավորությունը, ինչը կարող էր ծանրակշիռ նախադրյալ դառնալ տարածաշրջանում կայունության պահպանման երեք պետությունների շահագրգռվածության առումով: Այսուհանդերձ, տնտեսական և ռազմական ոլորտներում Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա համագործակցությունը տարածաշրջանում եռակողմ համագործակցության հնարավորությունների փոշիացման և դրա հետևանքով ապակայունացնող նոր գործոնների առաջացման պատճառ է:

Տնտեսական, բնապահպանական և այլ ոլորտներում համագործակցության միջոցով տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանումը արևմտյան դերակատարների, մասնավորապես՝ փափուկ ուժի կողմնակից ԵՄ-ի համար հանդիսանում է գերակա

փաստարկներից մեկը: Որպես օրինակ արևմտյան մասնագետների ուսումնասիրություններում նշվում են Սարսանգի ջրամբարը, միջսահմանային արգելոցների ստեղծումը ԼՂ-Ադրբեջան սահմանում, Սև ծովի ավազանի միասնական կառավարումը Աբխազիայի և Վրաստանի կողմից և միջսահմանային համագործակցության այլ ուղիներ:

Այդուհանդերձ, արտաքին դերակատարների կողմից ՀԿ-ում տնտեսական համագործակցությունը որպես տարածաշրջանային կայունության ապահովման հիմնական գործոնի դիտարկումն իրատեսական մոտեցում չէ, քանի որ միջպետական տնտեսական համագործակցությունը առկախում է վտանգված ժողովուրդների անվտանգության շահերը, ներառյալ՝ ՀԿ դե ֆակտո կազմավորված պետությունների գոյատևման ապահովման շահերը:

ՀԿ-ում առկա հակամարտությունների և շահերի բախմանը զուգահեռ առկա են նաև ընդհանուր շահեր այնպիսի հարցերում, ինչպիսիք են աղքատության հաղթահարումը, բարեփոխումների իրականացումը, միասնական շուկայի ստեղծումը, ժողովրդավարական հաստատությունների զարգացումը, կայուն և երկարատև խաղաղության ապահովումը[1]: 2001թ. մեկնարկած Հարավային Կովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագիրը ՏԱՍԻՍ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համատեղ[2], ինչպես նաև հակաահաբեկչական նախաձեռնությունները վերոնշյալի սաղմնային փորձերն են: Հարկ է առանձնացնել նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև ժողովրդական դիվանագիտության փորձերը: Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ այս փորձերը դեռևս առարկայական արդյունք չեն տվել տարածաշրջանում բազմակողմ հարաբերությունների հաստատման առումով:

Տարածաշրջանում առկա հակասությունների պայմաններում տարածաշրջանի պետությունների կայունացման գործոն կարող է հանդիսանալ Հվ Կովկասի հետսովետական ինտեգրացիան եվրոպական կառույցներ: Այս մոտեցումը մի կողմից կարող է ՀԿ երկրների համագործակցության առարկայական շարժառիթներ ստեղծել, սակայն մյուս կողմից տարածաշրջանում ազդեցության լծակները տարածել ձգտող երկրների դիրքորոշումների բախումը կարող է անկայունության նոր առիթներ ստեղծել տարածաշրջանում:

Մյուս կողմից, ՀԿ-ում առկա անհամաչափ համագործակցության իրողությունն ուղղակի սպառնալիք է տարածաշրջանային կայունության

[1] Տե՛ս Армен Дарбинян, Южный Кавказ. Проблемы региональной безопасности и интеграции, Том 1 №1, Ереван 2004, Российско-Армянский (славянский) государственный университет. Научно-исследовательский Центр проблем региональной безопасности и интеграции Южного Кавказа

[2] Տե՛ս Making a difference. The European Union, Eastern Europe, the South Caucasus and Central Asia, European Communities Catalogue, Luxembourg, 2006. P.41.

հեռանկարներին: Ընդհանուր անվտանգության գիտակցության բացակայությունը և ներտարածաշրջանային լարվածության սրումը պահանջում են ներտարածաշրջանային անվտանգության գիտակցության սերմանում և համագործակցության խթանում այնպիսի ոլորտներում, որոնց ուղղությամբ հարաբերականորեն հեշտ է հասնել բազմակողմ փոխհամաձայնության:

Հաշվի առնելով Հվ Կովկասում առկա իրավիճակի առանձնահատկությունը՝ այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կայունության ապահովումը ենթադրում է գործընկերային հարաբերությունների և վստահության մթնոլորտի ստեղծում:

Այստեղ կայունությունն այսօր կախված է ոչ միայն պետությունների՝ արտաքին դերակատարների հետ հարաբերությունների կառուցումից, այլև ներպետական կայունության, թույլ պետություններին բնորոշ գործոնների չեզոքացումից: Կայուն և ուժեղ կառավարությունները պետք է ունակ լինեն տարածաշրջանային երկխոսության և համագործակցության ուղիներ փնտրելու, ինչը կուժեղացնի դիրքորոշումը արտաքին դերակատարների հետ հարաբերություններում: Տարածաշրջանի կայունության համար կարևոր է միասնական անվտանգության տեսլականի աստիճանական ձևավորումը և տարածաշրջանային մարտահրավերների հաղթահարումը:

Գրականություն

1. Տե՛ս Philippe C. Schmitter, Regional Cooperation and Regional Integration: Concepts, Measurments and a Bit of Theory, European University Institute. January, 2007.
2. Տե՛ս նույն տեղում:
3. Nye, J.S. (1971), Peace in Parts. Integration and Conflict in Regional Organization, Boston: Little, Brown and Company.
4. Barry Buzan, People, States & Fear: The National Seeurity Problem in International Relations, London, 1983, p. 188.
5. Wunderlich, Jens-Uwe. Regionalism, Globalisation and International Order. Abingdon, Oxon, GBR: Ashgate Publishing Group, 2008. p 49. http://site.ebrary.com/lib/auarmenia/Doc?id=10209162&ppg=36
6. Regions Defined. Retrieved June 27, 2013, from UN University OCW Web site: http://ocw.unu.edu/programme-for-comparative-regional-integration-studies/introducing-regional-integration/regions-defined/
7. Տե՛ս մանրամասն՝ Andranig Bedrossian, լvalution critique du projet d'intռgration rռgioale du Caucase du Sud proposռ par le Centre for European Policy Studies, Bruxelles, 2012. Pp. 14-26.
8. Տե՛ս Богатуров А.Д. Современные теории стабильности и международные отношения России в Восточной Азии в 1970 — 90-е гг. М., 1996.

9. 2008թ. օգոստոսի 26-ին ՌԴ-ն ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը:
10.“Кавказская четверка”, Министерство иностранных дел России, 2002. http://www.mid.ru/bdomp/ns-rsng.nsf/0e82a568fbb5b2c043256a65002f56c2/14f4adc1fb0f73d343256a9600486011!OpenDocument
11.Stanislav Cherniavskiy, The Caucasus Vector of Russian Diplomacy. https://www.ca-c.org/journal/2000/journal_eng/eng05_2000/13.cherny.shtml
12.Евгений Верлин, Влаислав Иноземцев, Пакт стабильности для Кавказа, 17.09.2004, Московские новости http://datarhiv.ru/76/187
13.Տե՛ս Brzezinski, Zbigniew. The Choice: Global Domination or Global Leadership. New York: Basic Books, 2004.
14.For debate in the Standing Committee — see Rule 15 of the Rules of Procedure, European Council Parliamentary Assembly, Doc. 11082 18 October 2006. http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileID=11390&Language=EN
15.Hasan Kanbolat, Ankara will host Caucasus Stability and Cooperation Platform, Today’s Zaman, January, 2009. http://www.todayszaman.com/columnists-163936-ankara-will-host-caucasus-stability-and-cooperation-platform.html
16.Տե՛ս Thomas de Waal, The Caucasus: an Introduction, Oxford University Press, New York, 2010. P.226
17.Պաշտոնական Թբիլիսիի մոտեցմանն այս խնդրի առնչությամբ կարելի է ծանոթանալ Վրաստանի պաշտպանության նախարարի հարցազրույցի տեքստում: Georgian Defense Minister Irakli Alasania: The Bug Pit Interview, August 1, 2013 , http://www.eurasianet.org/node/67335
18.President Saakashvili of Georgia at the ḫankaya Presidential Palace, 09.04.2013 http://www.tccb.gov.tr/news/397/85704/president-saakashvili-of-georgia-at-the-cankaya-presidential-palace.html
19.Տե՛ս Plamen Pantev, Security Threats and Risks in South Caucasus: Perceptions From the Western Black Sea, Institute for Security and International Studies, (ISIS), Sofia, June 2005
20.Տե՛ս AnjaWittich and Achim Maas, Regional Cooperation in the South Caucasus, Lessors for Peacebuilding, from Economy and Environment, International Alert, Initiative for Peacebuilding, April, 2009.
21.Տե՛ս նույն տեղում: Էջ 17:
22.Տե՛ս Հ.Ս. Քոթանջյան «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում».-Եր: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008: Էջ 68:

23.Ժողովրդական դիվանագիտության բացթողումները, 07.07.2009, http://www.aysor.am/am/news/2009/07/07/joghdiv/
24.Տե՛ս Кочарян Шаварш, «От «транскавказского диалога» к концепции региональной безопасности» Тбилиси, 17-19 мая 2003 года, III круглый стол SCIRS.
25.Տե՛ս Maria Raquel, Licínia Simão, The EU's Neighborhood Policy and the South Caucasus: Unfolding New Patterns of Cooperation, Caucasian review of International Affaires, From Vol. 2 (4) - Autumn 2008.

Внутрирегиональное сотрудничество в контексте обеспечения стабильности на Южном Кавказе

Н. Ишханян

Резюме

Многостороннее сотрудничество на Южном Кавказе имеет стратегическую значимость с точки зрения диверсификации факторов обеспечения стабильности в регионе. Усилия внерегиональных факторов по созданию институтов сотрудничества проваливаются по причине игнориования ряда вне- и внутрирегиональных факторов. С другой стороны, нулевое сотрудничество между Арменией и Азербайджаном и, одновременно, сближение экономического и военно-оборонного сотрудничества между Грузией и Азербайджаном представляют собой серьезную угрозу для обеспечения мира и стабильности в регионе.

Interregional Cooperation in the Context of Ensuring Stability in the South Caucasus

N.Ishkhanyan

Summary

Multilateral co-operation in the South Caucasus is of strategic importance for the diversification of the factors aimed at ensuring stability in the region. The efforts of the external actors to create institutions of co-operation fail for the reason of ignoring a number of external and internal regional factors. Meanwhile, the absence of co-operation between Armenia and Azerbaijan and at the same time economic, military and defense co-operation approachement between Georgia and Azerbaijan are a serious threat to peace and stability in the region.

УДК 631.164.25 *Հողաշինարարություն և հողային կադաստր*

ՋՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԸ ՈՐՊԵՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Շ. Հակոբյան

Ջրային պետական կադաստրը ջրային օբյեկտների, դրանց ջրային ռեսուրսների և օգտագործման, ջրօգտագործողների վերաբերյալ տվյալների համակարգված համահավաքն է: Այնմշտապես գործող համակարգ է, որտեղ առկա են տվյալներ ջրային ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների, ջրահավաք ավազանների, ջրավազանների հուներից ու ափերից արդյունահանվող նյութերի, կենսառեսուրսների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների մասին: Մեր կարծիքով՝ ջրավազանների հուներից և ափերից արդյունահանվող նյութերի վերաբերյալ տվյալները որևէ առնչություն չունեն ջրային պետական կադաստրի հետ, դրանք այլ՝ օգտակար հանածոների և երևակումների կադաստրի խնդիրն են: Նույնը վերաբերվում է նաև կենսառեսուրսներին: Այս դեպքում, կապված դրանց գտնվելու վայրի /տեղադիրքի /և տեսակի հետ, դրանք պետք է ընդգրկվեն կամ բուսական աշխարհի, կամ կենդանական աշխարհի, կամ անտառային, կամ բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրային համակարգերի մեջ:

Ջրային պետական կադաստրի վարումն իրականացվում է մեկ միասնական գեոինֆորմացիոն հիմքի վրա՝ կադաստրային այլ համակարգերի սկզբունքով:

Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգը ծառայում է որպես ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պաշտոնական տեղեկատվության շտեմարան և ընդգրկում է վարչահիրավական և տեխնիկական տվյալներ ջրային ռեսուրսների համակարգերի վերաբերյալ: Ջրային պետական կադաստրի շրջանակներում իրականացվում է էկոլոգիական, տնտեսական, ռեկրեացիոն նշանակություն ունեցող ջրային օբյեկտների անձնագրավորում: Ջրային օբյեկտների թվին են դասվում՝

-գետերը, լճերը, ճահիճները, ջրամբարները, ջրանցքները և այլ մակերևութային բնական ու արհեստական ջրհոսքերն ու ջրային կուտակումները

-սառցադաշտերն ու ձնաբծերը

-ստորգետնյա ջրերի բնական ելքերը /աղբյուրները/, այդ թվում նաև տաք ջրերը:

Ջրային օբյեկտները ենթակա են պարտադիր գրանցման պետական ջրային կադաստրում: Ջրային պետական կադաստրում ներառվում են տվյալներ՝

-ջրային ռեսուսրների քանակական ցուցանիշների

-ջրային ռեսուրսների որակական ցուցանիշների

-ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության
-ջրային ռեսուսրների վրա մարդածին ազդեցությունների հետևանքների
-կեղտաջրերի և դրանցում գտնվող նյութերի կազմի ու քանակների
-ջրային ռեսուրսների վերականգնման
-ջրհեղեղների, սելավների, երաշտների կանխատեսումների
-ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների և դրանց վիճակի
-մթնոլորտային տեղումների և մթնոլորտի ջերմաստիճանային ռեժիմի
-ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների
-ջրի ազգային ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

Ջրային պետական կադաստրի տվյալների բազաները համակցվում են միմյանց ջրային ռեսուրսների կոդավորման համակարգի միջոցով՝ որպես յուրաքանչյուր ջրավազանին վերաբերող տեղեկատվության ինտեգրման և քարտեզագրման միջոց: Մեր կարծիքով պետական կադաստրային համակարգերի մեջ ներառվելու համար որպես հիմնական կոդավորման միջոց պետք է ընդունվի անշարժ գույքի կադաստրի համակարգում ընդունված կադաստրային միավորների ծածկագրումը: Նման դեպքում գետերը, լճերը և ջրամբարները կծածկագրվեն որպես մեկուսի ջրային օբյեկտներ, ջրանցքները՝ որպես գծային էլեմենտներ, հիդրոտեխնիկական կառույցները՝ որպես շենքներ և շինություններ:

Ջրային պետական կադաստրի տվյալների ստացման աղբյուրներ են հանդիսանում՝
-տեղագրական քարտեզները՝ գետավազանների և ջրամբարների մորֆոմետրիկական և մորֆոլոգիական բնութագրությունների ստացման համար
-կադաստրային քարտեզները՝ ջրային օբյեկտների և հիդրոտեխնիկական կառույցների ծածկագրման համար,
-հիդրոլոգիական դիտակետերը՝ ջրի ծախսի /օրեկան, ամսական, տարեկան/ չափման, ինչպես նաև՝ ջրի որակական /քիմիական, սանիտարական, միկրոկենսաբանական վիճակի/ կազմի և այլ չափանիշների որոշման համար,
-ջրաչափերը՝ մատակարարվող ջրերի հաշվառման համար:

Ջրային պետական կադաստրում հաշվառման միավոր է հանդիսանում ջրային օբյեկտը կամ հիդրոտեխնիկական կառույցը: Որպես ջրային օբյեկտ ջրային կադաստրում ընդգրկվում են գետերը, լճերն ու ջրամբարները, աղբյուրները, ջրանցքները, իսկ հիդրոտեխնիկական կառույցներից՝ առանձին շինությունները և խողովակաշարերը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ջրային պետական կադաստրում ներառվում են հետևյալ տվյալները.

<u>Գետերի /վտակների/ համար՝</u>

- կադաստրային ծածկագիրը /վերցվում է կադաստրային քարտեզից/
- անվանումը /վերցվում է աշխարհագրական անվանումների կատալոգից/
- ջրահավաք ավազանի տարածքը
- ջրահավաք ավազանի նկարագրությունը՝

ա/սահմանները
բ/երկրաբանա-գեոմորֆոլոգիական պայմանները
գ/ կլիմայական բնութագիրը
դ/ հողաբուսական ծածկը
ե/ լանդշաֆտները

- հոսքի բնութագիրը /օրենկան, ամսական, տարեկան, ըստ ամիսների, սակավաջրության և վարարումների փուլերը, դրանց սկիզբն ու ավարտը,հոսքի ծավալը, հոսքի մոդուլը, հոսքի շերտը/
- ջրի որակական ցուցանիշները /քիմիական կազմը, միկրոկենսաբանական կազմը, սանիտարական վիճակը /
- գետի նշանակությունը /էկոլոգիական, տնտեսական, ռեկրեացիոն և խառը/
- ջրային ռեսուրսի օգտագործման նպատակները /խմելու, կոմունալ-կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով, տրանսպորտի, ձկնաբուծական, մշակույթի, հանգստի, զբոսաշրջության բնագավառներ/, արդյունավետությունը և գերակայությունները
- ջրային ռեսուրսի աղտոտվածությունը /աղտոտման աղբյուրները, դրանց տեղաբաշխման վայրերը, ջրերում պարունակվող վնասակար նյութերի կազմն ու քանակը, իսկ ցրված աղտոտման դեպքում՝ նաև վնասակար նյութերի տարածման, կուտակման մակերեսը, ֆոնային աղտոտվածությունը/
- ջրօգտագործման՝ ջրառի վերաբերյալ տվյալները՝

ա/ ջրօգտագործողը /անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն/
բ/ ջրային թույլտվությունը /համարը, կոդը, գործողության ժամկետը/
գ/ ջրառի բնութագրությունները /ջրային ռեսուրսի անվանումը, վայրը, վայրի ծածկագիրը, ծավալը ըստ ջրային թույլտվության, նպատակը/

- ջրօգտագործման՝ ջրահեռացման մասով տվյալները՝

ա/ ջրօգտագործողը /անուն, ազգանուն, կազմակերպության անվանում, հասցե/
բ/ ջրային թույլտվությունը /համարը, կոդը, գործողության ժամկետը/
գ/ ջրահեռացման բնութագրությունները /ջրային ռեսուրսի անվանումը, վայրը, վայրի ծածկագիրը, կոյուղու ծավալը, արտահոսքի նկարագրությունը՝ վնասակար նյութի անվանումը, քանակությունը/:

Լճերի /լճակների / և ջրամբարների համար՝

- կադաստրային ծածկագիրը /վերցվում է կադաստրային քարտեզից/
- անվանումը /վերցվում է աշխարհագրական անվանումների կատալոգից/
- ջրահավաք ավազանի տարածքը
- ջրահավաք ավազանի նկարագրությունը՝

ա/սահմանները
բ/երկրաբանա-գեոմորֆոլոգիական պայմանները
գ/ կլիմայական բնութագիրը
դ/ հողաբուսական ծածկը

ե/ լանդշաֆտները

- հիդրոլոգիական բնութագիրը /ջրի ծավալը, մակարդակի տատանումները, դրանց սկիզբն ու ավարտը/
- ջրի որակական ցուցանիշները /քիմիական կազմը, միկրոկենսաբանական կազմը, սանիտարական վիճակը/
- լճի նշանակությունը /էկոլոգիական, տնտեսական, ռեկրեացիոն և խառը/,
- ջրային ռեսուրսի օգտագործման նպատակները /խմելու, կոմունալ-կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով, տրանսպորտի, ձկնաբուծական, մշակույթի, հանգստի, զբոսաշրջության բնագավառներ/, արդյունավետությունը և գերակայությունները
- ջրային ռեսուրսի աղտոտվածությունը /աղտոտման աղբյուրները, դրանց տեղաբաշխման վայրերը, ջրերում պարունակվող վնասակար նյութերի կազմն ու քանակը, իսկ ցրված աղտոտման դեպքում՝ նաև վնասակար նյութերի տարածման, կուտակման մակերեսը, ֆոնային աղտոտվածությունը/
- ջրօգտագործման՝ ջրառի վերաբերյալ տվյալները՝

ա/ ջրօգտագործողը /անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն/

բ/ ջրային թույլտվությունը /համարը, կոդը, գործողության ժամկետը/

գ/ ջրառի բնութագրությունները /ջրային ռեսուրսի անվանումը, վայրը, վայրի ծածկագիրը, ծավալը՝ ըստ ջրային թույլտվության, նպատակը/

11. ջրօգտագործման՝ ջրահեռացման մասով տվյալները՝

ա/ ջրօգտագործողը /անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն/

բ/ ջրային թույլտվությունը /համարը, կոդը, գործողության ժամկետը/

գ/ ջրահեռացման բնութագրությունները /ջրային ռեսուրսի անվանումը, վայրը, վայրի ծածկագիրը, կոյուղու ծավալը, արտահոսքի նկարագրությունը՝ վնասակար նյութի անվանումը, քանակությունը/:

<u>Աղբյուրների համար</u>՝

- կադաստրային ծածկագիրը /վերցվում է կադաստրային քարտեզից/
- անվանումը /վերցվում է աշխարհագրական անվանումների կատալոգից/
- ջրահավաք ավազանի տարածքը

4.ջրահավաք ավազանի նկարագրությունը՝

ա/սահմանները

բ/երկրաբանա-գեոմորֆոլոգիական պայմանները

գ/ կլիմայական բնութագիրը

դ/ հողաբուսական ծածկը

ե/ լանդշաֆտները

5. հոսքի բնութագիրը /օրեկան, ամսական, տարեկան, ըստ ամիսների, սակավաջրության և առատաջրության փուլերը, դրանց սկիզբն ու ավարտը,հոսքի ծավալը, հոսքի մոդուլը, հոսքի շերտը/

6. ջրի որակական ցուցանիշները /քիմիական կազմը, միկրոկենսաբանական կազմը, սանիտարական վիճակը/
7. աղբյուրի նշանակությունը /էկոլոգիական, տնտեսական, ռեկրեացիոն և խաղը/
8. ջրային ռեսուրսի օգտագործման նպատակները /խմելու, կոմունալ-կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով, ձկնաբուծական, մշակույթի, հանգստի, զբոսաշրջության բնագավառներ/, արդյունավետությունը և գերակայությունները,
9. ջրօգտագործման՝ ջրառի վերաբերյալ տվյալները՝

ա/ ջրօգտագործողը /անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն/

բ/ ջրային թույլտվությունը /համարը, կոդը, գործողության ժամկետը/

գ/ ջրառի բնութագրությունները /ջրային ռեսուրսի անվանումը, վայրը, վայրի ծածկագիրը, ծավալն ըստ ջրային թույլտվության, նպատակը/:

<u>Ջրանցքների /մայր և երկրորդական առուների / համար</u>՝

- կադաստրային ծածկագիրը /վերցվում է կադաստրային քարտեզից/
- անվանումը /վերցվում է աշխարհագրական անվանումների կատալոգից/
- բնութագիրը /հատակի, պատերի նյութը, կառուցման և նորոգումների թվականները, թողունակությունը/
- ջրի որակական ցուցանիշները /քիմիական կազմը, միկրոկենսաբանական կազմը, սանիտարական վիճակը/
- ջրանցքի նշանակությունը /էկոլոգիական, տնտեսական, ռեկրեացիոն և խաղը/
- ջրային ռեսուրսի օգտագործման նպատակները /խմելու, կոմունալ-կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով, տրանսպորտի, ձկնաբուծական, մշակույթի, հանգստի, զբոսաշրջության բնագավառներ/, արդյունավետությունը և գերակայությունները
- ջրային ռեսուրսի աղտոտվածությունը /աղտոտման աղբյուրները, դրանց տեղաբաշխման վայրերը, ջրերում պարունակվող վնասակար նյութերի կազմն ու քանակը, իսկ ցրված աղտոտման դեպքում՝ նաև վնասակար նյութերի տարածման, կուտակման մակերեսը, ֆոնային աղտոտվածությունը/:
- ջրօգտագործման՝ ջրառի վերաբերյալ տվյալները՝

ա/ ջրօգտագործողը /անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն/

բ/ ջրային թույլտվությունը /համարը, կոդը, գործողության ժամկետը/

գ/ ջրառի բնութագրությունները /ջրային ռեսուրսի անվանումը, վայրը, վայրի ծածկագիրը, ծավալը ըստ ջրային թույլտվության, նպատակը/:

<u>Շենքերի և շինությունների համար</u>՝

- կադաստրային ծածկագիրը /վերցվում է կադաստրային քարտեզից/
- անվանումը /վերցվում է աշխարհագրական անվանումների կատալոգից/

- տեսակը /պատվար, պատնեշ, ամբարտակ, թունել, ջրհոր, մաքրման կայան, ջրընդունիչ, ջրհեռ, ջրանցույց, ջրատար և այլն/
- սեփականատերը
- օգտագործողը /անուն, ազգանուն, անվանում/
- տվյալներ օգտագործման թույլտվության մասին /համարը, կոդը, հաշվառման վկայականի համարը, վկայականի տրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը/

Խողովակաշարերի /ջրատարներ/ համար՝

- կադաստրային ծածկագիրը
- անվանումը
- տեսակը /խմելու ջրագիծ, ոռոգման համակարգ, կոյուղագիծ և այլն/
- սեփականատերը
- օգտագործողը /անունը, ազգանունը, անվանումը/
- տվյալներ օգտագործման թույլտվության մասին /համարը, կոդը, հաշվառման վկայականի համարը, վկայականի տրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը/

Ջրային պետական կադաստրի նպատակը ջրային ռեսուրսների և դրանց արդյունավետ օգտագործմանը նպաստող հիդրոտեխնիկական կառուցվածքների կառավարման ու պահպանման ոլորտում միասնական պետական ռազմավարության իրականացման համար տեղեկատվական հենքի ստեղծումն է :

Պետական ջրային կադաստրը հաշվառում է ջրային ռեսուրսների հաշվեկշիռն ըստ առանձին ջրավազանների և գումարային: Լեռնային Ղարաբաղի տարածքում առկա են 13 խոշոր գետեր /դրանց գումարային երկարությունը Հանրապետության տարածքում կազմում է 285 կմ/, որոնց հոսքը միջին հաշվով կազմում է 72,8 մ^3/վրկ, տարվա կտրվածքով՝ 2,3 մլրդ. մ^3:

Պետական ջրային կադաստրի տեղեկատվական բազայում ներառված տվյալների մշակման արդյունքում ստացվում են ջրային ռեսուրսների, դրանց օգտագործման և որակի մասին հետևյալ հաշվետու փաստաթղթերը.

-ջրային ռեսուրսները և դրանց օգտագործումն ըստ ջրավազանների /գետավազանների/ և վարչատարածքային միավորների

-գետերի, լճերի, ջրամբարների, ստորգետնյա ջրերի որակն ըստ ջրավազանների /գետավազանների/ և վարչատարածքային միավորների

-գետերի, լճերի, ջրամբարների, ստորգետնյա ջրերի աղտոտվածության վիճակը ըստ ջրավազանների /գետավազանների/ և վարչատարածքային միավորների

-ջրատնտեսական հաշվեկշիռներն ըստ ջրավազանների /գետավազանների/:

Ջրային պետական կադաստրի քարտեզներում տրվում են ջրային հողերը, բոլոր ջրային օբյեկտները, հիդրոտեխնիկական կառույցները, կադաստրային ծածկագրերը, ջրաէկոհամակարգերի պահպանության գոտիները:

Լեռնային Ղարաբաղի տարածքում ջրային պետական կադաստր չի վարվում, չնայած նրան, որ ԼՂՀ ջրային օրենսգրքում կա համապատասխան

հոդված դրա վարման անհրաժեշտության մասին: Ներկայումս աշխատանքներ են տարվում հիմնական գետերի անձնագրավորման և առկա նյութերի դասակարգման ուղղությամբ:

Գրականություն

1. Լեռնային Ղարաբաղի ջրային օրենսգիրք, ընդունվել է 2003 թվականի նոյեմբերի 26-ին
2. Լեռնային Ղարաբաղի օրենքը ջրի ազգային ծրագրի վերաբերյալ, ընդունվել է 2011 թվականի սեպտեմբերի 15-ին
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 22.05.2003 թ. "Ջրային ռեսուրսների մոնիտորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին" # 639 որոշում

Государственный водный кадастр как составляющая часть цифрового территориального кадастра Нагорно–Карабахской Республики

Ш. Акопян

Резюме

Водный государственный кадастр - постоянно действующая система, где имеются данные о качественных и количественных показателях, о водосборных бассейнах, о составе извлеченных с зоны берегов бассейнов материалов, о составе и структуре биологических ресурсов, о потребляемых водах, о разрешении на использование воды и о разрешении на использование водных систем.

Введение водной государственной системы осуществляется на основе единой геоинформации - это иной подход к кадастровой системе.

В рамках водного государственного кадастра осуществляется паспортизация водных объектов экологического, экономического, рекреационного значения.

Water State Cadastre as a Digital Territorial Component Part of NKR

Sh.Hakobyan

Summary

Water state cadastre is a constant inventory system, where there are data for quantitative and qualitative indicators of water resources, catchment basins, pond sand beaches, extracted materials, the structure and components of biological resources and water systems use permits. State water cadastre maintenance is carried out on the basis of a singlegeoin formation, it`s a different principle of cadastral systems. State water cadastre carried out within the framework of the ecological, economic, recreation significance of water Passportization facilities.

УДК 08.00.02 *Экономика, управление хозяйством и его отраслями*

СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ НКР НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ В КООРДИНАТАХ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКОГО ПРОСТРАНСТВА

И. Петросян

Стратегия развития экономики НКР в мирохозяйственной системе - составная часть общей экономической стратегии развития страны, представляет собой взаимосвязанную систему направлений, мер и инструментов, осуществляемых в целях повышения эффективности функционирования национального политизированного хозяйства в рамках региона, внешнеэкономических связей. Поэтому процесс постепенной трансформации национальной экономики и ее включения в мирохозяйственную систему должны быть гармоничным образом взаимосвязаны. С одной стороны отдельные инструменты и меры регулирования сами по себе не решают проблем преобразования внешнеэкономической деятельности на глобальной основе, тем более что НКР пока не является юридическим лицом на международном рынке. С другой – на первоначальном этапе институциональных преобразований внутренние процессы развития должны доминировать и определять конкретные формы, направления и методы включения в международный рынок. Соответственно следует исходить из понимания того, что разработка стратегии участия в мирохозяйственном взаимодействии является необходимым, но недостаточным условием достижения желаемых результатов. В качестве достаточных условий выступают меры и результаты структурной, инновационной и инвестиционной политики.

В этом контексте необходимо отметить и экономическую безопасность как внешнюю, так и внутреннюю. Так академик Л.И. Албакин определяет экономическую безопасность как “совокупность условий и факторов, обеспечивающих независимость национальной экономики, ее стабильность и устойчивость, способность к постоянному обновлению и самосовершенствованию”. То же время как Г.В. Гутман, Ю.Н. Лапыгин и А.И. Прилепский отмечают, что безопасность – это определенное состояние экономики и не может быть совокупностью условий и факторов”, а более точное определение приводится академиком В.К. Сенчаговым: “…это не только защищенность национальных интересов, но и готовность и способность институтов власти создавать механизмы реализации и защиты национальных интересов развития отечественной экономики, поддержания социально-политической стабильности общества”.

Экономическая безопасность – состояние экономики, при котором обеспечивается достаточно высокий и устойчивый экономический рост;

эффективное удовлетворение экономических потребностей; контроль государства за движением и использованием национальных ресурсов; защита экономических интересов страны на национальном и международном уровнях, внешних рынках, гарантирующую от различного рода угроз и потерь.[1]

Для определения уровня экономической безопасности (страны или региона) используются различные методы. Укрупненно их можно представить в виде четырех основных групп:

1. наблюдение основных макроэкономических показателей и сравнение их с пороговыми значениями (метод использованный Глазьевым);
2. метод экспертной оценки для ранжирования территорий по уровню угроз;
3. оценка темпов экономического роста страны по основным макроэкономическим показателям и динамика их изменений;
4. методы прикладной математики, и в частности многомерного статистического анализа.

Приведем ряд показателей НКР характеризующих экономическую безопасность страны. Как видно, при анализе дебиторской и кредиторской задолженности, то видно, что показатели последней стабильно превышают показатели дебиторской задолженности на 10-40 процентов, что в свою очередь приводит к увеличению потребности в банковских кредитах, увеличению риска неплатежеспособности, о чем свидетельствуют показатели просроченных кредитов банкам, и банкротства, вследствие, неправильной организации бизнеса. Внешнегосударственные займы составляют более половины расходов государственного бюджета. За последние пять лет тенденция соотношения экспорта к импорту составляет около 30-ти процентов, и преимущественно экспорт осуществляется сырьевыми товарами.

Таким образом, необходимо сделать упор на развитие производства конечной продукции для экспорта.

[1] Манасерян Т.Н. М230, Основы экономической безопасности.-Ер.:Изд-во РАУ, ст.11

Диаграмма 1. Тенденции основных макроэкономических показателей экономики НКР[1]



Кроме того в НКР очень слаба инвестиционная безопасность, которая подразумевает снижение как коммерческих так и некоммерческих рисков инвесторов, в частности иностранных, где немаловажную роль играет государство и институты коллективного инвестирования.

Во многих развивающихся странах она достигается путем:

- предоставления иностранным инвесторам определенных льгот и гарантий (в случае НКР “Закон об иностранных инвестициях);
- освобождения от налогов в случае превышения объемов инвестиций установленной государством уровня или при реинвестировании полученной прибыли;
- в случае целевых инвестиций в приоритетные отрасли экономики или специальные проекты.

За отсутствием статуса государства НКР задача намного осложняется и в данном случае роль государства должна заключаться в усилении внешнеэкономической деятельности на уровне корпораций, то есть на горизонтальном уровне: предприятие - предприятие.

Представим ниже также для сравнения некоторые данные относящиеся к внешней безопасности согласно методу используемым Глазьевым, по показателям 2011 года;

- дефицит бюджета НКР в процентах к ВВП – 30.8%, пороговое значение 5%;

[1] Статистический ежегодник НКР (2004-2010 и 2005-20110) НКР. Разделы: Население; Финансы и кредит; Внешнеэкономическая деятельность

- доля внешних заимствований в покрытии дефицита бюджета НКР - 26.1%, пороговое значение 30%.

Внешняя составляющая представляет собой спонтанные и преднамеренные угрозы, источником которых служат действия или намерения иностранных государств, экономических или политических субъектов.

Рисунок 1. Схема экономической безопасности.



К внешним угрозам относятся, прежде всего, факторы геополитические и внешнеэкономические, а также глобальные экологические процессы.

К внешним факторам, представляющим угрозу экономической безопасности, относятся:

- преобладание сырьевых товаров в экспорте, потеря традиционных рынков сбыта военной и машиностроительной продукции (что явно прослеживается в структуре экспорта НКР);
- зависимость страны от импорта многих видов продукции, в том числе стратегического значения, в частности продовольственных товаров (структура импорта НКР);
- увеличивающаяся внешняя задолженность (у государственного бюджета Армении в период с 1995-2011 было заимствовано 256,652.1 млн. драм, в то время как собственные доходы бюджета за 2011 год составили 25,756.4 млн. драм, ниже приведена динамика межгосударственного долга);

Диаграмма 2. Динамика межгосударственного долга НКР по годам



- недостаточный экспортный и валютный контроль и не замкнутость таможенной границы;
- неразвитость современной финансовой, организационной и информационной инфраструктуры поддержки конкурентоспособности экспорта и рационализации структуры импорта;
- неразвитость транспортной инфраструктуры, обслуживающей экспортно-импортные операции.

Все вышеперечисленное прямо относится к существующим проблемам в НКР.

Так, “утечка мозгов” является значительной угрозой для экономической безопасности как Армении, так и НКР, в то время как так же проблема в России частично разрешается в силу того, что восполняется приездом специалистов с образованием из постсоветских стран и дальнего зарубежья.

Каждое государство формирует свою систему образования, учитывая свои культурные обычаи и собственные потребности в образовании, которая в свою очередь вызывает воспроизводство того же образовательного потенциала. Это означает, что чем выше уровень образования, тем выше стремление в дальнейшем продолжении образования. А чем выше образование, тем больше инвестиций индивид сделал в себя и тем выше запросы на оплату. С одной стороны в НКР отсутствие специализированных современных образовательных заведений, с другой низкая оплата труда приводит к естественной “утечке мозгов”.

Таблица 1.Основные показатели человеческого развития.[1]

Показатели	Армения	Россия	Канада	США	Япония	Велико-британия	Франция	Германия	Италия
Индекс развития человеческого потенциала	0.721	0.771	0.935	0.927	0.924	0.918	0.918	0.906	0.903
Индекс уровня образования	0.90	0.92	0.99	0.97	0.94	0.99	0.97	0.95	0.93
Уровень грамотности взрослого населения, в %	98.2	99.5	99.0	99.0	99.0	99.0	99.0	99.0	98.3

Как видно из таблицы лишь по индексу человеческого потенциала мы уступаем таким развитым странам северной Америки и Европы, значит, упор в развитии экономики НКР необходимо делать на развитие информационных технологий, предоставления услуг аутсорсинга, развитие наукоемких производств, требующих в основном интеллектуальных инвестиций населения республики.

Таким образом, наличие эффективно функционирующего ядра национальной экономики является основой для процесса ее включения в мировую систему. Как отмечает М.Портер: “Успех национальной экономики в мирохозяйственном взаимодействии зависит от экономического положения внутри страны”.[2]

А так как на сегодняшний день включение НКР в систему мирохозяйственных связей возможно лишь на горизонтальном уровне (партнерства, ассоциации, построенные на связях между компаниями, а не государством и компаниями, в качестве гаранта) в силу не признанности республики, то государство должно всячески субсидировать и поддерживать эффективность подобных связей: законодательно, финансово, путем приглашения высококвалифицированных специалистов для тренингов и семинаров.

Масштаб экономики НКР (хотя бы с точки зрения трудовых ресурсов) не позволяет ей одномоментно или в относительно сжатые сроки включиться в сложившуюся систему международных экономических отношений за счет ограниченного набора мер. Попытка идти по такому пути приводит к

[1] Источник: Доклад о развитии человека за 1999 г. ЮНЕСКО. 1999. с 176-179. Данные по Армении приведены из: «Մարդկային զարգացման ազգային զեկույց», Հայաստան 2000:

[2] См. Портер М., “Международная конкуренция”, Москва, 1993. С.13

возникновению в ущерб развитию производств работающих непосредственно на конечного потребителя, и подрывает позиции национальной экономики на внешнем рынке.

Исходной предпосылкой формирования конкурентных преимуществ экономики НКР является наличие определенных условий, детерминирующих продвижение национальных товаров и услуг на международном рынке. К таким условиям относятся факторные условия, такие как: качество и величина рабочей силы, соответствующая инфраструктура и тому подобное; условия спроса на продукцию данного типа на внутреннем рынке (именно эти условия влияют на степень готовности национальных фирм к расширению своей деятельности на внешнем рынке); условия функционирования фирм: механизм их создания, а также условия конкуренции на внутреннем рынке.[1]

Таким образом, формирование конкурентных преимуществ национальной экономики НКР связано напрямую с внутренним социально-экономическим развитием. К сожалению, почти все вышеназванные факторы отсутствуют в экономике НКР, что существенно усложняет эффективность включения НКР во внешнеэкономические связи, особенно с точки зрения стабильности и устойчивости последних.

Все вышеназванные условия, каждое в отдельности, и все вместе как система, создают экономическую среду, в которой действуют хозяйствующие субъекты. Разрабатывая стратегию создания конкурентных преимуществ, фирмы стремятся обеспечить наилучшую комбинацию уникальных и относительно дешевых факторов производства. Поиск таких комбинаций является также предметом структурной политики государства. К задачам государственного регулирования относится обеспечение достаточного предложения факторов через соответствующие институты и механизмы.

Сложность положения экономики НКР состоит в том, что в явном виде наличие ни одного из выше названных факторов (кроме природных ресурсов) нельзя назвать в полной мере достаточным. Наиболее дефицитным являются факторы капитала и инфраструктуры. Поэтому необходимо создавать условия для капиталообразования и точечного использования существующих элементов инфраструктуры для создания конкурентоспособных на внешнем рынке субъектов, что возможно на основе, так называемой системы отраслевых приоритетов.

Активизация инновационного процесса необходима, как для модернизации экономики НКР, так и для успешного включения во

[1] Например, итальянская экономика отличается наличием множества малых и средних предприятий. Соответственно итальянские производители добиваются успеха на международном рынке в производстве массовых изделий (мебель, производство обуви, шерстяных тканей и т.п.)

внешнеэкономическую деятельность. Поддержка, пусть даже минимальная, собственной науки необходима в связи с тем, что утрата интеллектуальных ресурсов может оказаться невосполнимой утратой. К сожалению, в НКР этот процесс продолжает до сих пор.

Другим условием международной конкурентоспособности является внутренний спрос на товары и услуги. Величина внутреннего спроса оказывает значительное влияние на конкурентные позиции национальных производителей через позитивный эффект масштаба, то есть путем сокращения издержек на единицу товара. Величина внутреннего спроса также влияет на размеры и структуру фирм, от которых зависят объемы средств, расходуемых на маркетинговые программы и тому подобные. В результате появляются предпосылки для расширения внешнеэкономические связи, в результате насыщение внутреннего рынка.

Последним условием международной конкурентоспособности является формирование конкурентных стратегий фирм. В зависимости от национальных, поведенческих, культурных и других особенностей формируются управленческие стратегии фирм и принципы работы на внутреннем и внешнем рынках. В настоящее время карабахский менеджмент как феномен только формируется.

Тем не менее, можно выделить некоторые его характерные черты. Это, с одной стороны, инициативность, динамизм, приспособляемость, способность как к развитию, а с другой – склонность к неформальным отношениям, недоверие к государству, неприятие иерархичности и бюрократизма. Многие из названных качеств нередко не способствуют эффективности внешнеэкономических связей.

В нашем случае важно отметить такое понятие как экономическая безопасность. Все вышеназванные факторы, влияющие на развитие экономики НКР, напрямую связаны с экономической безопасностью страны, что в нашем случае приводит прямо или косвенно к тому, что НКР как для внутренних инвесторов, так и для внешних является большой зоной риска. С другой стороны, глобализация экономики и молниеносное развитие техники и технологий в некотором роде заставляет предпринимателей закрывать глаза на некоторые факты ради сокращения себестоимости производства и относительно дешевых региональных отделений, чем и необходимо воспользоваться НКР и включить в экономико-политическую стратегию скорейшего эффективного развития.

Учитывая все вышеперечисленное можно сделать следующие заключения.

Во-первых, в условиях соразвития национальной экономики, то есть в сочетании развития и взаимозависимости в системе внешнеэкономических связей, необходимо обеспечить согласование региональных и национальных интересов. Необходимо согласовывать текущие интересы нации с

постоянным наращиванием ее научно-технического, производственного потенциала и вместе с тем необходимо мыслить интернационально, то есть учитывать современные тенденции развития сложившейся принципиально новой, целостной мирохозяйственной системы ориентированной на сотрудничество с другими нациями, во взаимосвязи со всеми мирохозяйственными субъектами.

Во-вторых, для повышения эффективности внешнеэкономических связей НКР, требуется переход национальной экономики на инновационную модель внешнеэкономических связей. Базой перехода на эту модель является модернизация экономики НКР, на новом технологическом уровне, отход от стагнационной модели развития, основанной на преобладании высоких экономических рисков в условиях низкого уровня спроса. Обеспечение как долговременных геоэкономических интересов страны, так и ближайших целей по повышению жизненного уровня населения предполагает, что основной качественной направленностью структурных изменений должна стать их инновационность. Технологическая трансформация объективно должна стать основой очередного этапа трансформации вообще.

В-третьих, важная роль в процессе включения экономики НКР в мирохозяйственные связи принадлежит государственному регулированию, обеспечивающему эффективное сочетание рыночных и протекционных мер. ЭТО СВЯЗАНО С ТЕМ, ЧТО РЫНКУ ЧУЖДЫ ДОЛГОСРОЧНЫЕ НАЦИОНАЛЬНЫЕ ИНТЕРЕСЫ.

Оно не может их учитываться, тем более в условиях институциональных преобразований. Государство должно выступать гарантом сохранения особенно тех импортозаменяющих отраслей, которые обеспечивают национальные интересы. В этом случае с учетом ограниченности ресурсов необходим селективный подход. Успешное развитие национального хозяйства в мировой системе является результатом комплекса продуманных и целенаправленных действий, учитывающих интересы различных хозяйствующих субъектов.

С другой стороны, целесообразно разработать критерии и оценки эффективности функционирования экономики НКР на международном рынке. В качестве таких критериев могут стать с одной стороны индикаторы национальной экономической безопасности (государственный внешний долг, динамика курса национальной валюты, объемы утечки капитала, доля импорта в товарообороте и другие), а с другой – показатели уровня качества жизни (индекс развития человеческого потенциала и другие).[1]

[1] См. Осипов Ю.М. “Экономическая цивилизация и научная экономия”// Экономическая теория на пороге XXI века, под редакцией Э.М.Осипов, Е.С.Зотовой, Москва, Юристъ.

Подводя итог, отметим, что хозяйственное взаимодействие предполагает взаимное доверие. Реализация личных интересов всех участников деловых операций основывается на соблюдении определенных правил всеми. Однако известно, что наибольшую выгоду хозяйствующий субъект может получить при одностороннем нарушении правил (это так называемая “дилемма заключенного). Как только все перестают придерживаться правил, ситуация ухудшается для всех. Поэтому необходим индивидуальный отказ от наибольшей собственной выгоды. Подобный отказ опирается на моральные обязательства, которые могут иметь эмоциональную, идеологическую, религиозную основу или правовую культуру.

Some Conceptual Approaches to the development Strategy of NKR
in the Coordinating of Foreign Economic Space

I.Pertosyan

Summary

The economic development strategy of Nagorno-Karabakh Republic in world economic system is a constituent of the whole economic development strategy of the country.

Individual instruments and regulatory measures do not solve the problems of foreign-economic activities transformation on global basis, because NKR is not yet a legal entity and also the internal development processes should dominate and define the specific forms, directions and methods of integration into the international market in the initial phase of institutional changes.

It is purposeful to develop the criteria and appraisals (measures) of economy’s functioning effectiveness on international market, creation of such factor conditions as quality and size of labor force, appropriate infrastructure, etc; conditions of demand on given production in internal market, companies’ functioning conditions, mechanisms of their creation, also competition conditions in internal market.

Competitive advantages formation of NKR national economy is directly related to internal social-economic development.

ԼՂՀ զարգացման ռազմավարության որոշ հայեցակարգային մոտեցումները արտաքին տնտեսական տարածքի կոորդինատներում

Ի.Պետրոսյան

Ամփոփում

Համաշխարհային տնտեսական համակարգում ԼՂՀ տնտեսության զարգացումն ռազմավարությունը երկրի տնտեսական զարգացման ընդհանուր ռազմավարության բախկացուցիչ մասն է: Առանձին գործիքներն ու կարգավորող միջոցառումները չեն լուծում արտաքին տնտեսական գործունեության փոխակերպման խնդիրները համընդհանուր հիմքով, պայմանավորված է նրանով, որ ԼՂՀ-ն դեռ չի հանդիսանում իրավաբանական անձ միջազգային շուկայում:

Նպատակահարմար է մշակել ԼՂՀ տնտեսության՝ միջազգային շուկայում արդյունավետ գործնունեության չափանիշնեն ու գնահատականները, ստեղծել գործոնային պայմաններ ինչպիսիք են՝ աշխատուժի որակն ու արժեքը, համապատասխան ենթակառուցվածքը և այլն, սահմանել ներքին շուկայում տվյալ ապրանքատեսակի պահանջարկի պայմանները, կազմակերպությունների գործունեության պայմաններն ու դրանց ստեղծման մեխանիզմները, սահմանել ներքին շուկայի մրցակցության պայմանները:

ԼՂՀ ազգային տնտեսության մրցակցության առավելությունների մշակումը ուղղակիորեն կապված է ներքին սոցիալ-տնտեսական զարգացման հետ:

ՀՏԴ *Տնտեսագիտություն*

ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՂ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՎՐԱ ԵՐԿՐԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳԾԱՅԻՆ ՄՈԴԵԼԸ

Ա. Առստամյան

Զարգացող շուկաներում երկրի ռիսկի գնահատումը և բաժնետիրական կապիտալում (ERP) ներդրում կատարելու համար ռիսկի համար պարգևատրման որոշման հարցերը հանդիսանում են ներդրումների գնահատման առանցքային տարերից մեկը: Այդ գործընթացի կարևոր փուլ է հանդիսանում զեղչադրույքի որոշումը,քանի որ վերջինիս ոչ ճիշտ գնահատումը կարող է պատճառ հանդիսանալ ինչպես հետաքրքիր նախագծերից հրաժարվելու, այնպես էլ վատ նախագծերի ընդունելու:

Որպես կանոն, զարգացող շուկաների վրա ազդող գործոնների առանձնահատկ-ությունների ի հայտ բերման համար դրանք համեմատվում են ԱՄՆ-ի կամ այլ զարգացած երկրների հետ:

Այդ շուկաների ընկերությունների կապիտալի կառուցվածքն ուսումնասիրողներն ընդգծում են դրանց հետևյալ բնութագրող գծերը.

- կապիտալի շուկա մտնելու սահմանափակ հնարավորությունները
- տեղեկատվության բարձր ասիմետրիան
- տնտեսական կայունությունը
- ցածր իրավական պաշտպանությունը
- կառուցվածքի բարձր մակարդակի և սեփականության կենտրոնացվածությունը
- կորպորատիվ կառավարման թույլ համալրվածությունը: [1 էջ 97-103]

Հայտնի է որ,կանխատեսելով կապիտալի մոտավոր արժեքը՝ կարելի է իրականացնել ընկերության ակտիվներում ներդրված միջոցների արդյունավետության համեմատական վերլուծություն՝ ներառելով նաև ներդրումային ծրագրերի գնահատականը:Որպես կապիտալի արժեքի գնահատման գումարային մեծություն հանդես է գալիս կապիտալի արժեքի միջին կշռված մեծությունը՝ WACC-ը, որն իրենից ներկայացնում է շահույթի այն նվազագույն նորման, որը ակնկալում են ստանալ ներդրողներն իրենց կատարած ներդրումների դիմաց, և հաշվարկվում է որպես տարբեր աղբյուրներից՝ բաժնետիրական, փոխառնություններ, բանկային վարկ, կրեդիտիորական պարտք, չբաշխված շահույթ, միջոցների ներգրավման անհատական արժեքների միջին կշռված մեծություն:

Այն հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\mathrm{WACC} = \mathrm{R_e} * \frac{\mathrm{E}}{\mathrm{LC}} + \mathrm{R_d} * \frac{\mathrm{D}}{\mathrm{LC}} * (1 - \mathrm{T}) \qquad (1),$$

որտեղ՝

Re - սեփական կապիտալի արժեքն է

Rd - փոխառու կապիտալի արժեքն է
E - սեփական կապիտալի մեծությունն է
D - փոխառու կապիտալի մեծությունն է
LC - ներդրված կապիտալի մեծությունն է
T - շահութահարկի դրույքաչափն է :
Այսպիսով, գեղչադրույքի կոռեկտ գնահատումը հնարավոր չէ կատարել առանց գնահատելու սեփական կամ փոխառու կապիտալների արժեքները:
Աշխատանքում փորձ է արվել գնահատելու սեփական կապիտալի արժեքները, որի համար կիրառվել է CAPM մոդելը (capital asset- pricing model), համաձայն որի ներդրողի սպասարկելի եկամտաբերությունը ձևակերպվում է երկու բաղադրիչից՝ ոչ ռիսկային տոկոսադրույքից (R1) և բաժնետիրական կապիտալում ներդրում կատարելու սիստեմատիկ ռիսկի (β) համար պարգևավճարից (ERP):

Եթե $\beta > 1$, ապա ակտիվն ավելի ռիսկային է, քան շուկան է, հետևապես ներդրողի սպասվող եկամտաբերությունը կլինի բարձր և հակառակը, եթե (β) <1, ապա ակտիվը քիչ է ռիսկային է, քան շուկան, և ներդրողի սպասվող եկամտաբերությունը կլինի ցածր:
CAPM-ը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝

$$CAPM = R_f + \beta * ERP \quad (2),$$

որտեղ՝
R_f – եկամտաբերության ոչ ռիսկային դրույքն է
β - բետա գործակիցն է (սիստեմատիկ ռիսկն է)
ERF – բաժնետիրական կապիտալում ներդրման համար ռիսկի դիմաց սպասվելիք պարգևավճարն է:

Ներկայումս գործնական և ակադեմիական շրջանակներում զարգացած և զարգացող երկրների համար սեփական կապիտալի արժեքի որոշման համար մեծ հեղինակություն են վայելում Ա.Դամոդարանի ուսումնասիրությունները (Damo-daran, 2011) [3 էջ41-48], ով ERP-ի գնահատման համար առաջարկում է մի քանի մոտեցումներ: Դրանցից մեկում, որը նա անվանել է ֆինանսական շուկաների ստանդարտ շեղումների հարաբերակցություն (relative equity market standart devitions), ենթադրվում է, որ ERP-ի և եկամտաբերություն ստանդարտ շեղման միջև առկա է գծային կապ:

Զարգացող շուկայում բաժնետիրական կապիտալի ներդրման համար ռիսկի դիմաց սպասվելիք պարգևավճարի հաշվարկման բանաձևը ներկայացվում է հետևյալ կերպ՝

$$ERP_{EM} = ERP_{US} * \frac{\sigma EM}{\sigma S\&P500} \quad (3),$$

որտեղ՝
ERP_{US} – ԱՄՆ-ում բաժնետիրական կապիտալում ներդրման ռիսկի համար պարգևավճարն է,

σEM –զարգացող շուկայում ֆոնդային ինդեքսի եկամտաբերության ստանդարտ շեղումն է,
$\sigma S\&P500$– ԱՄՆ $S\&P500$ ֆոնդային ինդեքսի եկամտաբերության ստանդարտ շեղումն է:
Եթե օգտագործենք (2) բանաձևը, ապա շուկայի համար սեփական կապիտալի արժեքը կարելի է որոշել հետևյալ կերպ՝
$CAPM = R_f + \beta * ERP_{AM}$ (4),
իսկ բաժնետիրական կապիտալում ներդրում կատարելու ռիսկի պարգևավճարը կարելի է ստանալ (3) բանաձևից՝

$$ERP_{AM} = ERP_{US} * \frac{\sigma NASDAQOMX}{\sigma S\&P500} \quad (5):$$

Եթե որպես ոչ ռիսկային համարենք ԱՄՆ-ում պետական պարտատոմսերի եկամտաբերությունը, ապա այն կարելի է ՀՀ-ի համար ևս ընդունելի համարել,քանի որ դոլարով կատարվող ներդրումները ՀՀ-ում ամենա ոչ ռիսկայինն են, և կարող ենք նշել,որ՝
$R_{fSAM} = R_{fSUS}$:
ՀՀ-ի համար ERP_{AM} հաշվարկելու համար կարելի է օգտագործել (5) բանաձևը և կստանանք ՝

$$ERP_{AM} = ERP_{US} + (Armenia\,30 - US10Tbond)$$

Այդ դեպքում ՝

$$\left(\frac{\mathrm{NASDAQOMX}_t}{\mathrm{NASDAQOMX}_{t-1}} - 1\right) - \mathrm{Rf}_{t-1} = \mathrm{ERP}_{\mathrm{AM}} \quad \text{և} \left(\frac{S\&P500_t}{S\&P500_{t-1}} - 1\right) - Rf_{t-1} = ERP_{US}$$

որտեղ՝
$NASDAQOMX_t$ $NASDAQOMX$ - ինդեքսի արժեքն է t պահին
$NASDAQOMX_{t-1}$ $NASDAQOMX$-ի ինդեքսի արժեքն է t-1 պահին
$S\&P500_t$ – $S\&P500$-ի ինդեքսի արժեքն է t պահին
$S\&P500_{t1}$ – $S\&P500_{t-1}$ (t-1)ինդեքսի արժեքն է t պահին
$R_f t - 1$ – ոչ ռիսկային ակտիվի եկամտաբերությունն է (t-1) պահին:
Ստացվում է ,որ

$$\frac{\left(\frac{NASDAQOMX_t}{NASDAQOMX_{t-1}} - 1\right) - Rf_{t-1}}{\left(\frac{S\&P500_t}{S\&P500_{t-1}} - 1\right) - Rf_{t-1}} = \frac{\sigma NASDAQOMX}{\sigma S\&P500}:$$

Այսպիսով, $\frac{\sigma NASDAQOMX}{\sigma S\&P500}$ հարաբերությունը պետք է բացահայտի

$$\frac{\left(\frac{\mathrm{NASDAQOMX_t}}{\mathrm{NASDAQOMX_{t-1}}} - 1\right) - \mathrm{Rf_{t-1}}}{\left(\frac{S\&P500_t}{S\&P500_t} - 1\right) - \mathrm{Rf_{t-1}}}$$ հարաբերությանը:

Այսինքն, կարելի է էմպիրիկ վերլուծության հիման վրա որոշել,թե $NASDAQOMX$ և $S\&P500$ ինդեքսների ստանդարտ շեղումների հարաբերությամբ կարելի է բացատրել ERP_{AM}և ERP_{US}-ի միջև հարաբերությունները, արդյոք $ERP_{AM}<ERP_{US}$–ի միջին հարաբերակցությանը: Ելնելով վերոշարադրյալ մոդելի էմպիրիկ վերլուծությունից՝ կարելի է որոշել, թե ՀՀ-ում բաժնետիրական կապիտալում ներդրում կատարելիս ռիսկի համար սպասվելիք պարգևավճարը որքան ուժեղ է կապված $NASDAQOMX$ և $S\&P500$ եկամտաբերությունների ստանդարտ շեղումների հարաբերությունից:[4 էջ 4-15]

ERP_{AM} և ERP_{US} պատմական ժամանակի հարաբերության և $S\&P500$-ի նկատմամբ $NASDAQOMX$ հարաբերությունների ստանդարտ շեղումների հիման վրա կարելի է կառուցել գծային ռեգրեսիայի մոդելը:

$y = a + bx$, որտեղ

$$y = \frac{ERP_{AM}}{ERP_{US}} = \frac{\left(\frac{NASDAQOMX_{\ t}}{NASDAQOMX_{\ t-1}} - 1\right) Rf_{t-1}}{\left(\frac{S\&P500_t}{S\&P500_{t-1}} - 1\right) - Rf_{t-1}}$$

$$X = \frac{\sigma NASDAQOMX}{\sigma SP500}$$

Ստուգվող հիպոթեզը կայանում է հետևյալում. ճի՞շտ է արդյոք, որ մոդելը ենթարկվում է գծային ենթադրության, այսինքն ERP_{AM} և ERP_{US} հարաբերությունը բացատրո՞ւմ է արդյոք $NASDAQOMX$ և $S\&P500$ ինդեքսների եկամտաբերությունների ստանդարտ շեղումների հարաբերությունը:

Սակայն ՀՀ-ի շուկայի համար դեռևս հնարավորություն չի ընձեռվում կիրառելու վերոհիշյալ մոտեցումները, քանի որ $NASDAQOMX$-ի կողմից մինչև այժմ չեն հաշվարկվում ֆոնդային ինդեքսները:

Ուստի, ՀՀ կապիտալի շուկայի հետագա զարգացման համար նպատակահարմար է հաշվարկել այդ ցուցանիշները՝ հաշվի առնելով կորպորատիվ արժեթղթերի շուկայի վերջին զարգացումները, մասնավորապես կորպորատիվ պարտատոմսերի առաջարկը (արտարժույթային) բանկային և արտադրության ոլորտի ընկերությունների կողմից:

Մեր կողմից կատարվել է ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության ուսումնասիրություն 2011թ համար, քանի որ հնարավոր չէ ձեռք բերել տեղեկություններ ինչպես ամբողջ շուկայի,այնպես էլ՝ կորպորատիվ պարտատոմսերի համար:

Մեր կողմից 2011թ տվյալների հիման վրա պետական պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվել է $NASDAQOMX$ ֆոնդային ինդեքսը, որի հիման վրա կազմվել են Sigma NASDAQOMX և Sigma $S\&P500$

եկամտաբերությունների ստանդարտ շեղումների և ERP_{ARM} և ERP_{US}-ի հարաբերությունների պատմական տվյալները՝ 01.01.2011թ-01.12.2011թ [Հավելված 1], և ստացված արդյունքները համեմատվել են այլ հեղինակների կողմից ՌԴ ֆոնդային բորսայի ինդեքսի Sigma $RTSI$ և Sigma $S\&P500$ եկամտաբերությունների ստանդարտ շեղումների և ERP_{RUS} և ERP_{US}-ի հարաբերությունների պատմական տվյալների հետ 01.01.2011թ-01.12.2011թ [Հավելված 2]: Ընդ որում, եթե ՌԴ-ի համար չեն հաստատվում $Sigma\ RTSI$ և $Sigma\ S\&P500$ եկամտաբերության ստանդարտ շեղումները, ապա ՀՀ-ի համար ըստ մեր գնահատումների առկա են ներքոհիշյալ կապերը:

Հավելված 1. Sigma $NASDAQOMX$ և Sigma $S\&P500$ եկամտաբերությունների ստանդարտ շեղումների և ERP_{ARM} և ERP_{US}-ի հարաբերությունների պատմական տվյալները ՝ 01.01.2011թ-01.12.2011թ:

Հավելված 2. Sigma $RTSI$ և Sigma $S\&P500$ եկամտաբերությունների ստանդարտ շեղումների և ERP_{RUS} և ERP_{US}-ի հարաբերությունների պատմական տվյալները՝ 01.01.2011թ-01.12.2011թ:

Линейная модель оценки странового риска на развивающихся рынках капитала

А. Арустамян

Резюме

На основе эмпирического исследования мы можем утверждать, что зависимость между $\frac{\sigma RTSP}{\sigma S\&P600}$ и $\frac{ERP_{RUS}}{ERP_{US}}$ отсутствует. Таким образом, использование подхода отношения стандартных отклонений финансовых рынков (relative equity market standard deviations), предложенного Дамодараном, может привести к некорректной оценке премии за риск инвестирования в акционерный капитал и, следовательно, к ошибкам в инвестиционной оценке.

The Linear Model of Country Risk Assessment on Capital's Developing Markets

A.Arustamyan

Summary

We have calculated NASDAQOMX stock index by means of state bond's profitability according to 2011, and on the bases of it Sigma NASDAQOMX and Sigma S&P500 yield standard deviation was created and the received results were compared with the Russian Federation Stock Exchange index of Sigma RTSI and Sigma S&P500 yield standard deviation, and with ERP_{RUS} and ERP_{US} historical cost (value).

Գրականություն

1. *Герасимова С.М.*,Эмпирические исследования структыры капитала компаний на развивающисях рынках: специфика и методология, Журнал «Корпоративные финансы» N:1(21)2012 ст. 97 и 107
2. *Damodaran.A.* (2011), Equity Risk Premiums (ERP): Detarminan,Estimation and Implications- The 2011 Edition (2011) : http://ssrn.com/abstract=1769064
3. *Vashakmadze, T.* (2008), Calculating Equity Risk Premium for Russian Market: An Empirical Analusis, Global Academic Society Journal:Social Science Insight,1(5) page 4-15
4. *Campbell J., Lo A., MacKinlay* C.(1997),The Econometrics of Financial markets, Princeton: University Press.
5. *Вашакмадзе Т.* Линейная модель оценки странового риска на развиваюшисях рынках капитала . Эмпирические тестирования на российском финансовым рынке, Журнал «Корпоративные финансы» N:1(21)2012 ст. 11 и 12
6. www.Finance.yahoo.com ,www.nasdaqomx.am, www.cba.am, www.damwdaran.com

Հավելված 1.



Հավելված 2



ՀՏԴ 809.198.1 *Գրականագիտություն*

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՉԳԵՆ ՕՎՅԱՆԻ «ԼԵՌՆԱԿԵՐՏ» ԵՐԿՈՒՄ

Ն.Խաչատրյան

Վ. Օվյանի «Լեռնակերտ» երկում երգիծանքը կիրառված է վարպետությամբ ու նպատակասլաց: Այն ստեղծվում է հիմնականում համեմատությունների, փոխաբերությունների, մակդիրների, հեգնանքի միջոցով: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում համեմատությունը, որով հեղինակը խարազանում է 20-րդ դարասկզբին Լեռնակերտում տիրող ներքին ու արտաքին քաղաքական խաղերը, հասարակական, կենցաղային բացասական երևույթները, ծաղրում մարդկային արատները:

Համեմատությունը անձերի, առարկաների և երևույթների հատկանիշները ճանաչելի դարձնելու կարևոր միջոց է: Համեմատության կազմում առկա են համեմատվող, համեմատելի առարկաներ իրենց այն հատկանիշներով, որոնք դրվում են համեմատության հիմքում: «Սովորաբար համեմատության հիմքը երկու երևույթների միջև եղած որևէ նմանությունն է կամ նրանց նկատմամբ հեղինակի մոտեցումը, որի շնորհիվ կապ է ստեղծվում նրանց միջև, մեկի օգնությամբ բացատրվում և բնութագրվում է մյուսը»[1]:

Երգիծաբանը մերկացնում է Լեռնակերտի՝ այդ ժամանակաշրջանի (20-րդ դարի 20-ական թվականներ) մարդկանց՝ դրանով իսկ իր ծաղրը ուղղելով տիրող հասարակարգի դեմ: Խարազանելով բացասական կերպարներին՝ ընթերցողի հակակրանքը ուժեղացնում է նրանց արտաքինի, գործողությունների ծիծաղելի նկարագրությամբ. վարժապետ Սիմոնի վախկոտությունը, թուլամտությունը, սարսափը օտար պաշտոնյայից ծաղրում է հետևյալ համեմատությամբ. «Վարժապետ Սիմոնը ջրից հանած **ձկան պես** բերանը բաց ու խուփ արեց, որոնեց հարմար բառեր, չգտավ»[2]: Կամ՝ գող ու տարօրինակ լեռնակերտցի ժամկոչ Մանասի անխելքությունը, անմտությունը նկարագրում է այսպես. «Եվ ինքը՝ Ժամկոչ Մանասն էլ,ամբողջությամբ վերցրած,մի տարօրինակություն է.գլուխը **սեխի պես** ճգված,ոտքի մեկը կարճ,մյուսը՝ երկար, հոնքի մեկը սև,մյուսը՝ շեկ,իսկ

[1] Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980թ., էջ228:
[2] Օվյան Վ., Լեռների լեգենդը, Երևան, 2003թ., էջ 408:

թևերն այնքան երկար են,որ քիչ է մնում գետնին քսվեն»[1]: Այստեղ համեմատությունը զուգակցված է չափազանցության հետ,որն էլ ավելի է սաստկացնում մերկացման ուժը:

Մի շարք համեմատություններում չի նշվում համեմատության հիմքը և որպես համեմատելի եզր հանդես են գալիս այնպիսի առարկաներ, որոնցում իրական հատկանիշը որոշակիորեն է դրսևորված: Երգիծաբանը ծաղրում է այդ ժամանակաշրջանում Ղարաբաղում տիրող քաղաքական լարված իրավիճակը, խառնաշփոթությունը, անկայունությունը՝ դրանով իսկ իր սպանիչ ծաղրը ուղղելով եվրոպական տերությունների խաղերի դեմ. «Մեկը մյուսի ետևից **սունկերի պես** բուսան նոր մինիստրներ,և ապա «ազատ, անկախ պետություն»»[2]: Հետևյալ համեմամությամբ մերկացնում է բժիշկ Առաքել Սերմախաշյանի մորթապաշտությունը, անտարբերությունը երկրում տիրող իրավիճակի նկատմամբ. «Աշխարհում փետրվարյան հեղափոխություն եղավ, հոկտեմբերյան մեծ հեղափոխություն եղավ աշխարհում, բժիշկ Սերմախաշյանը **խխունջի պես** գլուխը քաշեց իր պատյանի մեջ,և միայն նէպ-ի տարիներին դուրս սողաց իր պատյանից, նայեց շուրջն ու հարցրեց Դուքան Սեդրակին.«Լեռնակերտում էս ի՞նչ է կատարվում »»[3]:

Հեղինակի ստեղծած համեմատությունները աչքի են ընկնում իրենց կառուցվածքային բազմազանությամբ: Բերված օրինակները պարզ համեմատություններ են՝ արտահայտված **նման, պես** կապերի ու նրանց խնդիրների միջոցով:

«Լեռնակերտ» երկում գործածված համեմատությունների մեծ մասը ծավալուն է, դրսևորված ստորադասական կապակցությամբ, որոնք միանում են գլխավորին **ոնց որ**, **կարծես, ասես** շաղկապական, **ինչպես, ինչպիսի** հարաբերական բառերով. գլխավորի մեջ կարող են ունենալ **այնպես, այնպիսի, այնքան** հարաբերյալները:

Հեղինակը ծավալուն համեմատությունները գործածում է առարկայի կամ երևույթի հատկանիշներն ավելի խորը և լրիվ բացահայտելու համար: Հետևյալ օրինակով ծաղրում է «ճարպիկ արկածախնդիր, կարտոժնիկ, սկանդալիստ, շուլլեր ու ժուլիկ» քաղաքագլուխ Բիրղամիչին՝ դրանով իսկ մերկացնելով, ոչնչացնելով տիրող կարգերն ու բարքերը. «Եվ այս Բիրղամիչը նստել աշխարհի ուսերին, ծիծաղում է աշխարհի վրա, **ինչպես** հայտնի հեքիաթի Քաջ

[1] Նույն տեղում, էջ 425:
[2] Նույն տեղում, էջ 380:
[3] Նույն տեղում., էջ422:

Նազարը…»[1]: Կամ՝ հերոսներից մեկին հեգնում է այսպես. «Գինեվաճառ Մուխանը տակառի ետևից բարձրացրեց մերկ գանգն ու **այնպես** ծիծաղեց, **կարծես** ձայնը դուրս էր գալիս գինու կարասից…»[2] :

Ծավալուն համեմատություններում առարկան, երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով նմանեցվում է մյուս սուբյեկտին, երևույթին:

Անդրադառնանք համեմատությունների բովանդակային կողմին:

Վ.Օվյանը որևէ կերպարի էությունը ավելի պատկերավոր դարձնելու համար այն համեմատում է կենդանու հետ: Կենդանիների անվանումները գործածում է մարդկանց նկատմամբ արհամարհական վերաբերմունք արտահայտելու համար:

Իր ծաղրական վերաբերմունքը «թուրք իշխանավոր» կոչվածի նկատմամբ արտահայտված է հետևյալ համեմատությունում.«Կարա-Բեքիրը մորթվող **եզան պես** բառաչեց ու փռվեց փողոցում»[3]:

«Լեռնակերտ» վիպակում հանդիպում ենք այնպիսի համեմատությունների, որոնք կառուցվում են ոչ թե արտաքին, այլ ներքին հատկանիշների նմանության հիման վրա: Օրինակ՝ խմբապետ Խորենի ավազակությունը, դավաճանությունը ցայտուն է դառնում հետևյալ համեմատության միջոցով. «…Աղաջանն իր խմբով քաշվել է ծմակները, Խորենը կորեկով ծախած **շան նման** էլի եկել է, Լեռնակերտում շնթռնել»[4]: Լեռնակերտցի Աղամը իր սիրեկանի անբարոյականությունը խարազանում է այսպես. «Հետո հիշեց իր սիրեկան Ալմաստին, որ Գուրգա **օձի նման** փաթաթվում է իրենն, **օձի նման** լեզու է բանեցնում, **օձի նման** գալարվում է»:[5]

Վ. Օվյանը անձի հատկանիշը հաճախ համեմատում է իրի, առարկայի հատկանիշի հետ: Հերոսներից մեկի ողորմելիությունը ծաղրում է հետևյալ օրինակում: «…Էս Մկրտիչ Սալանդարովը **պարկի պես** փռվեց հատակին, դարձավ լողացման ենթակա մեռել»[6]: Կամ՝ այսպես է երգիծում Դուքան Սեդրակի անգրագիտությունը, անքաղաքավարությունը. «Դուքան Սեդրակը կոտրած **գդալի պես** մեջ ընկավ,Գուգուշս սրա գլխին՝ շըրա՛խկ»[7]:

---

[1] Օվյան Վ., Լեռների լեգենդը, Երևան, 2003թ., էջ 405:
[2] Նույն տեղում, էջ 401:
[3] Նույն տեղում, էջ 425:
[4] Նույն տեղում, էջ 442:
[5] Նույն տեղում, էջ 397:
[6] Նույն տեղում, էջ 455:
[7] Նույն տեղում, էջ 455:

«Լեռնակերտ» երկում հանդիպում ենք համեմատությունների, որոնցում իրար հետ համեմատվում են իրեր, երևույթներ, գործողություններ: Բերենք օրինակներ.

1. Իրի համեմատություն իրի հետ. հեղինակը հետևյալ համեմատություններով ծաղրում է «քալլագյոզ, քեֆչի» Աղամի խելառությունն ու կնամոլությունը. «Մեծահարուստ, գորգերի ու կտորեղենի վաճառական Բիրղամ Դոնբազովի քալլագյոզ,դումարբազ, քեֆչի Աղամը Ղազանչեցոց Ժամի բակում տեսավ հայտնի ձիավաճառ Ամիրբար Զարչիխանյանի աղջկան, երակներում արյունն ասես **կրակի պես** թշշաց, գլուխը պտտվեց…» [1]: Կամ՝ «Աղամի արդեն բարակած, մի թելից, մի մազից կախված սիրտը ծլնգաց ու ծլծլաց հալվող **մոմի պես**,և նա հառաչեց »[2]:

2. Իրի, առարկայի համեմատություն երևույթի հետ և հակառակը. պարսավում է «Ղարաբաղի չթագադրված գժերի թագավոր» Բիրղամիշի եսասիրությունը, մտքի սահմանափակությունը. «Նրա միտքը գործում էր ճիշտ այն **ժամացույցի պես**, որի մեծ ու փոքր սլաքներն իրարից անկախ պտտվում են իրենց առանցքի շուրջ» [3]: Մի խումբ լեռնակերտցիների՝ Լեռնակերտը քաղաք, թե գյուղ լինելու շուրջ եղած անընդհատ անիմաստ վեճերն ու կռիվները ծաղրում է այսպես. «Եվ նորից հարցը ֆուտբոլի **գնդակի պես** գլորում են դես ու դեն, Սիմոն Սարխոշյանցը հմուտ **ձեռնածուի պես** ձեռնափայտը պտտում է ձեռքում՝ «Այո~ս, Լեռնակերտը քաղաք է, բայց որոշ չափով պրովինցիալ քաղաք»»[4]: Համեմատության երկրորդ մասում անձը համեմատվում է անձի հետ:

Հեղինակը, անձը համեմատելով մի դեպքում անձի, կենդանու, ինչպես նաև առարկայի,երևույթի հետ, ավելի տեսանելի է դարձնում նրան, նրա գործունեությունը:

Վ. Օվյանը համեմատություններ է ստեղծել **բառ+վերջավորություն** կաղապարով, որոնք ունեն բարբառային–խոսակցական երանգ. ինչպես՝ **աքլորավարի, ասպետավարի**: Սրանք դիպվածային համեմատություններ են, որոնք տարբերվում են իրենց ինքնատիպությամբ և ոճական նպատակադրում ունեն: Հատկանիշ արտահայտող այդ բառերի մեջ բնորոշվում է առարկան կամ երևույթը, դրսևորվում նաև հեղինակի ծաղրական վերաբերմունքը դրա

[1] Նույն տեղում, էջ 395:
[2] Նույն տեղում, էջ 397:
[3] Նույն տեղում, էջ 401:
[4] Նույն տեղում, էջ 441:

նկատմամբ: Լեռնակերտցիների «նոր իշխանավորին» ծաղրում են այսպես. «Մեդրակին թվաց, թե գավառապետը կյանքում աքլոր չի տեսել, թևերը թափահարեց, տեղում պտույտ տվեց և ապա ցատկեց, կանգնեց թթենու տակ ընկած դատարկ տակառին, վիզը ձգեց ու ծղրտաց **աքլորավարի**»[1]: Հեղինակը իր հեգնական վերաբերմունքը Հովսեփի այլասերության նկատմամբ արտահայտում է հետևյալ համեմատությամբ. «Որքա՞ն մնաց եկեղեցում, կողքին ո՞վ էր կանգնած՝ այդ էլ չիմացավ. խելակորույս դուրս վազեց, կանգնեց բակում, և երբ Բարիշկան ուզում էր ֆայտոն նստել, մոտեցավ, գլուխն ***առպետավարի*** խոնարհեց ու խոսեց»[2]:

Մի շարք համեմատություններ այնքան դիպուկ բնորոշումներ են, որ գրեթե աֆորիզմի դեր են կատարում: Օրինակ. «Աշխարհն էլ ըստ նրա կլկլոցի՝ **ընկույզի պես** մի փուչ բան է, **խնձորի նման** որդնած, **երկնքի պես** ունայն»[3]:

Այսպիսով՝ Վ. Օվյանը ստեղծել է համեմատության վառ օրինակներ, որոնք խոսում են երգիծաբան գրողի լեզվաոճական վարպետության մասին:

Сатирические сравнения в произведении В.Овяна «Лернакерт»

Н.Хачатрян

Резюме

Статья посвящена изучению сравнений сатирического характера, использованных В.Овяном в произведении «Лернакерт». В произведении автор критикует внешние и внутренние политические игры, отрицательные общественные явления и человеческие пороки, которые существовали в начале 20-го века в Лернакерте. Сатирические сравнения Овяна отличаются содержательным и композиционным многообразием.

Satirical Comparison in V.Ovyan's «Lernakert» novel

N.Khachatryan

Summary

The article studies satirical comparisons used by V. Ovyan in his novel «Lernakert». Here the author criticizes inner and outer political games,

[1] Օվյան Վ., Լեռների լեգենդը, Երևան, 2003թ., էջ 373:

2.

[2] Նույն տեղում, էջ 395:

[3] Նույն տեղում, էջ 396:

social events and human vices which reigned in Lernakert at the beginning of the 20th century.Ovyan's satirical comparisons are notable for their compositional and contextual variety.

Գրականություն

1. *Եզեկյան Լ.*, Ոճագիտություն, Երևան, 2003թ.:
2. *Խաչատրյան Ն.Հ.* , Պարոնյանի երգիծանքի լեզվաոճական ուսումնասիրությունը, Ստեփանակերտ, 2006թ.:
3. *Պողոսյան Պ.,* Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1991թ., հ.2:
4. *Զոբաշյան Էդ.,* Գրականության տեսություն, Երևան, 1980թ.:
5. *Օվյան Վ.,* Լեռների լեգենդը, Երևան, 2003թ.:

ՀՏԴ Գրականագիտություն

ԱՐԺԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր

Հայ բառարանագրությունը հարուստ պատմություն ունի, որտեղ ուրույն տեղ են զբաղեցնում բարբառային բառարանները: Այս բնավագառում նշանավոր են Հր. Աճառյանի «Հայէրէն գաւառական բառարան», «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», Ս.Ամատունու «Հայոց բառ ու բան», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայոց լեզվի բարբառային բառարան» և մի շարք այլ բառարաններ, որտեղ հեղինակները ներկայացրել են հայերենի հարյուրավոր խոսվածքներում գործածվող տասնյակ հազարավոր բարբառային և փոխառյալ բառեր, դարձվածներ, ոճական արտահայտություններ: Քիչ չեն նաև առանձին բարբառների բառապաշարն արտացոլող բառարանները և բարբառագիտական ուսումնասիրությունների ու բանահյուսական ժողովածուների հավելվածներում տեղադրված բառացանկերը, որոնք, սակայն, ունեն մասնակի բնույթ և չեն արտացոլում խնդրո առարկաբարբառների ողջ բառապաշարն ու առավել ևս՝ դրա ձևական ու իմաստային նրբությունները: Այս տեսակետից նախադեպը չունեցող աշխատություն է Ա.Յու. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը», որը նշանակալի ներդրում է Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության և ընդհանրապես հայ բարբառագիտության ու բառարանագրության պատմության մեջ: Նախորդ նմանատիպ աշխատություններից սույն բառարանն առանձնանում է մի շարք կարևոր սկզբունքներով ու առանձնահատկություններով, որոնք կարող են օրինակելի լինել ապագա բառարանագիրների համար.

1.«Ղարաբաղի բարբառի բառարանը» հայերենի կոնկրետ բարբառներին նվիրված բառարաններից ամենածավալունն(846 էջ) ու լիակատարն է, որտեղ ընդգրկված է Ղարաբաղի բարբառում գործածվող գրեթե ողջ բառապաշարը(շուրջ 40.000 միավոր):

2. Ներկայացված են գլխաբառերի՝ բարբառի խոսվածքներում գործածական հնարավոր բոլոր հնչյունափոխված տարբերակները, որոնցիցյուրաքանչյուրը, բացի գլխաբառի մոտ նշելուց, հեղինակը ըստ այբբենական կարգի տեղադրել է համապատասխան տեղում՝ հղելով գլխաբառին:

3. Յուրաքանչյուր բառահոդվածի վերջում՝ բառի բոլոր իմաստները բացատրելուց հետո բերվում են այդ բառով սկսվող դարձվածներն ու ոճերը՝ ներառյալ տեղական նշանակության՝ կոնկրետ որևէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող դարձվածները:

4. Բառարանն իր բնույթով կարելի է համարել նաև ստուգաբանական, քանի որ գլխաբառերից հետո բառի լեզվաոճական և քերականական նշումներից բացի համառոտագրությամբ տրվում են ծագումնաբանական նշումները. նախ նշվում է այն լեզուն, որից տվյալ բառն անցել է բարբառին, որից հետո ներկայացվում է փոխատու լեզվի ձևը, ինչպես նաև բուն իմաստը, եթե բառը բարբառում գործածվում է այլ իմաստով:

5.Հստակորեն և մանրամասնորեն են ներկայացված գլխաբառերի և դարձվածների բոլոր իմաստները: Առավել ընդարձակ են տրվում ազգագրական բնույթի բառերի նշանակությունները:

6.Բառերի և դարձվածների նշանակությունները պարզաբանելու և հիմնավորելու համար իմաստների բացատրությունից հետո նախադասություններով (երբեմն բառակապակցություններով) բերվում են տպագիր, ձեռագիր և բանավոր աղբյուրներից առնված օրինակներ՝ վերջում համառոտագրությամբ նշելով աղբյուրը, իսկ տպագիր աղբյուրների դեպքում՝ նաև վերնագիրն ուէջը:

7.Բառարանը կազմված է բարբառային խիստ տառադարձությամբ, ինչը նմանատիպ աշխատանքների կարևոր պահանջներից է:

8.Բառարանի վերջում տրվում է օգտագործված գրականությանցանկը, որտեղ ներկայացված են տպագիր և ձեռագիր գրեթե բոլոր այն աղբյուրները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Ղարաբաղի բարբառին:

9.Ղարաբաղի բարբառից ուրահատուկ ուսումնասիրություն է բառարանի «Ներածությունը», որտեղ հստակորեն ներկայացված են բարբառի ուսումնասիրության պատմությունը, հնչյունաքերականական, բառագիտական օրինաչափություններն ու բառարանի կառուցվածքը:

Նման բառարանի կազմումը հեղինակի երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է, որին զուգահեռ նա հրատարակել է Ղարաբաղի բարբառին և բանահյուսությանը նվիրված տասնյակ գիտական աշխատանքներ ու ժողովածուներ, միջազգային և հանրապետական գիտաժողովներում բազմիցս հանդես է եկել զեկուցումներով, անձամբ և ուսանողների հետ կազմել Ղարաբաղի տասնյակ խոսվածքների վկայագրեր, Ստեփանակերտում 2008թ. կազմակերպել միջազգային հայերենագիտական 8-րդ գիտաժողովը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրեթե բոլոր գյուղերից հավաքագրել բանահյուսական հարուստ նյութ:

«Ղարաբաղի բարբառի բառարանը» կազմված է գիտական պատշաճ մակարդակով և մեծ նշանակություն կարող է ունենալ Ղարաբաղի և հայերենի մյուս բարբառների ուսումնասիրության բնագավառում: Այն արժանի ներդրում է հայ բարբառագիտության և բառարանագրության պատմության մեջ:

ՀՏԴ Գրականագիտություն

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ս.Ա. Խանյան

Հ. Թումանյանը ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության զարգացման հիմնական ակունքը համարել է ժողովրդական ստեղծագործությունը: Նա գտնում էր, որ ճշմարիտ գրականությունն արտացոլում է ժողովրդի կյանքը, նշանակում է՝ գրողը չպետք է մոռանա, որ «Հայոց գրականության աղբյուրը» ժողովրդական պատմություններն են, զրույցները, սովորությունները, որոնք գալիս են հին դարերից ու մեր նախնիների «մտքի ու հոգու ծնունդներն են»:

Սակայն իր այս ուսանելի խորհրդով չի բավարարվել Մեծ Լոռեցին: Նա նկատել է, որ հին սերունդն իր հետ շատ բան է տանում, պետք է ժամանակին հետաքրքրվել ու գրի առնել նրանց գիտեցածը: Նա միաժամանակ ցավով գրել է. «Սրանց որդիքը հոգսերով ծանրացած, բարոյապես այլանդակված, նոր բառեր են սովորում, հինը մոռանում, նոր պատմություններ են սովորում, նոր բարքեր, նոր կարգեր,- մի բաբելոնյան խառնակություն: Այս պատկերը կարելի է նմանեցնել մի հարսանիքի, ուր հարբած հանդիսականներն աղմկում են խառնիխուռն և չեն լսում, թե ինչ է երգում երգիչը, որ շուտով պետք է լռի»[1]:

Գլոբալացման (աշխարհականացման) մեր դարաշրջանում դժվար չէ նկատել, որ Մեծն Թումանյանի այս դիտողությունը վերաբերում է նաև մեր առօրյա կենսական խմորումներին:

Խնդրի կոնկրետ քննարկումը Թումանյանի ապրած դարաշրջանից դուրս է գալիս և վերածվում նոր ժամանակների համար ուսանելի դասի:

1899թ. Մարիամ Թումանյանին Դսեղ գյուղից հղած նամակներից մեկում Մեծ Լոռեցին կրկին անդրադառնում է ժողովրդական բանահյուսությանը և նշում, որ կիրակի օրերը հավաքում է գյուղացիներին, խոսեցնում՝ լեգենդներ հավաքելու նպատակով: Նրան հուզում է այն, որ

[1] Թումանյանը քննադատ, «Պետական հրատ.», Ե., 1939, էջ 32

ժողովուրդը զարմանալի արագությամբ մոռանում է իր հին զրույցներն ու ավանդությունները: «Ինձ,- ընդգծել է Թումանյանը,- սաստիկ ցավեցնում ու անհանգստացնում է այս հանգամանքը: Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»:[1]

Ժողովրդական ստեղծագործությունը ժողովրդի խոսքը համարող Մեծ Լոռեցին համոզված էր, որ գրողը չպետք է մոռանա այն կաթնաղբյուրը, որը կոչվում է բանահյուսություն: Սակայն նա չէր կարծում, որ այդ ասպարեզում ևս կլինեն համբակներ, որոնք կարող են իրենց բթամտությամբ ոչ միայն առաջ քաշել անընդունելի կարծիքներ, այլև գռեհկորեն վիրավորել ազգային գրականությունը նոր հունի մեջ դնող, համամարդկային արժեքներ ստեղծող արվեստագետներին, որոնց թվում՝ հենց Մեծ Լոռեցուն: Նման համբակներից էր Ռուբեն Դրամբյանը, որը ձեռք բերելով Թումանյանի կազմած և իշխանուհի Մարիամ Թումանյանի հրատարակած մանկական պատկերազարդ գրքույկները, վայնասուն է բարձրացրել: Նա, կարդալով Թումանյանի մշակած «Ծիտը» ստեղծագործությունը, գրում է, թե իբր այն վերցված է Ս. Հայկունու առակներից, ապա «Մշակի» թիվ 162-ում տպագրում «Գրական մեծությունները բանագող» հոդվածները, որտեղ պնդում էր, թե Թումանյանի «Ծիտը» վերցված է Ս. Հայկունու «Աշղղ Ահլոր» առակից:

Հ. Թումանյանը պատասխանում է նրան ամենայն լրջությամբ ու սրամտությամբ՝ տպագրելով «Ոչ գրական ոչնչությունները՝ քննադատ» հոդվածը «Մշակի» 1909թ. օգոստոսի թիվ 169, 170 համարներում:

Հոդվածի սկզբում արդարացիորեն արհամարհանքով դիմելով Ռ. Դրամբյանին՝ Մեծ Լոռեցին ընդգծում է. «Ես ճանաչում եմ Ձեզ: Դուք մի որևէ Ռ. Դրամբյան չեք: Դուք մինը չեք: Դուք շատ եք: Դուք տիպ եք: Դուք էն պստիկ մաղձոտ ու մութ հոգին եք, էն հավիտենական անկոչ պրոկուրորը, որ ամեն տեղ, ուր կերևա, միայն «դիպվածով» լսած լինելով մի բան, դատում ու դատապարտում է ամեն գործ ու գործիչ, առանց ճանաչելու, առանց

[1] Նույն տեղում, էջ 77

ամաչելու: Դուք էն անհոգի, տափակ ընթերցողն եք, որ կարդում է պարապությունից ու «դիպվածով» ձեռքն ընկած մի քանի տողով, առանց խոր ու լուրջ նայելու, առանց հասկանալու, տգետ ու թեթև սկսում է քննադատել, «հարվածել» և առանց հասկանալու էլ շպրտում է բառերը, ժանտախտ, բանագող… թեկուզ և դեմը կանգնած լինի մի գրական մեծություն»:[1]

Հ. Թումանյանի ընդդիմախոսությունը դրանով չի սահմանափակվում: Նա նշում է, որ հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականն ու պատմում: «Եվ շնորհքը,- ընդգծում է մեծ գրողը,- հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»:[2]

Մեծ Լոռեցին նաև նշում է՝ եթե ինքը գործն առած լիներ նույնիսկ Ս. Հայկունու գրքից, դարձյալ կմնար իր արածն օրինավոր ու անպարսավելի: Դա այն ուղիղ ճանապարհն է, որով պետք է հոսանք տալ, ներս բերել առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն: Թումանյանը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս իր «Ծիտը» գործի և Ս. Հայկունու «Աշուղ Այիլորը» գրի առած առակի տարբերությունը, ապացուցում, որ ինքը չի օգտվել Հայկունու վարիանտից, որ իր հեքիաթը և Հայկունու տպագրածը միանգամայն տարբեր վարիանտներ են: Բացի դրանից, Մեծ Լոռեցին քննարկման է դնում մի խնդիր, որ ինքը «Ծիտը» «ինքնուրույն աշխատություն» չի համարել: «Եվ տեղն է եկել, թող ասեմ,- նշում է Թումանյանը,- գրեթե բացառապես, ես, եթե ժողովրդական մի նյութ եմ մշակում, միշտ էլ հիշատակում եմ ու շեշտում, թե տեսեք, որ ժողովրդականից է»: [3]

Մեծ Լոռեցին ավելորդ է համարում նույնիսկ այս հանգամանքը, որովհետև աշխարհի ականավոր գրողներն իրավունք ունեն ժողովրդականից վերցնել ու մշակված վերադարձնել ժողովրդին: Նա բացատրում է, որ

[1] Նույն տեղում, էջ 125
[2] Նույն տեղում, էջ 125
[3] Նույն տեղում, էջ 127

«Լուսաբերը» կազմելու համար ամենալայն կերպով օգտվել են ժողովրդական նյութերից և պիտի օգտվեն միշտ. «Էն էլ ոչ միայն մեր ժողովրդականից ենք օգտվում, այլև օտար աղբյուրներից՝ ռուսական, ֆրանսիական, գերմանական, լեհական, բայց մանավանդ անգլիական ու ամերիկական, հարկավ, մեր ինքնությանն ու մեր մտածողության եղանակին հարմարեցնելով»[1]:

Հ. Թումանյանը միաժամանակ ընդգծում է, որ ժողովրդական հեքիաթները, լեգենդները, առակները, երգերը, անեկդոտները թափառում են գավառից գավառ, երկրից երկիր, լեզվից լեզու, ազատ, առանց անձնագրի: Ինչ վերաբերում է «Ծիտը» հեքիաթին, ապա պետք է իմանալ, որ ինքը ձեռքի տակ ունեցել է ոչ մեկ տարբերակ: Եվ պետք է իմանալ, որ «Ծաղիկը դրած է մեջտեղը, և նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թույն»[2]:

Հոդվածի վերջում Մեծ Լոռեցին ցավով ափսոսում է, որ գոյություն ունի «ամեն շնորհքի հավիտենական ոխերիմ Դրամբյան, ամեն բարի աշխատանք ուրացող, ամեն ազնիվ ու գեղեցիկ գործի չարախոս ու չարակամ Դրամբյան և ավա՜ղ, անվերջ, անմահ Դրամբյան»:[3]

Ժողովրդական բանահյուսության հետ գրողի սերտ կապն ուսումնասիրելու համար հետաքրքիր աղբյուր է Հ. Թումանյանի «Ղ.Աղայանի «Անահիտը» հոդվածը: Այն ունի բանավիճային բնույթ՝ կապված Լևոն Մանվելյանի արտահայտած այն կարծիքի հետ, ըստ որի, Ղ. Աղայանն իր «Անահիտ» հեքիաթի սյուժեն վերցրել է Մ. Թաղիադյանի «Վեպ Վարսենկան» ստեղծագործությունից:

Հ. Թումանյանը ժխտում է այդ կարծիքը և հաստատում. Աղայանի «Անահիտի» և Թաղիադյանի «Վարսենիկի» մեջ չկա էն նմանությունը, ինչ որ կա հայ ժողովրդական հեքիաթի և Աղայանի գործի մեջ, որ նույնն է ամենայն հարազատությամբ: Աղայանն էդ նյութն առել է մեր ժողովրդական հեքիաթից, ու ջատագովում է արհեստը: Մի հեքիաթ, որ ունեն բոլոր

[1] Նույն տեղում, էջ 129
[2] Նույն տեղում, էջ 130
[3] Նույն տեղում, էջ 131

ժողովուրդները, ըստ էության, նույնը, մանրամասնությունների մեջ իրենց առանձնահատուկ երանգով ու կյանքով, ինչպես գրեթե բոլոր հեքիաթները»[1]:

Մեծ Լոռեցին վկայում է, որ Ղ. Աղայանը գիտեր այդ հեքիաթի հայկական երկու տարբերակը: Բացի այդ, Թումանյանը գրում է, որ ինքն իր ձեռքի տակ ունի նույն հեքիաթի վեց տարբերակը: Մի տարբերակ էլ կա՝ ռուսերեն լեզվով գրի առած իբրև հայ ժողովրդական հեքիաթ, «որը ուրիշ բան չի, այլ հենց Աղայանի «Անահիտի» թարգմանությունը»:

Հ. Թումանյանը խորհուրդ է տալիս՝ անպայման նկատի առնել հեղինակի կարծիքն ու տեղեկություններն իր ստեղծագործության վերաբերյալ: Անմահ գրողը վկայում է, որ «Աղայանը դեռ 1881 թվին «Անահիտի» հենց առաջին հրատարակության մեջ հայտարարում է դրա ինչ լինելը և որտեղից առնելը: Էդ հրատարակության ճակատին գրած է. *«Հին գրույց, ազգային բանավոր գրույցներից առած»*:[2]

Հ. Թումանյանը գտնում է, որ գրողը ժողովրդական հեքիաթը մշակելիս կարող է պատմական գրույցի կերպարանք հաղորդել: Նա նշում է, որ այդ նպատակով Աղայանը հեքիաթը փոխադրել է Աղվանք՝ Վաչագան թագավորի ժամանակները՝ նկատի առնելով նրա ժամանակներում եղած չար և դիվական աղանդները:

Հ. Թումանյանի բանավիճային այս հոդվածը պետք է ընդունել որպես լուրջ խորհուրդ բոլոր նրանց, ովքեր հավակնություն ունեն զբաղվելու ժողովրդական ստեղծագործությունների և դրանց գրական մշակումների հարցերով:

1913թ. Հ. Թումանյանը նորից անդրադարձավ Ռ. Դրամբյանի և Հայկունու կողմից բարձրացված վայնասունին՝ ուղղված իր դեմ: Մեծ Լոռեցին ստիպված էր պատասխանել Ռ. Դրամբյանի «Գրական մենծությունները՝ բանագող» («Մշակ», 1909, թիվ 262), «Իմ վերջին խոսքը Հովի. Թումանյանին» («Մշակ», հ.հ. 187, 189, 193) չարամիտ հոդվածներին: Ինչ վերաբերում է Ս. Հայկունուն, ապա նա հանդես էր եկել «Հովիտ»

[1] Նույն տեղում, էջ 218
[2] Նույն տեղում, էջ 218

ամսագրի 1913թ. հ. 16-ում՝ Հովհ. Թումանյանի «Գառնիկ ախպերը» հերյուրող հոդվածով:

Մեծ Լոռեցին զայրացած էր ոչ միայն Ռ. Դրամբյանի և Ս. Հայկունու անընդունելի կարծիքներից, այլև նրանից, որ «Գրական տգիտությունը կամ տգետ քննադատությունը ամեն մի նոր առաջ եկող գրականության մեջ սովորական երևույթ է, սակայն մեր մեջ տգիտության վրա ավելանում է վատ հոգին, հոգու չարությունը»:[1]

Թումանյանին ցավ էր պատճառել այն երևույթը, որ Դրամբյանը վերածվել էր դրամբյանիզմի, որը շարունակում էր չարախոսել՝ բթամտությունը դարձնելով ուղղորդ: Անդադար հոլովում էին, թե իբր Հ. Թումանյանը իր նյութերը վերցնում է Ս. Հայկունու ժողովածուից, բառացի կրկնում նրան, տպագրում իր անունով, բանը հասել էր նրան, որ Ս. Հայկունին «Հովիտում» գրել էր, թե Թումանյանը «Գառնիկ ախպեր» հեքիաթը թարգմանել է ռուսերենից ու տպել իբրև ինքնուրույն գրվածք: Իսկ «Մշակն» էլ արձագանքել էր նրան:

Թումանյանը վկայում է, որ ինքը «Հորիզոն»-ի հ. 95-ում ցույց է տվել, որ «Գառնիկ ախպերը» զուտ հայկական հեքիաթ է, որ առել է տարբեր պատումներից: Բայց Դրամբյանն ու Հայկունին նորից պնդում են միանգամայն նոր ձևով՝ այս անգամ նշելով, թե նույն նյութն է, նույն տիպերն են, նույն արտահայտությունները, իսկ վրան չի նշված *ժողովրդական* բառը: Թումանյանն իր առանձնահատուկ տրամաբանությամբ ու հումորով ընդգծում է. «Իբրև թե, եթե գրեի ժողովրդական՝ ամեն բան կվերջանար նրանց համար, դրամբյանիզմի համար, հայոց էս մամուլի համար: Բայց, իհարկե, սուտ են ասում: Եթե դրանով վերջանար, ես կասեի. «Ո՞վ «Մշակ», ո՞վ «Հովիտ», ո՞վ Տեր Եզնիկ, ո՛վ Քալանթար, ո՞վ Հ. Առաքելյան, ո՞վ Դրամբյան, ո՞վ Ս. Հ., բաց արեք տեսնեք 1905թ. «Հասկերի» հ. 1-ը, հենց առաջին երեսին մեծ-մեծ տառերով տպված է՝ «Գառնիկ ախպեր», հայ ժողովրդական հեքիաթ»:[2]

---

[1] Նույն տեղում, էջ 260

[2] Նույն տեղում, էջ 262

Չնայած դրան, դրամբյանիզմը շարունակում էր անվանարկել, թունավորել, նոր ու նոր տխմարություններ ու հայհոյանքներ շպրտել Թումանյանի հասցեին: Ուստի ստիպված հանճարեղ գրողը ընդգծում է. Իհարկե, էդ բոլորն ինձ ի՞նչ պետք է անեն, ոչինչ, և ժողովրդական առածի ասած՝ քոռամուկն ինչքան հող փորի, իր գլխին կածի, բայց երևույթը, երևույթը շատ է գարշելի, հոգին շատ է ցած ու վատ»:[1]

Հ. Թումանյանը նման երևույթը միայն հայկական չի համարում, կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ այն գոյություն ունի և ռուս գրականության ընթացքի մեջ: Նման կերպ են վարվել նաև հանճարեղ գրող Ա. Ս. Պուշկինի հանդեպ: Մի կողմից գրական ճաշակի ու հասկացողության տեր մարդիկ հրճվանքով ողջունել են երիտասարդ Պուշկինին, սիրել են առանձնապես նրա՝ ժողովրդական նյութերի մշակումը, որոնց հետ ռուսաց գրականության մեջ էր մտնում ռուսաց ժողովրդական ոճն ու շունչը, մյուս կողմից էլ հանդես էին գալիս տխրահռչակ գործիչներ, որոնք քար էին նետում հանճարեղ գրողին ու թմբկահարում, թե իբր Պուշկինը վերցնում է ժողովրդի ստեղծածն ու յուրացնում իր անունով: Բանը հասել էր նրան, որ Պուշկինի բարեկամ իշխան Վյազեմսկին առաջարկում էր ուժով լռեցնել էդ իդիոտներին, իսկ «Պուշկինն ինքը տեսնելով, որ քննադատը չի կանգնած իր առջևը, այլ բթությունը, որ դուրս է եկել իր կոպիտ ձեռքը բարձրացրել միայն հարվածելու հանուն հայրենիքի ու գրականության նրա հաստ ու տափակ ճակատը, խարանեց մի շարք էպիգրամներով»:[2]

Չարությունը համարելով սովորություն նաև հայ իրականության մեջ՝ Թումանյանը վրդովմունքով նշում է. «Կասեն՝ վերցրել եք բառացի էս ընչից: Ցույց կտաք, որ չեք վերցրել: Էդ նշանակություն չունի: Կասեն՝ թարգմանել եք: Ցույց կտաք, որ թարգմանություն չի: Դարձյալ չեն լռիլ: Կասեն՝ ինչո՞ւ չեք վրեն գրում ժողովրդական: Թվականով, տեղով, էջով ցույց կտաք, որ գրել եք վրեն *ժողովրդական:* Միևնույն է, նրանք իրենցը կշարունակեն»:[3]

---

[1] Նույն տեղում, էջ 262
[2] Նույն տեղում, էջ 265
[3] Նույն տեղում, էջ 266

Իր սույն հոդվածում Մեծ Լոռեցին քննարկում է նաև մի ուրիշ կարևոր խնդիր՝ առնչված բանահյուսական նյութերի հավաքման ու մշակման գործընթացին: Այսպես, «Ես ցույց տվի,- գրում է նա,- որ իմ մշակած ժողովրդական նյութերի վրա սովորաբար գրել եմ «Ժողովրդական», բայց շատ իզուր: Ես ոչ թե կարող էի չգրել ժողովրդական, այլ ուղղակի չպետք է գրեի: Մինչդեռ մեր դրամբյանիզմը հանգ.-- Հայկունու օրինակի վրա ցույց տալով, պահանջում է, որ ես իմ մշակած նյութերի վրա ոչ միայն գրեմ *ժողովրդական,* այլև՝ թե որտեղ, երբ և ումից եմ վերցրել»:[1]

Թումանյանը բացատրում է, որ հայոց մեծ թե փոքր, առաջադիմական թե կղերական, բթամիտ Դրամբյանները դեռ չեն հասկացել, թե ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները գրում են՝ ո՛րտեղ են լսել, ե՛րբ են լսել, ո՛վ է պատմողը, քանի տարեկան է և այլն: Դրամբյանիզմը չի հասկանում, «թե բանահավաքն ուրիշ է, բանաստեղծն ուրիշ, մեկի գրածի պատասխանատուն ժողովուրդն է, մյուսինը՝ ինքը»:[2]

Ահա հենց այստեղ է, որ Հ. Թումանյանը հայտնում է հայ գրականագիտության համար շատ կարևոր մի փաստ. «Ես իմ լեգենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ ու աշխատում եմ ինչքան կարելի է, մոտիկ ու հարազատ մնալ, Սասունցի Դավիթը կազմելիս էլ եմ էդպես արել, նույնիսկ Անուշն էլ, Թմկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից, և շատ անգամ, հենց ինչպես իրենք են ասում, «բառացի»:[3]

Հ. Թումանյանը, համոզիչ պատասխանելով ու ժխտելով դրամբյանիզմի բթամտությունը, մարգարեաբար խորհուրդ է տվել վերջ տալ գրական անճաշակությանն ու տգիտությանը՝ միացած փոքրիկ հոգու չարությանը:

---

[1] Նույն տեղում, էջ 266
[2] Նույն տեղում, էջ 267
[3] Նույն տեղում, էջ 268

Հարգել ստեղծագործող անհատականություններին, գնահատել արժանվույնս, այլ ոչ թե հայհոյել, որը տեղիք է տալիս ժամանակի ավելորդ կորստի՝ ի վնաս ստեղծագործական աշխատանքի:

Մեծ Լոռեցին, քննադատելով դրամբյանիզմը, միաժամանակ գոհունակությամբ նշում է, որ հայ իրականության մեջ, «Մուրճի» օրերից սկսած, երևում են եվրոպական մտքով գրական հասկացողության ու ճաշակի տեր մարդիկ, որոնք քննադատության մեջ դնելով գրական-գեղարվեստական խիստ պահանջներ, միաժամանակ իրենց հետ բերում են լուրջ վերաբերմունք ու հարգանք դեպի գրողն ու գրականությունը:

Հ. Թումանյանի մարգարեական վերաբերմունքը գրականության զարգացմանը արդիական հնչողություն ունի, քանզի այսօր ևս նյութապաշտությունը խեղդում է հոգևոր հարստության ստեղծումը, որը, Ավ.Իսահակյանի բնորոշմամբ, կոչվում է «ոգու սով»:

Հ. Թումանյանի ուշադրության կենտրոնում են եղել ժողովրդական էպոսի ստեղծման պատմական նշանակության, ժողովրդական ոգու դրսևորման խնդիրները: Այս հարցերի թումանյանական պատասխաններն ապացուցում են, որ Մեծ Լոռեցին ոչ միայն էպոսի գրական անգուգական մշակող է, այլև հանճարեղ էպոսագետ:

Դեռևս 1916թ. Հ. Թումանյանը, մտահոգված էպոսում օգտագործված բառապատկերների ճիշտ ստուգաբանման խնդրով, անդրադառնում է «Առյուծաձև Մհեր» և «Խաչ պատարագին» արտահայտություններին, խորանում պատմության շերտերը և գրում. «Խաչի կամ Սուրբ նշանի և կամ զորության նշանի նշանակությունն էլ հենց նրա մեջն է, որ միշտ իրեն հետ է ու միշտ պատրաստ, որովհետև իրեն հետ է ծնված: Էդպես է ծնված և հին հնդկական դյուցազնը՝ Բհարատը կամ Բրգարատը, որ, հնդկական առասպելի ասելով, եղավ Բագրատունի դինաստիայի նախահայրը, մի ցեղի, որ թագավորեց ասում է՝ ամբողջ աշխարհքում: Նա էլ իր զորության շրջանաձև նշանը - անմահության նշանը իր մարմնից, իրեն հետ ծնված, անբաժան ու մշտապատրաստ կրում էր իր աջ բազկի վրա:

Էդ նշանն է, որ քրիստոնեության ազդեցության տակ փոխվել է խաչի և խաչ պատրաստին էլ՝ խաչ պատրազի, խաչ պատարազի, խաչ պատարագի:»[1]

Պետք է նշել, որ այդ շրջանում «Սասունցի Դավիթ» էպոսից Առյուծաձև Միները ռուսերեն թարգմանվել է «Разрыватель Льва»: Թումանյանը չի ընդունում այդ բնութագրումը և գրում է. «Առյուծաձև՝ կնշանակի առյուծակերպ, առյուծանման: Հաճախ էդպես են ծնվում դյուցազունները, ոնց որ էդպես է ծնվել և Բըգարատը - առյուծի կերպարանքով: Ով որ առյուծ է պատռում, նա առյուծաձև չի կոչվում: Սասունցի Դավիթը ինքն էլ է առյուծ պատառում, իրեական Սամսոնն էլ, բայց նրանք առյուծաձև չեն: Սանասարի որդի Միները առյուծաձև է, որովհետև առյուծի կերպարանքով է ծնվել, և սխալ է թարգմանված՝ разрыватель льва պետք է լիներ՝ львоподобный, львообразный[2]:

Մեծ Լոռեցին հետաքրքրվել է նաև տարբեր ժողովուրդների էպոսների ուսումնասիրությամբ: Որպեսզի պատմական ճշմարտացիությամբ ներկայացնի սերբ ժողովրդի էպոսի ծնունդն ու գաղափարը, Թումանյանն ուսումնասիրել է եվրոպական ժողովրդական ստեղծագործությունը և եզրակացրել, որ Եվրոպայում սլավոն ժողովուրդների մեջ ավելի ուշ է զարգացել գրականությունը, այդ պատճառով էլ ավելի երկար ժամանակ նրանց մեջ է կենդանի մնացել ժողովրդական բանահյուսությունը: Սլավոնների մեջ էլ ամենից լավ պահել ու զարգացրել է իր էպոսը սերբ ժողովուրդը, որ սլավոնագետների կարծիքով, թեև ենթարկվել է թուրքերի քաղաքական ծանր լծին, բայց ազատ է մնացել այն երկարատև հասարակական ստրկությունից, որին ենթակա են եղել ռուսն ու լեհացին ճորտատիրական կարգի պատճառով և ազնվականության ճնշումի հետևանքով, որ հազար անգամ ավելի սպանիչ ազդեցություն է արել, քան ամեն քաղաքական լուծ ու ճնշում: Եվ սրանից է, որ ռուսական ազգային էպոսի մասերն էլ կենդանի են մնացել երկրի ավելի հյուսիսային ծայրերում, ուր ճորտատիրության օրենքը չի հասել:

[1] Նույն տեղում, էջ 365
[2] Նույն տեղում, էջ 365-366

Ներկայացնելով սերբ ժողովրդի էպոսի չորս շրջանները՝ Հ. Թումանյանը բացատրում է, թե ինչպես սերբական ժողովրդի մեջ վառ ապրում են նախաթյուրքական շրջանի և թյուրքական տիրապետության շրջանի հիշողությունները, պատմական դեպքերն ու հերոսները: Էպոսում հերոսներից մեկը Վուկաշին թագավորն է, որը թուրքերի ձեռքով է զոհվում: Տապալվում է նաև Սերբիան, որ դեռևս նոր էր կազմակերպվում: Սակայն,- բացատրում է Մեծ Լոռեցին,- Սերբիան թեկուզ ընկավ, լիքն էր վերստին հառնելու տենչով:

Թումանյանը նշում է, որ էպոսի գլխավոր հերոսը դառնում է Մարկոն՝ Վուկաշինի որդին: Այդ նա է, «որ հանդիսանում է սերբ ժողովրդի ազգային նվիրական զգացմունքների ու առաքինությունների մարմնացումը, նրանց Սասունցի Դավիթը»:[1]

Պատահական չէ, որ Հ. Թումանյանը Մարկոյին համեմատում է մեր Սասունցի Դավթի հետ: Հանճարեղ գրողը լավ է իմացել սերբ և հայ ժողովուրդների ճակատագրերի նմանությունն ու պատմական ընթացքը: Ուստի պատահական չէ նաև սերբական էպոսի հանդեպ եղած նրա հետաքրքրությունը: Թումանյանը խոսում է նաև թուրքերի նենգ ու ստոր քաղաքականության մասին: Սկզբնական շրջանում նրանք շողոքորթում են, կեղծում, իրենց ներկայացնում որպես բարի ու համերաշխ հարևան, սակայն իրենց նպատակին հասնելուց հետո դրսևորում են անմարդկային ամենածանր դաժանությունները: Այս առումով Թումանյանն ընդգծում է. «Սերբերը սկզբում թուրքերին հաշտ աչքով էին նայում, նրանցից չէին սպասում էն չարիքները, ինչ որ տեսան հետագայում, դրա համար նրանց ազգային հերոսն էլ, էպոսի մեջ իբրև էդ մոմենտի ու վերաբերմունքի արտահայտություն՝ համարվում է սուլթանի հոգեորդին, սուլթանն էլ՝ նրա հոգեհայրը»:[2]

«Սակայն, գրում է Թումանյանը,- կարճ ժամանակից հետո թուրքերն սկսում են իրենց անտանելի ճնշումները՝ գեղեցիկ կանանց ու տղամարդկանց

[1] Նույն տեղում, էջ 379
[2] Նույն տեղում, էջ 379

հավաքել, սերբերին արգելել զենք կրելը, ձի նստելը, կանաչ զգեստ հագնելը, ծանրաբեռնում են ամեն տեսակ հարկերով ու տուրքերով, զզվեցնում ու զայրացնում են ժողովրդին, և ահա հոգեորդին դուրս է գալիս հոգեհոր դեմ»:

Թումանյանը սերբ ժողովրդի պատմական ընթացքի մեջ նշմարում է մեր ժողովրդի անցած ճանապարհը: Հայաստանում Սասունցի Դավիթը, Սերբիայում՝ Մարկոն խորացնում են ճնշվող ժողովրդի ցասումն ու ընդվզումը թուրք տիրակալների դեմ: Բացի այդ, հետագայում թշնամու դեմ հանդես են գալիս հայդուկները, «որոնք, իրենց սեփական ուժերի վրա դրած իրենց փրկության հույսը, դուրս եկան իրենց լեռներն ու կռիվ հայտարարեցին՝ միանգամայն ընդմիշտ թյուրքի դեմ»:[1]

Սերբական էպոսում տեղ են գտել նաև ռուսները: Դա հետևանք է այն երևույթի, որ Ռուսաստանը միշտ օգնել է սերբ ժողովրդին՝ ազատագրվելու թուրք հրոսակների ծանր լծից:

Որպես էպոսագետ՝ Հ. Թումանյանը հոդվածի վերջում կանգ է առնում սերբական էպոսի ավարտի վրա և նրանում տեսնում աշխարհի մի շարք էպոսների բնութագրական առանձնահատկություններ: Այսպես, նա գրում է. «Ազգերի էպոսների հերոսները սովորաբար ընդհարվում են իրենց ծնողների հետ ու ընկնում են նրանց անեծքի ծանրության տակ: Էդ ընդհանուրի ճակատագրից չի խուսափում և սերբական Մարկոն»:[2]

Մեծ Լոռեցին ավելորդ չի համարում ներկայացնելու սերբական էպոսի ավարտը:

Այսպես, Մարկոյին առաջարկված է լինում դատ տեսնել մի կողմից՝ իր հոր ու հորեղբայրների, մյուս կողմից՝ արքայազուն Ուռոշի միջև: Մարկոն կողմնապահություն չի անում, դատը տեսնում է Աստվածով ու վճռում է Ուռոշի օգտին: Զայրացած հայրն անիծում է նրան՝ գուժելով, թե քանի կենդանի է, թուրքի սուլթանին ծառայի, մեռնի անժառանգ, մեռնելուց հետո էլ ոչ դագաղ ունենա, ոչ գերեզման: Իսկ շնորհապարտ Ուռոշն օրհնում է, թե քանի արևն ու լուսինը կան՝ Մարկոն առաջին կարիճը մնա աշխարհի երեսին:

[1] Նույն տեղում, էջ 380
[2] Նույն տեղում, էջ 380

Եվ ոչ մեկի խոսքը գետնին չի մնում. կատարվում է թե՛ Ուռոշի օրհնանքը, թե՛ հոր անեծքը: Մարկոն միշտ մնում է առաջին կարիճը: Մի օր Պրիլեպում իր Եփրոսիմե մոր հետ է ապրում, մյուս օրը Ստամբուլ է հայտնվում, երրորդ օրը Արաբիայի սահմաններում, թափառական ու շարունակ ծառա թուրքի սուլթանին: Վերջն էլ մեռնում է անժառանգ և մնում է մի սարի ծերի երկար ժամանակ անթաղ ու անգերեզման:

Դժվար չէ նկատել Մարկոյի և Փոքր Միհրի ճակատագրերի նմանությունը, ասել է թե՝ երկու ժողովուրդների պատմական ընթացքի նմանությունը, որն էլ հուզել է Մեծ Լոռեցուն:

Հ. Թումանյանը ոչ միայն խորապես յուրացրել է ռուսական հարուստ ու բարձրարվեստ գրականությունը, գնահատել այն, նշել նրա բարերար ազդեցության կարևորությունը հայ նոր գրականության ձևավորման ու զարգացման վրա, այլև ուսումնասիրել է ռուսական էպոսը: Այդ առումով խոսուն օրինակ է Մեծ Լոռեցու «Հսկայի ազատությունը» հոդվածը, որը տպագրվել է 1917թ., «Հորիզոն» թերթի 49-րդ համարում:

Թումանյանը գտնում է, որ մշակութային ոչ մի նմուշի մեջ ժողովուրդներն այնքան պայծառ ու պարզ չեն երևում, ինչպես իրենց ազգային էպոսի մեջ: Մեծ Լոռեցին միաժամանակ կարծիք է հայտնում այն մասին, որ ռուս ժողովուրդը տակավին չի ամբողջացրել իր ազգային էպոսը, սակայն առանձին մասերում, որ կոչվում են былина-ներ, հոյակապ ներկայացված է ժողովրդի կերպարը՝ բնավորության ինքնատիպ գծերով:

Հ. Թումանյանը կոնկրետ բերում է «Մուրոմցի Իլյայի ապաքինվելը» բըլինան և ընդգծում, որ «Մուրոմցի Իլյան… ինքը ռուս ժողովուրդն է»:[1] Սակայն Մուրոմցի Իլյայի ճակատագիրը եղել է բարդ այնպես, ինչպես մայր ժողովրդինը: Այն պատկերը, ուր ներկայացվում է Իլյայի գամված լինելը ռուսական վառարանին (печка), նրա անօգնական լինելը, օտար հյուրերի խորհրդով գամված վիճակից ելնելը, իր ուժի ճանաչումը, քրիստոնեության պաշտպան դառնալը, թշնամիների դեմ կռվելու վճռականությունը,

[1] Նույն տեղում, էջ 412

գյուղացիներին (Միկուլա Մելյանինովիչ) օգնելը, պարզապես առնչվում է հենց ժողովրդի անցած ճանապարհին, նրա պատմությանը:

Առաջին օգնությունը Մուրոմցի Իլյան դրսևորում է ծնողների հանդեպ՝ դաշտում աշխատելիս: Եվ երբ Իլյան ծնողներին հայտնում է, որ ճամփա է ընկնում իր սրտի հին ցանկությունը կատարելու, իր ճնշված հայրենիքին ծառայելու, նրան ավազակներից մաքրելու և քրիստոնյա աշխարհը պաշտպանելու, հայրն օրհնում է այսպես. «Գնա՛, իմ աչքի լույս, իմ հսկա զավակ: Բայց օրհնում եմ քեզ բարի գործերի համար, չար գործի համար օրհնություն չկա: Գնա՛ և քո ճամփին ոչ թուրքի ընդդեմ մտածիր չար բան, ոչ քրիստոնյային զարկիր բաց դաշտում»:[1]

Եվ հսկան հեծնում է նժույգը և որոշում իրականացնել իր պատմական առաքելությունը:

Հ. Թումանյանը, որ Իլյայի մեջ տեսնում է ռուս ժողովրդին, բերում է օրինակներ այն մասին, թե ինչպես էր Ռուսաստանը դարձել մի ընկած անդամալույծ, և նրանից ոչինչ դուրս չի գա: «Եվ հանկարծ… հսկան վեր կացավ տեղից:

Դուրս եկավ, որ ռուսական փեչը, որին նա կպած էր էնքան տարի, նրա համար Պրոմեթևսի ժայռն է եղել, և էնքան տարի ինքն իր մեջ աճելով ու մխալով ուժ է հավաքել՝ միանգամից վեր կենալու և մի հսկայական զարկով փրկելու իր երկիրը»:[2]

Եվ քանի որ Հ. Թումանյանը այս հոդվածը գրել է 1917թ. մարտին, երբ ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, իսկ հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապել Ռուսաստանի հետ, Արևմտյան Հայաստանը թուրքական դաժան լծից ազատագրելու առումով, ուստի ընդհանրացնում է. «Այժմ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին միայն մի հոգս պիտի ունենա- ամուր բռնի, իր ուժերին ներածին չափ նեցուկ դառնա ռուսական նոր ոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի»:[3]

---

[1] Նույն տեղում, էջ 414
[2] Նույն տեղում, էջ 414
[3] Նույն տեղում, էջ 415

Մեծ Լոռեցին գտնում էր, որ այդ է պահանջում ինչպես ընդհանուրի, այնպես էլ ամեն մի անհատի շահն ու փրկությունը, Պետք է նշել, որ Թումանյանի այս խորհուրդն ունի նաև այժմեական նշանակություն, որովհետև Եվրոպան ու Ամերիկան դեռևս ուշքի չեն եկել իսլամական Արևելքի նոր նկրտումներից, ահաբեկիչների սանձարձակ անմարդկային գործողություններից, ընդհակառակը, լեգալ կամ անլեգալ կերպով կազմակերպում են վերոնշյալ ուժերին հենց Ռուսաստանի դեմ: Իսկ բոլոր պայմաններում, ինչ էլ որ լինի, և՛ Հ. Թումանյանի խորհրդով, և կյանքի թելադրանքով Հայաստանի միակ թիկունքը դեռևս Ռուսաստանն է:

Տարբեր առիթներով անդրադառնալով ժողովրդական բանահյուսությանը՝ Թումանյանը չի մոռացել նաև հայկական էպոսը: Որպես պատմության լուրջ գիտակ՝ Մեծ Լոռեցին չի ընդունել այն կարծիքը, թե ժողովուրդը քիչ է երևում անցյալում, պատմության մեջ: «Ոչ,- գրել է նա,- ես կարծում եմ, ժողովուրդը կա, երևում է, նա խոսում է հազար ձևերով ու արտահայտություններով, միայն հարկավոր է կարողանալ էդ գտնել, նկատել և տեսնել»:[1] Եվ նա մատնացույց է արել Սասունցի Դավթին, որի մեջ խտացված երևում է ժողովուրդը:

Ծանոթանալով հայ հանճարեղ գրողի այս հոդվածին, հստակ նկատում ես, որ նրանում արձագանք են գտել հայ-վրացական փոխհարաբերությունների դրսևորումները 1918-20 թվականներին՝ իրենց դրական և առանձնապես բացասական կողմերով: Մեծ Լոռեցին, որպես երկու ժողովուրդների դարավոր ու անհրաժեշտ բարեկամության ջատագով, միանգամայն տհաճությամբ է ընդունել վրաց մենշևիկների թուրքամետ անիմաստ վերաբերմունքը դրացի հայ ժողովրդի հանդեպ: Նա այս հարցին անդրադարձել է ոչ մեկ անգամ: Մեր ազգային էպոսը գնահատելիս Մեծ Լոռեցին հենց մտահոգված այդ հարցով, նշել է. «Հայկական էպոսի մեջ մշտապես անսասան կանգնած են հայոց հսկայի՝ Սասունցի Դավթի և վրացի հսկայի՝ Գեորգիի դեմքերը իրար կողքի, ուր Դավիթը Գեորգիին է տալիս իր բարևը, Գեորգին էլ միայն Դավթի բարևն է առնում, նա է Դավթին

[1] Նույն տեղում, էջ 444

զգուշացնում վերահաս վտանգի հանդեպ, և նրան է հավատում Դավիթն անվերապահ: Նրանց սրերը երբեք չեն խաչաձևվում, և բացառապես սիրո ու բարեկամության համար է Դավիթը Գեորգիի երկիրը գալիս»:[1]

Թումանյանը եզրակացնում է, որ այս պատկերն ամբողջ ժողովրդի արտահայտած կարծիքն է, սերունդներով ամրապնդված կապը, հավերժական գծված ճանապարհը: «Հայ լինի, թե վրացի,- գրում է Մեծ Լռեցին,- եթե շեղվում է էդ ճանապարհից, նա դավաճանում է իր ցեղի ոգուն»[2]:

Հոդվածի վերջում Հ. Թումանյանը, ըստ էպոսի, մատնացույց է անում ևս մի կարևոր խնդիր: Բերելով արաբ ծերունու խորհուրդը՝ ուղղված Սասունցի Դավթին, որ խեղճ-ռանչպար մարդիկ մեղք չունեն, կռիվը հրահրողը թագավորն է, Թումանյանը հաստատում է այդ գաղափարը, ընդունում արդարացի կռիվը՝ չարի դեմ:

1920թ. Հ. Թումանյանը, երկրորդ անգամ է հանդես գալիս մեր էպոսի մասին: Նվարդ Թումանյանը վկայում է, որ «Հայկական էպոսի բառարանից» հոդվածի հատվածները բերում է Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» էպոսի մասին գիտահետազոտական անտիպ աշխատությունից: Միաժամանակ նշում է, որ տվյալ ուսումնասիրության ներածականը Հ. Թումանյանը 1921թ. ամռանը կարդացել է Թբիլիսիի «Հայարտան» դահլիճում:

Հոդվածում Մեծ Լռեցին հաստատում է, որ աշխարհում լայն կյանքով ու բարձր ձգտումներով ապրող ժողովուրդները միշտ ունեցել են իրենց դյուցազնական ու հերոսական դարաշրջանները՝ լիքը հրաշքներով ու առասպելներով: Հենց այդ ժողովուրդներն են, որ ունեցել են քաղաքական ու քաղաքացիական մեծ կյանք ու մշակույթ, որի մեջ նաև՝ իրենց էպոսները: Անմահ գրողը հայկական էպոսը համարում է հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհի առջև:

---

[1] Նույն տեղում, էջ 444

[2] Նույն տեղում, էջ 444

Որպես էպոսագետ՝ Հ. Թումանյանը խորհուրդ է տալիս. էպոսներով զբաղվող մարդիկ հիշեն մի օրենք. «Ժողովրդական էպոսի համար ժամանակ ու տարածություն եթե կան, ապա կան հսկայական չափերով, և միջավայր էլ եթե կա, էդ էլ ամենից առաջ ամբողջ մարդկային կյանքն է ու մարդկության պատմությունը»:[1]

Մեծ Լոռեցին էպոսներին մոտենում է և՛ ազգային, և՛ համամարդկային արժեքների կարևորությամբ:

Այս մոտեցմամբ էլ նա գրել է. «Հայկական էպոսն էլ թեև պատմական տարրեր ունի իր մեջ, թեև իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի մեծ մաքառումներն ու մեծ իդեալները, բայց ամենից առաջ նա մի հանրամարդկային ստեղծագործություն է, դյուցազնական ու սիմվոլիկ, մի հավաքական գործ, որի վրա աշխատել են ոչ միայն որոշ ազգի անհատները, այլև բոլոր ազգերը - իբրև անհատներ»:[2]

Թումանյանը չի ընդունում մեր այն բանասերներին, ովքեր հայոց պատմության բանալիով են ուզում բաց անել հայկական էպոսի մեծ փականքը կամ ազգային ճրագով են ուզում լուսավորել նրա մութ անկյունները՝ ենթադրելով, թե նա այս կամ այն հայ իշխանի կամ թագավորի ապարանքն է: Էպոսին պետք է մոտենալ ինչպես հսկայական մի աշխարհի, որտեղ ամենքն ունեն իրենց հայրենիքը, և նրանց լուսավորում է արեգակը:

Հետթումանյանական շրջանի բոլոր գիտնականներն ընդունել են անմահ գրողի այս դիտարկումը՝ այդ համարելով էպոսի գնահատման մի կախարդական բանալի:

Ованес Туманян и народное творчество

С.Ханян

Резюме

В данной статье конкретными фактами доказывается тесная связь великого поэта Ованеса Туманяна с народным творчеством и его

[1] Նույն տեղում, էջ 447
[2] Նույն տեղում, էջ 447

теоретическими обобщениями, как фольклероведа. Отмечается также его отношение к эпосам русского и сербского народов как эпосоведа.

Hovhanness Toumanyan and Folk Art

S.Khanyan

Summary

The article focuses on the spesific facts that prove the close relationship of the great Armenian poet Hovhanness Toumanyan with folk art, his theoretical generalizations as a master of folklore, as well as his attitude as a master of epos to the epics of Russian and Serbian people.

ՀՏԴ *Գրականագիտություն*

ՄՈՒՐԱՑԱՆԻ «ՌՈՒԶԱՆ» ԴՐԱՄԱՅԻ ՔՆՆԱՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԾԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Զ. Բալայան

Պարբերական մամուլի օրգաններում («Նոր դար», «Հանդես գրականական և պատմական», «Գեղարվեստ», «Մեր ձայնը», «Հովիվ», «Բազմավեպ», «Թատրոն», «Մշակ») են ծավալվել բանավեճերը «Ռուզան» դրամայի շուրջ:

Բնականաբար, Մուրացանի երկերի շուրջ գրվել են նաև ուսումնասիրություններ, գրախոսություններ: Կշեռքի սլաքը նեղ կուսակցական, անձնական դիրքերից, աչառու կողմերից մերթընդմերթ էլ անցել է օբյեկտիվ, անաչառ, գիտական գնահատություններին:

Անկնկատ, չճանաչված, չգնահատված Մուրացանը , որի պատճառը «Գեղարվեստ» հանդեսը այսպես է բացատրում. «Այդ հանգամանքը բացատրել պետք է նրանով,որ Մուրացանը միայն եւ միայն մի թերթում՝ «Նոր Դարում» էր աշխատակցում եւ հակառակ հոսանքի մարդիկ չէին կարդում կամ չէին սիրում», արդարացի կերպով…հաստատվելով իբրեւ տաղանդավոր գրապատմական անհատականություն՝ երեւում է հայ գրականության ընտրյալների շարքում…

Իսկ մուրացանագիտությունը սկզբնավորվում է Ա.Տերտերյանի (1882-1953)՝ 1913թ. լույս տեսած «Մուրացանը որպես մտածող եւ գեղագետ» ուսումնասիրությամբ:

Այդ արժեքավոր գիրքը համապարփակ քննական շերտերով մեկնում է մեծ գեղագետ-փիլիսոփայի, գրողի գեղագիտական համակարգը՝ առանձնադիտելով վերջինիս ստեղծագործական մեթոդի, աշխարհայացքի, տիպաբանական, գեղագիտական արժեքների ու կերպարների համակարգի ստեղծաբանական սկզբունքները՝ միաժամանակ հատկանշելով, թե Մուրացանի ստեղծագործությունն ինքնօրինակ առանձնահատկություն ունի. նա տալիս է ոչ թե տիպեր, այլ գաղափարատիպեր…

Ա.Տերտերյանը ուսումնասիրության մեջ անդրադարձել է նաեւ Մուրացանի պատմագեղարվեստական երկերի՝ «Գեւորգ Մարզպետունու», «Անդրեաս Երեց»-ի, «Ռուզան»-ի քննությանը, առանձնադիտել դրանք ստեղծաբանական և հոգեբանական կառույցներում:

Հայոց պատմությունը լավագույնս ուսումնասիրած, իմացող եւ գնահատող, երկու տարի Շուշիում՝ Խորեն Ստեփանեի դպրոցում, հայոց

պատմություն դասավանդած, պատմական վայրեր ճամփորդած ապագա գրողին՝ Մուրացանին, Ա.Տերտերյանը մի այլ կողմից էլ է գնահատում՝ նշելով. «Բայց պատմութիւնը Մուրացանին գրաւում էր եւ՛ իբրեւ գէղագէտի. անձնուրացութեան երգչի համար պատմութիւնը յարմարաւոր ասպարէզ էր հոյակապ գաղափարատիպեր կերտելու համար: Եւ զուր չէ, որ նրա գլուխ գործոցը պատմական վեպ է -«Գէորգ Մարզպետունին»: Գեղարուեստը կեանքի լուսաբանութեան մի ձեւ է. մեր գեղագէտը պատմական անցեալի լուսաբանութիւնը պիտի տար, հարկաւ, իւր գեղեցիկի համաձայն: Եւ իրօք, այստեղ էլ նա դրւատում է անձնուրացութիւնը եւ ճաղկում եսասիրութիւնը»[1]:

Յուր մտահանգումները զարգացնելով Մուրացանի պատմագեղարվեստական ընկալումների, բացահայտումների շուրջ՝ գրականագետը նկատում է. «Պատմական կեանքը գեղարուեստօրէն լուսաբանելիս Մուրացանն իրեն ազատ ու անկաշկանդ էր զգում հայ պատմագիրներից օգտուելու գործում: Նա յստակօրէն գիտակցում էր, որ պատմագրութիւն եւ գեղարուեստ տարբեր բաներ են»: Տեսաբանը այս մտքին է հանգում՝ մանավանդ հաշվի առնելով Մուրացանի դիտողական մեկնությունը «Ռուզան» դրամայի վերաբերյալ արված Լեոյի մի քննադատականի առթիվ. «Ես պատմութիւն չեմ գրել, այլ դրամա, որ ի հարկէ , պատմությիւն չէ, այլ բանաստեղծությիւն (գրական որեւէ ժանրի երկ-ընդգծ.-Զ.Ա.-Բ.): Հետեւապէս, եթէ Զալալը, Ռուզանը կամ դրանց շրջապատողները հերոսներ էլ չլինէին, ես դարձեալ իրաւունք ունէի իմ դրամայի մէջ, իբրեւ դիւցազներգական (էպիք) գրուածքի մեջ, ստեղծել նրանցից իմ ցանկացած մարդիկը, կամ նրանց գործունէութեանը տալ այն գոյնն ու հոգին ,ինչ որ պահանջում էր իմ դրամայի գաղափարը»: Մուրացանն իր այս մեկնումներին ավելացնում է նաեւ գեղարվեստական երկ ստեղծողի համար անչափ կարեւոր գրողական տաղանդի բազմահնար հատկանիշներ. «բանաստեղծական հափշտակություն, վառ երևակայություն, ստեղծագործ ուժ և այդ ամենի հետ միասին՝ մարդկային հոգվո խորքը թափանցելու կարողություն.»:

Մուրացանը հաստատում է նաեւ, որ ի տարբերություն հնախոսների, գրողը պատմական ամեն մի մանրունքի կարող է հոգի եւ շունչ ներշնչել ու կենդանություն տալ, իսկ նրա ամենակարեւոր

[1] Տերտերյան Ա., Մուրացանը որպես մտածող եւ գեղագետ, «Շողեր», Տարեգիրք, Ս. Պետերբուրգ, 1913 , տե՛ս Քարոզելով միաբանություն եւ մարդասիրություն, Արցախի գրողների միություն, Ստ., «Վաչագան Բարեպաշտ» հր., 2009 (այսուհետեւ՝ Տերտերյան Ա.), էջ 120:

նպատակադրումը հիմնականն է. «Քերթողական արհեստի ամենատարրական օրենքն այն է , որ բանաստեղծն իր գրվածքների մեջ առաջին տեղը տա ոչ թե **պատմական**, այլ **իդեական** ճշմարտությանը և նրա կոչումը լինի ոչ թե **հաստատել** ճշմարտությունը, այլ **ցույց տալ** այն»[1]:

Յուր ճշգրտումները Մուրացանը հաստատում է նաեւ Վ. Բելինսկուց մեջբերումներ անելով. «Իսկ մենք մեր կողմից այն կարծիքին ենք եղել միշտ, թե՝ **բանաստեղծը** (ընդհանրության մեջ ստեղծագործողը՝ - Զ.Ա.-Բ.) **չէ կարող** և **չպիտի լինի պատմության ստրուկը**. որովհետև, թե՛ մեկ և թե մյուս դեպքում, նա կդառնար միայն **արտագրող**, **ընդօրինակող** և ոչ թե **ստեղծագործող**»[2]:

Լեոյի՝ «Ռուզան»-ի վերաբերյալ արված քննադատություններին պատասխանող Մուրացանի մեկնումները ճիշտ համարող Ա.Տերտերյանը, հետեւելով նրա մտքերին, դրանցով ամբողջացնելով յուրը՝ նկատում է. «Ինչպէս տեսնում էք, Մուրացանը ճիշտ հայեացք ունի պատմա-գեղարուեստական ստեղծագործութեան մասին: Պատմագիրն ու ուսումնասիրողը տալիս են որոշ աշխարհայեացք եւ ելնում են որոշ աշխարհայեացքից, ուստի եւ պահանջում է նրանցից լուսանկարչական ճշտապահութիւն, իրականութեան համապատասխանութիւն, կեանքի առօրեայ ճշմարտութիւնը: Իսկ գեղագէտը տալիս է որոշ կենսահայեցողութիւն եւ ելնում է որոշ կենսահայեցողութիւնից. ուստի եւ պահանջում է նրանից գեղարուեստական ճշմարտութիւն, որ բարձր է առօրէականից եւ անհամապատասխան նրան, հետեւապէս վիպագիրը իրականութեան ստրուկը չէ պատմագրի եւ ուսումնասիրողի նման»[3]:

Խոսելով Ռաֆֆու՝ «Սամվել»-ի առաջաբանում տրված՝ հայ վիպասանի համար պահանջվող պատմական կարեւոր աղբյուրների բացկայությունից, այդ թվում նաեւ այն հանգամանքից, որ հայոց պատմության մեջ կին չկա կամ նրա մասին աննշան է խոսված, ու դրանցից առթող բազմաթիվ դժվարություններից՝ պատմա-վիպասանի եւ պատմական դրամա գրող հեղինակների համար, Տերտերյանն առանձնադիտում է, թե «Մեր գրականութեան մէջ պատմական վէպի վարպետներ են համարում Ծերենցը եւ Ռաֆֆին: Արդարութիւնը պահանջում է ասել , որ Մուրացան այդ երկուսից էլ բարձր է իւր պատմագեղարուեստական ստեղծագործութեամբ» եւ,

[1] Խաչատրյան Հ., Երվանդ Սակավակյաց, Ե., «Սովետական գրող» հր., 1989:
[2] Метерлинг М.,Монна Ванна , 1902.
[3] Մուրացան, Եժ, 7 հ-ով , հ.6, Ե., ՀայՊետՀրատ, 1963

որ «Ծերենցի մէջ հռետորական ձիրքը պայքարում է գեղագէտի դէմ: …Այդ տեսակետից Ռաֆֆին եւ Մուրացանը շատ են բարձր նրանից. իսկ վերջիններս աննահանջ մրցում են միմեանց հետ , թէպէտեւ Մուրացանը աւելի կիրթ է եւ ճաշակով, քան Ռաֆֆին»[1], եւ այդուհանդերձ հետեւություն անելով, թե «…Մուրացանի առաւելութիւնը թէ Ծերենցից եւ թէ Ռաֆֆիից անուրանալի է», բայց եւ այնպես, զարմանալի կերպով եզրահանգում է (ինչ-որ տեղ կարծես թե շարունակելով Լեոյի հերքումները «Ռուզան» դրամայի շուրջ, չնայած ինքը նույնիսկ չի փաստում, որ «Ռուզան»-ի «մի քննադատութեան առիթ» (Ա. Տերտերյան) եղել է Լեոյի «Մուրճ»-ում «Լ.» ստորագրությամբ տպված քննադատականը) հետեւյալին. «Մեր գեղագէտի մոտ պատմական տեղեկութիւնների հակագեղարվեստական խճողումներ չկան, իսկ բնավորությունների ուրուագծումների մէջ բացակայում են հոգեբանական կոպիտ սայթաքումները, ի բացառեալ Ռուզանը, որ շինծու է »[2]:

Իսկ եթե գրականագետը հակված է կարծելու, թե «Մուրացանը խոշոր գէղագէտ է ե՛ւ իւր պատմա-գեղարուեստական ստեղծագործութեան մէջ»[3],- ուրեմն այդ ստեղծագործության մեջ է նաեւ «Ռուզան»-ը եւ կարծում ենք հարկ չէ, որ Տերտերյանը այլ՝ լեոյական զուգահեռի վրա է քննում «Ռուզան»-ը՝ հրատարակելով ընդհանուր՝«Մուրացանը որպես մտածող եւ գեղագետ», ուսումնասիրության մեջ, երեւելի վիպասանի՝ Մուրացանի մահվանից (1908 թ.) մի քանի տարի անց՝ 1913 թ.:

Համոզված ենք՝ Լեոյի «Ռուզան»-ի վերաբերյալ այն հերքումները, որոնց պատասխանել է Մուրացանը տրամաբանական ճշգրտությամբ ,եւ որոնց ճշմարտա-ցիությունն ընդունել է նաեւ Տերտերյանը, նույն կերպ էլ, եթե կենդանի լիներ վիպագիրը եւ ընթերցեր Ա.Տերտերյանի մերժողական պաթոսը «Ռուզան»-ի վերաբերյալ,կներկայացներ գրականագետի դիտարկումների անհավանակա՛ն եւ ո՛չ ընդունելի, անհամոզի՛չ լինելը գեղագիտական, ինչու չէ, նաեւ հոգեբանական սկզբունքների տեսանկյունից. «Ռուզանն իբրեւ հերոսուհի ունի մի շատ նշանակալից թերութիւն. նա հանդէս է բերուած իբրեւ կին , բայց նրա մէջ չկայ ոչինչ կանացիական. նա Գէորգ

[1] Մուրացան, Նամակ խմբագրության,«Ռուզանի»քննադատության առիթով, ԵԺ, 5հ-ով , հ.5 ,Ե. ՀայՊետհրատ,1954:
[2] Մուրացան , «Ռուզանը» եւ նրա քննադատները, ԵԺ, 5հ-ով , հ.5 ,Ե. ՀայՊետհրատ, 1954:
[3] «Մուրճ» , 1901, թիվ 3, էջ 198:

Մարգպետունու եւ Անդրէաս Երէցի թոյլ պատճենն է: Եթէ նրան չկոչենք Ռուզան, այլ, օրինակ, անուանենք Կիրակոս կամ Մարկոս, դրանից մեր հերոսուհին ոչինչ չի կորցնիլ, այլ, ընդհակառակ, գուցէ մի բան էլ շահուի»[1]:

Անչափ զարմանալի է ներկայացված կարծիքը: Ասում են՝ ճաշակին ընկեր չկա, սակայն այս դեպքում խոսում է քննաբանը:

Ինչու՞ այդքան խիստ… Եւ դա այն դեպքում, երբ վիպական կերպավորումը ներկայացնում է տվյալ դեպքում նաեւ կանացի սեռ, որը շատ քիչ է ներկայանում հայոց պատմության մեջ. «Իսկ առանց կնոջ վէպ կարող չէ լինել. կինն է նրա ոգին եւ կենդանութիւնը»(եր.3),- գոչում է Ռաֆֆին մեծ ցավով, քանզի նրա իսկ փաստելով՝ անշուշտ հայոց պատմության մեջ բացակայում է կինը…

Գո՞ւցե թե հայ քննաբանի համար դեռեւս, հին օրենքի համաձայն, գրական հերոսը այդպես էլ պետք է միմիայն արական սեռ ներկայացնի. սխալ է, անշուշտ տեսական այս մեկնաբանությունը… մե՛ծ սխալ է…

Ա.Տերտերյանը Մուրացանի դրամայի գեղարվեստական արժեքի պակասությունն այդ է համարում. Ռուզանը լիներ Կիրակոս, թե էլ ով, ավելի հարմար կլիներ, քանզի նրա մեջ կանացիություն չկար…

Իշխան Գեւորգի գործելու ասպարեզը լայն է: Նա հանդես է գալիս մեծ կտավի՝ պատմավեպի ժանրում: Նա արիությամբ, քաջությամբ, հայրենասիրությամբ եւ ճարտասանական մեծ շնորհքով-խոսքով օժտված կերպար է, յուր խոսք-խորհուրդներով, հորդորներով, յուր անձնուրացությամբ՝ հերոսականության օրինակ, հիացմունք հանդիսացող: Նա և՛ գործում, և՛ խոսում, և՛ համոզում է, քաջության հրաշքներ ցույց տալիս բովանդակ Հայաստանում…

Ռուզանի երեւալու ասպարեզը բեմն է, նա պետք է շարժուն, ակտիվ, ներքին հոգեկան տրվածքները բացահայտող ուժ ունենա, փորձի ցույց տալ այն մեծ հրամայականը, որ հայրենիքի ճակատագիրը յուր առջեւ ներկայանում է որպես միակ ընտրանք, ներկայանա իբրեւ գաղափարակիր, որը եւ կատարում է:Իսկ այդ ամենը դրամատիկական հերոսուհին պետք է խոսքի միջոցով ներկայացնի ու տեսանելի եւ ընկալելի դարձնի: Ռուզանի կերպարի համոզիչ այս դինամիկան վրդովեցրել է գրականագետին ու նրա կողմից որակվել որպես երկրորդ թերություն.

[1] «Փորձ», 1880, №5, էջ 139:

«Նա խօսող մեքենայի տպաւորութիւն է գործում: Եվ որքա՜ն շատ է խօսում այդ լեռնցի աղջիկը բա՜րձր, բա՜րձր նիւթերի մասին, որքա՜ն շատ է ճառում իւր անելիքի շուրջը եւ որքա՜ն յաճախ ճիգ ու ջանք է թափում ինքն իրեն արդարացնելու եւ իւր արածին բանաւոր հիմքեր հայթայթելու մտահոգութեամբ: Մուրացանի անձնուրացութեան հերոսներն ընդհանրապէս քչախօս են , նրանք աւելի շատ սիրում են գործել, քան խօսել. նրանք համեստ են…»[1]:

Եթե Գեւորգ Մարզպետունին չխոսեր, չգործեր, ով կարող էր կոտրել համառ, գոռոզ, կենտրոնախույս տրամադրություններ ունեցող իշխան նախարարներին, չկամ անձանց:

Ռուզանն ընտանեկան միջավայրում բարոյական բարձր առաքինություններով դաստիարակված օրիորդ է. չմոռանանք նրանց իշխանական տան բազմապիսի բա-ռեմասնությունների, շնորհների, հայրենական, հոգեւոր արժեքների պահպանման, տոհմական հարաբերությունների, արժանապատվությունների բազմապիսի դրսեւո-ռումների մասին: Խաչենի իշխանական այդ երեւելի տան հարուստ ավանդույթների կրողն է նաեւ Ռուզանը:

Խոսքը մեծ կշիռ ունի, մանավանդ բեմական խոսքը, ու… եթե Տերտերյանը գտնում է, որ Մուրացանի հերոսները տիպեր չեն, այլ գաղափարատիպեր, նշանակում է՝ այդ բարձր նյութերից խոսողը նաեւ հեղինակի գաղափարակառույցի մի փոքրիկ մասնիկի կրողն է: Եթե դրամայի հիմնական գաղափարը՝ անձնազոհության երակը, հայրենասիրության բարոյականն է ներկայացնում, ու եթե դրամայի լեզուն գեղեցիկ հայերենով է գրված, որը Մուրացանի ինքնատիպ, բարձր ոճն է՝ առանձնահատուկ, ընդգծված, ապա մնում է ցույց տալ դրա հաջողության գաղտնիքը, մանավանդ, երբ բեմի վրա է Ռուզա՜նը, Խաչենի իշխանական տան բարեկրթությամբ դաստիարակված հայրենասեր օրիորդը՝ պատրաստ անձնազոհության հանուն հայրենայց ազատության…

Պատմականորեն եւ դրամայի առաջին տարբերակում Ռուզանը կնության է տրվում մեծ զորավար Զարմաղանի եւ հավատով քրիստոնյա՝ Ելթինա խաթունի որդուն՝ Բուրա Նուինին. «Զոլա սորանով չբավականացավ , այլ պահանջեց , որ Զալալի ի հաստատություն այս խոստման, յուր Ռուզան դուստրն ևս յուր Բուղան եղբորորդուն կնության տա: Զալալ ուրիշ ելք չուներ. ուստի վճռեց իր

[1] Նույն տեղում, էջ 135, տե՛ս Метерлинг М., Монна Ванна , 1902, եր. 13 (այսուհետեւ՝ Монна Ванна):

հպատակների հանգստությանը զոհել յուր սիրելի դուստրը, որ Զոլա առնելով խաղաղություն հաստատեց նորա հետ և զորքը հանեց նորա երկրից»[1], - գրում է Մուրացանը յուր 1880թ. հրատարակած «Բաղդասար Մետրոպոլիտ Հասան Զալալյանցի համառոտ կենսագրությունը» պատմական ակնարկում:

Բայց դա ամբողջը չէ:

XIIIդ. պատմիչ Կ.Գանձակեցին եւ պատմական այլեւայլ վավերագրեր փաստում են նետողաց ազգի՝ մոնղոլ-թաթարների կատարած զարհուրելի արարքների մասին, որոնց ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերներն են տեսել երկրի վրա: Եւ որ նրանք ծանր հարկահանության տակ էին դնում իրենց գրաված երկրների ժողովուրդներին՝ նույնիսկ մեռելներից հարկ վերցնելով: Շատ ու շատ իշխաններ, մեծավորներ էին ցանկանում խնամիանալ թաթարների հետ՝ փրկվելու համար մեծ վտանգից, սակայն, միեւնույն է, նրանց երկրները հրի ու սրի էին մատնվում: Իսկ իշխան Հասան Զալալը ոչ միայն կարողացավ թաթարների արշավանքի երախին 1238թ. Գանձասարի հոյակերտը կառուցել ու բացել, այլեւ՝ ռազմական դաշինք կնքել թաթարների հետ, զինական ուժով մասնակցել նրանց արշավանքներին. եւ դա թաթարների արշավանքների առաջին տարիներից սկսած:

Չնայած մելիք Զալալը ստիպված քաղաքական քայլ կատարեց ու Ռուզանին կնության տվեց Զարմաղանի որդուն, դաշինք կապեց նրանց հետ, Գանձակեցուց որպես մեծ առաքինություն, իբրեւ «բարեպաշտ» համարվեց, այդուհանդերձ, մեծ հայրենասերը երկու անգամ թաքուն մասնակցեց մոնղոլների դեմ կազմակերպած ապստամբությանը եւ երրորդ անգամ բռնվեց ու 1261թ. նահատակվեց Ղազվինում մոնղոլների կողմից սպանվելով:

Ա.Տերտերյանի բնութագրությամբ՝ այդ լեռնցի, բարձր գաղափարարներից խոսող աղջիկը՝ Ռուզանը, անգրագետ, անշնորհք գեղջի մի գեղեցկուհի չէր, որ չիմանար՝ ինչ էր խոսում: Ինչպես դիտել ենք, իշխանական տան մեջ բավականին լավ ու բարձր կրթություն, առաքինության դասեր ստացած օրիորդն էր հայրենի տան բարօրության մասին հոգացողը, մարդասերը, հայրենասերը:

Թաթարստան՝ Բուրա Նուինին հարս գնացած Ռուզանը ձեռքերը չի ծալել եւ նստել: Ինչպես երեւելի առաքինություններով զարդարված Տոնղուզ խաթունը, Արզու խաթունը, Ելթինա խաթունը (հավատով քրիստոնյաներ, ազգությամբ հայեր), այնպես էլ Ռուզան-

[1] Նույն տեղում, էջ 136:

Ռուզուքանը շատ ու շատ անգամ է գործել հանուն հայրենիքի, եւ ինչպես Տիգրանուհին Հայոց հնագույն վիպասանքում, և ինչպես Ծովինարը «Սասնա ծռեր»-ում, չնայած 1881թ. Ծովինարի դրվագը չկար դեռեւս էպոսի առաջին պատումի մեջ, նույնպես, եթե մնար «Ռուզան» դրամայի առաջին տարբերակը, ապա ամենեւին չէր աղճատվի Ռուզանի բարոյականը. մենք քննել ենք այս մասին աշխատանքի վերլուծության ժամանակ:

Դրամայի երկրորդ տարբերակում Ռուզանը, համոզվելով, որ յուր գեղեցկությամբ, խոհեմությամբ թշնամուն ստիպել է կապյալներին ազատել, թույն է խմում՝ չդառնալու թաթարի կրքերի զոհը՝ այդքանով եւս մնալով բարձր:

Ա.Տերտերյանը «Ռուզան»-ը համեմատում է XIX դարավերջի եւ XX դարասկզբի բելգիական գրականության խոշորագույն դեմքերից մեկի՝ դրամատուրգ, բանաստեղծ, սիմվոլիզմի գրական ուղղության տեսաբան, խորհրդապաշտության ներկայացուցիչ Մորիս Մետերլինկի (1862-1949թթ.) «Մոննա Վաննան»-ի հետ: Դրաման լույս է տեսել 1902թ.:

Մեծ արվեստագետը, կարողանալով հաղթահարել սիմվոլիզմի ազդակները, նպաստում է Բելգիայում ռոմանտիկական եւ ռեալիստական դրամայի հիմնավորմանը: «Արքայադուստր Մալեն» դրաման նրան մեծագույն հաջողության բերեց եւ նրա անունը դրեց Շեքսպիրի կողքին:

Նկատենք՝ Մետերլինկի գրած քառասուն դրամատիկական երկերից մի քանիսն են հեղինակին համաշխարհային ճանաչում բերել, իսկ ուշ շրջանի երկերից միայն «Կապույտ թռչնակը»:

Իսկ Մուրացանը միայն մի դրամատիկական երկ է գրել՝ «Ռուզան»-ը, որը նրան միանգամից գրողի մեծ հռչակ է բերել:

Մետերլինկի «Զիրավիրվածը» եւ «Կույրերը» պիեսները բանաստեղծ- տեսաբանների կողմից համարվել են «լռության և սպասումի թատրոնի» դասական նմուշներ:

Նկատենք, որ մետերլինգյան գեղագիտության թրծվածքը «Միմյանց ինչ-որ բան հաղորդելու համար հարկ է լռել» խորհուրդն է, որն, անշուշտ, ինչ-որ բան ասում է «Մոննա Վաննան»-ի օրինակում, եւ որի ու «Ռուզան»-ի միջեւ է համեմատության եզրեր գծել Ա. Տերտերյանը՝ ի վնաս վերջինի: Ի՞նչու… «Բայց ի՜նչ նմանութիւն Մոննա Վաննայի եւ Ռուզանի միջեւ գեղարուեստական մշակման եւ հոգեբանական ճշմարտի տեսակէտից: Մոննա Վաննան կատարեալ կին է, կանացիութիւնը նրա մէջ ոչ

միայն բնական է, այլ եւ անհրաժեշտ. նա ուրիշ կերպ լինել էլ չի կարող: Երբ առաջին անգամ Մոննա Վաննան լսում է թշնամու առաջարկը՝ մի գիշերով գնալ նրա վրանը , պաշարումն յետ վերցնելու պայմանով, - նա ոչինչ չի խօսում. լռում է եւ դժգոհում…«Նա ոչինչ չպատասխանեց: Դժգոհեց ու հեռացաւ առանց մի խօսք ասելու…» («Монна Ванна» , 1902 , եր. 13) »[1]:

Եւ… միայն նրա համար, որ բենական հրավառ այն հոգին՝ Ռուզանը, յուր անձնվեր ոգեղենով գրականագետին երեւում է իբրեւ մի «պարծենկոտ», «երկայնաձիգ ճառող»,«հոգեկան ներքին դրամա» չունեցող, չնայած նրա անձնազոհ քայլն «ինքնին խնկելի» է: Ու զարմանալի կերպով գրականագետը մեջ է բերում Ռուզանի մենախոսությունից հետեւյալը. «Ես…, որ անքուն հսկել եմ հիւանդների մահճի մօտ եւ իմ ձեռօք սրբել այնքա՛ն շատ արտասուք, այսօր ուրեմն պատճառ պիտի լինիմ արեան ու անէծքի… Օ՜հ, ո՛չ. անկարելի է. այդ չի պիտի լինի… Իմ աչքերը չեն տեսնիլ այդպիսի աղէտ… եթէ պէտք է զոհ, ապա թող զոհեն ինձ, թող ուղարկեն թշնամուն, թող մատնեն ինձ թաթարին, ես չեմ տրտնջալ. եւ ոչ էլ կհակառակեմ, միայն թէ աղէտը վերանայ ժողովրդից… միայն թէ նրա լացի ձայնը չհասնէ իմ ականջին» («Երկ»հ.II, եր.81) եւ ինչու պետք է երկու հերոսուհիները, թեկուզ միեւնույն դրության, միեւնույն հանգամանքների մեջ, գործեն միանման, ինչո՞ւ…, ինչո՞ւ նրանք միանման պետք է մտածեն, դիտեն, խոսեն, լռեն. դա լինելու՞ բան է, նույնիսկ երկվորյակները չեն լինում միանման, միատեսակ՝ շարժ ու վարքով, մտածությամբ, խոսելով, գործելով… եւ հետո՝ լրիվ տարբեր են թե՛ հանգամանքները, որոնց մեջ գտնվում եւ գործում են հերոսուհիները, թե՛ պատճառները, թե՛ թշնամյաց կողմից նրանց տված առաջարկները, պայմանները, պատմական, քաղաքական, վիպական ձեւույթները, թե՛ նրանց վիպականացնող գրողների հակվածությունն ու հավատամքը՝ գրական այս կամ այլ դպրոցներին, ուղղություններին հարելու տեսանկյունից, թե՛ գրական երկերը գնահատելու՝ տվյալ ժամանակաշրջանի ընդունած գրականական պահանջներից…զարմանալի են գրականագետի դիտողական եզրերը , քննական պարագաները:

Հայոց պատմության մեջ Ծովինարին, Ռուզանին, Գայանեին սիրող թշնամիք չեն առաջարկել նրանց մի գիշեր իրենց մոտ մնալ, այլ

[1] Նույն տեղում, էջ 136, տե՛ս Монна Ванна, եր.23:

նրանց հայրենիքին ազատություն բերելու խոստումով՝ ամուսնանալ իրենց հետ:

Անշուշտ, Ռուզանի հրավառ, ոգեղեն բեմական խոսությունները մեկ դարից ավելի հուզել ու հուզում են հայ հանդիսատեսին:

Վերագնահատման տեսանկյունից անհամոզիչ են Ա.Տերտերյանի մտահանգումները. «Մօննա Վաննան իւր կարճ խօսքն ասելուց յետոյ հեռանում է եւ ընթերցողը կամ հանդիսատեսը վերապրում է նրա ներքին տանջանքները մենութեան մէջ: Նա դժգոյն է, ուրեմն յուզված….»: Ուրեմն, եթե հերոսուհին լռում է, դժգույն է, հուզված, ապա բնակա՞ն է ու… Ռուզանը այդպիսինը չէ՞, չի՞ կարողանում հուզել հանդիսատեսին: Դա ոչ թե մի քիչ, այլ ամբողջության մեջ՝ ճշմարտանման չէ. «Մուրացանի եւ իւր հերոսուհու շատախօսութեանը չէնք հաւատում, որովհետեւ երկուսն էլ հարցը վճռում են հեշտօրէն, առանց որեւէ տրագիզմի: Առաջին անգամ մեր հանդէպ է ելնում Ռուզանն իւր պատրաստի վճռով. ուրիշ բան մենք չգիտենք. բայց կարծում ենք, որ այդ վճիռն այդքան հեշտութեամբ յօրինելու բան չէ… »[1]:

Ի դեպ նշենք, որ սիմվոլիստները դիտում էին, թե գեղարվեստական պատկերը միայն պետք է կռահել եւ ոչ թե հասկանալ, շատ խոսել: Այստեղից չի՞ գալիս նաեւ Մօննա Վաննայի լռելու հանգամանքը… Չէ՞ որ Մետերլինկն էլ համարվել է սիմվոլիզմի տեսաբան… ու երբեմն էլ՝ նրա սկզբունքներն ընդունող ու… դրանց հետեւող…

Տերտերյանի համար ավելի համոզիչ է Վաննայի եւ նրա ամուսնու վիճաբանությունը՝ գնալ թշնամու բանակը, քան Ռուզանի եւ հոր վեճը՝ չտրվել թշնամուն, չխայտառակվել, չանպատվել… «Մետերլինկն ստեղծել է մի գեղեցիկ վճռականութիւն առանց արդարացման եւ հիմնաւորման: Մուրացանը սարքել է մի փաստաբանական ճանճրալի վէճ հօր եւ աղջկայ միջեւ: Եւ մենք աւելի համազդում ենք Մօննային, քան շա՛տ խելօք դատողութիւններ արտասանող Ռուզանին.» եւ եզրահանգման մի շերտ եւս, որ արդարացի չէ. «Սա, - շարունակում է Տերտերյանը, - իւր իմաստալից ճառերով յետ մղող տպաւորութիւն է թողնում: Մօննայի ամուսինը բացատրութիւն է պահանջում, նա հրաժարւում է. «Ո՛չ, ո՛չ, ո՛չ, - խուսափում է Մօննան, - ես գիտեմ… Ես չեմ կարող… Եթէ ես գէթ մի

[1] Նույն տեղում, էջ 136:

բառ ասեմ, իմ ամբողջ զօրութիւնս կկորչի… Ես սիրում եմ քեզ, բայց եւ այնպէս ես պիտի գնամ, ես կգնամ, կգնամ»[1]:

Ո՛չ, ո՛չ մի կերպ չպետք է համեմատել երկու հերոսուհիներին գրական նման ձեւույթներում:

Լա՛վ է եւ նույնիսկ՝ պարտադիր, որ նրանք նման չեն իրար, նման կերպ չեն լռել կամ արտահայտվել, գործել…

Այստեղից՝ նրանց ինքնատիպությունը, խառնվածքային բնորոշ գիծը:

Ռուզանի եւ՛ հոր, մոր, փեսացուի՝ սիրելի Ներսեհի ու՛ այլոց հետ երկխոսություններն ընթանում են ծանր, հուզիչ, ոգեկոչող, անձնուրաց, հերոսական մղումներով, ներքին զսպաձգված անցումներով, որոնք մենք ներկայացրել ենք մեր վերլուծության մեջ եւ կատարել եզրահանգումներ:

Ի վերջո, գրականագետը, խոսելով Մոննա Վաննայի բեմական վերջին դրվագից, թե ինչն է մղել նրան այդ քայլին, բերում է նրա խոսքը. «Այն, որ մարդիկ մեռնում են քաղցից…»:

Ու «Ռուզան»-ի հանդեպ Տերտերյանը արձանագրում է յուր վերջին խոսքը, անշուշտ, ոչ քննության բռնող ու վերագնահատման կարոտ. «Առհասարակ, «Ռուզանը»՝ իբրեւ դրամա շատ թոյլ մի գործ է »[2]:

Վերջնահանգման մղվելով՝ նշենք, որ Տերտերյանը սիմվոլիզմի գրական ուղղության տեսանկյունից է գնահատում ռոմանտիզմի եւ կլասիցիզմի առատ տարրեր կրող «Ռուզան» դրաման՝ սիմվոլիզմի տարրեր ունեցող «Մոննա Վաննան»-ի հետ համեմատության եզրերում հակադրույթ ստեղծելով ու հակաճառման ելնելով: Դրամայի երկու տարբերակում էլ Ռուզանի կերպարը համոզիչ է:

Անշուշտ, Տերտերյանը չպետք է համեմատության դներ գրական տարբեր ուղղության պատկանող երկերը՝ Մետերլինկի «Մոննա Վաննան» եւ Մուրացանի «Ռուզան» պատմա-հայրենասիրական դրաման:

Իսկ ավելի հավանականը եւ ճշմարտացին,գնահատելին, ինչպես քննաբաններից շատերն են փաստել, նույնպես նրա՝ Տերտերյանի մոտ են գրի առնված-վավերացված, հետեւյալն է. ««Ռուզանը» հանրածանօթ դրամա է, նա շատ ու շատ անգամ է տրուել

[1] Նույն տեղում, էջ 136, տե՛ս Монна Ванна, եր.23:

[2] Նույն տեղում, էջ 138: տե՛ս Монна Ванна,եր.36:

մեր բեմի վրայ: Ուստի եւ աւելորդ ենք համարում մանրամասն բովանդակութիւնը մէջ բերել»[1]:

Դե ինչ, կարծում ենք՝ ամեն մի քննադատական խոսքից առավել ահա սա է «Ռուզան»-ին տրված իսկական ու հիմնավոր գնահատականը, որից հետո հեղինակն արել է վերոդիտված յուր՝ տեսականորեն ո՛չ արդարացի քննությունները:

Եթե դրաման մինչեւ Տերտերյան, ավելի շուտ, Տերտերյանի ծննդից (1882) մեկ տարի առաջ է ծնվել եւ յուր արարչին՝ Մուրացանին ու ինքն իրեն հռչակ բերել ու հզոր թափով հաստատվել հայ բեմերում…, շարունակվել (այդ շարժը փաստել է նաեւ դրաման մերժող Լեոն եւ ուրիշներ, նաեւ՝ Տերտերյանը) ու… ցայսօր էլ մեծ ոգեղենությամբ խաղացվում եւ սիրելի է հայ հանդիսատեսին, ապա՝ ո՞րը եւ ի՞նչն է նրա հարյուրամյա հարատեւության գաղտնիքը, եթե թույլ գործ է…

Այդպես չի՛ լինում, պարոնա՛յք. ո՛չ, չի լինում…, այդպես չի՛ լինում…

Զավե՞շտ է, թե՞ շփոթմունք, գիտական ո՛չ ճիշտ գնահատություն, որը վերագնահատություն է հայցում: Ուրեմն, նրա հարատեւության գաղտնիքը նրա մեծ խորհրդի՝ հանուն հայրենասիրության՝ անձնազոհության գաղափարի բացահայտումն ու ցուցադրումն է՝ ոգեղեն լիցքերով հարուստ եւ հզոր Ռուզան հերոսուհու ողջանվիրումով, ողջակեզով…

«Երբ Լեոն թվարկում էր «Ռուզան»-ի այսպես ասած «թերությունները», զարմանում էր նաեւ նրա «երկարակեցության» վրա՝ չհասկանալով դրամայի գաղտնիքի այդ մեծ նշանակությունը…

«Ուրեմն ի՞նչ. տրամաբանօրեն պետք է հետեւցնել թե՝ այդ թերություններն էին «Ռուզանի» երկարակեցության պատճառը:

Եթե այս ճիշտ է, - շարունակում է Մուրացանը, - այն ժամանակ, իրավ որ, զարմանալի ժողովուրդ են հայերը, որոնք միայն վատ գրվածքներն են երկար ապրեցնում իրենց մեջ: Այդ հաշվով պետք է որ մեր մյուս պատմական պիեսները ևս երկար ապրեին. հապա ի՞նչու մեռան»[2]:

Ընդունենք, որ Մուրացանի խոսքերը նաեւ Ա. Տերտերյանի արված դիտողություններին են վերաբերում[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 138:
[2] Նույն տեղում, էջ 134:
[3] Մուրացան, Ռուզանը եւ նրա քննադատները, էջ 377, 378:

Գալով «Մոննա Վաննան»-ին՝ նշենք, որ այլ էր Մոննա Վաննայի փրկության հարցի նշանակությունը՝ սոցիալական, այլ՝ Ռուզանինը՝ քաղաքական, ազատական, սրանք տարբեր հասկացություններ են:

Թշնամի զորավարի հարցումին, թե ի՞նչն է ստիպել Մոննային՝ իրեն տրվել, վերջինս պատասխանել է կարճ եւ կտրուկ. «Այն, որ մարդիկ մեռնում են քաղցից…»[1]:

Երվանդ Սակավակյաց արքան որդուն՝ Տիգրանին. «Մի՛ երկմտեք , եթե պահը գա (գահը հոժարությամբ, անժամանակ,կանխելով Կյուրոսի քաղաքագետ քայլը՝ հանձնում է որդուն-Զ.Ա-Բ.) ՝ այդպես վարվեցեք նաև դուք»[2]:

Ռուզանը՝ թաթարներից ազատված հայ կապալներին. «Ինչ որ ես արի, նույնը սովորեցրեք ձեր զավակներին անել, և ձեր հայրենիքը կազատվի ցավերից…»:

Բուրա Նուինը՝ զորավար Զարմաղանի որդին, Ռուզանին. « Իշխանուհի, դու ինձ հիացրիր ոչ միայն քո գեղեցկությամբ, որ երկնային է, այլև այն անձնվիրությամբ, որ ցույց տվիր դեպի թշվառ ազգակիցներդ… Որպեսզի դու չգարշես ինձանից՝ ես կսովորեմ այսուհետև հարգել քո կրոնը, որ կարողանում է այդքան արժանիքներ ծնեցնել մի աղջկա մեջ. ես կսիրեմ նաև ա՛յն ազգն ու ժողովուրդը, որ ծնում ու կրթում է քեզ պես զավակներ: Իսկ քեզ կտանեմ թաթարաց երկիրն՝ այնտեղի մեծագույն զարդը դարձնելու համար…»:

Խաչենը ազատ թողնելուց հետո Բուրա Նուինը՝ Ռուզանին. «Ո՛վ իմ գեղանի, բոլոր ցանկություններդ արդեն կատարվեցան. քո հորն ու ժողովրդյան ես տվի ազատություն և ատելի Համտունին պատժեցի չարաչար: Այնուհետև ցանկացար, որ իմ զորքերը հանեմ քո հոր իշխանության սահմաններից, որպեսզի նրա երկրում տիրե ապահովություն. այս վերջին ցանկությունն էլ, ահա, կատարեցի…»[3]:

Վիպական հերոսուհին՝ Ռուզանը, հայրենակիցներին, հայրենիքը ազատելով, թույն խմեց եւ հրաժեշտ տվեց կյանքին՝ վիշտ պատճառելով սիրելիներին, բոլորին…

---

[1] Մոննա Վաննան, եր.36:

[2] Խաչատրյան Հ., Երվանդ Սակավակյաց, Ե., «Սովետական գրող» հր., 1989, էջ 238:

[3] Մուրացան, Եժ, 7հ-ով , հ.6 , Ե., ՀայՊետՀրատ, 1963, էջ 92, 91, 93:

Պատմական հերոսուհին՝ Ռուզան-Ռուզուքանը, ինչպես յուր հզոր նախնիները՝ արքայաքույր Տիգրանուհին, արքայադուստր Ծովինարը, Ելթինա, Տոնդուզ խաթունները, հարս գնաց Թաթարաց երկիրը՝ ինքը եւս լծվելով հայրենիքին ծառայելուն՝ յուր հնարավոր եւ անհնարին շնորհներն ու նվիրվածությունները բերելով…

Ռուզանի ոգեղեն շերտերն այնքան են առինքնել Մուրացանին, որ իր դստրերից մեկին «Ռուզան» անունով է կնքել: Գ.Ստեփանյանը նշում է. «ՄՈՒՐԱՑԱՆ ՌՈՒԶԱՆ. Քանդակագործուհի: Ծնվել է Թիֆլիսում. դուստրն է գրող Մուրացանի: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, մասնագիտականը՝ Գերմանիայում, որտեղ հետեւել է քանդակագործության, ապրել ու ստեղծագործել է: Մասնակցել է 1910թ. Խ. Աբովյանի հուշարձանի համար հայտարարված մրցանակաբաշխությանը, սակայն ժյուրին ընդունել է Ա. Տեր-Մարուքյանի քանդակը»[1]: Այսքանը միայն:

Մեծամեծ աղետներ, թշնամիներ է տեսել, ունեցել նաեւ փոքրամարմին Բելգիան, բայց եւ նույնչափ եւ՛ առավել ու ավելին՝ Հայոց երկիրը, եւ, այնուհանդերձ…, այլ է եղել Ռուզանն ու նրա գաղափարական տիրադը, մանավանդ բեմի վրա. այսօր էլ մենք ամբողջ ազգով ենք ունկնդիր, ականջալուր ու… առինքնված, ոգեղենված «Ռուզան»-ի մեծ խորհրդով, եւ Շուշիում մշտական դարձած արվեստի մուրացանական ամենամյա օրերին, երբ Ռուզա՛նը..., հատկապես նաեւ Ռուզա՛նը՝ հզորաշուրթ ու… հրաշքով, գեղեցկաշուրթ ոգեկոչել, ոգեկոչում է ապրողներիս, ու… նրա երթը, հիրավի, շարունակվել ու կշարունակվի դարերում, յուր անզուգական երկրի՝ Արցախական ջրապինդ ու հերոսական աշխարհի պես…

Հիրավի՛, ո՛չ Լենոն եւ ուրիշներ, ո՛չ Ա. Տերտերյանն եւ այլք, ելնելով իրենց առաջացրած սկզբունքներից, ճիշտ չեն գնահատել«Ռուզանը» թե՛ ժանրի ու սեռի, թե՛ պատկանող, հարող գրական ուղղության, թե՛ ժամանակաշրջանի գրաքննական չափանիշների մեկնման տեսանկյունից…

Այս ամենից ելնելով՝ փաստում ենք, որ «Ռուզան» դրաման կարոտ է վերագնահատման՝ գրական արժեքների չափորոշման՝ արդի ժամանակաշրջանին համահունչ, ինչին մղվել ենք ուսումնասիրության մեջ…

---

[1] Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան(Հայ մշակույթի գործիչներ), Երեք հատորով,,հ. Գ, Գիրք 1 (ՄԵԼ-Ռ), Ե., «Սովետական գրող» հր., 1990:

Գրականություն

1. *Խաչատրյան Հ.*, Երվանդ Սակավակյաց, Ե., «Սովետական գրող» հր., 1989:
2. *Метерлинг М.*,Монна Ванна , 1902.
3. *Մուրացան*, ԵԺ, 7 h-ով , h.6, Ե., ՀայՊետՀրատ, 1963:
4. *Մուրացան*, Նամակ խմբագրության,«Ռուզանի»քննադատության առիթով, ԵԺ, 5h-ով , h.5 ,Ե. ՀայՊետհրատ,1954:
5 *Մուրացան* , «Ռուզանը» եւ նրա քննադատները, ԵԺ, 5h-ով , h.5 ,Ե. ՀայՊետհրատ, 1954:
6. «Մուրճ» , 1901, թիվ 3, էջ 198:
7. *Ստեփանյան Գ.,* Կենսագրական բառարան(Հայ մշակույթի գործիչներ), Երեք հատորով,,h. Գ, Գիրք 1 (ՄԵԼ-Ռ), Ե., «Սովետական գրող» հր., 1990:
8. *Տերտերյան Ա.,* Մուրացանը որպես մտածող եւ գեղագետ, «Ծողեր», Տարեգիրք, Ս. Պետերբուրգ, 1913 , տե՛ս Քարոզելով միաբանություն եւ մարդասիրություն, Արցախի գրողների միություն, Ստ., «Վաչագան Բարեպաշտ» հր., 2009 :
9. «Փորձ», 1880, թիվ 5, էջ 131:

Критическое осмысление драмы Мурацана «Рузан»
и вопрос ее переоценивания

З. Балаян

Резюме

Оценка культурных ценностей общечеловеческих духовных переживаний не всегда проводилась с позиций верной критики. Одним из таких явлений является творчество Мурацана, в частности, историческая драма «Рузан или барышня Патриотка».

Без авторского обьявления, при участии П. Адамяна, Сирануша, Г. Тер-Давтяна драма была впервые представлена в Тбилиси 4 февраля 1882 года и принесла большую славу и неожиданное воодушевление как неизвестному автору, так и аудитории. Драма «Рузан» была высоко оценена со стороны армянской и зарубежной аудитории и литератураведов М. Берберяна, В. Партизуни, В. Терзибашяна, Н. Мамиконяна и С. Сариняна. Драма вызвала также острые комментарии со стороны Лео, Ширванзаде, А. Тертеряна, основанные на партийных позициях, выбранных принципах, личных предпочтениях и т.д.

Придавая важность исключительной роли драмы в сценическом искусстве и в армянской литературе, мы попытались переоценить драму «Рузан», исследовать ее новым методом как литературное явление, имеющее современное звучание, одновременно, подчеркивая ее научный характер.

Critical Thinking of Muratsan's Drama «Ruzan»
and the Question of its Overvaluation

Z. Balayan

Summary

Assessment of cultural values of human experiences are not always carried out in terms of true criticism. One of these phenomena is Muratsan's work, in particular the historical drama «Ruzan or Patriot».

It was first introduced in Tbilisi on February 4, 1882 with the participation of P. Adamian, Siranush, G. Ter-Davtyan, bringing great fame and sudden inspiration to the unknown author and audience. «Ruzan» has been highly appreciated by the Armenian and foreign audiences, and such literary critics as M. Berberian, V. Partizuni, V.Terzibashyan, H.Mamikonyan and S. Sarinyan. There were also sharp comments from Leo, Shirvanzade, A. Terteryan, based on their party positions, principles, methods, personal preferences, etc.

Highlighting the exceptional role of «Ruzan» in theatre and in Armenian literature, we tried to overestimate it, to restudy it as a literary phenomenon with a contemporary sound, at the same time emphasizing its scientific character.

ՀՏԴ *Գրականագիտություն*

ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱԶՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ Պ.ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ. «ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ», «ԵՌԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ»

Ն. Հովհաննիսյան

Ժամանակին, նկատի առնելով Կոմիտասի կերպարի ստեղծագործական ներքին առանձնահատկություններն «Անլռելի զանգակատուն» պոեմում, Գ. Մահարին գրում էր. «Բանաստեղծը կտրել է Կոմիտասը Կոմիտասից և այն դարձրել խորհուրդ ու խորհրդանշան, մնալով սակայն միշտ Կոմիտասի հետ»[1]: Լրացնելով Մահարուն՝ գեղարվեստական նույն արժանիքն է ընդգծում Դ. Գասպարյանը. «Կոմիտասի կերպարը Սևակի ահագնացող հոգևոր պոռթկման ոչ միայն նպատակ է, այլև միջոց՝ մեկնելու, ինչպես ինքն է ասում, հայոց չհասկացված բախտի քմայքը »:[2]

Մտահղանալով «Անլռելի զանգակատուն» պոեմը՝ 1915թ. մեծ նահատակի՝ Կոմիտասի ողբերգական կերպար-խորհրդանիշով Սևակը բարձրաձայնում էր ցեղասպանության և բռնագրավված հայրենիքի պահանջատիրությունը: «Անլռելի զանգակատուն» խորհրդանիշ-պատկերը ոչ միայն հայ երգի հանճարի հարատևության, այլև ցեղասպանության ազգային հիշողության և արդար պահանջատիրության եռաձայնն է՝ Կոմիտաս- ցեղասպանություն- բռնազավթված հայրենիք եռամիասնությամբ: «Իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ «Զանգակատունը»: Գրել եմ զանազան ձևերով՝ իբրև վեպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրություն, իբրև հոդվածների շարք, իբրև ողբերգություն կամ դրամա »[3]:

Գրապատմական նշանակության առումով կարևոր է պոեմի ստեղծման ժամանակաշրջանը՝ 1957-1958թ.: Սևակը վերասկզբնավորում և վերաընթացքավորում էր գաղափարագեղարվեստական այն ծրագիրը, որ ծնունդ էր առել 1920-ական թթ. գրաքաղաքական պայմաններում և ողբերգաբար ընդհատվել 1937-ով: Գեղարվեստի մտքի պատմության մեջ Սևակն առաջին էր, որ «ազգասպանություն » եզրույթով իրավաքաղաքական բնորոշում տվեց 1915-ի ցեղասպանությանը. «Առաջին դեպքը ոչ կոտորածի,//առաջին դեպքը… ազգասպանությա~ն» :

Կոմիտասի հոգևոր կերպարն ուղեկցել է Սևակին ամբողջ կյանքում. «Իմ ողջ կյանքում,- ինքնակենսագրականում գրել է բանաստեղծը,- ես տառապել եմ կոմիտասասիրությունից»: Մոսկվայում, նյարդայնության ախտորոշումով հիվանդանոցում պառկած, բանաստեղծը խնդրել է բերել Կոմիտասի դիմանկարը. ժամերով նայում էր Կոմիտասի դիմապատկերին: Ստեղծել էր Կոմիտասի ձայնապնակների մի ամբողջ շարք: Ինչպես Չարենցի, Սևակի

[1] Գ. Մահարի, «Ամենից կրտսերը», «Սովետական գրականություն», 1961, թիվ 9, էջ 149:
[2] Դ. Գասպարյան, «Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը», Ե., 2001, էջ 219:
[3] Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1974, էջ 391:

կոմիտասասիրությունը միաժամանակ հանճարի հոգևոր դրամայի ու մտագարության հոգեբանական ուժեղ վերապրումի դրսևորում էր: «Անլռելի զանգակատուն» պոեմում «Դե, ե~կ, Վարդապետ,// Մի խելագարվիր» տողի դարձդարձումներով Սևակն արտահայտում էր նաև իր ապրումները. այստեղ հատվում- համաձուլվում են Կոմիտասի և Սևակի տրամադրությունները ու մտասևեռումները: «Սկիզբ դրվեց Մոսկվայում, սառնամանիքային մի օր: Նոր էի վերջացրել իմ «Մարդը ափի մեջ» ժողովածուն և հարյուրավոր ծխախոտներ ծխելուց հետո դուրս էի եկել սառնամանիքի մեջ մի բաժակ գարեջուր խմելու: Եվ աղմկոտ, կեղտոտ, ցուրտ, ծխաշատ գարեջրատանը, հեռավոր Մոսկվայում, հանկարծ ռադիոյից հնչեց կոմիտասյան երգը: Ինձ համար ամեն ինչ պարզվեց մի վայրկյանում»[1]:

Սևակի վերահմաստավորմամբ՝ Կոմիտասի գործը համահավասր է Մաշտոցի գործին: Այս վերարժևորումը նաև 4-րդ և 20-րդ դարերի պատմական իրադրությունների ներքին զուգահեռի վրա գրի և երգի ոգեղեն ուժի գերագնահատումն է՝ ազգային գոյության ճակատագրական պահին: «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմում՝ գրված դարձյալ Մոսկվայում 1952-1953թթ., Մաշտոցի պատմական դերը Սևակը նշանավորում էր նաև միասնական հայրենիքի հոգևոր վերստեղծման գաղափարի արժեկշռով:

Մեր բաժան-բաժան հողերը նորից
Այդ Նա էր միայն, որ բերեց իրար
Ու միավորեց… արդեն մեր մտքու~մ:

Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ գրված «Խոսք հավաստիքի », «Մայրենի լեզու», «Հայոց լեզու» գործերում, վերամիավորելով լեզու-հայրենիք գոյաբանությունը, Սևակը գրում է. «Չկարողացան քեզ մեզնից խլել…// Ինչպես չեն կարող խլել մի դրոշ,// Որ հազարամյա դաժան մարտերում// Փողփողացել է միշտ էլ… սրտերու~մ»: Հաջորդում է Մաշտոցով, ապա նաև Կոմիտասով խորհրդանշվող կորոսյալ հայրենիքին տված երդումի խոսքը կամ «Խոսք հավաստիքին».

Եվ ընդդեմ այս բաց անարդարության
Առայժմ մենք մեր աչքերն ենք փակում,
Բայց փակում այնպես,
Ինչպես փակում են մարդիկ մատները,
Եվ ստացվում է դրանից… բռունցք…

Երդումի բարձրագույն ինքնարտահայտություն է «Հայրենիք» բանաստեղծությունը: Խոսքը վերաճում է երդումի, երդումը՝ հավատամքի. «Քեզնով երդվելիս// Ձեռքս դնում եմ իմ սրտի վրա՝// Սեղմելու նման,// Որ…հանկարծակի չպայթի դողից… »:

Համազանգերով ու դողանջներով ծավալվող «Անլռելի զանգակատուն» պոեմը կառուցված է ազգային երգարվեստի առանձնահատուկ նրբերանգներով, եղանակավորված երաժշտական կշռույթով, բառի ու հանգի

[1] Նույն տեղում:

համաչափությամբ: Բանաստեղծի խոսքն ու Կոմիտասի երգը համալրում են իրար: Պոեմի խոսքաձայնային բնույթը արդյունք է ոչ միայն Սևակի կողմից ազգային երգարվեստի հետևողական ուսումնասիրության, այլև բանաստեղծի երաժշտական ներքին օժտվածության: «Կառուցվածքը՝ ըստ կոմիտասյան երգերի, այսինքն՝ շարադրել Կոմիտասի ողջ կյանքնէ ըստ նրա համապատասխան երգերի, եթե որբ է՝ «Անտունի», եթե պանդուխտ է՝ «Կռունկ», եթե սիրո մասին է՝ «Սոնա յար»: Գործը մտահղացված էր իբրև համանվագ՝ սիմֆոնիա, կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա»:[1] Այնուհետև՝ «Սիրում էր կոմիտասյան երգը և երգում էր այնպիսի մի ներշնչանքով ու ոգևորությամբ, որ օտար մեկի կամ լսողության նշույլ իսկ չունեցողի մեջ կարող էր արյան եռք առաջացնել »:[2]

Ազգային գույների ու երանգների ներքին խտացվածությամբ, բանաստեղծական հանգերգով, ժողովրդական խոսքի զգացական լիցքերով, ինչպես նաև ընդգրկման տարողությամբ ու բազմաձայնությամբ պոեմը հասել է բանարվեստի մի նոր որակի՝ համանվագայնության. «Արդի բանաստեղծության հիմնական տիպարը, երաժշտական տերմինով ասած, ես համարում եմ ոչ թե երգային մտածողությունը, այլ համանվագայինը (սիմֆոնիզմը),- գրում է Սևակը: -Ոչ թե մենաձայնությունը, այլ բազմաձայնությունը: Եվ սիմֆոնիզմ ու բազմաձայնություն ասելիս ես չեմ ենթադրում անպատճառ սիմֆոնիա (պոեմ) կամ երգչախումբ (դրամատիկական պոեմ): Սիմֆոնիզմ և բազմաձայնություն նույնիսկ 10-15 տողանոց բանաստեղծության մեջ: Ոչ թե մի երգ, որի եղանակը վերջանում է առաջին իսկ տնով, այլ մի երգ, որի յուրաքանչյուր հաջորդ տունը նախորդ տան եղանակը փոփոխակում ու զարգացնում է բոլորովին այլ ձևերով»:[3]

Սևակը ձգտում էր գեղարվեստական այնպիսի ձևի, որ անհատական կերպարով ամբողջացներ ժողովրդի գոյաբանության համապատկերը, ցեղասպանության և բռնազավթված հայրենիքի ողբերգությունը: Գեղարվեստական ձևի ներքին որոնումների ոգեղեն ճանապարհին տոհմիկ հայ երգը՝ իր գողթան, վիպական, հոգևոր ու ժողովրդական առանձնահատկություններով, դառնում է արտահայտման գեղագիտական կերպ, Կոմիտասի ճակատագիրը՝ գեղագիտական միջոց: Կոմիտասի կերպարի ոգեղենացումով Սևակը հանճարի կյանքն ու ճակատագիրը համաձուլում է ժողովրդի պատմությանն ու ճակատագրին: Բնորոշ է պոեմի սկիզբը. «Իր ժողովրդի զավակն իսկական // Ժողովրդի պես ինքն էլ որբ մնաց…» : Կոմիտասի կենսապատկերի մեջ աստիճանաբար բացվում է հայաշխարհիկ կյանքը՝ ստեղծագործ առօրյայով, ավանդույթներով ու տոնախմբություններով, վերելքներով և անկումներով, ազգային անընդմեջ ողբերգություններով: Արդյունքում պոեմի համազանգերը միաժամանակյա ողողանջներով զանգահարում են Կոմիտասով խորհրդանշվող

[1] Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.5, Ե., 1974, էջ 391-392:
[2] Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Ե., 1974, էջ 161:
[3] Նույն տեղում, էջ 258-259:

ցեղասպանության և կորցրած հայրենիքի ցավի, տագնապի, ընդվզման և համահավաքի հարահունչ ձայնը:

«Գրել Կոմիտասի մասին,- ինքնակենսագրականում վերագնահատում է Պ. Սևակը,-հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարոսությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով ու ապագայով»:[1] Պոեմը բաղկացած է հինգ համազանգից և քառասունվեց ողողանջից: Համազանգին պոեմի վերջում հաջորդում է «Ահազնացող արձագանք»-ը: Պոեմի ներքին բովանդակությունն ընդհանրացնող գաղափարի խորհրդանիշը «Անլռելի զանգակատուն» ձայնապատկերն է: Կյանքի սկիզբն ազդարարող «Ցայգալույսի համազանգ»-ն ընդհատվում է «Եղեռնի համազանգ»-ով: Առանձնադիտելի է ողողանջների տրամաբանական կառուցվածքը ևս. առաջին ողողանջը ծնունդի «Ավետիսի ողողանջն» է, վերջին ողողանջը՝ «Թաղման և հարության»:

«Ցայգալույսի», «Արևագալի» և «Միջօրեի » համազանգերում նախ՝ ողողանջում է կյանքի օրհնաբանությունը՝ արևի ու լույսի խորհրդանիշերով, ապա՝ ողողանջի թրթռուն ձայները հետզհետե վերածվում են մեռեալ ահազանգերի: «Ավետիսի», «Որբության», «Ցնծության», «Հուսո», «Ներման», «Արթնության», «Հսկման», «Մեղսական», «Հայտնության» և «Օծման» ողողանջներում բեկբեկվում են Կոմիտասի կյանքի վիպական ձայնապատկերները: Կոմիտասի ծնունդը կապվում է լույսի և արևագալի պատկերների հետ: Այնուհետև՝ Կոմիտասի որբությունը, Էջմիածնում՝ հայոց վեհափառի մոտ, երգի քննությունը, ուսման տարիներն ու հոգեկերտվածքի ձևավորումը՝ աստիճանաբար միախառնելով նրան ժողովրդի պատմության ընթացքին: «Արևագալի» համազանգում, որ ողողանջում է «Ամառնօրյա», «Աշնանաշունչ», «Ահազնացող», «Բնաշխարհիկ», «Ցավի և բողոքի», «Պանդխտական», «Կոտորածի», «Զարթոնքի և կենսատման», «Զարմանքի», «Հերոսական» ձայնապատկերներով, Կոմիտասի կերպարի ներքին զարգացումը վիպական կերպաձևից փոփոխակվում է ոգեղեն վիճակի:

Պոեմի առանցքային խնդիրներից է Կոմիտասի՝ ազգային կյանքում պատմական առաքելության բացահայտումը, որին միտված են «Արևագալի», «Միջօրեի» և «Ծավալվող» համազանգերը: Նախ և առաջ Կոմիտասը մաքրագործում, վերածնում, կատարելագործում է ժողովրդի պես ձուլման, աղավաղման ենթարկվող տոհմիկ հայ երգը. «Ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում,- գտնում է Սևակը,- այլև նրանք են ժողովուրդ վերածնում»:[2] Ազգային երգի ինքնության վերածնությամբ Կոմիտասը բռնաձուլման և համընդհանրացման դեմ դնում է ազգային դիմանկարի պահպանման զորությունն ու ուժը: «Նայելով ահա այս բարձունքից,- գրում է Սևակը,-

[1] Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, էջ 163:
[2] Պ. Սևակ, հ. 5, էջ 131:

Կոմիտասին չի կարելի համեմատել իր մեծ ժամանակակիցներից և ոչ մեկի հետ: Ըստ իր գործի և դրա հետևանքների՝ նրան հայր կարող էր դառնալ միմիայն Մաշտոցը»:[1] Ազգային հոգեկերպից ու մտածելակերպից զատ՝ հայ երգը, շնորհիվ Կոմիտասի, վերագտնում է ազգային գոյակերպի առաջնային դերը՝ կենդանի պահելով նախնական ջիղն ու ոգին: Միաժամանակ Կոմիտասը հավաքագրում, եղանակավորում, կորուստից փրկում է բնաշխարհիկ հայ երգի նշխարները՝ ազգային երգարվեստում պատմական նույն դերն ու նշանակությունն ունենալով, ինչ Խորենացին՝ առասպելաբանության մեջ: Պոլսում Կոմիտասը ստեղծում է երեքհարյուր հոգանոց «Գուսան» երգչախումբը՝ հավաքագրելով հայոց գավառների շնորհալի ձայներին, հանդես է գալիս դասախոսություններով, հղանում «Վարդան» և «Անուշ» օպերաները՝ իր գործունեությամբ անգնահատելի ավանդ թողնելով հայ երգարվեստի զարգացման ու տարածման գործում:

Կոմիտասի դիմապատկերը քանդակելիս Սևակն ընդգծում է «Վարդան» օպերայի հղացման գաղափարը՝ որպես Կոմիտասի ներհայեցողության մի եզր՝ մատնանշելով հայաշխարհիկ երգի ոգեղեն ազդեցությունն ազգային դիմադրողականության բարձրացման գործում: Ազգային գոյության պահպանման համար այլևս անկարելի էր չմաքառել պետականորեն բռնի պարտադրվող օտար մշակույթների դեմ, պետք էր վերականգնել հայրենիքի ճեղքված հատվածների միասնությունը, ազգովին միասնաբար դիմադարձել ձուլման սպառնալիքին: Կոմիտասյան երգը դարձավ ազգապահպան մի նոր զենք կամ դիմադրության մի նոր զորություն, ինչն էլ բանաստեղծին իրավունք է վերապահել Կոմիտասի մեծությունը բաղդատելու Մաշտոցի մեծության հետ. «Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց, // Գիրն ու տառն ես Հայոց երգի… »:

Միաժամանակ հանձին Կոմիտասի, հայ երգը՝ որպես ազգային կերպարանքի ոգեղեն մի ձև, արժանապատիվ ներկայությամբ նվաճում է միջազգային ճանաչում՝ եվրոպական մտավոր ուշադրությունը բևեռելով Հայաստանի վրա: Զեկուցումների, դասախոսությունների, համերգների համար Կոմիտասը հրավիրվում է Փարիզ, Բեռլին, Վիեննա, Ժնև, Լոզան: Եվրոպական դիվանագիտության քառուղիներում չարչրկվող Հայկական հարցին զուգահեռ՝ Կոմիտասի միջոցով հայ երգն ու տաղը ժողովրդի սերն ու ցավն են համասփռում Արևմուտքի երկրներում: Բանաստեղծը Կոմիտասին պատմականորեն ներկայացնում է որպես աշխարհում հայության լինելության հանճարեղ ապացույց:

Պոեմի հիմնական գաղափարը խտացված է «Եղեռնի համազանգ»-ում, որի ղողանջներն ազգային ողբերգության ժողովրդական ողբերգեր են: Պատկերային համակարգի ենթախորքերում առկա հուզական լիցքը գնալով շիկանում է: Պոեմի այս մասում միակ և եզակի անգամ մահվան աքսորի

[1] Նույն տեղում:

անապատներով ձգվող ժողովրդի ուժահատ, տանջալլուկ շարքերում տարածվում է Կոմիտասի աստվածեղեն ձայնը. «Յաղագըս հարց, եղբարց մերոց, //Որք են տարեալ ի գերութիւն, // -Տէ՞ր, ողորմեա՛…», որին հետևում է բանաստեղծի արձագանքը. «Իսկ Հայրերը արդեն չկա՞ն, // Եղբայրներին թուր ու ձգան // Վերջ են տվել սար ու ձորում…»:

«Եղեռնի համազանգի» սկիզբը «Ընդհատված» ողողանջն է, որին ձայնակցում են «Տագնապի», «Նախճիրի», «Եղեռնական», «Աքսորի», «Մթագնումի», «Ցնորման» և «Անանց սուգի» ողողանջները: Պատմական դեպքերի և իրադրությունների ճշգրիտ ընթացքին զուգակցվում են ժողովրդի գոյաբանության խոհափիլիսոփայությունն ու զգացական ուժեղ բռնկումները:

Հայկական հարցից Թուրքիան ազատվեց
Հայաստան երկրում հայ չթողնելու մի ահեղ ելքով…
Մի ո՞ղջ ժողովուրդ մեկ-մեկ թրատել,
Մի ամբո՞ղջ անտառ արմատից հատել…

Սևակը պոեզիա է բերում ցեղասպանության հաստատման հիմնախնդիրը՝ «Եվ հիմա՛, // Հիմա՞, // Երբ կոտորա՛ծ չէր, երբ ջա՛րդ չէր, // Այլ մա՞հ՝ // Մահ համատարած և համազգային… «ընդսմին ներկայացնելով ազգային տեսակի խնդիրը. «Չի ներվում և այն, //Ինչը կոչվում է առավելություն…»: Հետևելով իր մեծ նախորդին՝ Ե. Չարենցին, բանաստեղծը վերապատկերում է ցեղասպանության տեսարանները՝ ժողովրդական ողբերգի լիցքով ու հանգով. «Ձյուն մաղեց մեր բաց գլխին,// Ձյուն մաղեց կրակի պես,// _Գարուն ա, ձյուն ա արել…»: Կոտորածի պատկերներին հաջորդում են աքսորի ճանապարհի մահապատկերները.

Լլկանքի մեջ նահատակված անմեղ կույսեր
Ու լույս հարսեր
Ջանում էին լանջերն իրենց ծածկել հողով անապատի:
Դեղին հողով,
Ոչ թե քողով,
Որ և չկար,
Ինչպես չկար ո՛չ սրբություն,
Ո՛չ էլ աստված…

Աքսորի ողողանջում ծավալվում են Կոմիտասին խելագարության հասցնող պատկերները, որոնք, մտապատկերների վերածվելով, հոգեբուժարանում քսան տարի պիտի շաղափեին նրա վիրավոր միտքը՝ ամեն օր վերստին ցնորելով նրան: Պատկերի ու մտապատկերի իրական կապի մասին է, որ Սևակը գրում է. «Եվ պատկերներից այս ահազարհուր, բայց և իրական, // Նախ ցնորվեցին աչքե՛րը նրա // Եվ ապա մի՛տքը, մի՞տքը տիրական…»: Աքսորի ողողանջի վերջին հնչյունները Կոմիտասի հոգևոր ցավի ահավոր ողբերգությունն են. «Ուր ո՛չ մահ կար, // Ո՛չ կյանքի շողք»: Հաջորդող «Մթագնումի» ողողանջը բեկբեկվում է ամբողջովին Կոմիտասի հոգևոր ցավի հնչյուններով՝ տարածելով անանց մրմուռի մորմոքները: «Դե

եկ, Վարդապե՞տ, // Եկ ու մի ցնդիր» կրկնատողերով բանաստեղծն ասես դառնում է հոգեգարության դատապարտված հանճարի, միաժամանակ բնաջնջված ժողովրդի և բռնագավթված հայրենիքի ներքին ձայնը: Խոսքի զգացական լիցքը փոխակերպվում է հրապարակախոսական կրքի.

-Համայն աշխարհում
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի,-
Ո՛վ էլ որ չասի՝
Աստվածաշունչը իր մագաղաթե դեմքը դեմ կանի
-Ու կասի՝ կարդա՛…

Ազգային մեկդարյա միտքը խոշտանգող հոգեկան ցավը վերանորոգող հարապատկեր է Արարատ լեռը՝ որպես ցեղասպանության հետևանքով բռնագավթված հայրենիքի խորհրդանիշ: «Մեզ լավ ծանոթ է ծաղրուծանակը այս հոգեխարտիչ»,- գրում է բանաստեղծը՝ վերհիշելով հայոց պատմության ողբերգական դրվագներից մեկը՝ մորթազերծված Վասակ Մամիկոնյանի և Արշակ թագավորի հայտնի պատմությունը. «Արարատն - այսպե՛ս-դրել են ահա Երևանի դեմ…»: Կորուստի ցավն ու ցասումը հանգեցնում են աստվածամերժության աշխարհայացքային գաղափարի. «Աստծուն ժխտում է Արարա՞տն անգամ»: Քրիստոսամերժ գաղափարի մեկ այլ դրսևորում առկա է «Եվ այր մի՝ Մաշտոց» պոեմում:

Զորավոր էին աստվածները հին,
Այնքան զորավոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում,
Իսկ պատմության մեջ կան ժամանակներ,
Երբ ով չի՛ ստում՝ պիտի կործանվի՞…

«Ցնորման» ողողանջում խոսքը դարձյալ շարունակվում է ժողովրդական ողբի հանգերգով և մարում «Անանց սուգի» ողողանջով. «Նա չհասցրրեց իր օպերայում // Թշվառ Անուշին խելացընորել, //Եվ ի՞նքը, ի՞նքը ցնորվեց…»: Խոսքի երաժշտական ռիթմը գնալով արագանում է, որպեսզի աստիճանաբար մարելով՝ հասնի վերջերգին.

Փարի՞զ, Փարի՞զ…
Հիմա դարձյա՛լ,
Վերստին է նա քեզ գալիս՝
Ո՛չ երգելու, նվագելու…
Գալիս է նա, որ մի՞տք մուրա…

«Զանգակատունը» ողողանջում է հոգևոր եղանակի մի այնպիսի կարգով, որ մարող հնչյունները վերածնվում են ահագնացող արձագանքներով, իսկ «Ահագնացող արձագանք» -ի ողողանջները ազգային վերածնության ու նոր սկզբի զանգահարությունն են: Ազգային վերազարթոնքի սկիզբը համահավաքն է, որ գաղափարանշվում է Կոմիտասի վերադարձով և Մասիսների հսկումի տակ հարության խորհուրդով.

Ու վերադարձավ,
Որ էլ չգնա՞,

Որ մրսած հոգին նորից տաքանա
Ժողովրդական սիրո տաք օդով…
Հայացքի մուժը այնտեղ չքանա,
Աչքերը փայլեն իրենց հին ցոլքով
Ու նորից ցրեն
Ու փռեն
Չորս կողմ
Մարդեղացումը աստվածայնության…

Թաղման և հարության դողանջի վերջին զանգերն ահեղանում են՝ արձագանքելով Կոմիտասի հարահունչ փառերգությունը. « Դու մեր կարոտ ու մեր մորմոք,// Մեր տաղի քուրմ,// Մեր խաղի մոգ,// Մեր մշտահունչ ու մշտարթուն,// Անլռելի զանգակատու՜ն…»:

«Անլռելի զանգակատուն» պոեմը, ինչպես նկատել է Ս. Աղաբաբյանը. «Բանաստեղծական տաղանդի իսկական բխվածք է, խոր ներշնչման և գրական անուրանալի վարպետության արտահայտություն, սովետահայ չափածոյի նոր նվաճումը»:[1]

«Զանգակատան» անլռելի դողանջի ձայնապատկերը շարունակվում է «Եռաձայն պատարագ» -ում: Եթե մի դեպքում զանգակատունն է դողանջում ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի ձայնը, մյուս դեպքում Սիսն ու Մասիսն են եռաձայնում՝ «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց: Գեղարվեստական պատկերը կերպափոխվում է խոհափիլիսոփայական պատկերի՝ նախանշելով պոեմի ներքին բնույթը:

Սիսն ու Մասի՞սն են դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդու՛լ:
Գողթան երգերի չափ ու կշռույթով,
բամբ բամբիռների նվագակցությամբ,
շարականների ելևէջումով պատարագատու…

Խորագրի ընտրությունն ունի իր նախապատմությունը: Ինչպես նկատում է Ա. Արիստակեսյանը. «Եռաձայն պատարագ»-ի՝ իբրև երեքմասնյա ռեքվիեմի ծնունդի ազդակը կապված է Շաֆիհաուզենի (Շվեյցարիա) տաճարի փոքրիկ զանգի պատմության և նրա վրա փորագրված անհայտ հեղինակի լատինական ասույթի հետ՝ «Կոչեմ ապրողաց, ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր», մի ասույթ, որ բնաբան է դարձել Շիլլերի «Զանգակի երգ»-ի համար» :[2]

«Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է կամ իր ժողովրդի «դատական գործը»[3],- գրում էր Սևակը՝ գաղափարանշելով նաև Հայ Դատի իր պահանջատիրությունը: «Եռաձայն պատարագ»-ում հիշողության մեջ անդրջրհեղեղի պատմական զուգադրություններով բեկվող ցեղասպանության պատկեր-ապրումը այսպիսի դիմադարձ արձագանքի է հանգում. «Եվ ինչո՞ւ: // Արդյոք ո՞չ այն պատճառով, // որ աստվածները

[1] Ս. Աղաբաբյան, Ոգևորություն ու վարպետություն, »Գրական թերթ«, 1959, 25 դեկտեմբերի:
[2] Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, էջ 375:
[3] Պարույր Սևակ, հ. 5, Ե., 1974, էջ 299:

տանե՞լ չեն կարող իրենց նմանին»: Բնույթով պոեմը պատարագ-ռեքվիեմ է. Սևակն այն գրել է ցեղասպանության 50-րդ տարելիցին՝ 1965-ին: Պատարագի պատկերի գաղափարը, ըստ երևույթին, կապված է ապրիլի 24-ի համազգային սգո երթի հետ, որ սկիզբ է առել հենց պոեմի գրման տարեթվից: Պատարագի հոգևոր արարողության երաժշտական ներքին եղանակով հնչում է բանաստեղծի եռաձայնի առաջին դողանջը.

-Ողբամ մեռելո՛ց,
անթա՛ղ մեռելոց:
Մե՛կ չէին նրանք
և ո՛չ էլ երկու:
Նրանք բյո՞ւրք-բյուրո՛ց,
նրանք, ա՛զգ-ազի՞նք…
Ամեռա՞ն նրանք, այլ սպանվեցին՝
լեգեոն առ լեգեոն,
փաղանգ առ փաղանգ…

Ցեղասպանության ողբերգության և ազգային ինքնապաշտպան դիմադրությունների հիշողության խոհ - ապրումները լրացնում են իրար ինչպես «Անլռելի զանգակատան» մեջ, այնպես էլ «Եռաձայն պատարագ» -ում: Կոտորածների ողբերգին կամ ողբերգական խոհին նման դեպքերում հաջորդում են փառերգությունը կամ ներքին ակնածանքի ինքնարտահայտումը.

Կար եռամատնյա մի խաչակնքում
և եռամասնյա մի մեծ նպատակ…
թրի-սրի դեմ,
հրի դեմ, ջրի,
հրանոթի դեմ ու գնդացրի,
երեկվա նման ու վաղվա նման
մարտնչում էին ակռա-ատամով…
Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա,
Գարահիսարի կիսավեր բերդում…

Պոեմում առանձնադիտելի է «երեք»-ի գաղափարանշումը Սևակի կողմից՝ «եռաձայն», «եռամատնյա», «եռամասնյա», որոնց մեջ անդրադարձվում է աստվածաշնչյան Սուրբ երրորդության խորհուրդը: Հավատարմության խոստովանությունն ինքն իր առջև, որ սոսկ անհատական հավատարմություն չէ, այլ համազգային ու համաժողովրդական, խոհափիլիսոփայական այսպիսի դրսևորում է ձեռք բերում.

Մեր…հայրենի՞քը մեզնից դատարկվեց:
Բայց…ո՛չ մի վայրկյան, ո՛չ մի ակնթարթ,
մենք չե՞նք դատարկվել մեր հայրենիքից:
Մե՛նք սպանվեցինք մեր հայրենիքում,
բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՞ց…

Պատմական հայրենիքից ժողովրդի բռնագաղթին զուգահեռ բանաստեղծն աղաղակում է հոգու աքսորի մասին, կենդանի մարմինը լքած հայ հոգու մասին, որ ինքնաորոնումի հետքերով ձգտել է կորուսյալ հայրենիք և գամվել նրան: Հոգու և մարմնի այսպիսի աքսորը կրկնակի կյանքի արժեկշիռ ունի, «քանզի ամենազորեղ բանն աշխարհում հիշողությունն է»,- գրում է բանաստեղծը՝ ճակատամարտ տալով պատմական անարդարության դեմ: Սևակի անհաշտությունը վերաճում է ազգային ընթացք գաղափարանշող սկզբունքի.

Հայրենիքն այն է, որ գտնված է
ի սկզբանե, ի ծնե և միշտ,
ուրեմն նաև նա չի էլ կորչում…
Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում,
այլ ընդամենը հափշտակվում է,
ինչպես որ ձեռքի ափը չի կորչում,
երբ նա փակվում է,
բայց և չի կարող միշտ մնալ փակված,
ինչպես հայրենիքն՝ միշտ հափշտակված…

Ժողովրդի պատմության վկայի բարձունքից բանաստեղծի պատգամը նախ՝ ազգահավաքն է, ապա՝ հայրենահավաքը. «Դու այսուհետև ժողովվես պիտի //նախ՝ ինքդ քո մեջ,// և ապա՝ քո շուրջ»: Ազգային գոյափիլիսոփայության ընդհանրական այս խոհը բարձրանում է կարմիր ջարդին հաջորդած սպիտակ սպանդի շարունակվող վտանգին դեմ հանդիման.

Եվ հիմա արդեն նա գանգ չի հատում,
այլ գրավում է,
չի կտրում ձեռքեր, այլ վարձում ընդմիշտ,
չի առևանգում, այլ հմայում է,
չի հեղում արյուն, այլ ծախ է առնում
և, միացնելով երակ երակի,
իր ամենակուլ արյանն է խառնում…

«Եռաձայն պատարագ» պոեմը, ինչպես ենթադրում է հոգևոր պատարագի կարգը, փակվում է հայրենիքի համընդհանուր պաշտամունքի խոստովանությամբ և խոստովանության մեջ առկա օրհնաբանությամբ.

Թերևս աշխարհում ո՛չ մի հայրենիք,
մե՞ծ ու վիթխարի, զորե՞ղ ու կարող ո՛չ մի հայրենիք
յուրայինների սրտում ու հոգում չի հարուցանում
այնքա՞ն սեր անանց ու կարո՞տ այնքան,
որքան այս մի բուռ-բռում սեղմըված երկիրը Հայոց…

Սևակի հայրենասիրական պոեզիան իր ներքին առանձնահատկություններով և գաղափարաբանական արժեկշռով գնահատելի ավանդ է ազգային բանարվեստի և, առհասարակ, ժողովրդի գոյաբանության նոր վերելքի պատմության մեջ:

Многозвучие утраченной родины в поэзии П.Севака. «Несмолкающая колокольня» и «Трехголосная литургия»

Н. Аванесян

Резюме

Статья посвящена внутренним особенностям и идеологической ценности патриотической поэзии Паруйра Севака, которая является ценным вкладом в национальное устное творчество и в новый виток развития народа в истории. В истории образной мысли, Севак был первым, кто термином «убийство нации» придал политико-правовую окраску геноциду 1915 года.

Образ «Несмолкающей колокольни» - это национальная память о геноциде и голос справедливого требования, единства: Комитас–геноцид и захваченная отчизна.

Polysounds of the Lost Homeland in P. Sevak's Poetry.
«Incessant bell tower», «Liturgy for Three»

N. Avanesyan

Summary

The article is devoted to the internal characteristics and ideological values of patriotic poetry Paruyr Sevak, which is a valuable contribution to the national story-telling and a new round of growth in the history of the people. In the history of imaginative thought, Sevak the first has given the legal and political coloration of genocide of 1915 by the term «murder of the nation». The image of «The incessant bell» is the national commemoration of the genocide and the voice of the just demand, of the unity: Komitas, genocide and captured homeland.

Գրականություն

1. *Մահարի Գ.,* Ամենից կրտսերը, «Սովետական գրականություն», 1961, թիվ9:
2. *Գասպարյան Դ.,* Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2001:
3. *Պարույր Սևակ*, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.5, Ե., 1974:
4. *Արիստակեսյան Ա.,* Պարույր Սևակ, Ե., 1974:
5. *Աղաբաբյան Ս.*, Ոգևորություն ու վարպետություն, «Գրական թերթ», 1959, 25 դեկտեմբերի:

ՀՏԴ *Գրականագիտություն*

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԻՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Լալայան

Սերն է, արդյո՞ք, առանցքն աշխարհի, թե աշխարհն ինքն է առանցքը սիրո,-

փիլիսոփայական այս հարցադրումն է ընկած տաղանդավոր գրող Վարդան Հակոբյանի սիրերգության հիքում:

Վ. Հակոբյանը պոետ է տիեզերազգացողությամբ: Նրա բանաստեղծությունները հասուն ոգու մենախոսություններ են, աղերսներ՝ ուղղված Աստծուն, ուստի սերը համարում է «Աստծո շնչից պոկված վարդ».

Ես քեզ սիրում եմ միայն Աստծով,
Եվ Աստված պիտի քեզ դարձի բերի,
Ես ապավեն եմ ընտրել Աստծուն,
Եվ Աստված պիտի իմ կյանքը ների:[1]

Բանաստեղծը ենթագիտակցորեն կլանում է երբեմն չնչին թվացող խոսքն ու հայացքը ու հյուսում «կարոտների լռության ասք», «հավիտենական մոլորված երազների», «սիրո թևերով արևի գիրկը թռչող աշխարհի առասպելների» պատումը: Խոհափիլիսոփայական են բանաստեղծի սիրո ինքնաարտահայտման դրսևորումները: Սերը համեմատելով բիբլիական ծաղկի հետ՝ քնարական հերոսը ճամփա է ընկնում դեպի անհայտություն, քանզի այն հասարակ ծաղիկ չէ, այն մեր ազգի ցավն է հնամյա, ցավը նախնադարյան և՝

Այդ ծաղկի բաժակում
վայրի հավքերի կտուցից երգ է կաթել…
Ու շողշողում է չհայտնաբերված
ադամանդի պես…[2]

Բանաստեղծի պոեզիայում սերը մերթ մեղմահոս ու ոգեղեն է, մերթ՝ տարերային, իրարից այնքան հեռու են աղջիկն ու երազանքը, ենթագիտակցության մեջ հոգու բարձրագույն վիճակն է՝ աստվածայինը, իրականության մեջ «հեռացող կարոտի ձայնն» է փշրվում. «Իմ սրտի մեջ մի ծաղիկ քո անունն է միշտ տալիս: Իսկ սերը… չկա».

Ես բյուր-բյուրանուն ծաղիկների մեջ
ո՞նց գտնեմ հիմա
ծաղիկն այն միակ,
որն ինձ սպասող ծաղիկը լինի:
Կա ծաղիկ,
Կա փուշ,

[1] Վ. Հակոբյան, «Անդրադարձի տեսիլներ », Հայ., 2002թ., էջ 130
[2] Վ. Հակոբյան, «Վաղվա աչքերով», Եր., 1987թ., էջ 104

Ցավ կա ուրեմն, ուրեմն՝ սեր կա,
ապրում եմ ու կամ:[1]

Խոստովանում է. «Երբ գրիչը ձեռքս եմ վերցնում, մտքովս չի անցնում, թե աշխարհում ասված բառ կա, թվում է, թե Ադամը ես եմ և փորձում եմ օգնել Աստծուն, որ իմ կողմից ստեղծվող Եվան լինի այնպիսին, ինչպիսին մինչև հիմա չի եղել»: Սիրո հմայքը բանաստեղծը տեսնում է անհասանելիության, գնալ-չհասնելու, փնտրել-չգտնելու մեջ՝ «հոգնել եմ այնտեղից, ուր միշտ հասնում են».[2]

Եթե գտնեի, էլ չէի փնտրի,
Իսկ ես սիրում եմ
քեզ
և
փնտրելը…[3]

Հույզերի անմիջականությամբ և բնականությամբ շաղախված թրթիռներ են նրա տողերը: «Խենթ օրերի կարոտանքը» էջ առ էջ հասունանում ու փոխարկվում է սիրո վեհության՝ «աստղոտ, մեղսոտ, գեղեցիկ»: Ունայնության մեջ տառապող նրա հոգում փշրված կարոտներ են, հայացքում՝ լռած հավերժությունը: Գրողը չի հանդուրժում «բառավորված սերը», քանզի խելամիտ լռությամբ ասվում է շատ բան: Սիրո մասին խոսելիս սերը փախչում է, որովհետև զգացմունք է այն, ոչ թե ճյուղ, լուսնի շողը չի բռնվում, թեպետ վարսերիդ մեջ ու կրծքիդ վրա ծաղկում է ճյուղի պես.

Ես քեզ ասելու խոսքեր չեմ գտնում,
Եվ իմ աչքերը աստղեր են քաղում,
Եվ հավքի թև է դառնում հայացքդ,
Եվ խաղաղվում է օրը վայրկյանում,
Եվ չեմ հասկանում անհասկանալին:[4]

Բանաստեղծը միտքը չի զոհում հանգին: Կարևորելով բառերի խորհուրդը՝ նշում է, որ դրանք միշտ կանաչ են լինում ու թոշնում են միայն այն ժամանակ, երբ իրենց տեղը չեն դրվում.

Դրա համար էլ գրիչ առնելիս,
Ձեռքիս տեղ ասես սիրտս է դողում:[5]

Ինչպես գրականագետ Ս. Խանյանն է նշում՝ Վարդան Հակոբյանը կոնկրետ պահերի ու տրամադրությունների արդյունք հանդիսացող երգերի մեջ բացահայտում է կենսական կարևոր գաղափարներ. «Սիրո և բնության հորիզոնները կարոտներ են ծնում և խշշում է կենաց ծառը: Բանաստեղծը որոնում և գտնում է այդ պատկեր-խորհրդանիշները, որոնցով սիրո երգը

[1] Նույն տեղում , էջ 105
[2] Վ. Հակոբյան, «Մենարան», Եր., 1996 թ., էջ 3
[3] Վ. Հակոբյան, «Թևերի հեռուն», Եր., 2003թ., էջ 84
[4] Վ. Հակոբյան, «Անդրադարձի տեսիլներ », Հայ., 2002թ., էջ 96
[5] Վ. Հակոբյան, «Արցախա ծուխ », Լույս., 1989թ. , էջ 12

ողողանջում է որպես կյանքի ձայն: Մեծ սիրո ոգին այնպես է թրթռում քնարական հերոսի կրծքի տակ, որ նա աշխարհի բոլոր գեղեցկություններում տեսնում է իր սերը: Երգից երգ ծավալվելով՝ բանաստեղծը հյուսում է սիրո քաղցրության և հավերժության ինքնատիպ մի առասպել, առանց որի չկա երգ ու մեղեդի…»:[1]

Վ. Հակոբյանի պոեզիայով կարմիր թելի պես անցնում է անասելի մի թախիծ, ինչի բացատրությունը բանաստեղծը փորձում է տալ յուրովի՝ փիլիսոփայորեն. տխուր լինելը չի նշանակում ուրախ չլինել.

Իմ տխրությանը դու ծուռ մի' նայիր.
Քո դեմքին ժպիտ, ծիծաղ տեսնելու
Լույս կարոտից է այն ծնունդ առել:
Նրա մեջ լույս կա,
Պետք է թարգմանել:[2]

Ստեղծած պատկերները խոսում են գրողի տաղանդի ուժի և գեղագիտական ճաշակի մասին. միջանձնային բարդ փոխհարաբերություններում ուրվագծվում է երկնային այն էակի պատկերը, որը թևավոր ձիու վրա թռչում է դեպի անհունը՝ «վարագուրելով» քնարական հերոսի աչքերը, ու նա երանի է տալիս այն բախտավորին, որ «երես առած» ապրում է «լույս-աղջկա» աղոթքներում և գալիս մի պարզ համոզման, որ «ամենաազնիվ սերը չսիրելն է»: Երբեմն սերն ու բորբ կարոտն այնքան են ռոմանտիկորեն երանգավորվում ու «մրվում» բանաստեղծի «հարսնամոմված» բառերին՝ հորդելով «առու-առու», «գետակ-գետակ», իրականն ու տեսլայինը այնքան միաձուլվում, որ տողերը դառնում են իրարամերժ, հակասական: Հերոսը փորձում է սիրած էակին պաշտպանել հենց իրենից: Բանաստեղծությունները հաճախ ունենում են տրամաբանական անսպասելի ավարտ: Սերը համարելով կախվածություն՝ գրում է.

Դու այնքան լավն ես, որ չեմ ուզում
քեզ սիրել, քանզի
Սպանում են նրան, ում սիրում են:[3]

Տողերում կեղծ շեշտադրություններ չկան: Կերպարի հոգեբանական դրսևորումներն առավել պատկերավոր դարձնելու համար գրողն օգտվում է բնապատկերներից, համեմատական մեթոդով ամբողջացնում սիրած էակի նկարագիրը.

Քեզ շփոթում են ծաղկած ծառի հետ,
Որ զարդարում է օրերը ճերմակ ծաղկաթերթերով,
Քեզ շփոթում են երակներիս մեջ մոլեգնող արյան վարարումի հետ:

---

[1] Ս. Խանյան, «Հայ պոեզիայի զարգացման միտումները Արցախում», Ստեփ., 2005թ., էջ 121
[2] Վ. Հակոբյան, «Անդրադարձի տեսիլներ »,Հայ., 2002թ., էջ 10
[3] Վ. Հակոբյան, «Թևերի հեռուն », Եր., 2003թ., էջ 37

Նաև անկման հետ տրամադրության:[1]

Առաջին հայացքից հանգիստ թվացող երգի ելևէջները ալիքվում են սիրո բերկրանքով, հորդում ապրած-չապրած տարիների միջով՝ հասնելով արծաթված տարիների մաքուր, եթերային սիրուն.

Գիշերվա պես սև վարսափնջերում
մի բուռ ճերմակ կա՝
հետքը համբույրի,
որ պիտի լիներ, սակայն դեռ չկա:[2]

«Ծաղիկը, լույսը, երեխան-ամեն ինչ աշխարհում ծնվում է սիրուց.
Գարուն, աղջիկ, ծաղիկ ու սեր,
ուխտավորն եմ ձեր հավատի»:[3]

Վերլուծական եղանակի նախասիրությունը չէ մեջբերումների հաճախակի գործածությունն աշխատանքում. այն բխում է Վ. Հակոբյանի պոեզիայի յուրահատուկ և միանգամայն նոր ու պատկերավոր արտահայտությունների արծարծումներից: Անգամ բանաստեղծությունների վերնագրերն են խոսուն ու պատկերավոր («Առավոտը քեզ կրկնեցի իմ մեջ», «Մի բուռ ճերմակ», «Նատյուրմորտ՝ կարոտներով», «Ծաղիկ բիբլիական» և այլն):

Գրողը փորձում է վերծանել անվերծանելին՝ այն, ինչ մենք անվանում ենք փիլիսոփայություն, սեր, կեսագրություն, ասում այն, ինչ մենք մտածելու ենք վաղը: Ահա գրողի կյանքի առինքնող մի ընդհանրացում.

Ես սեր տվի, բայց սև առա
Թե ով եղա՝ չիմացա.
Օրս անցավ չանցնելու պես,
Ճամփաս չմիտք ու չկամ,
Ո'չ ես եղա, ո'չ ես չեղա,
Թե ով եղա՝ չիմացա:[4]

Բնությունը տաղանդավոր գրողին օժտել է բացառիկ ձիրքով և Վ. Հակոբյանը կերտել է իր անմահության լեգենդը: Սիրերգության մեջ նա տենչում է երկնային սիրո, քանզի ծնվել է ճախրանքի համար:

Ծանոթագրություն

1. *Հակոբյան Վ.*, «Անդրադարձի տեսիլներ», Հայաստան, 2002թ.
2. *Հակոբյան Վ.*, « «Թևերի հեռուն», Երևան, 2003թ.
3. *Հակոբյան Վ.*, «Անմարելի -անմեռնելի», Բաքու, 1981թ.
4. *Հակոբյան Վ.*, «Վաղվա աչքերով», Երևան, 1987թ.

[1] Վ. Հակոբյան, «Անմարելի-անմեռնելի », Բաքու, 1981թ., էջ 75

[2] Վ. Հակոբյան, «Վաղվա աչքերով», Եր., 1987, էջ 110
[3] Վ. Հակոբյան, «Անդրադարձի տեսիլներ », Հայ., 2002թ., էջ 66
[4] Վ. Հակոբյան, «Թևերի հեռուն », Եր., 2003թ., էջ 63

5. *Հակոբյան Վ.*, «Արցախա ծուխ», Լույս, 1989թ.
6. *Հակոբյան Վ.*, «Մենարան», Երևան, 1996թ.
7. *Խանյան Ս.,* «Հայ պոեզիայի զարգացման միտումները Արցախում», Ստեփանակերտ, 2005թ.

Любовная лирика Вардана Акопяна

Г.Лалаян

Резюме

В.Акопян, представляя любовь оторвавшимся от дыхания Господа лепестком розы, образно видит очарование любви в “идти –не доходить”, “искать-не находить”, самой искренней любовью считает нелюбовь. Писатель не воспринимает “высказанную” любовь, так как многое кроется в мудром молчании.

Красной нитью по всей поэзии В.Акопяна проходит грусть, объяснение которому писатель дает философское, индивидуальное: “Быть грустным - не значит не быть веселым”.

Vardan Hakobyan's Love Lyrics

G. Lalayan

Summary

V.Hakobyan representing love to break away from the breath of the God rose petal, so to see the charm of love in the «go-no income», «seek, not to find» the most sincere love finds dislike. The writer does not accept "expressed" love so much as lies in wise silence.

The common thread in all of poetry V.Hakobyan sadness passes, the explanation of which the writer gives a philosophical individual, "Being sad - does not mean to be cheerful."

ՀՏԴ 891.981 *Գրականագիտություն*

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ս. Բաղդասարյան

Թատերական լիաբուռն կյանքն ու մշտական շրջագայությունները, ողջ կյանքում սովորելն ու ստեղծագործական աշխատանքը հայտնի դերասան Վահրամ Փափազյանին ամենից առաջ զինեցին հիմանարար սկզբունքներով, որոնք առանցքային ելակետ դարձան կյանքի երևույթները, արվեստի բուն էությունը, մշակույթի անվանի գործիչների գործունեությունը, ժողովրդայնությունը, նորի ու առաջադիմականի տարերքը հասկանալու և գնահատելու համար:

Եթե գեղարվեստը ճշմարտացիորեն է ներկայացնում կյանքը, նշանակում է, որ այն գաղափարական զենք է, ուրեմն՝ժողովրդի վրա ազդելու հզոր գործոն:

Այսօր Փափազյանի գեղագիտական հայացքները մեզ համար մեծ արժեք են ներկայացնում, քանի որ նա ձգտում էր թատրոնում ռեալիզմի, առաջադեմ արվեստի, բարեկիրթ ճաշակի, իր ժողովրդի հարատևության հզոր երթի: Դրա համար, իբրև հզոր արվեստագետ, դարձել է հայ ժողովրդի, և ոչ միայն, հպարտությունն ու պարծանքը:

Ռեալիստական մոտեցում պահանջելով դեպի կյանքը՝ Փափազյանն արվեստի զարգացման ջատագով է: Դեռ բավական չէ օբյեկտիվ կերպով ցույց տալ կյանքի ճշմարտությունը, պետք է նաև պաշտպանել, գովերգել այն: Այս վերջին հանգամանքն էլ սերտ կապ է ստեղծում ստեղծագործող անհատի և ժողովրդի միջև: Շեքսպիրը Համլետի բերանով ասում է դերասաններին. «Թո՛ղ ձեր արվեստը հայելին բռնե բնության հանդեպ»: Բայց իր ստեղծագործությամբ անգլիացի մեծ ռեալիստը ցույց է տվել, որ իր հայելին ոչ թե սովորական, այլ իրականության խորքերը, ներքին առաջմղիչ ուժերը ցույց տվող կախարդական հայելի է:

Ռեալիզմը դյուրին արվեստ չէ: Այն պահանջում է քրտնաջան աշխատանք, կյանքի լայն ծանոթություն, փաստերի ստուգում և համադրում: Փափազյանի գեղագիտական իդեալն էր՝ իրականությունը ավելի բարձրացնել, շարժման մեջ ցույց տալ նրա էությունը, միաժամանակ՝ հեռանկարները, ներկան, գալիքն ու ցանկալին: Նրա խիստ հետևողական կենսադիրքն ու ժողովրդայնությունը հուշում են, որ հիանալի դերասանը նաև ուսուցիչ ու դաստիարակ եղավ շատերի համար:

Լայն ժողովրդական խավերին բերել թատրոն, կրթել ճաշակ, բարձրացնել գիտական մակարդակ. սա Փափազյանի համար նշանակում է հակադրվել նեղ գեղագիտական շահերին՝ արվեստն արվեստի համար «սկզբունքին» և, դրան հակառակ, պաշտպանել ճշմարտության, պարզության և մարդկայնության սկզբունքը: Այդպիսին լինելով՝ մշակույթի անվանի

գործիչը բեմը դարձրեց մի արդար ամբիոն, որն օգնում է մարդուն ազատվել ախտերից, դառնալ առաքինի, բարի, նրբաճաշակ և լավատես:

Փափազյանը խորհող, փիլիսոփայող արվեստագետ է: Կոչումով լինելով արտիստ՝ նա ծառայել է ժողովրդին՝ ճշմարտությունն ու գեղեցկությունը դնելով նրա ձեռքին՝ որպես հատու զենք: Դերասանի մեջ նա մեծ նշանակություն է տվել արդիականի զգացողությանը: Իսկական մտավորականը պետք է կարողանա կերպարը տեսնել մյուս կերպարների ընդհանուր կապակցության շղթայում և նրա շրջապատի շարժման մեջ, որպեսզի դառնա այն կամուրջը, որի վրայով հերոսն իր ապրած ժամանակներից առնչվի քո ապրած ժամանակի հետ: Հետաքրքիրն այն է, որ Փափազյանը ժամանակի զգացողությանը զուգահեռ գիտակցել է հայ ժողովրդի պատմական ճակատագիրը՝ պատմական-հասարակագիտական լայն զուգորդություններով: Այսինքն՝ մնալով հեղինակին հարազատ, նա չէր կորցնում հայրենի պատմության զգացողությունը:

Փափազյանը երբեք դերը չէր համարում ավարտված. դերասանի ստեղծագործական միտքը պետք է անդուլ աշխատի ներկայացումից ներկայացում: Դա է պատճառը, որ ամեն մի դեր իր հետ միշտ բերում է թարմություն՝ թեպետ շատ խաղացված: Դերասանը, ըստ նրա, նույնիսկ հանճարեղ դերասանը, երբեք չի սպառում կերպարի ամբողջությունը: Լավագույն դեպքում նա հասնում է իր հնարավորությունների գերագույն բացահայտմանը: Մեծ է այն դերասանը, որը բեմի վրա հաշիվները փակելուց հետո չի վախենա ասել, թե նոր, միայն նոր հասկացավ, թե ինչպես պետք է խաղալ:

Ամեն մի հզոր տաղանդ միևնույն ժամանակ հանդիսանում է իբրև արվեստի բնածին դատավոր: Մի առիթով Եվ. Վախթանգովն այն միտքն է հայտնել, թե դերասանը իր դերի ռեժիսորը պետք է լինի: Կարծես ասված է Փափազյանի մասին: Դերը մեծ լինի, թե փոքր, դերասանը պետք է կարողանա տեսնել նրան կողքից, «կողմնակի» այն աչքով, որ ունենում է ռեժիսորը: Լավ դերասանը պետք է կարողանա գտնել իր դերի ռեժիսորական պատկերն այն ընդհանուր պատկերների շրջանակում, որ գծել է բեմադրողը. Փափազյանն այդպիսինն էր: Նա չէր հավանում միջակ, իրենց վրա չաշխատող, միշտ ավելիին չձգտող դերասաններին:

Փափազյանի խաղացած ողբերգական կերպարներից (Օթելլո, Համլետ, Մակբեթ, Լիր-Արքա) ոչ մեկը իրականության հետ հաշտության ձեռք չի մեկնում. նրա անհաշտությունը դավի, չարի, ոճրագործի հանդեպ հետևողական էր և անշեղ: Նա կարողանում էր իր արվեստը հարմարեցնել հասարակական տրամադրությունների հետ: Բեմական խոսքը միախառնելով պաթոսով հրապարակախոսականին՝ նա կարողացավ սրտեր նվաճել և քայլել կյանքին ու իր ժողովրդին համընթաց:

Նա շատ էր սիրում բնությունը, զբոսանքներն ու ճամփորդությունները: Երևանի թատերական ինստիտուտի ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասում է. «Գիտցեք, որ բնությունն ամենամեծ դպրոցն է մարդու

համար: Բնության մեջ ապրել՝ նշանակում է նրբացնել, բարձրացնել ճաշակը, հոգու թափը ֆիզիկապես թարմացնել: Առյուծը ձեզ օրինակ: Գազանանոցում նա մի քանի օրից «կատու» է դառնում: Այն, ինչ որ չի տա ձեզ ոչ մի ուսուցիչ և ոչ մի ինստիտուտ, կտա կյանքը, կյանքի դպրոցը: Միօրինակ ձևով վարած կյանքը առաջ կբերի ձեր ստեղծագործական թափի մակարդում, թմրածություն»[1]:

Հստակ դիրքորոշումը Փափազյանին դարձնում է մի հետևողական գեղագետ-մտածող: Նպատակի մեծության գիտակցումը նրան զինում էր իր հզորության գիտակցությամբ: Ընթերցում ենք նրա հոգեբանական վերլուծություններն իր խաղացած դերերի վերաբերյալ և հասկանում, որ գործ ունենք ոչ միայն արվեստի իսկական գիտակի, այլև մի «շախմատիստի» հետ, ով իր հաղթանակն ապահովելու համար նախօրոք անգիր գիտե բոլոր քայլերը: Եվ, որ շատ կարևոր է, նա չի կասկածում իր տանելիք հաղթանակին, ուստի այդ համոզմունքը նրան թելադրում է իր հզորության գիտակցությունը:

Նրա կյանքի ընթացքն այնպես եղավ, որ շատ երկրներում եղավ՝ Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, Իսպանիա, Հունաստան, Թուրքիա, Իրան, Եգիպտոս, Ռուսաստան…Բայց նրա համար շրջագայությունը միայն աշխարհագրություն չէ, այլ նաև՝ պատմության դասագիրք՝ հասկանալու համար այն ժողովրդին, որն ունի իր ազգային դեմքն ու անկրկնելի դրոշմը:

Բնությունը Փափազյանին օժտել է հզոր տաղանդով, որ ինքնին մի հազվագյուտ ու թանկ պարգև է: Բնության տվածով նա չի բավարարվել. նա փայլ է տվել, հարստացրել ու բովանդակալից դարձրել այն՝ ի սպաս դնելով իր ժողովրդին: Նրա գործունեությունը հարուստ պտուղների և հույսերի մի շտեմարան է, որը նրա արվեստի քաջատեղյակության արդյունք է, իսկ հույսերը՝ ապագայի հանդեպ վստահության նշան:

Փափազյանն այն դերասաններից էր, ով իրեն պատասխանատու էր համարում իր ժամանակակից թատրոնի որակի համար: Խստապահանջ լինելով դեպի ինքը՝ նա խստապահանջ էր նաև ուրիշների նկատմամբ: Անվանի դերասանների ավանդած գլխավոր դասերից մեկն է՝ սովորելու տաղանդ և ոչ թե՝ կույր հետևողականություն: Փափազյանն անընդհատ սովորեց՝ չհետևելով ոչ մեկին: Հիանալի յուրացնելով իր ուսուցիչների դասերը՝ նա կարողացավ ստեղծել իր դպրոցն ու սովորեցնել ուրիշներին:

Գաղափարը միաձուլելով գեղարվեստական փորձի հարստության հետ՝ նա ստեղծել է թեմական տիպերի անձնավորման այնպիսի ձևեր, որոնք բացահայտելու համար պետք է հաշվի առնել դերասանի մոտեցման հոգեբանական նրբերանգները, նրա արտահայտչական ձևերի բազմազանությունը, խոսքի կուլտուրան…Այս ամենը միաձուլելով իրար՝ բազմահմուտ դերասանը մտել է թատրոն այնպես, ինչպես հավատացյալն է մտնում որբարան:

[1] Ռ. Զարյան, «Փափազյան», Երևան, 1988, էջ 74:

Փափազյանի համոզմունքն այն է, որ գիտությունը, թատրոնն ու գրականությունը պետք է ծառայեն հասարակությանը, ժողովրդական մասսաներին: Թատրոնի խաղացանկի, թատերագրության, դերասանական արվեստի, պատմական ողբերգությունների և ժամանակակից թատերացանկի մասին նա տվել է շատ արժեքավոր խորհուրդներ, որոնք մինչև օրս չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը, անգամ՝ հրատապությունը:Այդ ամենում նա ցույց է տվել ոչ միայն արվեստի գիտական հմտություն, այլև գեղարվեստական-քննադատական բնազդ, լայնապարփակ աշխարհայացքի ընդգրկում և բարձրակարգ ճաշակ:

Փափազյանն ազգային արտիստ էր: Ազգային՝ ոչ թե խաղացանկով, այլ ոգով, լեզվով, մոտեցումով: Միանգամայն իրավացի էր նա, երբ ասում էր, որ իր «Օթելլոն» մի ներկայացում լինելուց ավելի՝ տարիների խավարից ազատագրության հույս փայփայող մի ամբողջ ժողովրդի հավաքական պահանջն էր, ինքնագիտակցության առաջին երգը, որի շնփորումը բախտի բերումով վիճակվել էր նրան: Ճիշտ է բնորոշել նրա «քննությունը» աշխարհի առաջ թատերագետ Ռ. Զարյանը. «Դու եղար պատմական բավական բարդ խմորման ծնունդ՝ ազատ կյանքի երազանք, ծրագիր ու ձգտում, դրանց իրական հնարավորությունների առաջին քայլեր, և, հանկարծ, այդ բոլորի հակառակը՝ ոչ միայն հույսերի խորտակում, այլև հոշոտված ու արյունաթաթախ մի հայրենիք: Ու հետևանքը՝ հասկանալի մի պահանջ. ազգի արդար դատը ներկայացնել աշխարհին, ասել մարդկությանը, թե առանց այն էլ սակավաթիվ ու հիմա էլ սրի քաշված այս ժողովուրդը դարերի ընթացքում մտքի ու հոգու ինչ գանձեր է կուտակել, որ մի ազգի ազնվականության վկայականն են»[1]:

Հայրենաբաղձ դերասանը շատ շուտ հասկացավ, որ իր հայրենիքը Հայաստանն է: Նա իր ժողովրդից ստացածը վերադարձրեց նրան բազմապատիկ մշակված ու բյուրեղացված: Եղեռնից հետո նա այցելում է իր ծննդավայր Պոլիս ու ընթերցողների հետ կիսում ստացած տպավորությունները. կարդում ես այն ու զգում մորմոքվող սրտի անկեղծ հույզերն ու ոճիրը դատապարտող անողոք խոսքերը թուրք մարդասպանների մասին և համոզվում, որ գործ ունես իսկական, մեծ հայի հետ, ով իր ժողովրդի հետ է, ում սիրտը բաբախում է իր ժողովրդի հետ համաչափ:

Փափազյանի խոստովանությամբ՝ իր ստացած բոլոր դափնիները ինքը պատրաստ է փռել իր ժողովրդի ոտքերի տակ: 1951թ. հանդիպում էր Սունդուկյանի անվան թատրոնում: Այստեղ նա նշեց, որ որտեղ էլ լինի՝ ինքը մարդկային մեծ գաղափարներին ծառայում է որպես հայ ժողովրդի ներկայացուցիչ: Թատերագետ Զարյանը վկայում է. «…Ուր էլ գնացել է նա, գնացել է որպես հայ արվեստագետ, գնացել է որպես իր ժողովրդի զավակ, որպես մեր արվեստի պատգամախոս: Նա ամեն տեղ տարել է հայրենի թատրոնի դրոշը, որ մի ժամանակ եղել է Ադամյանի, Սիրանույշի ու

[1] Ռ. Զարյան, «Փափազյան», Երևան, 1988, էջ 198:

Աբելյանի հզոր ձեռքերում: Ուր ոտք է դրել նա, այնտեղ հնչեցրել է հայոց լեզուն»[1]:

Տաղանդաշատ դերասանը նաև փայլուն հռետոր ու վերլուծաբան էր՝ հետամուտ առաջին հերթին իր ժողովրդի հասարակական և քաղաքական շահերը, ճշմարտությունը պաշտպանելուն: Դրա համար նա հետևում էր «կյանքն ինչպես որ է» սկզբունքին, այսինքն՝ արվեստի մեջ նա պահանջում է պարզություն, բնականություն: Նրա արվեստը համընկնում է ռեալիզմի գեղագիտությանը:

Լինելով արվեստի մարդ՝ նա բարձր է գնահատել նրա բոլոր տեսակները՝ գրականությունը, նկարչությունը, քանդակագործությունը, կինոն… Նա շատ է անդրադարձել արվեստին առնչվող խնդիրներին. «Գերագույն արվեստը, կատարյալ արվեստը, եթե ուզում ես, ընթերցող, նա չէ, որ շնչավորում է հասարակ պաստառը, իմաստավորում է կամ ձևավորում համեստ մարմարը, կամ կենդանացնում տպագրված թուղթը, այլ մասսաների շնորհիվ՝ դրամատուրգիան: Այդ «գործելու անզուսպ պահանջը», երբ տիրապետում է մարդու էությանը, մարդուն մղում ՝ «ներկայացնելու» իր զգացածը»[2]:

Վերոգրյալից պարզվում է, որ Փափազյանը բարձր է գնահատում թատրոնի դերը՝ որպես մարդու վրա անմիջականորեն ներգործող արվեստի ձև: Նրա խոստովանությամբ՝ ինքն այնքան է պաշտել արվեստը, տեսել նրան այնքան վերևում, որ չի հանդուրժել վեճի բռնվել միջակության հետ ոչ թե նրա համար, որ ավելորդ է գտել այդ, այլ գտնելով, որ այն միայն խղճահարության արժանի է:

Փափազյանն առանձնահատուկ վերաբերմունք ուներ հայոց լեզվի և բեմական խոսքի կուլտուրայի մասին: Նրա բեմական խոսքն ուներ մի հրապույր, որը խայտաբղետ էր և խայտալեզու: Նրա խոսքի հարազատությունը հայոց լեզվի ոչ այնքան կանոններին, որքան էությանը, նրա ոգուն, շնչին, տարերքին, բարձրաձայն մի օրինակ էր: Փափազյանի լեզուն լի էր ներքին պաթոսով, պարզ էր ու բնական:

Նա բազմիցս անդրադարձել է լեզվի մաքրության հարցերին և կարծում է, որ ամուր ու անսասան է այն լեզվի վիճակը, որ բոլորանվեր կերպով բավարարում է ժողովրդի մշակութային պահանջներին: Գրականությունը, թատրոնը ամենից առաջ լեզվի արվեստ է, իսկ սա նշանակում է, որ դերասանը, եթե լեզու չգիտե, չի կարող դերասան լինել: Նրա կերտած կերպարները դիտողներն էլ ասես դառնում են մի տեսակ գեղագետներ, քանի որ միտքը խորացնում է զգացմունքը, ամրացնում կամեցողությունը՝ անցյալը ճանաչելու, ներկայի հարցերին պատասխանելու համար:

Միաժամանակ, սերը թատրոնի նկատմամբ ժողովրդականացնելով, գրական ճաշակ զարգացնելով՝ Փափազյանը ձգտում ուներ ամեն հանդիսատեսի դարձնել թատրոնի, արվեստի գիտակ, որին չես կարող խաբել

[1] Նույն տեղում, էջ 183:
[2] Վ. Փափազյան, «Հետադարձ հայացք», հ. I, Երևան, 1956, էջ 290:

անբնական, անմակարդակ դերակատարումներով: Առօրյա կյանքի պատկերները ստեղծելով՝ Փափազյանը միշտ կռվել է կեղծ ռեալիզմի դեմ: Նա պահանջում է ոչ թե պատկերել փաստը, այլ փաստի բանաստեղծությունը, այսինքն՝ հանդես բերել ընդհանրացնելու մեծ ուժ, օրինաչափություններ ցույց տալու փիլիսոփայական հնարամտություն:

Ընթերցողների համար անակնկալ էին նրա հուշերի՝ «Հետադարձ հայացք» գրքի երկու հատորները, որոնք աչքի ընկան հազվագյուտ արժանիքներով. արտահայտիչ պատմելաձև, տիպեր կերտելու զարմանալի հմտություն, վերլուծող միտք, նուրբ հումորով լի աշխույժ գծանկարներ, ջերմ քնարականությամբ համակված էջեր, գործուն երևակայություն: Եվ այս ամենը գեղեցիկ, ճկուն ու հարուստ հայերենով, որի հետ կարող են մրցել ամենահայտնի գրողները միայն. «Բայց հերիք չէ, երբ դերասանն իր ծնունդով, իր տոհմականությամբ, իր ազգային ճակատագրով օժտված է գեղեցիկ ու այդքան փառավոր մի զենքով, այսինքն՝ լեզվով: Նա պետք է և իմանա գործածել այդ զենքը, այլապես դերասանը բեմում շատ նման կլինի մի զինվորի պատերազմի դաշտում, շատ հատու, շատ գեղեցիկ և շատ արժեքավոր մի սուր ձեռքին, այո՛, բայց անընդունակ նրանով պատերազմելու»[1]:

Շնորհաշատ դերասանը հայրենասեր և հայերենասեր էր՝ բառիս ամենալայն իմաստով: Միլիցիայի աշխատողների հետ հանդիպման ժամանակ, երբ նրան շնորհակալություն հայտնեցին, նեղացավ. «Ինչի՞ եք շնորհակալություն հայտնում: Հայտնի չէ, թե այս հանդիպման համար ով ում պետք է շնորհակալություն հայտնի: Դերասանը, ինչպես նաև գրողը, կոմպոզիտորը ժողովրդի ձայնն է: Եթե դուք չլինեք՝ ես էլ չեմ լինի: Ես ձեզ եմ արտահայտում: Ես ձեզնով կամ: Որտեղ էլ լինեմ՝ ձեզնով եմ հպարտ, ձեզնով եմ հարուստ, ձեզնով եմ կյանքին կապված: Իմ խաղի մեջ ձեր զգացմունքն է ապրում, ձեր միտքն է ճառագայթում: Ինչի՞ է նման զինվորն առանց զորավարի: Արտիստներս, այդ ես լինեմ, թե իմ արվեստակից ընկերը՝ զինվորներ ենք: Զորավարը դուք եք, ժողովուրդը: Ինչ հրամայեք՝ այն էլ անելու ենք…»[2]:

Անհրաժեշտ է խոսել նաև Փափազյանի բնավորության մի քանի կարևոր հատկությունների մասին, որոնք, իսկապես, նախանձելի են: Օրինակ՝ ամբողջ կյանքում նա եղավ զուսպ ու չափավոր ուտել-խմելու մեջ: Նա չէր սիրում քեֆ անել, սեղան նստել. ուներ օրվա կարգն ու կանոնը: Հաճախ է պատահել, որ ներկայացումներից հետո ճոխ սեղաններ են գցվել նրա պատվին, նստել է մի քիչ, հետո պատրվակ բռնելով՝ հեռացել է՝ գերադասելով թարմ օդն ու զբոսանքները: Հիրավի, թատերգություններն էլ իրենց հերթին՝ հոկել, ուղղորդել են նրան, բարեկրթել ճաշակը, սովորությունները: Քանի՛-քանի՛

[1] Վ. Փափազյան, «Հետադարձ հայացք», հ. II, Երևան, 1957, էջ 240:
[2] Ռ. Զարյան, «Հուշապատում», հ. I, Երևան, 1975, էջ 463:

անգամ է «Օթելլո» խաղալիս նա արտասանել հետևյալ խոսքերը. «Լավ գինին լավ սրտակից ընկեր է, եթե մարդ հետը խելացի կերպով վարվի»[1]:

Իր արվեստով և անձնական օրինակով նա պայքարել է ալկոհոլը չարաշահողների դեմ:

Փափազյանը երբեք փողի, հարստության հետևից չի վազել, էժան հեղինակությունից խուսափել է՝ ցանկանալով կատարելագործել իր գինանոցը, հղկել արտիստի իր արտահայտչամիջոցները, իր խաղը դարձնել արվեստի իսկական ստեղծագործություն: Եվ դա նրան հաջողվել է:

Փափազյանը պաշտում էր ընտանիքը և ընտանեկան գեղեցիկ հարաբերությունները՝ գտնելով, որ այն հասարակության հիմքերը պաշտպանող ինստիտուտներից մեկն է: Նրա կարծիքով՝ մի հասարակ կոշիկ գնելիս մի տասը անգամ փորձում են, բայց ամուսնանում են… փակ աչքերով: Հանճարեղ դերասանը գտնում է, որ միայն սերն է, որ սրբագործում է ամուսնությունը, այլապես «մարդկային այդ գերագույն ակտը կդառնա ամենաանարժեք ու վայրենի մի ցանկություն: Այդ հարցում գոնե՝ կենդանիներից ամենախելոքը մարդն է»:

Փափազյանի արտահայտած մտքերից շատերը դարձել են թևավոր արտահայտություններ, որոնք գործածվում են բանավոր և գրավոր խոսքում: Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

Գիտակցությունն արվեստագետի ինքնուրույնության առհավատչյան է, նրա անհատականությունն է, նրա դեմքը, իրական կերպարանքը, և չկա արվեստագետ առանց անհատականության:

Միայն սիրով, աշխատասիրությամբ ու նվիրվածությամբ է, որ աշխատանքի արդյունքը՝ սերմը, լավ պտուղ է տալիս:

Ծնողներիս շատ եմ սիրում, բայց երբ իմ մասին գովեստի խոսքեր եմ լսում, իսկույն հիշում եմ ուսուցիչներիս:

Ում բերանը տաք կաթից այրվել է, մածունը փչելով կուտի:

Բնությունն ամենամեծ դպրոցն է:

Որքան մարդ կա աշխարհում, այնքան էլ՝ բնավորություն:

Անողոք դև է կինը, երբ չարը տիրապետում է նրան. և որքան առնական է տղամարդը, նույնքան ենթակա է կնոջ հանճարին:

Ամեն հանճար անցյալի մեկնաբանն է և գալիքի մարգարեն:

Եղեռնի ամբողջ սարսափը լսելով և ականատես լինելով նրա հետևանքներին՝ ամաչում էի, որ մարդ եմ ես:

Արվեստում եթե կա մի բան, որ մինչև չսովորես, չես կարող անել, բայց բան էլ կա, մինչև չանես՝ չես կարող սովորել:

Լեզուն մի ժողովրդի հոգին է՝ հնչեղ ձայնի մեջ:

Ամեն ինչ ծաղիկ չէ աշխարհի պարտեզում:

Ծիծաղը լացի քաջությունն է:

Խոսելը բեմում՝ շնչել է, ոչ թե բառեր արտասանել:

[1] «Իմաստախոս Շեքսպիրը», ԵՊՀ, Երևան, 1968, էջ 101:

Փառքը չպակասեց Փափազյանից. նախ՝ Վրաստանը, հետո Ադրբեջանը, ապա նաև Հայաստանը ժողովրդական արտիստի տիտղոսով պսակեցին նրա ճակատը: Երկար տարիներ նա միակ դերասանն էր խորհրդային թատրոնում, որին ժողովրդական էին ճանաչել երեք ժողովրուդ: Ժողովրդական կոչումը շատ էր պատշաճում նրան, քանի որ բարձր տաղանդի տեր լինելով՝ հավասարը չունեցող ուժ էր և ժողովրդական էր նաև իր գործունեության բնույթով: Դրա համար է հայ ժողովուրդը երախտապարտ իր զավակին, որին տվել է անմահության վկայական:

Эстетические взгляды Ваграма Папазяна

С. Багдасарян

Резюме

В статье выражены основные эстетические принципы знаменитого актера Ваграма Папазяна, сущность и формы его народной, активной деятельности. Одаренный актер, Ваграм Папазян, внес большой вклад в развитие театров Еревана, Тбилиси и Баку, а также сыграл большую роль в деле повышения уровня мастерства актеров. В статье также представлены некоторые выдающиеся мысли знаменитого актера, имеющие обучающее и воспитательное значение.

Aesthetic views of Vahram Papazian

S.Bagdasarian

Summary

In this article, the expression of the basic aesthetic principles of actor Vahram Papazian, the nature and form of it`s popular, vigorous activity. A gifted actor Vahram Papazian made a great contribution to the development of theater in Yerevan, Tbilisi and Baku, and played a main role in raising the level of skill of actors. The article also presents some expressive thoughts of the famous actors which have instructional and educational value.

ՀՏԴ 82.09 *Գրականություն*

ԱՆՀԱՏԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ Յ. Վ. ԳՅՈԹԵԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ս.Ստեփանյան

Մարդկային քաղաքակրթության հասարակական զարգացման ընթացքում անհատի եւ հասարակության միջեւ մշտական բախումները հանգեցնում են ողբերգական իրավիճակների: Յուրաքանչյուր ժամանակաշրջան ներմուծում է իր գծերը: Անհատի գործունեությունը գնահատվում է իրավիճակի հաղթահարման անհրաժեշտությամբ: Արվեստի զարգացման յուրաքանչյուր ուղղություն բացահայտում է այդ անհրաժեշության իրականացման իր միջոցները: Ուստի եւ ողբերգությունը գրականության եւ արվեստի անբաժան ուղեկիցն է դառնում հասարակության զարգացման բոլոր շրջաններում:

Անհատի ողբերգության կոնցեպցիան իր արտահայտությունն է գտել գերմանացի գրող Յոհան Վոլֆգանգ Գյոթեի բոլոր գործերում անկախ նրանց ժանրային բնույթից: Գյոթեի ստեղծագործություններում ընդգծված ողբերգականության մեջ առկա են որոշ պատմա-հասարակական, փիլիսոփայական, գրական, անհատական եւ այլ հանգամանքներ, որոնք անհրաժեշտ են այս ուսումնասիրության համար:

Գյոթեի ապրած իրականությունը պատմության մեջ գրանցվել է որպես ռազմաֆեոդալական քայքայվող մի հասարակարգ: Ամենուր անկարգություն, առանց օրենքների, անգրագիտություն, խավար, առանց կարգ ու կանոնի: Ժողովուրդը հեծում էր այդ ծանրության տակ, ստրկությունը խորացել էր ծայրահեղ: Միակ փրկությունը բուրժուազիան էր, որը լինելով շատ վախկոտ, ստրկամիտ, հոգում էր միայն իր շահերի մասին, չուներ օրենքներ. որոնցով կարողանար առաջնորդվել: Այս միտումներով էին պայմանավորված հասարակական հակասությունները: Այս ժամանակահատվածում գրական «Գրոհ եւ փոթորիկ» խմբի առաջացումը պատմական անհրաժեշտություն էր: Բոլոր ուսումնասիրողները, կենսագիրները, գյոթեագետները կարեւորում են այն հանգամանքը, որ Գյոթեի գրական-գեղարվեստական մուտքը զուգադիպում է «Գրոհ եւ փոթորիկ»-ի ժամանակաշրջանին: Գրական այս շրջանում քննադատվում էին թե հասարակությունը, թե դասային սահմանները, անհատը դուրս է գալիս առաջին գիծ, նա ընդունվում է որպես հանճար , ինքնակայացումը դառնում է հիմնական նպատակ, արվեստագետը ծառայում է որպես իդեալ, իսկ բնությունը՝ որպես աստծո հայտնություն: Այս ժամանակ ստեղծվեց Ֆաուստի նախատիպը («Նախաֆաուստ»), որը վերջնական տեսքի եկավ Գյոթեի ստեղծագործական վերջին շրջանում:

XVIII դարի գերմանական գեղարվեստական գրականությունն առանձնահատուկ դեր ուներ պատմական իրադրության մեջ: Մտածողության մտահայեցողական ոգին իրականության բռնատիրական պայմաններում խորացնում էր ողբերգականի առաջացման պատճառները: Սրանով էին

պայմանավորված այդ ժամանակվա գերմանական գրականության փիլիսոփայական զարգացումը եւ անհատի ողբերգության թեմատիկ ընդգրկվածությունը: Երկրի ապագայի վերաբերյալ անհուսալի տրամադրությամբ համակված էին ժամանակաշրջանի բոլոր գրողները: XVIII դարի վերջին բազմաթիվ բարոյական-փիլիսոփայական բանավեճերի, քննարկումների թեման մելանխոլիզմն էր: Կանտը մելանխոլիկ տրամադրությունը բնորոշում էր որպես գիտակցության ոչ ադեկվատ արտահայտման հետեւանք: Գերմանագետների ուսումնասիրությամբ մելանխոլիզմի վառ արտահայտիչներ են համարվում Գյոթեն եւ Շիլլերը. «*Վայմարյան կլասիկայի կենտրոնում Ֆաուստն ու Վալենշտայնը մնացին որպես լավագույն երկու մելանխոլիկները*»[1]: Այսպիսով, XVIII դարի գերմանական գրականության մեջ ողբերգականի ընդգծվածությունը բխում է գերմանական իրականությունից: Գյոթեի եւ XVIII դարի գերմանական գրականության նորարական երեւույթները կապված են Գոթհոլդ Լեսսինգի անվան հետ: Գյոթեի եւ «Գրոհ եւ փոթորկի» հեղինակների ողբերգական ազդեցությունները բխում են Շեքսպիրի հոգեբանական բացահայտումից: Իր ամբողջ կյանքում Գյոթեն սիրել ու մեծարել է Շեքսպիրին. «*Երբ կարդացի Շեքսպիրին, առաջին իսկ էջը գերեց իմ ամբողջ կյանքում, իսկ երբ կարդացի նրա առաջին գրվածքը, ես ինձ զգացի որպես կույր ծնված մի մարդ, որին հրաշագործ աջը հանկարծ պարգեւում է տեսողություն*»: [2]

Դեռեւս նրա առաջին բանաստեղծությունները շատ զգացմունքային ու կրքոտ էին: Այդ ժամանակ նա ընդամենը տասնվեց տարեկան էր եւ, չընդդիմանալով հոր կամքին, Լայպցիգի համալսարանում սովորում էր իրավաբանություն: Այստեղ նա միաժամանակ հաճախում էր գրական դասախոսությունների: Առանձնապես նրան գրավում էին գրող, դրամատուրգ, գրականագետ Քրիստաֆոր Գոթշիդի եւ գրող, փիլիսոփա Քրիստիան Գելլերթի սեմինար պարապմունքները: Վերջինս համարվում էր «Գրոհ եւ փոթորկի» ոճի հիմնադիրը: Գյոթեն կարեւորում էր զգացմունքն ու երեւակայությունը: Շիլլերին գրած նամակներից մեկում նա խոստովանում է, որ իրեն երբեւէ չի հաջողվել որեւէ ողբերգական իրավիճակ մշակել առանց կենդանի պաթոլիկ հետաքրքրասիրության: Ժամանակի հոգեւոր կառույցի ձեւափոխման մեջ գերմանական գրող Յ. Վ. Գյոթեի գեղարվեստական մտածողությունն ունի ներգործական դեր: Բոլոր հասարակական- քաղաքական իրադարձությունները, ինչպես եւ ժամանակաշրջանի մեծագույն դեմքերի հետ ծանոթությունները եւ դրանցից քաղած բոլոր դասերը հարստացնում են Գյոթեի կենսագրությունը: Դրանում կարեւոր է XVIII դարի գերմանական դասական փիլիսոփաների ազդեցությունը: Այդ մասին բազմաթիվ

[1] Thorstan Valk:Poetische Pathographie. Goethes Werther im Kontext zeitgenosischer Melancholie- Diskurse ,Goethe –Jahrbuch , Verlag Hermann Boeblaus Nachfolger Weimar, 2002, Band 119, էջ15:

[2] Գյոթե Յ. Վ., ֆաուստ 2, Հայպետհրատ,Ե., 1963, էջXII:

տեղեկություններ է տալիս Գյոթեի «Պոեզիա եւ ճշմարտություն» վեպը, որը բացի գեղարվեստական գործ լինելուց, նաեւ տեսական քննումների աղբյուր է: Նույն արժեքն ունի նաեւ Գյոթեի քարտուղար Յ. Պ. Էքքերմանի «Զրուցներ Գյոթեի հետ» գիրքը: Շտյուրմերների վրա չափազանց մեծ է եղել տեսաբան Հերդերի ազդեցությունը: Հերդերի հետ հանդիպումը Ստրասբուրգում Գյոթեն համարում էր իր կյանքի ամենակարեւոր իրադարձությունը: Հերդերը, որը հինգ տարով մեծ էր Գյոթեից, վերաբերվում էր ավագ եղբոր պես, քաջալերում էր նրան բոլոր բնագավառներում: Գյոթեին գրավել էր նաեւ Հերդերի «Ժողովրդայնության փիլիսոփայությունը», ինչի հիմքում ընկած է ժողովրդական ստեղծագործությունների ուսումնասիրումը. «*Նրա «Վարդը» շփոթեցրել էր Հերդերին, եւ նա դա ընդունել է որպես զուտ ժողովրդական երգ: Ժողովրդական պոեզիայի ազդեցություն է կրել Գյոթեի «Անտառի թագավորը» բալլադը*[1]: Վերջինիս համար Գյոթեն օգտագործել է դանիական ժողովրդական երգի Հերդերի կատարած թարգմանությունը: Իր փիլիսոփայական դատողությունների համար Գյոթեն գնահատում է Սպինոզային.» *Սպինոզայի հանդեպ ունեցած իմ վստահությունը հիմնված էր այն խաղաղեցուցիչ ներգործության վրա, որը նա առաջացրել է իմ մեջ*»[2]: Գյոթեի երկվության հիմքում ընկած է Կանտի դուալիզմը: Մտածողության դիալեկտիկական մեթոդը եւ իրականության ճանաչման ժխտումը կազմում է իր ստեղծագործությունների փիլիսոփայական հիմքը:

Գրողի ընկճվածությունը հաղթահարվում է համարձակ սատիրաներով, եւ այն փաստը, որ Գյոթեն իրեն համարում էր ոչ ողբերգու հեղինակ, գրականագետ, թարգմանիչ Արա Առաքելյանը դիտում է այսպես. «*Հայտնի է, որ Գյոթեն իրեն համարում ոչ ողբերգու հեղինակ, սակայն ինքնաբնորոշման պայմանականությունն այս դեպքում ակնհայտ է: Ոչ միայն նրա հիմնական գործերի հերոսները (Ֆաուստ, Վերթեր, Տասսոն եւ այլն), այլ առհասարակ բոլոր ստեղծագործությունները, փոքր կամ մեծ չափով, ներծծված են ողբերգական լույսով*»[3]:

Ստեղծագործական առաջին շրջանում (1770-1775) Գյոթեն անհատի ողբերգական ճակատագիրը բացահայտում է բռնատիրական պայմաններում, իսկ « Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպում այն իդեալականացնում է հերոսների ներքնաշխարհում: Անհատի ողբերգական ճակատագիրը Գյոթեն այս տարիներին ներկայացնում է պատմական, քաղաքական, տարբեր նյութերի հիման վրա: Բայց նրա առաջին հերոսներն օժտված էին հեղափոխական տրամադրությամբ եւ նրանց պայքարը դրսեւորվում էր առանձին անհատների գործունեությամբ: Գյոթեի ռեալիզմը

[1] Արտմանով Ս. Դ. XVII-XVIII դդ. արտասահմանյան գրականության պատմություն, Երեւանի Համալսարանի հրատարակչություն, Ե.1986, էջ 600:
[2] Գյոթե Յ. Վ., Բանաստեղծություն եւ ճշմարտություն, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1985, էջ 688:
[3] Գարուն, 11. 12. 1998, էջ84:

Գյոցի կերպարի միջոցով արտահայտում է սենփական ողբերգությունն իր հասարակության մեջ: Նա գեղարվեստական դաշտ է բերում քաղաքական իրադարձություններ եւ դրանց դեմ կատարված մասսայական բողոքների մեջ անհատի ողբերգական ճակատագիրը: Գյոցը 1528թ. Գերմանիայում տեղի ունեցած ապստամբության ղեկավարներից մեկն է եղել: Նա բնութագրվում է երկաթաբազուկ, խիզախ, ըմբոստ, հզոր, ուժեղ: Գյոցը հերոսական կերպար է: Պատմական այս նյութի միջոցով արտացոլում է իր ժամանակի՝ XVIII Գերմանիայի քաղաքական դրությունը, իսկ Գյոցը խորհրդանշում է դասային ասպետությունը: Եթե Գյոցն տառապում է, որ ի զորու չէ հարմարվել գոյություն ունեցող կարգերին, իսկ ապստամբությունը նույնպես բերում է կործանման, ապա Գյոթեի ողբերգությունն այն է, որ նա ստիպված էր հանդուրժել մի միջավայր, որը հակասում էր սենփական համոզմունքներին: Գյոթե անհատի հակասության բեւեռներից մեկը հանճարի պայքարն էր, որ նրան միշտ մղում է ազատության, մյուսը՝ իրականության, ինչի հետ ստիպված էր հաշտ ապրել: Իր ներքին խռովքը, որ Գյոթեն տարածել է իր հերոսների վրա, ի վերջո վերածվում է պայքարի: Այս շրջանում նրան գրավել էին շեքսպիրյան ռեալիզմի բազմազանությունը, ապա՝ Ռուսսոյի գեղարվեստական մտածողությունը: Վերջինս կազմում է «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպի ելակետը: Ըստ Գյոթեի՝ Վերթերի սերը խորացնում է նրա մելանխոլիզմը: Այդ մասին նա ասել է. «*Ես միանգամայն նոր բան եմ արել: Վերցնենք վերնագրի պատմությունը. «Երիտասարդ Վերթերի տառապանքները», որտեղ ես ներկայացրել եմ մի երիտասարդի, որն օժտված լինելով խոր մաքուր զգայությամբ ու ճշմարիտ պենետրացիայով, կորցնում է իրեն ցնորքային երազանքների մեջ, շահարկումից քայքայում ու հասցնում իրեն մինչեւ դժբախտ կրքերի. հատկապես մի հավերժական սեր խոցում է, եւ նա ինքնասպանություն է գործում*»[1]: Արդի գրաքննադատ Թյորսթան Ֆալկն այս վեպը որակում է ոչ միայն որպես մի մելանխոլիկ կերպարի մահվան պատմություն, այլ XVIII դարավերջի հոգեթերապևտիկ պրակտիկա: Այս հիվանդության հաղթահարման միջոցները եւս կան վեպում. «*Գյոթեի ժամանակաշրջանի տարածված հոգեթերապևտիկ բուժման միջոցներին են պատկանում ճանապարհորդությունները եւ պատահական տեղափոխությունները, օրվա հստակ ռեժիմը, փոփոխական գործունեությունը*»[2]: Իրականում «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպը Գյոթեի Շառլոտտա Բուֆի հանդեպ ունեցած սիրո արձագանքն էր, ինչի ազդեցությամբ սիրո մեջ մերժված շատ ընթերցողներ հետեւում էին Վերթերի օրինակին: Ինքնասպանության իրական հիմքի մասին Թյորսթան Ֆալկը գրում է. «*Գյոթեն իր վեպի հիմքում դրել է Վեթցլարի դեսպանատան քարտուղար Վիլհելմ Յերուսալեմի մահը: Այս տեղեկության հեղինակն է Յոհան Քրիստիան Քեստները: Այս լուրը հաղորդում է ոչ միայն դեպքի ընթացքի*

[1] Thorstan Valk, էջ17:
[2] Նույն տեղում, էջ 18:

ժամանակագությունը, այլ միաժամանակ վերլուծում է ինքնասպանության բնույթը: Քեստները ներկայացրել է Յերուսալեմին որպես մարդախույս, տարօրինակ մեկը, որն իր պետի հետ երկար ժամանակ գժտության մեջ էր եւ բացի դրանից մշակում էր սիրո անհույս կապ: Ըստ նյութի՝ նա տառապում էր ճանաչողության նեղ սահմաններից, որոնք գբաղեցնում են մարդու բանականությունը: Քեսթները Յերուսալեմի զգացմունքները կապում է այդ ծանր գործի հետ եւ բնորոշում այն որպես մելանխոլիա, ինչը նրան հասցրել էր կամավոր մահվան»[1]: Զարմանալի է նաեւ, որ Վերթերի կերպարի ազդեցության ողբերգական նույն ալիքը բարձրացավ հարյուր հիսուն տարի անց նաեւ Չինաստանում: Չհաշված 1902թ. վեպի չինարեն մասնակի թարգմանությունը, այն ամբողջությամբ թարգմանվել է 1922թ. Վերթերի կերպարը Չինաստանում դարձել էր հաշվենկատ ամուսնությունների դեմ երիտասարդների պայքարի խորհրդանիշը եւ մայիսի 4-ի շարժման մտավորականների կողմից քարոզվող անհատի ազատագրման ազդակ: Վերթերի երկրպագումը Չինաստանում պայմանավորված է նաեւ ժամանակի պայմաններով: Երիտասարդ չինացիները գտնվում էին հին ավանդույթների եւ նոր հայացքների միջեւ մի վակուումում, ինչը եւ օժանդակեց Վերթերի ազդեցությամբ ինքնասպանության ալիքի բարձրացմանը: Վերթերի կերպարի հետ նույնացվում է Իբսենի Նորան: Նորան խորհրդանշում է կնոջ ազատագրումը, իսկ Վերթերը՝ ավանդական ամուսնությունների դեմ երիտասարդների պայքարի իմաստը: Վերթերի կերպարը ծնվեց նաեւ արվեստի տարբեր ճյուղերում, նույնիսկ նորաձեւության մեջ: Այն ներկայացվում էր այսպես՝ դեղին բաճկոնակ, կապույտ ֆրակ դեղին պղնձե կոճակներով, դարչնագույն մանժետավոր կոշիկներ եւ փետրագլխարկ: Մազերը գանգրացվում էին: Վերթերը համարվում է պաշտամունքային կերպար:

Վերթերի ինքնամփոփ էությունը, նրա մելամաղձոտությունը տարիներ շարունակ պահպանվեցին Գյոթեի հոգում: Ջիրագործված սերը կրկին գլուխ բարձրացրեց 1822թ., երբ 74-ամյա ծերունին սիրահարվեց տասնիննամյա Ուլրիկե ֆոն Լեվեցովին: Այս սերն այնքան մեծ էր ու բուռն, որ Գյոթեն մատնվել էր հուսահատության: Դա դառն ու գաղտնի ապրումների մի շրջան էր, ինչից նրան փրկեց ստեղծագործական ոգին: Նրա «Մարիենբադյան էլեգիան», որ ծնվեց 1823թ. նոյեմբերի 15-ին Կարլսբուրգից Վայմար տանող ճանապարհին, Ստեփան Ցվայգը համարեց մարդկության աստեղային ժամ. «*Մեզ տրված է այդ օրն արժանահիշատակ կոչելու իրավունքը, քանի որ գերմանական պոեզիան այդ ժամանակից ի վեր չունեցավ ավելի շողշողուն մի ժամ, քան այն ժամը, երբ հզոր զգացմունքը հզոր թափով լցվեց այդ անմահ տողերի մեջ*»[2]:

Հեղափոխության իրականացման անհնարինությունը, խնդիրների լուծման մեջ ռեալիստական հիմքերի բացակայությունը Գյոթեին մղում են

[1] Նույն տեղում, էջ.8-9:

[2] Ցվայգ Ս. Մարդկության աստեղային ժամերը,Հայաստան, Ե., 1977, էջ 115, 182 էջ:

գեղարվեստական նոր որոնումների:Անհատի ազատության հասնելու միջոցն այս փուլում Գյոթեն համարում է ինքնագիտակցումի զարգացումը: Գաղափարական այս կոնցեպցիան ունեն Իֆիգենյան եւ Տորկվատո Տասսոն: Հասարակության եւ անհատի իդեալական ներդաշնակությունն այստեղ համարվում է անհատի ողբերգության հաղթահարման միջոց:

Գյոթեի ստեղծագործական վերջին փուլը, որն ընդգրկում է »Ֆաուստն« ամբողջությամբ, կազմում է Գյոթեի ռեալիզմի գագաթնակետը: Ֆաուստի եւ Մեֆիստոֆելի հարադրությամբ Գյոթեն կերտում է անհատի եւ հասարակության միջեւ հավերժական հակադրությունը: Ֆաուստի ողբերգականությունը դուրս է մղվում ազգային մակարդակից, մետաֆիզիկական մտածողությունը դառնում է մարդկային ողբերգության հիմքը: Գյոթեագետ Ա. Ճախովն իր *«Գյոթեն եւ նրա ժամանակը»* (1903) աշխատության մեջ Ֆաուստին ընդունում է որպես համաշխարհային վշտի «*զտարյուն ու առավել ցայտուն ներկայացուցիչ*»[1]*:*

Գյոթեի էությունը լավագույնս արտահայտված է Ֆաուստի կերպարի մեջ:Այդ մասին նա մի անգամ ասել է . «*Ոչ միայն «Ֆաուստ»-ի գլխավոր հերոսի մտայլ չբավարարված ձգտումները, այլ Մեֆիստոֆելի հեգնանքն ու կծու ծաղրը կազմում են իմ սեփական էության մի մասը*»[2]: Ֆաուստին եւ Գյոթեին կապող հանգամանքներն են. Ֆաուստը ինչպես եւ Գյոթեն սովորում են իրավաբանություն, բժշկություն, աստվածաբանությու, նրանք երբեք չեն դադարում սովորել, հասնել ճանաչողության նոր սահմանների: Գյոթեի համար «ֆաուստ»-ը եղավ այն գագաթնակետը, ինչին հասնել էր ուզում Ֆաուստը: Այդ մասին Գյոթեն գրում է. «*Ես կարող եմ իմ հետագա կյանքը դիտել որպես սովորական պարգեւ: Եվ հիմա իսկապես ասած, արդեն միեւնույն է, ինչ եմ անելու եւ որեւէ բան կատարելու՞ եմ արդյոք*»[3]: Նա ցանկանում է հասկանալ բնությունը, ճանաչել այն, որի մեջ կգտնի մարդկային հոգու կատարելությունը: Համաշխարհային իր գոհարներից մեկում Գյոթեի պանթեիզմը հասնում է իր գագաթնակետին, երբ նա ասում է «*Սպասիր մի փոքր/ կենջեն եւ դու*»:

Դոկտոր Ֆաուստի նյութը Գյոթեն հանդիպել է դեռ Ֆրանկֆուրտում, մանկության տարիներին տիկնիկային ներկայացումների մեջ: Պատահական չէ, որ «Նախաֆաուստը», որ լույս էտեսել 1772-75 թթ. համընկնում է այն ժամանակաշրջանի հետ, երբ Գյոթեն ուսումնասիրում էր 1772թ. կախաղան բարձրացված մանկասպան Սյուզաննա Բրանդի գործը, որի ճակատագիրը կազմում է Գրեթխենի գործողությունների իրական հիմքը: 1790 թ. Գյոթեն հրատարակում է առաջին մշակումը:

Գյոթեի կերպարներն անհատներ են, որոնցից յուրաքանչյուրի մեջ Գյոթեն ունի իր կյանքը:Տասնյակ էջերի շարադրանքում նա խոսում է

[1]Գյոթե Յ. Վ., Ֆաուստ I,Հայպետհրատ, Ե.,1963. էջ XXXVIII
[2] Նույն տեղում, էջ XXVII,
[3] Նույն տեղում, էջ XXXI:

Գրեթխենի եւ իր սիրո պատմության ու դրա տխուր բաժանման մասին, որի թողած ցավը նա դարձրեց սոնետ: Կերպարի կերտման ընթացքում կենսագրական տարբեր անցքերի նկարագրումը Գյոթեն համարում է նպատակային՝ ոչ այնքան տեղեկատվական, քան փիլիսոփայական նշանակությամբ. *«Եվ դա այն պատճառով, որ նման միջադեպերի նկարագրությունը կարող է ուսանելի լինել ընթերցողի համար. դրանով նա կիմանա, թե ինչ է կատարվել ուրիշների հետ, եւ ինքը ինչ սպասելիքներ կարող է ունենալ կյանքից, ինչպես նաեւ կհասկանա, որ այն ամենը, ինչ կյանքի ճանապարհին պատահում է իր հետ, պատահում է ոչ թե այն պատճառով, որ ինքը եզակիորեն երջանիկ կամ դժբախտ է, այլ որ բոլորի հետ էլ այդպես է լինում»*[1]: «Բանաստեղծություն եւ ճշմարտություն» երկը, որը բազմաթիվ որոնումների, դիտարկումների, հիշողությունների, ու խորհրդածությունների արդյունք է, բացահայտում է այն խորհուրդը, թե ինչքան կարեւոր են հանճարի ձեւավորման մեջ բնատուր ձիրքը եւ դրա զարգացման պայմանները: Բնածին օժտվածությունը հեղինակը համարում է այն ամենամեծ արտոնությունը, ինչն օգնում է դատողություններում պահպանել անհատականության սկզբունքը: Այն մանկան մենակությունը, որը տարիների հետ Գյոթեի մոտ ավելի էր խորացել, Գյոթեն կապում է իր բնածին լրջության ու հետաքրքրասիրության հետ, իսկ այն սենյակը, որտեղ անց է կացրել իր երազկոտ պահերը, եւ որի պատուհանից նա դիտում էր մայրամուտը, փոթորիկը, այգիներում ծաղիկներ խնամող հարեւաններին, դրսում զվարճացող երեխաներին, Գյոթեն նույնացնում է սեփական հետաքրքրություններին: Հեղինակային անկեղծությունը ժամանակի եւ սեփական Ես-ի ունեցած բոլոր հարաբերությունների նկարագրությունների մեջ աջակցում է ընթերցողին հստակ սահմանազատելու իրականը, որը կոչվում է ճշմարտություն եւ այն ներքին զգայականը, որը մնում է բանաստեղծական, եւ որի ջատագովը մնաց Գյոթեն իր ամբողջ կյանքի ընթացքում: Հաճախակի անդրադառնալով բնական ընդունակություններին՝ նա արտահայտում է նաեւ դժգոհությունն իր բնավորության վերաբերյալ, երբ նա, վայրկենապես բորբոքվելով կամ զայրանալով, հեշտությամբ կարող է մոռանալ իրեն ցույց տրված, որն օգնությունը եւ ամենաբացահայտ ձեւով ապերախտություն դրսեւորել: Ունեցած ընդունակություններով Գյոթեն զգում էր իր բանաստեղծական էությունը, շուտ ընկալելու, առարկայի մեջ թափանցելու եւ յուրացնելու ունակությունը օգտագործում է տարբեր ժանրերի ու լեզուների՝ ընդհուպ մինչեւ եբրայերենի, Աստվածաշնչի, աշխարհագրության, նկարչության, փորագրության յուրացման համար: Արդյունքում երիտասարդ Գյոթեն դատողություններ էր անում տարբեր բնագավառների շուրջ: Սյուժեի մեջ ներգրավված պատմական անցքերը Գյոթեն քննում է մարդու ներքին կառուցման վրա թողած ազդեցություններով, պարզում, թե ինչքանով են

[1] Գյոթե Յ. Վ., Բանաստեղծություն եւ ճշմարտություն, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1985, էջ 68-69:

դրանք մարդուն դարձնում կատարյալ կամ ընդհակառակը նետում ինքնաժխտման գիրկը: 1755 թ. նոյեմբերի 1-ին Լիսաբոնում տեղի ունեցած երկրաշարժը, որը լուրջ քննարկման նյութ էր դարձել աշխարհի հանրության համար, մանուկ Գյոթեի հոգեկան անդորրը խախտեց իր ամբողջ սարսափով, իսկ 1756 թ. օգոստոսին բռնկված պատերազմը, ընտանիքի մեջ հակասական հարաբերությունները նրա մեջ ծնում էին այլ զգացում... *«այդ բոլորն իմ մեջ ծնում էին մարդկանց նկատմամբ անհարգալից վերաբերմունք, ավելին՝ ատելության զգացմունք, ...»*[1]:

Իրական հենքի վրա Գյոթեն ստեղծագործության հոգեբանական մեխանիզմում անհատի ներքին ազատագրման պահանջը դարձնում է «Ընտրովի ազգակցություններ» վեպի կոնցեպցիաներից մեկը: Հիմքում ընկած է անձնական սիրո խնդիրը, ինչը Գյոթեի դեպքում առ այսօր համարվում է չլուծված: Կանանց կերպարներից Շառլոտան եւ Օթիլիան իրական դեմքեր են եղել Գյոթեի կյանքում: Վեպն ունի գեղագիտական բարդ համակարգ: Բազմաթիվ մենախոսություններում, կերպարների միմյանց արած անկեղծ խոստովանություններում Գյոթեն զարգացնում է վեպի ռեալիստական նշանակությունը:

19-րդ դարի նատուրալիզմի տեսաբան Վիլհելմ Բյոլշը երկն արժեւորել է որպես գերմանական առաջին ռեալիստական-հոգեբանական վեպը:

Այն լույս է տեսել 1809թ., ժամանակի կին ընթերցողների կողմից ընդունվել է որպես «կռվագիրք»: Թոմաս Մանը բարձր է գնահատել վեպի արվեստագիտական նշանակությունը: 2009 թվականին՝ իր հոբելյանական տարում վեպը լույս է տեսել երկու հարյուրերրորդ անգամ: Հեղինակն իր վեպը գրել է հենվելով Քրիստինա Վուլպուսի հետ ամուսնության տարիներին, Քրիստիանե Ֆրիդերիկե Վիլհելմմինե Հերցլիբի հետ ունեցած կապի վրա: Վերջինս վեպում կերպավորում է Օթիլիան: Մյուս կողմից նա վերամշակել է իր բնագիտական իմացությունը եւ այդ ժամանակվա պարտեզաշինության վերաբերյալ իր ուսումնասիրությունները: Վեպն ունեցել է նաեւ այլ արձագանքներ, գնահատվել որպես «չար ցանկությունների երկնային ուղեւորություն»: Վեպի բովանդակությունն այլաբանորեն ներկայացնում է Գյոթեի ներաշխարհի ամբողջ անհանգստությունը բնականի եւ արհեստականի հավերժական բախման միջեւ: Կերպարների հետ ունեցած հոգեբանական, կենսաբանական ընդհանրությունները փաստելու նպատակով հեղինակը ստեղծել է բնագիտական գեղարվեստական մեծ գործ:

Սա գեղարվեստական մի երկ է, որը փորձարկման է դնում մարդուն եւ մարդկային հարաբերությունը: Այդ փորձի թեմավորումն առաջին իսկ տողերից զգացվում է ամուսինների երկխոսություններում: Փորձի թեմավորման հետ հեղինակը տեսնում է դրա բնագիտական բացատրությունը, ինչն ակնհայտ է վերնագրից: Վերջինիս հիմքում ընկած է 1775 թ. շվեդ քիմիկոս Թորբերն Բերգմանի De attractionibus electivis աշխատության վերնագիրը: Այդ մասին

[1] Նույն տեղը, էջ 686-687 էջ50

խոսվում է չորրորդ գլխում. *«Դրանում քիմիկոսները բարեկիրթ են, նրանք հասարակությանն են միացնում մի չորրորդի, որպեսզի ոչ մեկը դատարկաձեռն չմնա»*[1]:

Այսպիսով, գիտակցաբար դիմադրելով ժամանակի հակասություններին՝ աշխարհայեցողական, ճանաչողական բոլոր սահմաններում Գյոթեն կարեւորում է ազատ կամքի դրսեւորման պայմանը եւ այն դարձնում ողբերգականի հիմնական նպատակ:Նրա ստեղծագործությունների համապատկերում գաղափարական հարթության մեջ կերպարը դիտվում է մշտական պայքարում՝ որպես կոփվող գոյաձեւ:

Գրականություն

1. *Goethe J. W.*, Die Wahlverwandschaften, Stuttgart, 1999, Philipp Reclam, 270 էջ:
2. *Goethe –Jahrbuch* , Verlag Hermann Boeblaus Nachfolger Weimar, 2002, Band 119:
3. *Արտմանով Ս.Դ.* XVII-XVIII դդ. արտասահմանյան գրականության պատմություն, Երեւանի Համալսարանի հրատարակչություն, Ե.1986:
4. *Գյոթե Յ. Վ.,* Ֆաուստ I,Հայպետհրատ, Ե.,1963. էջ XXVII, 314էջ:
5. *Գյոթե Յ.Վ.,* Ընտրովի ազգակցություններ, Ե., »Նոր -Դար« հր., 2002:
6. *Յվայգ Ս.* Մարդկության աստեղային ժամերը,Հայաստան, Ե., 1977, 182 էջ: Գարուն, 1998, նոյեմբեր-դեկտեմբեր:

Тема личной трагедии в произведениях И.В.Гете

С. Степанян

Резюме

В статье обсуждается концепция личной трагедии в произведениях Гете. Его основной целью является показать свободу воли героев в своих действиях. Развитие этой концепции тесно связано с историческими, социальными, политическими, философскими и другими факторами. С другой стороны, Гете достигает своей цели через призму своего собственного опыта.

The Personal Tragedy in Works of Goethe

S. Stepanyan

Summary

The article is devoted to the analysis of the concept of personal tragedy in all works of Goethe His main goal was to show the epitome of characters' free will through their actions.The development of this concept is closely connected with historical, social, political, phylosophical and other factors. On the other hand, Goethe realizes his aim through the prism of his real experiences.

[1] Գյոթե Յ.Վ., Ընտրովի ազգակցություններ, Ե., «Նոր -Դար» հր., 2002, էջ 50:

ՀՏԴ *Գրականագիտություն*

ԿՈՐՍՏԻ ՄՈՐՄՈՔ, ՆԱՀԱՆՋ, ՆԵՐԳԱՂԹԵԼՈՒ ՀՈՒՅՍ ԵԶՐՈՒՅԹԸ ՊԵՏՐՈՍ ՀԱՃՅԱՆԻ «ՀՐԱՄՄԵՅԷՔ, ՊԱՐՈՆՆԵՐ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐՈՒՄ

Ն. Դավթյան

«Մարդիկ կը մահանան ամէն օր: Անհետացողները իրենց ետին կը թողուն տխուր զգացումներ, ափսոսանք եւ անակնկալի եկած շրջապատ: Անձեր ալ կան, որոնց մահը կը զանցէ ընտանեկան ու հավաքական կորուստի նոյնիսկ անծանոթներու համար, պարզ այն պատճառով, որ անոնք բան մը տուած են իրենց հաւաքականության, մշակոյթին եւ, ինչու չէ, մարդկութեան, եւ որ հաւանաբար պիտի յիշուի եւ ընկալուի իրենց մահէն տարիներ ետք ալ: Պ. Հաճյան այդպիսիներէն է»:

Յակոբ Կիլլիճեան

Մահից առաջ Հայ դատի նվիրյալ Պետրոս Հաճյանը, ով Դաշնակցության անխոնջ հավատավորն էր, բայց հեռացվել էր կուսակցության շարքերից (Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերին երկրից հեռացողներին դասալիք անվանեցին և հեռացրին կուսակցության շարքերից), խնդրել էր դագաղը ծածկել Դաշնակցության դրոշով: Սա գալիս է փաստելու մեկ անգամ ևս, որ նրա երակներում ավիշը թրթռում էր միմիայն հայի դարավոր ու նվիրական երազի՝ Հայ դատի համար:

«Հայրս՝ Պետրոս Հաճյան,- գրում է որդին,- ծնած էր 1933-ին Ճարապլյուս, հիթիթներու հազարամեայ եւ խեղճացած կարկեմիշը, որովհետեւ իր հայրն ու մայրը՝ քիլիսցի Աւետիս Հաճեանը եւ Եղեռնի վերապրող հռոմկլայեցի Ազնիւ Գույումճեանը, գիւղակ դարձած վաղեմի այդ մայրաքաղաքը հաստատուած էին կիլիկիահայութեան երկրորդ տարագրութենէն ետք…»[1]

Տարիներ հետո, երբ Շավարշ Միսաքյանը՝ «Յառաջ» թերթի հիմնադիրն ու խմբագիրը, Ճարապլուսում վարժարանականներին հարցնում է, թե արդյո՞ք գիտեն ինչու այստեղ են ծնվել, աշակերտ Պետրոսի մտածումների մեջ սեպի պես խրված է մնում հարցը,հարց , որ ամբողջ կյանքում մտատանջել էր իրեն:

Հայրենիքի և օտարության մեջ սերունդ նետած հայի դառնաթախիծ ճակատագիրն էր նրան մղում մեկնել Դեր Զոր, ուր նա ստանձնում է տեղի դպրոցի տնօրինությունը, երբ դեռ նոր կյանք մտած

[1] «Սարտարապատ», Նիւ Եորք, հոկտեմբեր 17, 2012

երիտասարդ էր, ապա Հալեպ՝ «Զավարյան» ուսումնարանում որպես ուսուցիչ աշխատելու: 1968-1970-ականներին ստանձնում է «Քարէն Եփիփ» ճեմարանի տնօրինությունը: 1970-ին Պետրոս Հաճյանը մեկնում է Արգենտինա՝ ստանձնելու Պուենոս Այրեսի Առաջնորդարանին կից Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատության տնօրինությունը, որը վարում է երեսունհինգ տարի: Հիասթափությունը մեծ էր, նշում է իր հուշերում Պ. Հաճյանի որդին, որովհետև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ վարժարանում, որտեղ պետք է աշխատեր Հաճյանը, հանդիպեց օտարախոս, ուծացման գազանի ահասարսուռ երախում կանգնած իսպանախոս հայ մանուկների՝ «Անծանօթ, օտար անուններ կը կրէին պզտիկները և անոնց խոսած տարօրինակ, իտալական եղանակով շեշտը, անոնց տկար հայերէնը…». այս ամենը հիասթափության դուռ բացեցին մտքի մշակի առջև, նույնիսկ ծնվեց ետ՝ Հալեպ վերադառնալու միտքը: Բայց կուսակցական նվիրյալներից մեկի՝ Ազատ Գարակեօզեանի հետ ունեցած երկխոսությունը շրջադարձային եղավ. «Ու հայրս որոշեց մնալ, Սփիւռքի այն անկիւնէն հայապահպանումի կռիւը կաւիճով ու գրիչով մղել…»-նշում է որդին: Պետրոս Հաճյանը գրեթե միայնակ առաջ մղեց Արգենտինայի հայ գաղթօջախի գրական- մշակութային կյանքը: Նա ստանձնեց նաև «Արմենիա» օրաթերթի խմբագրությունը, որը վարեց 1971-1986 թվականներին: Այս տարիներին հայ մամուլն իր եռանդուն մասնակցությունն էր բերում ուծացման վտանգը կանխելու, հայապահպանումի պայքարը գաղափարական նոր փուլ մտցնելու գործում, ծավալվում էին բանավիճային հարցերի քննարկումներ, որում իր անառարկելի դերն ունի նաև հրապարակագիր Հաճյանը:

Մանկավարժ, արձակագիր, հրապարակախոս ու քաղաքական գործիչ Հաճյանը պայքարեց ազգային ոգու պահպանման համար: Հորդորեց, հերսոտեց ու պահանջեց, որ Հայ դատին նվիրված գործեր հրատարակվեն նաև իսպանախոս գաղթօջախների համար: Գիտակցեց, որ արթուն պետք է պահել գաղութահայի միտքը, հասու դարձնել կատարված ողբերգության ողջ դժոխային կողմը՝ արդարացի պահանջը լուծման փուլ հասցնելու նպատակով:

Պետրոս Հաճյանը առաջին գրական փորձերը կատարեց, երբ տասնհինգ տարեկան էր: Նրա մուտքը գրականություն եղավ «Զոլոումը» պատմվածքով, որը հրատարակվեց «Արեւելք» օրաթերթում: Աշխատակցել է նաև «Կանթեղ», «Բագին», «Նաիրի», «Արմենիա» պարբերականներին:

Պետրոս Հաճյանի գրական ժառանգությունը բազմահատոր է. 1987-ին հրատարակվում են «Պարզ քերականություն» երեք

դասագրքերը, 1987- 1990-ին «Հայ մտքի մշակներ» երկու հատորով դասագիրքը լույս էր ընծայվել և՛ հայերեն, և՛ իսպաներեն, որի թարգմանությանը ձեռնամուխ է եղել Վարդան Մատթևոսյանը: Կազմել է «Սոնիա, հայերէն գիտե՞ս» խորագրով մայրենիի վեց դասագրքերը, նաև «Պզտիկ լեզու, զուարթ լեզու» դասագիրքը, որում ընդգրկված նյութերն ազգային գիտակցության, հայեցի դաստիարակության կարևոր խթան են սփյուռքյան իրականության մեջ հասակ նետող սերնդի համար: Մանկավարժական գործունեությանը վերաբերող աշխատությունների կողքին Հաճյանն ընթերցողի սեղանին է դրել նաև գրականագիտական մտքի իր արգասիքները՝ «Հայ մտքի մշակներ» (Grandes figuras de la cultura armenia) երկհատոր աշխատությունը, որտեղ ներկայացրել է հայ մշակույթը 5-14-րդ դարերում: 1995-ին Բուենոս Այրեսում լուս է ընծայել պատմվածքների իր առաջին ժողովածուն՝ «Հրամմեցէք, պարոններ», 2003-ին երկրորդը՝ «Կար ու չկար», 2005-ին Հալեպում ինքնակենսագրական «Կարկեմիշ» վեպը, որը հետագայում՝ 2008-ին առաջին պատմվածաշարի հետ միացյալ հատորով լույս տեսավ Երևանում՝ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի շնորհիվ: Գեղարվեստական այս տարեգրությունը «Ճանապարհ դէպի Կարկեմիշ» խորագիրն է կրում: Նույն թվականին Հալեպում լույս է ընծայվում Հաճյանի «Հարաւը Սփիւռքի մէջ» հոդվածների ժողովածուն:

«Հրամմեցէ՛ք, պարոններ» ժողովածուն բացվում է համանուն պատմվածքով: Ամբողջ պատմվածաշարը թողնում է առանձին պատմություններից հյուսված ամբողջական վեպի տպավորություն, որում գաղափարը մնում է կորստի մորմոք- նահանջի ցավ- ներգաղթելու, այսինքն հայրենիքը վերագտնելու հարթության վրա:

Պատմվածքի հիմքում Ստեփանի կյանքի դառնաթախիծ պատմությունն է. հյուծախտը տարավ կնոջն ու զավակներին: Մնաց լքվածի պես, մոր հետ, կտոր հաց վաստակելու համար անցնում էր փողոցից փողոց, մաքրում, փայլեցնում անցորդների կոշիկները: Ամեն Սուրբ Ծննդի երկրորդ օրը մտնում էին եկեղեցի, և հայ մամիկն աղոթում էր իր որդու և բոլոր ռանչպար հայերի համար: Խնայողություններից մուրացիկին բաժին էր հանում, ով «հայերէն կ՛աղոթէ» և մոր հետ շտապում գերեզմանատուն՝ մոմ վառելու «առանց տապանաքարի» մեռելներու վրա:

Բայց նա երբեք չէր խոսում իր ցավերի մասին: Մտերմիկ ոճով հեղինակը ներկայացնում է Ստեփանի առօրյան, զրույցը, ուրախության աստիճանը, մտահոգությունն անցորդների կոշիկներն էին.

«Հրամմեցէք, պարոննե՛ր: Ձեր կօշիկները կրնան աննշան բան թուիլ ձեզի: Բայց Ստեփանին համար ուրիշ բան են անոնք: Ուրի՛շ»:[1]

Հեղինակի կերտած կերպարները ժամանակի ծնունդն են, մարդիկ ովքեր ապրում են տրտնջալով, բողոքելով, բայց և միշտ հաշտվում են իրենց բաժին ճակատագրի հետ, ու դառնությունների կողքին նաև փոքրիկ ուրախություններով զվարճանում: Սա էր նրանց բաժին կյանքի՝ տխուր կողմը: Փայփայում են իրենց հույսը, որը «ջերմաչափին սնդիկի պէս ելեւէջած է կրաւորականօրէն»:

Ահա Արշալուս Քուրուկը, ով չհասցրեց անգամ աղոթք մրմնջալ ու «շոգենաւ ելլող ճամբորդի մը պէս ձեռքը երերցուց պահ մը, ու աչքերը մարեցան ջուրը նետուող գլանակի մը պէս…»:[2]

Այսպես, նկարագրելով Արշալուս Քուրուկի լքված ու միայնակ մահը՝ Հաճյանը դիպաշարի զարգացման առաջին աստիճանին է անդրադառնում՝ տող առ տող նկարագրելով նրա դառը կյանքը՝ «մանկութեան լսուած հէքրաթի մը նման հին, բայց միշտ թարմ. կար ու չկար»:

Շատ դառնությունների միջով է անցել Արշալուս Քուրուկը, լվացարարուհի էր, նրա հիշողության մեջ դաջված են երանելի ու տխուր օրերի հիշողությունները. Գնոյի սիրով տարված աղջնակ էր, տղան գլաքարիկներ էր նետում, որը տաշտի ջրի մեջ չլմփում էր, աղջիկը վերցնում էր ու հաշվում քարերը: Անցան երանավետ օրերը.

-Արեւնիդ խաւարի, թուրքէ՛ր:

Արշալուս Քուրուկի շուրթերից պոկված բառերն իր կործանված կյանքի գլխավոր մեղավորի անունն են հուշում. ամուսնուն զինվոր տարան, ու նա այլևս չվերադարձավ, կորցրեց նաև զավակներին, և իրեն մնացին արցունքները՝ անապատի ավազների մեջ: Թաքուն լացեց գերեզման չունեցող զավակների համար, իսկ առավոտյան շտապեց այն տները, որտեղ լվացարարություն էր անում: Հայ մամիկը տեսավ կյանքի առաջընթացը. մոմին փոխարինեց էլեկտրական լույսն ու նա հրձվեց, նախանձով չնայեց, բայց ահա տանտիրուհու լվացարանի մեջ երբ «բազմեց» լվացքի մեքենան, Արշալուս Քուրուկը դառնացավ. սկսեցին մերժել նրան, բայց այդ օրը նա էլի լվացք ուներ, սպիտակեղենը արևին փռելիս գլխապտույտ ունեցավ, տարան նրան հիվանդանոց ու այլևս չվերադարձավ … Կար ու չկար, տառապանքներով լի մի կյանք ու նրա անողոք հարվածներից կքած Արշալուս Քուրուկ: Կերպարները Հաճյանի վերցված են իրական

[1] Պ. Հաճեան «Ճանապարհ դէպի Կարկեմիշ», Երեւան. 2008, էջ 20
[2] Նոյն տեղում, էջ 21

կյանքից, նրա կողքին են ապրել ու կրել իրենց խաչը, ահա թե ինչու ամեն կերպարի մեջ ասես շաղախված է սերդի ամբողջական նկարագիրը:

«Թու՜, աշխարհ»-ի հերոսներին կերտելիս հեղինակը, խոսելով ներգաղթի կազմակերպիչների մասին, գրում է. «Լուրջ էին այս մարդիկը. անպէս որ չէին կրնար գէշ բան ընել, չէին կրնար սուտ բաներ խօսիլ»:

Եվ կորսուստներ ունեցած սփյուռքահայը, նա ով նորից տուն կառուցեց, արարեց կարոտով, խոսեց օտար լեզուներով, նրանց տարազի, սովորությունների մեջ մտավ, հարսանիք արեց, զավակ մեծացրեց, գերեզման ունեցավ, հավատաց կոմիտեճի տիգրաններին, հավատաց ու փայփայեց հույսը՝ երթա՛լ Հայաստան. «Աշխարհ թող լսէ. հայը ծովու վրայով Հայաստան պիտի երթա»: «Տարօրինակ է հայուն հայրենասիրությունը,- նկատում է արձակագիրը:-Դեղնած արտի պէս պզտիկ կրակով կը բռնկի: Ըսեք իրեն՝ Հայաստան կամ Արարատ, Էջմիածին կամ Սեւան, անիկա մէկ վայրկյանի մէջ պիտի մոռնայ քառասուն տարուան քրտինք եւ դառնութիւն, քառասուն տարուան տուն, գործ եւ յոգնութիւն»[1]:

Հաճյանն առաջիններից էր, ով գրականության մեջ կարոտի կողքին դրեց ներգաղթի թեման, խոսեց հայի հույսի ու սպասումների մասի՝ վերհանելով նաև թերությունները, այն, որ «կոմիտեճի» կոչված տղաները շորթեցին ներգաղթողի վերջին շապիկն անգամ:

Արուշ Տային այն հարյուրավորներից էր, ովքեր «անոխակալ տրամադրությամբ» ամեն օր սպասում էին «քարթին», որով հնարավորություն կընձեռվի իրեն շոգենավ նստելու և հայրենիք վերադառնալու:

Երեկոներն այս մարդիկ հավաքվում էին Սողոմոնի գինետուն՝ հոգսաշատ օրը գինու բաժակի մեջ թաղելու: Ապա ազգ ու քաղաքականություն են քննարկում, մտմտում ներգաղթի շուրջ, մտովի վերադառնում Կարս ու Արդահան: Այսպես գլորվեցին օրերը, շատերն ամեն ինչ կորցրին, նրանց պես նաև Արուշ Տային, նրան մերժեցին բոլորը, մարդիկ ջղայնացած էին, մտազբաղ «Եղբա՛յր, տակնուվրայ եղանք: Աս Ներգաղթը մէջքերնիս կոտրեց: Ի՞նչ ընենք, Արուշ Տայի, մենք ալ քեզի պէս, մենք ալ քէզի պէս…»[2]

Արուշ Տային այլևս ոչինչ չուներ ծախելու, ու նա դառնացավ աշխարհի, մարդու հանդեպ.

---

[1] Նույն տեղում, էջ 60

[2] Նույն տեղում, էջ 45

Թու՜, աշխարհ, քու…

Եվ ճգվում է հայհոյանքների շղթան, ինքը ծախեց ամեն ինչ՝ մինչև վերջին կարպետը, բայց »կոմիտեճի տիգրանները« տներ գնեցին գյուղաքաղաքում:

-Հե՜յ, խայինի աշխարհ…

Բողոքում էր Արուշ Տային՝ հիշելով Ներգաղթը, շարունակեց ապրել, բայց ամեն անգամ հիշելով՝ թքում էր աշխարհի ու նրա անարդար կարգերի վրա:

Մսագործ Մելքոնը հայրենիք վերադառնալու նպատակով տղային՝ Մերուժանին պարտադրեց հրաժարվել սկաուտիզմից: Բայց նրա քարթը չեկավ ու նա հանգչում է Կարկեմիշի գերեզմանատանը(«Պարո՛ն, անունս գրէ»): Այդպես նաև «Գոտին» պատմվածքի հերոսները. հայրն հավատում էր, որ երազային հայրենիքից մնացած կտորը՝ արևելյան հատվածը՝ Արարատն ու Սևանը, կդառնան իրենց ապաստանը, ու հայրը արգելեց այլևս որդուն եռագույն գոտին կապել. «Մեզ դաշնակ կը կարծեն, տղա՛ս, Հայաստան չեն տանիր յետոյ, ի՞նչ պիտի ընես այս գոտին…,-որդուն հորդորեց հայրը»: Տարիներ գլորվեցին, շատերի պես նրանց գաղթելու քարտն էլ չեկավ ու՝ «Հայրս չկա այլեւս, ու մեր գիւղաքաղաքէն երեք ընտանիքներ միայն գացած են Հայաստան: Ներգաղթը հարսանիքի պէս սկսած էր հոն եւ յուղարկաւորութեան պէս վերջացած: Ու հիմա, երբ կը գրեմ այս տողերը, չեմ գիտեր, թէ ու՞ր կորսուեցաւ եռագոյն գօտիս, բայց գիտեմ, թէ անոր երեք գոյները սիրտս օղակեցին, ու հիմա, ներէ՛, հա՛յր, որ ես չեմ կրնար քակել այդ գօտին…»[1]

Ներգաղթելու խանդավառության ալիքը ամբողջովին կլանել էր համեստագործ Գևոյին, մանրավաճառ Փոլին, մսագործ Արոյին. «Սպասողներուն համար Ներգաղթը բերնէբերան եղաւ հմայիչ բառ մը, բուժիչ դարման մը…»:

Եվ ծրարված կարոտը՝ Ներգաղթ անունով, թևեր առնելով՝ սավառնեց օդում, հասավ էրգիր, ապա կորավ մշուշներում՝ վերստին փոխարկվելով կարոտի, ապա հիասթափության: Հային մնաց դարձյալ պաքարը՝ ուծացման, ազգային կերտվածքի պահպանման համար: Այսպես, նույն հանգուցակետում են մնում ներգաղթ-կարոտ-նահանջ:

Արձակագիրը նույնպես գրչով պայքարեց նահանջի դեմ, արժևորեց հայապահպանումի կարևորությունը. կապույտ ժապավեն կապած աղջնակը՝ Արփիկը, հանդեսի ժամանակ ասմունքեց հայերեն, ու մեծ մասը արտասվեց, թե ինչու, այդպես էլ չհասկացավ: Հանդեսից

[1] Նույն տեղում, էջ 63

հետո մեծ մամն ասաց, որ «քերականը իր լեզուն ոսկի դարձուց»: Եվ ահա նա ինքնաշարժով սլանում էր՝ արձակուրդը Հալեպում մորաքրոջ մոտ անցկացնելու համար: Աղջկա կողքին նստած պարոնը, ով նույնպես հայ էր, հարցասեր աղջնակին պատասխանում է, որ լեռներն Աստված է շինում, ու Աստված հային տվել է Մասիսը, պահակ կարգել, որպեսզի դևերն ու վիշապները չավերեն մեր երկիրը, բայց ամաչեց ասել, որ չի տեսել Մասիսը, և որ իր համար նույնպես այն մնում է սրբազան բաղձանք :

Մասիսը սոսկ լեռ չէ, պատմություն է, հայի հավերժության խորհուրդն ուսած նահապետ, վկան Հայկի ու Բելի հաղթական կռիվների, Ավարայրի, մեր հերոսական անցյալի՝ հաղթանակների ու պարտությունների, վկան քսաներորդ դարասկզբի հայոց մեծ եղեռնի: Եղեռնածին օրերի ցավի ու մորմոքի արահետներով քայլող հարյուրավորների մեջ էր նաև Եսթերը, նույն ինքը՝ պետևի Ֆատելը. նրան նույնպես «ժպտաց» Դեր Զորի արևից շիկացած անապատը, որն իր ավազներում փորձեց թաղել կատարված ոճրագործության հետքերը: Աստծուց խռով հայի ոսկորներն անշիրիմ մնացին, չունեցան լացող իրենց վրա: Մեծ մամը՝ Եսթերը, չէր հիշում՝ ինքը Եդեսիայից էր, թե՝ Մեբաստիայից, հիշում էր նահապետական իրենց գերդաստանը, ընտանիքի անդամներին, նաև գաղթի ոլորապտույտ՝ օձի գալարումներին նմանվող ճանապարհը: Ընտանիքով բռնեցին այդ ճանապարհը, բայց հետզհետե նվազեցին, տարան աղջիկներին ու մանչերին: Իրեն տանող պետևին Ֆատել անունը տվեց ՝ կարծելով, թե տղա է: Եվ տասնհինգ տարի նա ծառայեց այս ընտանիքին, և երբ եկավ «հարսնցու» ընտրելու ժամանակը, նրան Դեր Զոր ուղարկեցին,ու նա չուզեց այլևս վերադառնալ: Հայուհու միակ ցանկությունն այն էր, որ նորից իրեն Եսթեր անունով դիմեին, գտներ եղբայրներին, քրոջն ու մորը: Հուշերի մեջ վերընձյուղվում էին բակի թթենին, վարդենիների պարտեզը, մոր անբասիր պատկերը, մանկական խաղերը: Եսթերն ամուսնացավ կառապան Հովակիմի հետ: Բայց բախտն այստեղ էլ նրան չժպտաց. մի գիշեր գինովցած զինվորները կռվի բռնվեցին կառապանի հետ և դանակահարեցին նրան: Ու Եսթեր քուրուկը ութ տարեկան զավակի՝ Դավթի հետ մենակ մնաց. Հովակիմը որդուն Եփրատի ջրերում խեղդամահ եղած եղբոր անունով էր կոչել: Դավիթը չորս թոռներ պարգևեց մորը՝ Հայկն ու Ռուբենը, պզտիկ Հարութը և յոթ տարեկան Արփիկը, ով ավարտել էր մանկապարտեզի քերականը և հիմա ինքնաշարժի մեջ Հալեպ կմեկներ:

Պատկերավոր ու ճոխ ոճավորումով արձակագիրը փակում է պատմվածքը. «Արևը մէտասաներորդ ժամուն, արուեստագէտի հովեր

առած, պսպղուն շողեր կը գծագրէ բլուրներու գագաթին՝ կանաչ, կարմիր ու ոսկեգոյն»:

Ճիշտ Ճահան Ճահնուրի, Ճավարշ Նարդունու, Վահե Հայկի և սփյուռքահայ շատ գրողների պես Պետրոս Հաճյանը նույնպես հնչեցրեց աստվածաքանքար մայրենիի պահպանման ահազանգը՝: Նրա կերպարներից մեկը՝ Մերթախան Յոսեփը, ով ձեռքին միշտ երկար գավազան ուներ, տեսնելով թրքախոս հայ մանուկներին, սաստում էր.

«Հայերէ՛ն կռուեցեէք, լակոտնե՛ր, հայհոյե՞լ կուզէք, հայերէ՛ն հայհոյէցէք, կը տեսնէ՞ք կոր այս գաւազանը… Այս գաւազանով Արարատի գագաթը պիտի բարձրանամ, կը հասկնա՞ք կոր, լակոտնե՛ր, Արարատի՛ գագաթը, հայերէ՛ն կռուեցէք, կըսեմ ձեզի…»[1]

Այդպես նաև տիկին Աղավնին՝ Վարդանյան մանկապարտեզի մայրենիի ուսուցչուհին. նրա «երաժշտական կտորի մը պէս երանգաւորումներ ունեցող» խոսքի հնչյունները տարիների հեռավորությունից թրթռում էին արձակագրի ունկերում.

-Հայերէ՛ն…պզտիկնե՛ր…հայերե՛ն խօսիլ…

Հորդորում,սաստում էր ուսուցչուհին ու նրա խոսքը «երբեմն մայրական գուրգուրանքի մը նման մեղմ էր ու քնքուշ, երբեմն կը հնչէր ցաւի այնպիսի արտայայտումով, որ կարծես փուշ մը մտած է տիկինին մատը, ուրիշ օր մը սաստը կը պայթէր բարկութեան այնպիսի պոռթկումով, որ մենք՝ պզտիկներս, կը քարանայինք սոսկումով, եւ կամ ալ աղերսանք մըն էր, զոր տիկինը կընէր մեզի, որպէսզի օգնութեան հասնինք, բարիք մը ընենք իրեն»[2]:

«Ճակատագիր» պատմվածքի հերոսին՝ Տիգրանին, տարիներ անց գտնում է եղբայրը. նրա նամակներում բացահայտվում է ահասարսուռ օրերի տաժանելի ամեն մի վայրկյանը. «մէկը չմնաց,- գրում է Լևոնը,-մայրս, քոյրերս մեռան աքսորութեան ատեն, մինակ եղբայրս մնաց, ատ ալ արաբներու մէջ, բայց ի՜նչ օգուտ, ճակատագիրը այսպէս ուզեց, զատուեցանք»: Երկու եղբայրներին ճակատագիրը տարբեր վայրեր նետեց, նրանցից յուրաքանչյուրը իր վրա կրում էր իր ապրած երկրի դրոշմը: Լևոնն ամուսնացավ հայուհու հետ, երկու դուստրեր ունեցավ, բայց իր գերդաստանում ոչ մեկը հայերեն չէր խոսում. «մինակ մենք հայերէն կը խօսինք, ատ ալ երբ մենակ մնանք տունը»[3]:

[1] Նույն տեղում, էջ 214
[2] Նույն տեղում, էջ 228
[3] Նույն տեղում, էջ 142

«Կնահանջե լեզուն»- ժամանակին ահազանգեց Շահան Շահնուրը: Այդպես նաև Պետրոս Հաճյանը ցավով արձանագրեց, որ քայլ առ քայլ սփյուռքահայը օտարվում է թ՛ե ազգային նկարագրից, թե՛ լեզվից: Ուծացման ճահիճն իր մեջ թաղում է հազարավոր հայերի. նրանց մնում է միայն արյան բաղադրությունը, արիական հայ ցեղի արյունը, որը խոսելու է մի օր, արթնացնելու է ազգային թմրած գիտակցությունը: Եվ սա կոչվելու է հայի ու հայության քրիստոսված հարություն: Ճիշտ այդպես եղբայրներից Տիգրանին կյանքն այլ ճակատագիր էր պահել, նա մեծացել էր արաբների մեջ, բնականաբար յուրացրել թե՛ նրանց նիստն ու կացը, թե՛ լեզուն. օրորվել «անոնց նահապետական, անապատային կենցաղով»: Վարժապետը, որին Տիգրանը մեկնել էր անձնաթուղթը, կարդաց՝ Ծննդավայր՝ Ատապազար, Կրոնք՝ միսլէմ: Վարժապետի զարմանք արտահայտող նայվածքից ազդված Տիգրանը բառնցքով կուրծքը ծեծելով վճռական ասաց.

-Անձնաթուղթին մի՛ նայիր, հոս հա՛յ մը կայ, առիւծի պէս մռնչող հայ մը…

Վարժապետը կարդաց «պետևի» Տիգրանի եղբոր նամակը, ով խնդրում է եղբորն իր մոտ ուղարկել մանչ զավակին՝ Զուհերին, որպեսզի կրթության տա ու նրան կտակի իր ժառանգությունը՝ որպես իր հին գերդաստանի միակ արու զավակի: Զուհերը, սակայն, չհարմարվեց ֆրանսիական կյանքին, հորեղբոր մահից հետո վերադարձավ Դեր Զոր: Վարժապետի այն հարցին, թե ինչու տղան չմնաց Ֆրանսիայում, Զուհերը պատասխանեց, թե իր ճակատագիրը կապված է այս հողին: Հայրը մահացել էր կրկնելով. «Ազգիս բան մը չտուի, Զուհե՛ր, տղա՛ս…»[1]

Կրոնափոխ Տիգրանի մեջ նստվածք էր տված, այնուամենայնիվ, հայի ցեղային գենը՝ «պէյյի քէն Էրմէնի քահ…»,-վարժապետին է ուղղում իր խոսքը Զուհերը, որ նշանակում է՝-Հայրս մոլեռանդ հայ էր…

Այդպես նաև Արաքսին, նույն ինքը՝ Ֆաուզիե խանում («Առեղծուած»). նա ճակատագրի պարտադրանքով դարձավ փաստաբան Հիքմեթի կինը, կրծքի տակ կրեց նրա զավակին ու մայրական բերկրանքը հաղթանակեց. հայուհին մոռացավ առաջին սիրո քաղցրությունն ու Նիկողոսին տված խոստումը, բայց չմոռացավ իր ով լինելը, ահա թե ինչու սև չատորի մեջ իր անձը թաքցնելով՝ նա ամեն կիրակի շտապում էր հայկական եկեղեցի, աղոթք մրմնջում :

[1] Նույն տեղում, էջ 145

Պետրոս Հաճյանը գրչով կոչ էր անում լեզուն դարձնել հայապահպանումի կարևոր կռվան: «Սոնիա, հայերէն գիտե՞ս» նպատակային հարցադրումով ծնված նրա դասագրքերը այս նվիրական գործի ապացույցն են:

Термин горечь потери, отступления, надежды на иммиграцию в сборнике Петра Ачяна “Пожалуйте, господа”

Н.Давтян

Резюме

Статья представляет собой скромную попытку оценить литературную деятельность аргентинского известного педагога, писателя, прозаика Петра Ачяна посвятившего себя Ай Дат.

Многотомное литературное наследие П.Ачяна включает в себя изучение рассказов, книг, издательских статей и литературоведческих исследований. Он был одним из первых, кто наряду с горечью потери страны, вечной ностальгии, затронул в литературе тему иммиграции и заговорил о надеждах и ожиданиях разбросанных по всему свету армян.

The Term Bitterness of Loss, Withdrawal, Hopes for immigration to the Collection of Peter Achyan "Come Gentlemen."

N.Davtyan

Summary

The article is a modest attempt to assess the activities of the Argentine literary renowned educator, writer, novelist Peter Achan, who has devoted himself to Hay Dat.

Literary heritage of P.Achyan is multivolume, it includes the study of short stories, books, publishing articles and literary studies. Along with sorrow of the country loss and the eternal nostalgia he touched on the theme of immigration in the literature, and spoke of the hopes and expectations of Armenians scattered all over the world.

ՀՏԴ *Գրականագիտություն*

ԱԶԱՏԱՄԵՐ ԱՐՑԱԽՅՈՒ ԿԱՄՔԻ ՈՒԺԻ ԵՎ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Ա.Բաղդասարյան

Մաքսիմ Հովհաննիսյանի գրական ձեռքբերումների յուրահատուկ դրսեւորումների ելակետում մարդու հոգեւոր եւ ֆիզիկական գոյության մշտնջենական պայքարի հաղթարշավն է, մարդու «ներսի ու դրսի» ընդգծված պատկերումն՝ անմիջական բացահայտումներով, համոզիչ ու հաստատուն եզրահանգումներով, որոնց հեղինակը հասնում է հոգեբանական եւ փիլիսոփայական հիմնավոր դրույթների ընդհանրությամբ: Նրա կերտած հերոսներն ինքնուրույն, գործունյա, ակտիվ, գաղափարական հայացքների մարդիկ են, անհատականություններ՝ անկախ նրանց գտնվելու վայրից, հասարակական դիրքից, սոցիալական իրավիճակից, սեռից, տարիքից: Նրանք իրական մարդիկ են՝ իրական ձեռքբերումներով, վայրէջքներով ու վերելքներով: Գրողը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսի եւ վերջինիս գործունեությամբ պայմանավորված երեւույթների հոգեբանական բացահայտումներին ու պարզաբանումներին: Առաջնային պլան է մղվում մարդն իր բնույթով ու հոգեբանությամբ, ինչը պատահական չէ, քանի որ արդի ժամանակաշրջանում հոգեբանությունը դիֆերանցվում է՝ դառնալով մարդկանց փոխհարաբերությունների, իմացական, գեղագիտական ու բարոյաէթիկական պատկերացումների բարդ աշխարհի անխախտելի մասը: Հովհաննիսյանն իր արձակում, անդրադառնալով կյանքի բազմաթիվ հարցերին, առավելապես շեշտը դնում է՝ մարդկային հոգեբանության վրա, ինչին հասնում է դիտակետում ունենալով նրա՝ ինչպես հասարակական, այնպես էլ ազգային հոգեբանության առանձնահատկություններին: Գրողի ստեղծած աշխարհն իրեն լավ ծանոթ Արցախ աշխարհն է եւ նրանում ապրող մարդիկ, որոնց հետ հեղինակը հարաբերվում էր «տանու շորերով», առանց քաշվելու, քանի որ թաքցնելու բան չկա: Ինչպես հեղինակն է նշում, ինքն ու իր հերոսները միեւնույն միջավայրի մարդիկ են: Նրանք, ապրելով իրար կողքի, իրար ձեռ առնելով, իրենց «խումարի տալով», իրենք իրենց դուր գալու զուր ճիգերով ծանր գիշերներ էին լուսացնում եւ «հեռացող անցյալի» ու «տարտամ ու հրահրող գալիքի» սինթեզմամբ երազում օրվա բարի ավարտի մասին: 2010 թ. լույս տեսած «Հոգնած երեկո» գիրքն (խմբագիր՝ Դավիթ Գասպարյան) ի տարբերություն Մ. Հովհաննիսյանի նախորդ գրքերի, բովանդակային եւ կառուցվածքային նոր ձեւաչափի մեջ է: Նրանում զետեղված վիպակներն ու պատմվածքները նորովի են ներկայացնում կյանքն ու իրողությունը, մարդուն, նրա ներքին եւ արտաքին աշխարհը: Այստեղ եւս հեղինակը կուռ սյուժե ստեղծելու առանձնահատուկ նպատակ չի հետապնդում: Նրա մտքի արժեքային համակարգը մարդու հոգեֆիզիկական դրսեւորումների միջոցով կյանքի ճիշտն ու սխալը բացահայտելն է՝ աշխարհում ինչ-որ բան փոխելու հավատով: Համադրելով անցյալն ու

ներկան, իրականն ու երևակայականը՝ գրողը տալիս է ժամանակի ընդգրկուն նկարագիրը, որտեղ հակադրվում են նյութն ու հոգին, ոտնահարվում են մարդուն մարդ պահող կարևորագույն արժեքները: Ժամանակային տարբեր ընդգրկումների հատույթում լավն ու վատը, ճիշտն ու սխալը խառնվում են իրար, եւ աշխարհը դառնում է խճանկար: Հովհաննիսյանը սինթեզելով հոգեբանական եւ երգիծական սկզբունքները, հանդես է գալիս ժամանակակից կյանքի քննադատությամբ: «Արմատը» խորհրդանշական վերնագիրը կրող վիպակում արձակագիրն անդրադառնում է կյանքի ուրախ եւ տխուր դրսեւորումներին՝ բացահայտելով մարդկային հոգու գաղտնի դռները: Նրա հոգեբանական դիտարկումները ոչ միայն օգնում, այլեւ յուրովի են մեկնաբանում իրադարձություններն ու երեւույթները: Հայ նորօրյա կնոջ իրական ու շոշափելի պատկերը ներկայացնելով՝ գրողն իր ընդգծումներում ու ընդհանրացումներով առանձնապես անդրադառնում է հայ եւ, ընդհանրապես, կնոջ ֆենոմենալ կերպարին: Բնության մեջ թույլ էակ համարվող կինն, իրականում ուժի ու զորության խորհուրդն ունի իր մեջ, որն առավել ընդգրկուն է երեւում գրողի կերտած Հեղուշի կերպարի մեջ: Ղարաբաղցի հայ կինը, մեն-մենակ հայտնվելով կյանքի հորձանուտում, կարողանում է հերոսաբար հաղթահարել բոլոր խոչընդոտները: Սեփական սխալների վրա սովորելով, սայթաքել ընկնելով եւ համարձակորեն բարձրանալով՝ Հեղուշը կարողացավ սերտել կյանքի դասերը եւ բացահայտելով աշխարհն ու մարդուն՝ գտավ իրեն, իր սեփական ես-ի իրական տարածքը: Բնավորությամբ եւ վարքագծով Հեղուշը փոքր-ինչ առանձնանում է հայ գրականության մեջ եղած կանանց կերպարներից: Նա, համառ ու կամային անհատականություն լինելով, ձգտում է հասնել իր նպատակին՝ թեկուզ զոհողությունների գնով: Արժանավայել ու ապահով ապրելու անմար երազանքը կյանքի կոչելու համար Հեղուշն անցնում է անվերջ թվացող տառապանքների միջով, մեն-մենակ, առանց որեւէ մեկի աջակցության ու միջամտության: Հեղուշի ամբողջ կյանքն աննահանջ մաքառում է գեղեցիկ ու արժանապատիվ ապրելու համար: Ընտանիքի ապահովվածությունը, երեխաների կրթությունը եւ մի շարք այլ ձեռքբերումներ հնարավոր են դարձել հերոսուհու համառության, ուժեղ կամքի, աշխատասիրության շնորհիվ: Աղջկա՝ Ռեբեկայի տնից հեռանալն ու գաղտնի ամուսնանալը, փոքր որդու՝ Աբրիկի սխալ կենսակերպը, բանակում գտնվող որդու՝ Մարտիկի մեքենա ունենալու տարիների երազանքը Հեղուշի մտահոգությունը, ցավն ու ուրախությունն են:

Պատերազմը ոչ միայն փոխեց հայ ավանդական ընտանիքի կառուցվածքն ու բովանդակությունը, այլեւ հիմք դարձավ մի շարք ընտանիքների չկայացմանը: «Գոտկատեղից ցածր» վիպակը հենց միայնակ սրտերի, չկայացած ընտանիքների դժբախտ պատմությունների անդրադարձ է: Հեղինակն իր կյանքից մի դրվագ ուրվագծելով, առանձնապես շեշտը դնում է նրանում հայտնված համակրելի երիտասարդի վերհուշի վրա: Սումգայիթյան ծանր օրերի դաժանությանն ականատես ու մասնակից

Թուրիկն օպերատոր Ժորիկի միջոցով ծանոթանում է հեղինակի հետ, ով աշխատում էր որպես լրագրող եւ մի քանի ամիս անց արդեն որպես ծանոթի, հանդիպում է նրան, ու նրանց միջեւ տեղի ունեցած խոսակցության արդյունքում Հովհաննիսյանը տեղեկանում է սումգայիթյան դաժան օրերի, արցախյան արյունալի դեպքերի ու իրադարձությունների մանրամասնությունների մասին: Նպատակ հետապնդելով բացահայտել ոչ միայն պատերազմական գործողություններն ու երկու ազգերի միջեւ ծագած կոնֆլիկտները՝ այլեւ մարդկային ճակատագրերի նկարագրությամբ՝ կյանքի եւ մարդու էության խորքերը թափանցելը: Վիպակում առկա են նաեւ ազգային առանձնահատկությունների պարզաբանումն ու արժեւորումը: Հեղինա կը հերոսի մտքերի բարձրաձայնման միջոցով բացահայտում է նրա կերպարն՝ ընդգծելով ազգային յուրահատկությունները: «Ղարբաղցին իր մասին հոգնակի է խոսում, համեստ է,- Տանկի վրա ենք աշխատում»[1],- Ռուբիկի կերպարը ներկայացնելու ժամանակ ընդգծում է հեղինակը: Նա իր հերոսների միջոցով բացահայտում է իրենց իսկ կենսագրության որոշ մանրամասներ, որոնք ոչ միայն նրանց կյանքի բնութագրիչներն են, այլեւ մի ողջ ժողովրդի: Հայ ժողովրդի դժվար մաքառումների, հպարտությունների ու հաղթահարումների մասին է «Գոտկատեղից ցածր» վիպակի բովանդակային առանցքը:

Ղարաբաղի եւ ղարաբաղցու ցավերի եւ ուրախությունների, կորուստների ու կարոտների մասին է նաեւ «Մոլորակ «Փակուղի» վերնագիրը կրող վիպակը: Հեղինակն, ընթերցողին ծանոթացնելով Ստեփանակերտի Փակուղի փողոցի եւ նրանում ապրող տասնչորս սեփական տների բնակիչների հետ, շեշտը դնում է նրանցից առավել ակտիվների կյանքի ու կենսակերպի նկարագրության վրա: Դիմելով Ղարաբաղյան բարբառի հյութեղ բառ ու բանին՝ ռեալիստական գույների թանձրությամբ եւ հումորի նուրբ պատկերավորությամբ ստեղծում է կենդանի եւ իրական կերպարներ՝ արժեւորելով նրանց անհատականությունն ու մարդկային պարզորոշ դեմքն ու դիմագիծը: Վիպակում արտացոլված կյանքն ու նրանով ապրող մարդու հոգեկերտվածքը ընդգծվում ու ընդհանրացվում են աշխույժ երկխոսությունների, վերհուշի, հումորի, հերոսների քաղաքացիական եւ բարոյական ակտիվ դիտարկումների միջոցով: Փակուղի փողոցի բնակիչներ թաղկոմ Սրապը, Ապենակը՝ Պուտին մականունով, Ստեփանը, մտավորական Հայկ-Արամը, Լիպարիտը, Ելիզավետա Գեւորգեւնան եւ այլոք Փակուղին մի յուրօրինակ մոլորակ են դարձել, որտեղ հավաքվելով՝ նրանք խոսում են խորհրդային կարգերի եւ նրա փլուզումից հետո երկրի սոցիալ-հասարակական իրադարձությունների դրական ու բացասական փոփոխությունների մասին: Անցյալն ու ներկան համադրելով ու հակադրելով՝ գրողն անդրադառնում է առկա մի շարք հիմնախնդիրների:

[1] . Մ. Հովհ., Հոգնած երեկո, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփ., 2010, «Գոտկատեղից ցածր», էջ 55:

«Մոլորակ «Փակուղի» վիպակում արծածվում է հայ ավանդական ընտանիքում տղամարդու եւ կնոջ դերերի փոփոխության արդիական խնդիրը: Փակուղի փողոցի եւ նրա բնակիչների վարք ու բարքի, օրախնդիրների ու օրակարգի մասին որպես վերջաբան, հեղինակը «Հրաժեշտից առաջ» վերնագիրն է ընտրել: Այստեղ երեւան են հանվում ոչ միայն աշխարհի մի աննշան հատվածում տեղավորված մոլորակի՝ Ստեփանակերտի Փակուղի փողոցի եւ նրանում ապրող մարդկանց ցավերը, ուրախություններն ու պատմությունները, այլեւ հենց գրողի մտքի փիլիսոփայական դիտարկումները կյանքի եւ աշխարհի, մարդու եւ նրա զգայական աշխարհի շուրջ: «Աշխարհի գոյությունն իմաստավորվում է մեր զգացողությունների մեջ: Առանց մեր մասնակցության աշխարհը կորցնում է որեւէ իմաստ»[1],- գրում է հեղինակը: Կյանքի հարաբերական ու պարադոքսալ դրսեւորումների շուրջ գրողի ըմբոստացումները, հոգու ընդվզումները, կորուստներն ու երազանքները հակասական հարցերի ու հարցականների ալիք են բարձրացնում: Արձակագրի մտահոգությունը Փակուղի փողոցի եւ նրա բնակիչների աշխարհից հեռանալու, անհուշ մոռացվելու խնդիրն է: Ժամանակի ընթացքում ամեն ինչ փոխվում է. հները գնում են, գալիս են նորերը, արդեն նոր հոգսերով, նոր ցավերով եւ ուրախություններով: Հեղինակն, ընդհանրացնելով եւ ընդգծելով Լիպարիտի ու Ոսկեհատ տատի ցավն ու տառապանքը, Սրապի, Ստեփանի խոսքակռիվը, մտավորական Հայկ - Արամի լրացումները, հատկանշում է այն կարեւոր իրողությունը, որ, այնուամենայնիվ ոչ-ոք եւ ոչինչ չի մոռացվում անկախ ժամանակից եւ տարածության հեռավորությունից: Այստեղ գրողը շեշտը դնում է առավելապես անցյալը չմոռանալու կարեւորության վրա: Ներկան հիմնված է անցյալի վրա, եւ ինչքան էլ նորերը գան՝ իրենց նոր հոգսերով, նոր ուրախություններով եւ ինչ բառերով էլ ձեւակերպեն սիրո եւ վշտի զգացումները, միեւնույն է «մի անանուն կարոտ կշարունակի անգթորեն թեւածել «Փակուղի» մոլորակի ոլորտներում»: Քանի որ ծառի ամրությունն արմատով է պայմանավորված: Պատահական չէ, որ արձակագիրը «Հոգնած երեկո» գրքի առաջին շարքը, որը երեք վիպակից է բաղկացած, սկսել է «Արմատ» խորհրդանշական վերնագիրը կրող վիպակով:

Գրքի հաջորդ շարքը «Ծանր կաթիլ» հետաքրքիր վերնագիրը կրող չորս պատմվածքների ամբողջությունն է: Այն, որ արձակագիրն առաջին անգամ է անդրադառնում վիպակի ժանրին եւ յուրովի է ներկայանում այս ձեւաչափի մեջ, ինքնին նորույթ է: Սակայն գրքում տեղ գտած պատմվածքները եւս իրենց բովանդակությամբ ու թեմատիկայով, խոսքի եւ մտքի կառուցվածքով նոր ձեւաչափով են հանդես գալիս: Բարդ հոգեբանական վերլուծությունները, փիլիսոփայական դրույթներն իրենց տեղն են զիջում նորօրյա արձակի առաջ քաշած պարզությանը: «Ծանր կաթիլ» պատմվածքը, որը համանուն շարքի առաջին գործն է, թեմատիկ առումով պատերազմական եւ

[1] . Ն. տ., «Հրաժեշտից առաջ», էջ 121:

հետպատերազմական իրադարձությունների, առանձնապես զինծառայողների ու զինվորական կյանքի մասին է: Արձակագիրն, առաջին դեմքով ներկայացնելով դեպքերն ու իրադարձությունները, հերոսների միջոցով համեմատության մեջ է դնում երեկն ու այսօրը: Կամոյի, Հովիկի, Գրիգորի, Մխիթարի եւ այլ քաջորդիների հուշերի, մտահոգությունների ու հիասթափությունների միջոցով գրողը բացահայտում է ժամանակի իսկական դեմքը: Մալաթիայի գիտահետազոտական ինստիտուտի առաջատար ինժիները, թողնելով աշխատանքը, Երեւանի տունն ու տեղը, գալիս է Ղարաբաղ՝ պատերազմին մասնակցելու համար: Պատերազմի բոլոր օրերին կռվի դաշտում, կրակի տակ տանկ ու մարտական այլ տեխնիկա վերանորոգելով՝ «պրոֆեսոր» մականունն է ստանում: Եվ ահա խաղաղ ժամանակներում երիտասարդ սպան ականատեսն ու մասնակիցը լինելով զինվորական, ապա հասարակական-քաղաքական անարդարությունների, խորը հիասթափություն է ապրում: Եվ որոշում է վերադառնալ Երեւանի իր տունը եւ ինժեներական խոստումնալից աշխատանքին: Երիտասարդ սպան չկամությամբ է գալիս այդ որոշման, ինչի շուրջ խոսելու եւ խորհրդակցելու նպատակով հանդիպում է քեռու (հեղինակի մասին է խոսքը) հետ եւ օղու բաժակների հաջորդականության մեջ խոսում իր մտահոգությունների ու հիասթափությունների մասին: Նա, անդրադառնալով պատերազմական ծանր տարիներին, ցավով է արձանագրում խաղաղ ժամանակներում կատարվող անարդարությունները: Այս ճակատագրական ժամանակաշրջանն իր բոլոր դրսեւորումներով լավագույն ձեւով արտացոլվում է «Ապաստարան» պատմվածքում, որտեղ, հեղինակային ես-ի առկայությամբ, Հովհաննիսյանն անդրադառնում է իր երկրի, իր ժողովրդի ինքնապաշտպանության կարեւորագույն դրսեւորումներին, նրանց հոգու եւ կամքի ուժի ընդգծմամբ ներկայացնում պատերազմն ու նրա ցավալի հետեւանքները: Դիպուկ բնութագրումներով, իրականության ճշգրիտ պատկերմամբ արձակագիրը բացահայտում է ոչ միայն քաղաքի ներքին անցուդարձը, այլեւ նրանում ապրող հայտնի ու անհայտ դեպքերն ու դեմքերը՝ հատկանշելով նրանց կենսակերպն ու հոգեկերտվածքը: Գրողի նպատակը Ղարաբաղի եւ ղարաբաղցու կյանքի եւ հոգեբանության, բնույթի ու բնավորության հատկանշական գծերն ընդհանրացնելն ու բացահայտելն է: Իր իսկ կյանքի որոշակի դրվագների նկարագրության միջոցով արձակագիրը բացահայտում է ժամանակաշրջանի դժվարություններն ու անհարթությունները: Այստեղ լավագույն ձեւով երեւում է նաեւ կնոջ կերպարի հանդեպ ունեցած նրա ջերմ զգացումը: Եվ պատահական չէ, որ հեղինակը պատմվածքը նվիրում է հենց իր կնոջը՝ Զոյա Թորոսյանին, ով մանկաբարձուհի լինելով, անձնական օրինակով եւ մասնագիտական գիտելիքներով արդարացնում է իրեն: Հեղինակն իր մեկ օրվա տեւողության տեքստային պայմանական ժամանակի մեջ կարողանում է ցույց տալ ներկան՝ իր բոլոր դրսեւորումներով: Թշնամու արկերից պաշտպանելու համար գրողը կնոջ հետ տեղավորվում է մետաքսի կոմբինատի կառուցված

«բանվորական տներ» անվանվող շենքերից մեկի ապաստարանում: Ահ ու սարսափը, որ պատել էր արցախական աշխարհին, մի հարկի տակ էր հավաքել մանկաբարձին, գրողին, հաշվապահին, վարպետին, ծաղկավաճառին, բոլոր-բոլորին՝ անկախ սեռից, տարիքից, հասարակական դիրքից ու մասնագիտական բնագավառից: Նրանք մտածում էին միայն կենդանի մնալու մասին: «Այդ պահին ոչ ոքի չէր մտահոգում, թե ինչպես են բնակարանները ավերվում, եւ ներսի կահ-կարասին ոչնչանում՝ տարիներով մի կերպ խնայված փողերով ձեռք բերած»[1],- գրում է հեղինակը: Հովհաննիսյանը թե հերոսների վարք ու բարքի, թե իր հիմնավորումների ու համոզմունքների առանցքում շեշտը դնում է հայ մարդու՝ հայրենի հողի հանդեպ տածած անմնացորդ սիրո, նվիրվածության արժեւորման վրա: Այլապես, ինչպես մեկնաբանել փոքրիկ Հովիկի այն մեծ երազանքը, թե երբ տասնվեց տարեկան կդառնա, որ կարողանա կռվի գնալ: Իսկ տասնվեցի մեջ մտած Վահանը, երդվելով «մոլոդոյների» ջոկատին, պատրաստվում է մեկնել պատերազմի դաշտ՝ թողնելով սիրած աղջկան եւ չկարեւորելով իր առողջական խնդիրները: «Արդեն որոշված է, երդում եմ տվել молодой-ների ջոկատին, գնալս հաստատ է»[2],- ասում է Վահանը: Նույնքան դրամատիկ ու հերոսական է երիտասարդ աղջկա՝ հղիությունը չընդհատելու հաստատուն որոշումը: Ծնողներից գաղտնի պահելով երեխա ունենալու փաստը՝ նա վախից ու նյարդային լարումից արյունահոսություն է ունենում: Իսկ երբ լսում է երեխայի հոր զոհվելու մասին, որոշում է, որ երեխան պետք է ծնվի, որպես նրա միակ հիշատակը: «Ես ոչինչ չասացի: Հոգիս լցվել էր: Վերամբարձ մտածեցի՝ այս ժողովրդին հաղթել չի լինի»[3],- եզրակացնում է գրողը:

«Ծանր կաթիլ» վերնագիրը կրող չորս պատմվածքներից բաղկացած շարքն ամփոփվում է «Ապաշխարանք» պատմվածքով: Այստեղ հեղինակն անցյալ-ներկա ժամանակային պայմանականության մեջ անդրադառնում է Արցախյան պատերազմի եւ հետպատերազմյան դաժանություններին ու դժվարություններին, մարդկային եւ անմարդկային դեպքերին ու դեմքերին: Հիշողության, վերհուշի, երկխոսության եւ գեղարվեստական այլ միջոցների գործածությամբ Հովհաննիսյանը համադրում ու հակադրում է Ղարաբաղի եւ ղարաբաղցու հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգեբանական տարաբնույթ իրողությունները: Գրողի մտքի շեշտադրումը թերեւս դրվում է այն ցավալի իրողության վրա, որ Ղարաբաղի եւ ղարաբաղցու պատերազմն այսօր էլ շարունակվում է: Եվ եթե Արցախի ազգային-ազատագրական անհավասար պայքարում հայը կարողացել է հաղթել իր միասնականության, հավատի եւ համախմբման շնորհիվ, ապա հետպատերազմյան ժամանակաշրջանում արդեն երկրի ներսում առաջացած գոյի խնդիրը նաեւ պայմանավորված է երկրի պառակտվածության, ժողովրդի

[1] . Ն. տ., «Ապաստարան», էջ 164:
[2] . Ն. տ., էջ 161:
[3] . Ն. տ., էջ 167:

անհամախմբվածության իրողությամբ: Դեպրեսիայի մեջ հայտնված հասարակության անդամը հայտնվել է հոգու այլասերման վտանգի տակ՝ չկարողանալով հաղթահարել պատերազմին հաջորդող հիասթափությունը: Արցախյան ազգային-ազատագրական պայքարում հայի հոգում ծնված լույսն ու հրավառությունն ասես խամրեց պայթյունավտանգ խաղաղության պայմաններում: Դրա պատճառը, թերևս պայմանավորված է անցումային շրջանի ցավագին երևույթների առկայությամբ: Դրանցից վատթարագույնը Օլիգարխի՝ անհուսալի վիճակում հայտնված մարտական ընկերոջ աշխատանքի վերցնելու խնդրանքը մերժելու կարողությունն է: Փորլուծությունից «կեփերը շոշած եւ ամոթահար Ճուտոն» վաղուց արդեն Ճուտո չէ, այլ «թիկունքավոր աթոռին» բազմած մարտական խաչի ասպետ, ում առաջ վիզ է ծռում, դառնում «կուզուկծիկ», «շեֆի» ամոթալի դեպքերի կենդանի մնացած միակ անցանկալի հիշեցումը՝ նախկին քաջ ու անվախ հրամանատարը, ով այլևս հրամանատար չէ, այլ «հասարակության մեջքի հոռը» հարող «հիշողության անտեսանելի կոշտուկ»: Հովհաննիսյանը ձեռքը դնելով ժամանակի կենդանի զարկերակին, հասել է իրականության ճշգրիտ առերեսմանը. «Իսկ նրանք՝ այդ ջահել տղաները, այլևս հերոսներ չեն: Ասպարեզում չհերոսներն են դիրքավորվել: Ապաշխարհի՝ր, երկիր աշխարհ»[1],- եզակիից գալով դեպի ընդհանուրը՝ արձանագրում է հեղինակը, խնդրի գլոբալացումն ընդհանրացնելով «երկիր աշխարհ» ընդհանրության միջոցով: Առանձնակի նշանակություն տալով հերոսների հետ կատարվող իրադարձությունների ու երևույթների հոգեբանական բացատրությանը՝ գրողն, ընդգծում է մարդ-անհատի ներքին եւ արտաքին աշխարհը, օգտագործելով նրա ինտելեկտուալ եւ զգայական ներուժը: Երեւույթի հակառակ պրոցեսը եւս առկա է գրողի գրական ընկալումների դիրքորոշումներում:

«Հոգնած երեկո» գրքում զետեղված համանուն պատմվածաշարը եւս աչքի է ընկնում մտքի թարմությամբ, յուրօրինակ պատմելաձեւով, կենդանի նկարագրություններով, խորիմաստ երկխոսություններով եւ գեղարվեստական այլ միջոցներով: «Օրերից մեկը», «Եզակի թվով», «Գենադիկ», «Հոգնած երեկո» պատմվածքներում կյանքն ու մարդկային բնավորությունը հանդես են գալիս միասնաբար: Պատմվածքների գլխավոր հերոսը, գրողն է, ով պատմելով խեղված ճակատագրերի, ուրախ ու տխուր օրերի, իրադարձությունների, մարդկանց հոգու տարրաբնույթ դրսեւորումների մասին, իմաստավորում է նրանց փիլիսոփայությունը: «Վերջին որոշումը» խորհրդանշական վերնագիրը կրող պատմվածքի հերոսներ Արամն ու Վարշամը իրենց խոսքի, վերհուշի ու ներքին մենախոսության միջոցով բացահայտում են ոչ միայն իրենց կյանքի հետաքրքիր դրվագները, այլեւ իրենց գյուղի ու գյուղացիների ճակատագրերը: Այս ամենի հիմքում ընկած եոգյուղ-քաղաք հակադրությունը եւ հակադրությունից առաջացած հարցերն

[1] . Ն. տ., «Ապաշխարանք», էջ 175:

ու հիմնախնդիրները: Հետաքրքիր երկխոսության միջոցով քաղաքում բնակվող Արամն ու գյուղում ապրող Վարշամը համագյուղացիներ լինելով եւ տարիներ հետո հանդիպելով իրար, խորհրդածում են գյուղից քաղաք գնացող մարդկանց, նրանց սոցիալական եւ հոգեբանական ակնհայտ փոփոխությունների եւ հոգեբանական մի շարք այլ հարցերի շուրջ: Նրանց խոհափիլիսոփայական դիտարկումներում առանձնահատուկ տեղ է գրավում ճակատագրի գործոնը: Վերհիշելով անուններ ու պատմություններ՝ հերոսները կիսվում եւ համաձայնվում են կյանքի եւ աշխարհի արդար ու անարդար դրսեւորումների, մարդու բախտավոր կամ դժբախտ լինելու պայմանականությունների գաղափարին: Հովհաննիսյանի հերոսներն ինտելեկտ եւ հարուստ ներաշխարհ ունեցող մարդիկ են՝ անկախ նրանց բնակվելու վայրից, սոցիալ-հասարակական դիրքից, սեռից ու տարիքից: Աշխարհ-կյանք- մարդ- ժամանակաշրջան. ահա այս միացյալ օղակի շուրջ են գրողի խորհրդածությունները, խոռվությունները, վեճերն ու համակերպումները: Ինչի լավագույն դրսեւորումը «Քամահրանքներ» պատմվածքն է «Սպիտակ ագռավներ» շարքից: Որպես բնաբան՝ գրողն ընտրել է Նիցշեի հետեւյալ միտքը. «Ամբողջովին պինդ միայն ամենաազնիվն է լինում»[1]: Աշխարհի անարդարությունների եւ մարդկային հակասական բնավորությունների հարաբերակցման արդյունքում առաջացող անհավասարությունների շուրջ են գրողի «ինքնահերձվող» մտքերը: «Հտպիտ տեսիլքները դուլբուդ են արել, մտքերդ ալեկոծվում են, ինքդ քո մեջ փոթոթվում ես՝ կռվելով աշխարքի դեմ, մարդկանց դեմ, բայց վերջ ի վերջո հանգում ես այն մտքին, որ անհնար է անարդարության առաջն առնել: Մեն մենակ ի~նչ պիտի անես սառն իրականության դեմ հանդիման: Ծնվում են ինքնահերձվող այս մտքերը…»[2],- նշում է արձակագիրը: Ես, նա, մյուսը խորագրային տարանջատման ընդգծումներով գրողը համեմատության մեջ է դնում տարբեր կենսակերպի ու հոգեկերտվածքի տեր մարդկանց, որոնք անցյալում հոգեբանական, սոցիալ-հասարակական այլ իրավիճակում էին գտնվում, ներկայում՝ այլ: Նրա մտքի դիտակետում Արցախի եւ արցախցու անցյալն ու ներկան է, որոնց արտացոլանքում առերեսվում է նաեւ ապագան: Արցախյան պատերազմի, խորհրդային կարգերի փլուզման եւ հետպատերազմյան խառնաշփոթի հետեւանքով երկփեղկվեց հասարակությունը, ինտելեկտին ու զգայական աշխարհին փոխարինելու եկան նյութն ու բնազդը: «Բնազդը գործեց: Մորթու զգացողությամբ նախապատվությունը տրվեց բարեկամական-ազգակցական կապերին: Հեռու գնալ պետք չէր, փնտրտուքի կարիք չկար. հավաքվեցին, իրենք իրենց նշանակեցին»[3],- իրականության պարզ ու կենդանի գույներով ներկայացնում է հեղինակը: Գրողը քաղաքական, սոցիալ-հասարակական, բարոյական

[1] . Ն. տ., «Քամահրանքներ», էջ 240:
[2] . Նույն տեղում, էջ 240:
[3] .Նույն տեղում, էջ 242:

խնդիրների շոշափման մեջ պատկերում է կյանքի եւ մարդկային հոգու բաց եւ անտեսանելի տարածքները: Միահյուսելով հոգեբանական ու երգիծական սկզբունքները՝ ռեալիզմի բարձրագույն դիրքից Հովհաննիսյանը քննադատում է ժամանակակից կյանքի արտասովոր կողմերը, մարդկային աղավաղված բարքերն ու սովորությունները: Իր ձեւաչափով, կառուցվածքով, թեմատիկ ու բովանդակային հարցադրումներով պատմվածքը որոշակի ընդհանրություններ ունի Նար-Դոսի «Ես եւ նա» ստեղծագործության հետ: Հոգեբանական վերլուծության ենթարկելով սոցիալական եւ բարոյական հակադիր բեւեռներում գտնվող մարդկանց վարքն ու բարքը՝ Հովհաննիսյանը կյանքը դեպի լավը փոխելու, անարդարության առաջն առնելու նպատակ է հետապնդում:

Աշխարհում արդարության հաստատման, արդար հասարակության գոյության եւ այլ երիտասարդական երազանքների, դեպքերի ու հիասթափությունների մասին է «Թխկենու ստվերի տակ» խորհրդածությունը, որտեղ հեղինակը մարդ-բնություն համեմատականում շոշափում է մարդու եւ մարդկայինի հարցը: «Ամենից բեթարը էն է, որ մարդիկ աշխատանքից խամրացել են, աչք պահած սպասում են, թե որտեղից մի օգնություն կստանան: Հիմա ամոթ չեն համարում, որ աղբարկղներում… մարդու լեզուն պատ չի գալիս, որ ասի, հավի քթոթ են անում, կամ ձեռքը մեկնած մուրացկանություն են անում: Փող են պարտք վերցնում եւ գիտեն, որ չեն վերադարձնելու: Ամոթը վերանում է. աչքիդ մեջ նայում են ու սուտ են խոսում»[1],- իր երկրի, ժողովրդի ճակատագրով մտահոգված ընդհանրացնում է «Տագնապներ» պատմվածքի հերոս Սոկրատը: Այստեղ առողջ երկխոսության ունների միջոցով գրողն անդրադառնում է կյանքի փոքր ու մեծ ողբերգություններին՝ հատկանշելով մարդ-շրջապատ փոխհարաբերության ճիշտ դիտարկումները: Հեղինակային ես-ը պայմանական անվան տակ ընդգծելը եւ ընդհանրացնելը հարեւանների կյանքի ու կենսակերպի մեծ ու փոքր եղելությունների մասին է, որտեղ հեղինակը հոգեբանական վերլուծության է ենթարկում մարդու ներաշխարհը, հատուկ շեշտը դնելով սոցիալական խնդրի առկայության վրա: Երեմ-Շողեր ամուսինների, Մանուչար եւ ընկեր Համազասպ հարեւանների փոխհարաբերությունների նկարագրություններում գրողն արտացոլում է իրականությունը՝ իր լավ ու վատ դրսեւորումներով: Պատմվածքում առավել շոշափելի է գրողի իրական կերպարը, ով Արմենակ պայմանական անվան տակ արժեւորում է պատմվածքում գործող անձանց կյանքի փիլիսոփայությունը: «Վիպասանի պոտենցյալ «Ես»-երը, այդ թվում չար դիպված «Ես»-երը, բոլորն էլ նրա

[1] . Ն. տ., «Տագնապներ», էջ 262:

հնարավոր գործող անձինք են»[1],- այս տեսակետն են առաջ քաշում Ռընե Ուելլեքն ու Օսթին Ուորրեն «Գրականության տեսություն» գրքում:

Ժամանակաշրջանը եւ նրանում ապրող մարդկանց ապրելակերպն ու հոգեբանությունը բացահայտելում, չի կարող չլինել Հովհաննիսյանի ես-ի առկայությունը: Գրողի ստեղծագործություններում ականատես ենք լինում նրա բնության եւ ապրումների, կենսակերպի ու աշխարհընկալումների իրական դիրքորոշումներին: Այս իրողությունն օգնում է գրողին ոչ միայն թափանցել մարդու կյանքի ու հոգու հայտնի ու անհայտ տարածքները, այլ նաեւ՝ էլ ավելի հավաստի ու անմիջական է դարձնում իրականության արտացոլման գործընթացը: Ընդհանրապես այս իրողությունը գրականության անդաստանում սովորական երեւույթ է: Ցանկացած գրող հերոսի կերտման գործում կամա թե ակամա առաջնորդվում է իր անխափան ես-ի ընդհանրական ընդգծումներով: Պատահական չէ Ֆլոբերի այն խոստովանությունը, որ Տիկին Բովարին ինքն է, ինչպես Դոստոեւսկին, ով իր էությամբ ներկա է չորս Կարամազով եղբայրների մեջ:

«Անքնություն» պատմվածքում Հովհաննիսյանը հանդես է գալիս որպես գլխավոր հերոս՝ խախտելով Լեսսինգի հայտնի այն սկզբունքը, որ «պետք է վերանալ պատմողի հայեցակետից եւ գործել գործող հերոսներից յուրաքանչյուրի տեղը»[2]: Սակայն Հովհաննիսյանի՝ պատմողի հայեցակետից չվերանալու դիրքորոշումը բնավ պայմանավորված չէ գրողի տաղանդի, կենսափորձի ու վարպետության կամ երեւակայության պակասով, ինչի վառ վկայությունը նրա գրական եւ հրապարակախոսական առատ եւ արժեքավոր հունձքն է: «Անքնություն» պատմվածքում, թերեւս, պյուժեն է նման մատուցման ուղենիշ հանդիսանում: Հենց պյուժեի միջոցով է գրողը վերստեղծում իր հերոսի գործողությունների յուրօրինակ շղթան: «Եթե կոմպոզիցիան թեմայի զարգացման տրամաբանությունն է, ապա պյուժեն հեղինակի համար դառնում է բնավորության կազմավորման միջոց»[3],- հատկանշում է գրականագետ Զավեն Ավետիսյանը:

Պատմվածքում հեղինակը ժամանակաշրջանի խնդիրներին է անդրադառնում՝ երգիծական նուրբ երանգներով հատկանշելով ազգային բնավորության որոշակի գծեր:

«Հոգնած երեկո» գրքի եւ վիպակները, եւ պատմվածքներն ինքնատիպ են, ընդգրկուն, համոզիչ թե կառուցվածքային, թե բովանդակային ձեւաչափով: Նրանցում արծարծված խնդիրներն, արդիական լինելով, բարձրաձայնում են թե տվյալ միջավայրի, թե ընդհանրական իրողության

[1]. Ռընե Ուելլեք, Օսթին Ուորրեն, «Գրականության տեսություն», Երեւան, 2008, էջ 123:

[2] . Лессинг Г. Э., «Гамбургская драматургия», М. Л., 1936, стр 123.

[3] . Զ. Ավետիսյան, Գրական ստեղծագործական հոգեբանություն, ԵՊՀ հրատարակչություն, Երեւան, 2011, Լիտոպեդիա՝ բանասիրության հայերեն հանրագիտարան, 2013, հոկտեմբեր:

ընդգրկումների, հիմնավորումների՝ լավ ու վատի, ճիշտ ու սխալի մասին: Գրողի նպատակը մարդկային հոգեբանության եւ բնավորության բացահայտումն է, որն իրականացվում է նրա տաղանդավոր գրչի միջոցով:

Գրականություն

1. *Մ. Հովհ.*, Հոգնած երեկո, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփ., 2010:
2. Ռընե Ուելլեք, Օսթին Ուորրեն, «Գրականության տեսություն», Երեւան, 2008:
3. *Г.Э.Лессинг*, «Гамбургская драматургия», М. Л., 1936:
4. *Զ. Ավետիսյան*, Գրական ստեղծագործական հոգեբանություն, ԵՊՀ հրատարակչություն, Երեւան, 2011:
5. *Ս. Խանյան, Մ. Հովհաննիսյան*, Լեռնաղբյուրի վիպաշխարհը, Ստեփանակերտ, 2007:
6. Լիտոպեդիա՝ բանասիրության հայերեն հանրագիտարան, 2013, հոկտեմբեր:
7. Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան, 2013, սեպտեմբեր:

Отражение силы воли и решимости свободолюбивого арцахца

в прозе М.Ованнисяна

А.Багдасарян

Резюме

В данной статье рассматривается и оценивается книга одаренного писателя Максима Ованнисяна «Уставший вечер», изданная в 2010-ом году. В ней отражается истинная картина прошлого, настоящего Арцаха и арцахца, в свете богатого фолькльора.

В центре внимания автора статьи также и те рассказы, в которых автор отражает силу воли свабодолюбивого арцахца с его мечтой жить на своей независимой исторической родине.

Reflection of willpower and Determination of Freedom-loving People of Artsakh in the prose of M.Hovhannisyan

A.Baghdasaryan

Summary

The article is devoted to the book of fhe gifted writer Maksim Hovhannisyan “The tired evening” published in 2010. It expresses the complete scene of the present and future of Artsakh and its people through Karabakh folklore.

The author pays special attention to those stories which reflect the will and determination of freethinking Artsakh people, their dream to live in the independent historical homeland.

ՀՏԴ *Լրագրություն*

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(տեղեկատվական և վերլուծական նյութերի հավաքագրման և պատրաստման յուրահատկությունները պատերազմական գոտում)

Ա. Հակոբյան

Համաշխարհային զինվորական լրագրության ամբողջական պատմությունը դեռևս գրված չէ, չնայած այն ներառում է արդեն մի քանի դարաշրջան, ունի իր ավանդույթները, միտումներն ու ուղղությունները, ինչպես ցանկացած ոլորտի լրագրություն:

Քանի որ մի այլ առիթով անդրադարձել ենք Արցախի զինվորական մամուլի առաջնեկ «Մարտիկ» թերթին և զինվորական լրագրողների գործունեությանը, ուստի նպատակահարմար չէ կրկին անդրադառնալ այս թեմային:[1]

Համաշխարհային պատմական հետազոտության մեջ զինվորական լրագրության՝ հասարակության համար ունեցած մեծ դերակատարումն արժևորելու և գնահատելու համար բավական է հիշել խորհրդային մարշալ Գեորգի Ժուկովին. «Առաջին շարքերում և կենտրոնական ճակատներում ամենավտանգավոր և թեժ պայմաններում հերոսաբար գործել են հատուկ թղթակիցները, զինվորական մամուլի թղթակիցները, անվախ ֆոտոլրագրողներն ու ռադիոմիության աշխատակիցները: Որպես պահանջված և ամենահավաստի տեղեկատվական աղբյուր (Հայրենական Մեծ պատերազմի ճակատից)՝ ողջ աշխարհում հսկայական հեղինակություն էր վայելում տեղեկատվական բյուրոն»:[2]

Միայն այստեղ կա զգալի մի տարբերություն, որ զինվորական լրագրությունը կոչված է նաև հարցազրույց ծավալել հակառակորդի հետ, «հակամարտության փաստացի լեզվով» (օգտագործելով ներկայիս տերմինները)՝ նրան մատնելու պարտության: Հայտնի է, որ ցանկացած պետության ազգային գաղափարն իր հիմքում ունի «թշնամու կերպար», որն իր մեջ ներառում է երկու բաղադրիչ (ներքին և արտաքին թշնամիներ), իսկ ահա այսօր, դարաշրջանի գլոբալացման մեջ մտցվեց նաև երրորդ անդրազգային տարրը՝ «համաշխարհային չարությունը»:

Պատերազմում գործում են պատերազմի օրենքները, և հաղթում է նա, ով ոչ միայն արդարացի է, այլև ապրում է այդ օրենքներով. «Մի ժամանակ Ղարաբաղը որոշ գործընթացների մոդել է եղել ամբողջ Խորհրդային Միության համար, որտեղ մշակվել էր ազգային - ազատագրական ժողովրդական շարժումը ճնշելու մեթոդիկան: Բարեբախտաբար, այստեղ մշակվում էին նաև նրա դեմ պաշտպանության մեթոդները»:[3]

Իսկ ահա պատերազմող բանակում, հատկապես այնպիսին, ինչպիսին մերն է, յուրաքանչյուր մարտիկի, այդ թվում և զինվորական լրագրողի

ունակությունը, մարզվածությունը, եռանդը տասնապատկվում են, իսկ եթե նա նաև սիրով է վերաբերվում իր պարտքին, ապա այդպիսի բանակն անպարտելի է. «Ղարաբաղի ժողովուրդը ցույց տվեց, որ այդ բարդ ռազմագիտական, այսպես ասած՝ փնտրտուքին կարելի է հակադրել մարդկայնությունը, արիությունը, տոկունությունը, անհողդողդությունը և այլն: Այդ պատճառով էլ այն ամենը, ինչ այստեղ է կատարվում, պետք է ամբողջ աշխարհին իմանա, քանի որ ստեղծվել է մի հանգույց, որի միջոցով միահյուսվել են այնպիսի հսկայական և շատ դեպքերում ագրեսիվ պետությունների շահերը, ինչպիսիք են Թուրքիան, Իրանը, Պակիստանը: Պետք է այդ ամենը հանգուցալուծել: ...Ղարաբաղցիների համար դա իրենց պաշտպանությունն ամրապնդելն էր: Հակամարտության մեջ ներքաշված ուժերն այնքան հակասական են, որ անհրաժեշտ է պետությունների միջև նոր փիլիսոփայություն», - կարդում ենք «Մարտիկ» թերթում:[4]

Իսկ մեկ ազգ՝ մեկ նպատակի իրագործման դեպքում ասելիքն առավել քան ամբողջական է դառնում արված փաստարկումների մեջ. «Երբ աշխարհի հզոր տերությունները շարունակում են տնօրինել ազգերի ու պետությունների ճակատագիրը, երբ ժողովրդավարության աղմկոտ ծնծղաների տակ գերիշխողը շարունակում է մնալ ազգային շահն ու ենսամոլությունը, երբ միջազգային հարաբերություններում ուժեղի մոտ միշտ թույլն է մեղավոր, երբ ուժեղ լինելու համար մենք այլընտրանք չունենք, քան միասնական լինել՝ գիտակցելով, որ հայ ցեղի և հայկական պետականության լինել թե չլինելը լուծվում է Արցախյան գոյամարտում, և որպեսզի «մեկ ազգ՝ մեկ նպատակ» գաղափարը դառնա ազգային գիտակցություն, մենք՝ հայերս, որտեղ էլ լինենք՝ Արցախում, Հայաստանում, թե սփյուռքում, մեր ուժերը պետք է գումարենք իրար, համախմբենք հոգևոր ու նյութական միջոցները, լարենք մեր ազգային հանճարը՝ վանելով կուսակցական տարընթացություն, խմբակային շահ և մերժելով անցողիկ և նսեմ փառքեր, քանզի նպատակը դարեր ի վեր փայփայած իղձն է՝ ստեղծել Ազատ, Անկախ, Միացյալ և Հզոր Հայաստան»:[5]

Իսկ մեր բանակը զինված մարդկանց հանրույթ լինելուց առաջ՝ գաղափարի շուրջ կազմավորված միասնություն էր, ասել է թե՝ նույն նպատակին ծառայող, նույն ակունքից սնվող անձանց կուռ միասնություն: Դժվար էր պատկերացնել, թե ինչպիսին կլիներ մեր ճակատագիրը, եթե գոյապայքարի դժնդակ օրերին չհնչեր Մայր Հայրենիքի «Ի~ զեն» կոչող ձայնը, որին արձագանքեցին բազում մահապարտներ: Իսկ գրչի ուժը փայլատակեց միանգամայն նոր հարթության մեջ. «Ճշմարիտ է ասված՝ պատերազմները հենց այնպես չեն ծագում: Արցախի պատերազմը ոչ միայն ժողովրդական պոռթկման արդյունք էր, այլ նաև ազգային արժանապատվության և նրանից բխող հետևանքների մի յուրատիպ շղթա ու ամբողջություն, որը ժամանակի դաժան փորձության ընթացքում հաստատվեց արժեքավոր և ընդօրինակելի բազում գաղտնիքներով, որոնք դեռ կսպասեն վերծանողներին»:[6]

Եվ պատահական չէ, որ արցախյան իրողությունները լուսաբանվում էին ոչ միայն տեղական լրատվամիջոցներով, քանզի արցախյան շարժման սկզբից ի վեր երկրամասը հայտնվել էր հայաստանյան, առավել ևս խորհրդային ու արտասահմանյան մամուլի ուշադրության կենտրոնում: Բայցևայնպես. «...Հետագայում դրսի մի շարք լրատվամիջոցներ հրաժարվեցին ղարաբաղյան մշտառկա լրատվության ձեռնարկից՝ տնտեսական ու քաղաքական պատճառներով: Հետդարձի ոչ երկրորդական շարժառիթ է դիտվում և այն, որ ղարաբաղյան թեմատիկան, նրանց տեսանկյունից այլևս տեղեկատվական մեծ հրատապություն չի ներկայացնում: Այնուհանդերձ, տասնյակ լրատվամիջոցներ հավատարիմ մնացին Արցախին ու նրա դատին և առայսօր շարունակում են ղարաբաղյան իրենց թղթակցություններով լուսաբանել իր անկախության միջազգային ճանաչման համար պայքարող երիտասարդ հանրապետության իրադարձությունները: 2010թ. նոյեմբերի 1-ի դրությամբ՝ Արցախում սեփական թղթակիցներ ունեն հայաստանյան և արտասահմանյան՝ ընդհանուր առմամբ 16 լրատվամիջոց: Նրանք տարբեր արդյունավետությամբ ու տեղեկատվական ուղղվածությամբ են արծարծում արցախյան ներքին ու արտաքին զարգացումները, սակայն գնահատելի է յուրաքանչյուրի դերակատարությունը «սեփական Արցախը» լրապատկերելու գործում», - փաստում է լրագրող Հրանտ Ալեքսանյանը:[7]

Այնուհանդերձ, հայ զինվորական լրագրողի գործունեության առանձնահատկությունը դարձավ տեղեկատվության հրապարակայնությունը, իսկ ռազմական հակամարտության ղեկավարող վարքագիծը լրագրողի համար՝ կենսակերպ: Զինվորական լրագրողն ու զինվորական մամուլի քարտուղարը նեղ մասնագետներ էին, ովքեր հիանալի գիտեին իրենց աշխատանքն ու դրանց նշանակությունը: Նրանք պատրաստ էին աշխատելու ի շահ զինված ուժերի:

Այդ՝, հենց նրանք կարող էին հասկանալ զինվորական ծառայության յուրահատկությունները: Քանզի պետք էր լիովին գիտակցել զինվորական լրագրության յուրահատկությունները, որոնք հիմնովին տարբերվում էին քաղաքացիական լրագրությունից հետևյալ պարամետրերով՝ աշխատանքի կազմակերպմամբ, շրջապատող աշխարհի հետ ունեցած փոխհարաբերությունների ձևավորմամբ, տեղեկատվական արտադրության արտադրանքի մասնագիտական մոտեցմամբ և այլն: Եվ պատահական չէ, որ որոշ սպաներ լրագրողական աշխատանքը որակեցին որպես ծառայություն:

Այդ՝, ռազմական տեղեկությունները պետք է մատուցվեր մասամբ զինվորական աստղերով և կոչմամբ համալրված համազգեստ կրող անձանց կողմից, որոնք լիովին գիտեն այն, ինչի մասին գրում են, հակառակ դեպքում այդ տեղեկատվությունը կլիներ ոչ որակյալ: Ռազմական գործողությունները լուսաբանող ավանդական ժանրերի հետ միասին (հաշվետվություն, նամակագրություն, հոդվածներ, հարցազրույցներ) օգտագործվող

ժամանակակից լրատվական միջոցները զգալի ջանքեր ներդրեցին՝ ազգային համակարգչային ցանցի և այլ ինֆորմացիոն կրողների միջոցով խրախուսելու հասարակական լայն քննարկումները («Մարտիկ», «Հայրենյաց պաշտպան» պաշտոնաթերթեր և «Գոյամարտ» հեռուստածրագիր):

ԶԼՄ- ների կողմից տեղեկացվում էր հանրությանն այն մասին, թե ինչպես են նրանք լուսաբանում ռազմական գործողությունները, ներքին և արտաքին քաղաքականությունը: Սա պահանջում էր ԶԼՄ-ների մարտավարության քննարկում պատերազմի լուսաբանման պրոցեսում: Հատուկ ուշադրություն էր տրվում նաև դիվերսիֆիկացիոն տեղեկատվական աղբյուրներին, որոնք ներգրավված են պատերազմի ժամանակ ընթերցողներին համոզելու, որ նրանք լիովին ինֆորմացված են:

Զինվորական անձնակազմի հետ բոլոր հարցազրույցները ձայնագրվում էին մագնիսական ժապավենի վրա: Այս տեսադաշտում գերազանցող դարձավ ռեպորտաժի ժանրը: Մամուլի ժամանակավոր սահմանափակումները, ներառմամբ նկարահանումների ու ռեպորտաժները, իրականացվում էին անվտանգության նկատառումներով: Սահմանափակումները վերանում էին անվտանգության խնդրի լուծումից անմիջապես հետո: Անհրաժեշտ էր իմանալ, որ գոյություն ունեն հրապարակման ենթակա թույլատրելի և անթույլատրելի ինֆորմացիաներ:

Թույլատրելի տեղեկատվություն, երբ այն ենթակա էր հրապարակման: Դա ինֆորմացիա է այն օբյեկտների մասին, որոնք ենթարկվել են ռմբակոծման, հողային բազաների նկարագրման մասին:

Անթույլատրելի տեղեկատվություն, որը ենթակա չէ հրապարակման, հատուկ տեղեկատվություն է կարևոր ռազմական նշանակություն ունեցող գաղտնի տեղանքների և անվանումների, նաև տեղեկույթ գաղտնի ռազմագործողությունների մասին:

Զուգորդվելով միջազգային լրատվական դաշտին՝ փաստենք նաև այն, որ, միջազգային լրատվական կազմակերպությունները ստեղծեցին լրագրողներին օգնող կանոններ, ոչ միայն որակապես իրականացնելու իրենց աշխատանքը, այլև հնարավորինս ապահովելու նրանց անվտանգությունը: Կանոնների մեջ նշանակալից են այն կետերը, ինչպիսիք են՝ «Տեղանքի հետազոտությունը և ռազմական դեպքի վայրից տրվող ռեպորտաժի ժամանակ որոշակի կանոնների ձևավորումը»: Համաձայն կանոնների, բոլոր հաշվետվությունները և հարցազրույցները ներկայացուցիչների հետ զորամասերից արձանագրվում էին մագնիսական ժապավենի վրա: Ավելին, համաձայն միջազգային լրատվական կազմակերպությունների մշակած կանոնակարգի, աշխարհում աճում էր ոչ միայն զինվորական լրագրողների աշխատանքի որակական ցուցանիշը, այլև հնարավորինս ապահովվում նրանց անվտանգությունը: Եթե ԶԼՄ-ների համար կային անվտանգության պահպանման ժամանակավոր

սահմանափակումներ, ապա անհրաժեշտ էր հնարավորինս հետամուտ լինել դրանց կատարմանը:[8]

Բայց վերջին տարիներին պատերազմների ընթացքում զինվորական լրագրողները ևս իրենց հերթին մշակեցին վարքագծի կանոնների մի յուրահատուկ շարք, որոնք օգնեցին մամուլի աշխատակիցներին հաջողությամբ կատարելու իրենց առջև դրված խնդիրները: Դրանք ներառում էին ռազմական հակամարտության վարքագծի, տարածքի զննման և դեպքի վայրից հաղորդվող ռեպորտաժի կանոններ: Օրինակ՝ նրանց, ովքեր առաջին անգամ որոշեցին գնալ նման լուրջ իրադարձության, խորհուրդ էր տրվում, առաջին հերթին, մտավոր կոտրելու միջանկյալ փուլերում ստանձնած որոշ կարծրատիպեր, որոշել իրենց համար տարածք մուտք գործելու նպատակահարմար եղանակները և այլն:

Այստեղ հարկ է շեշտել նաև Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի ունեցած ներդաշնակ, լիակատար դերը, նշանակությունն ու համագործակցությունը: Հանդիսանալով անշահախնդիր, չեզոք և անկախ կազմակերպություն՝ նրա նպատակներն ու խնդիրները կրում են բացառապես հումանիտար բնութագիր: Նրա գործունեության հիմնական նպատակն է պահպանել մարդկային կյանքն ու նրանց իրավունքները, ովքեր առավելապես տուժել են հակամարտությունների, բռնությունների, և այլ ծայրահեղ իրավիճակների ժամանակ և կազմակերպել նրանց օգնությունը. «Պրոպագանդելով և ամրապնդելով մարդկային իրավունքներն ու համընդհանուր մարդասիրական սկզբունքները՝ ԿԽՄԿ-ն բոլոր ուժերը ներդնում է՝ կանխելու ազգաբնակչության տառապանքները: Այն հիմնվել է 1863թ. և կանգնած է Կարմիր Խաչի Միջազգային Շարժման ակունքներում: ԿԽՄԿ-ն ղեկավարում է շարժման գործունեությունը, մարդասիրական համընդհանուր օգնություն ցուցաբերում լարված հակամարտության և այլ վատթար իրավիճակներում՝ կոորդինացնելով այն: Իսկ ահա, համաձայն միջազգային հումանիտար իրավունքի, լրագրողները, գտնվելով լարված հակամարտությունների թիրախում և գործուղման մեջ, ունեն հարգանքի և պաշտպանության իրավունք: Առանձնապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամեն տարի գործուղման ժամանակ լրագրողները զոհվում, վիրավորվում, բանտարկվում կամ անհետանում են», - կարդում ենք Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի արխիվային նյութերում:[9]

Վերլուծելով մի շարք հեռուստաընկերությունների և լրագրողների գործունեությունը, կարելի է հանգել այն եզրակացության, որ անգամ համաշխարհային զինվորական հեռուստատեսային լրագրությունը վերջերս դարձել է կորպորատիվ և քիչ անկախ և գնալով ենթարկվում է պետության կանոնների նպատակահարմարությանը: Ռուս քաղաքագետ, խորհրդային հետախուզության սպա և ռազմական վերլուծաբան Վիտալի Շլըկովը, բարձրացնելով Ռուսաստանի բարեփոխման հարցը, շեշտը դնում է ռազմական բարեփոխումների վերլուծության վրա և լուսաբանում զինվորական լրագրողների գործունեությունը այդ հարցի լուծման շուրջ՝

բերելով այն փաստը, որ ռազմական գերատեսչությունների, պաշտոնյաների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների միջև գործում են վատ հարաբերություններ: Այդ քաղաքականությունը հիմնված է հասկանալու, որ որքան ակտիվորեն ես աշխատում մամուլի հետ, այնքան մեծ ակտիվությամբ է նվազում անսպասելի քննադատության ռիսկի գործոնը՝ ԶԼՄ-ների և հասարակության կողմից ամենօրյա հորինված պրակտիկա լինելուց:[10]

Սակայն, որոշակի կանոնների համաձայն, յուրաքանչյուր զինվորական լրագրող պետք է հիշի և հաշվի առնի, որ ցանկացած ռազմական գործողության մեջ կա տեղեկություն, որը չի թույլատրվում հրապարակման, ունի «գաղտնազերծված կնիք», ինչը նշանակում է, որ ոչ մի պատրվակով այն չպետք է ներթափանցի մամուլ:

Եվ, ի վերջո, լրագրությունը և, առհասարակ, զինվորական լրագրությունը պետք է լինի բարոյապես կողմնորոշված: Քանզի այս մասնագիտությունը նաև տարեցտարի դառնում է ավելի վտանգավոր:

Հանրությանը ճշմարտությունն ասելու և բացահայտելու համար լրագրողները երբեմն հրաժեշտ էին տալիս կյանքին, իսկ նրանց դեմ հանցագործությունների թվի միտումնավոր աճ է գրանցում: Բոլոր մարդասիրական պրոբլեմները՝ կախված նրանց անհետացման կամ գերեվարման հետ, պատերազմի ժամանակ նրանց ձերբակալման, ներքին լարվածության կամ բախումների ժամանակ առաջացնում է ԿԽՄԿ մտահոգությունը: Այն կարող է արագ իրականացնել պաշտպանություն և օգնություն բռնագրավված, բանտարկված կամ անհետացած լրագրողների նկատմամբ, եթե ստանա համապատասխան լիարժեք ինֆորմացիա ամենակարճ ժամանակահատվածում: Ահա թե ինչու թեժ գիծը լրագրողների մասնագիտական համախմբման համար գործում է շուրջօրյա: ԿԽՄԿ-ն համոզված է, որ թեժ գիծն օգնում է իրենց գործել ավելի արագ, անկաշկանդ և արդյունավետ՝ լրագրողների հետաքրքրությունների շրջանակներում, հատկապես բռնագրավվածների և գերեվարվածների համար, որտեղ էլ նրանց նկատմամբ իրականացվում է մարդասիրական գործունեությունը: Նրանց հոգածությունը լրագրողների անվտանգության համար համալրում է նաև ընդհանուր գործունեության մի մասը:

Հարցերը, որոնց առնչվում են լրագրողներն իրենց մասնագիտական գործունեության ազատ իրականացման ընթացքում, գտնվում են ԿԽՄԿ վերահսկողությունից դուրս:

Վերջին տարիների ռազմական բնութագրության առանձնահատուկ դիպվածն ահաբեկչական պատերազմն էր, որն առավել մեծ վտանգ էր ներկայացնում, քան, սովորաբար, պատերազմը մեր պատկերացումներով:

ԶԼՄ-ների շատ ներկայացուցիչներ՝ լրագրողներ, մեկնաբաններ սպանվեցին թեժ կետերում՝ ահաբեկիչների ձեռքով, որոնց ցանկությունը երբեմն չէր իրականանում հավուր պատշաճի:

Փաստ է նաև, որ երբեմն իրենց գործունեության ընթացքում լրագրողները փորփրում էին վտանգավոր իրողությունների և

իրադարձությունների բոլոր անցքերը՝ բացահայտելու բնապահպանական, ռազմական կամ քաղաքական հանցագործությունները: Իշխող վերնախավին նման երևույթներն այդքան էլ ձեռնտու չէին: Ծեծված, ահաբեկված լրագրողները, այնուամենայնիվ, շարունակում էին պայքարը հանուն ճշմարտության: Իսկ երբեմն էլ լրագրողների նկատմամբ մշակած պայքարի մեթոդները կրում են միանգամայն անմարդկային բնույթ (ինչպես դա եղավ Հրանտ Դինքի պարագայում): Նրանց բանտարկում, փակի տակ էին առնում կամ թաքցնում հոգեբուժական հիվանդանոցներում: Եվ այս ամենը տեղի էր ունենում ոչ միայն բռնապետական, այլև, այսպես կոչված ժողովրդավարական երկրներում:

Նշենք, որ համաշխարհային մասնագիտական տեսադաշտում 1982-ին աշխարհում սպանվեց 9 լրագրող, 1984-ին՝ 14, 1990-ին՝ նրանց թիվն հասավ 32-ի: Իսկ 1992-ին սպանվեց 65 լրագրող, 1993-ին՝ 74: Առևանգվեցի 47, ծեծի ենթարկվեցին 265 մամուլի աշխատողներ, 311-ը՝ ձերբակալվեցին: Համաձայն Reporters sans frontiers-ի (RSF) սկզբնական տվյալների՝ 1998 թ. աշխարհը կորցրեց 19 լրագրող: Իսկ ահա 1997 թ., Չեչնիայում լրագրողների հերթական խմբին պատանդ վերցնելուց հետո՝ ռուսական խոշոր հեռուստաընկերությունների ղեկավարությունն անգամ որոշում ընդունեց այլևս թղթակիցներ չուղարկել Չեչնիա: Համաձայն այլ վիճակագրության՝ հետպատերազմյան տարիներին՝ 2009 թվականի ընթացքում, սպանվեցին լրատվամիջոցների 70 ներկայացուցիչներ: Այս ցուցանիշն ավելի բարձր էր, քան մյուս տարիներին: Այսպիսի տվյալներ էր տրամադրում նաև Նյու Յորքում հիմնված միջազգային կազմակերպության հանձնաժողովը, որն էլ զբաղվում էր լրագրողների իրավունքների և ազատության պաշտպանությամբ: Կոմիտեի հաշվետվության մեջ նշվում է նաև այն փաստը, որ լրագրողների սպանությունների մեջ Ռուսաստանը զբաղեցնում է 4-րդ տեղը:[11]

Բոլոր երկրների ԶԼՄ-ներում լրագրողի անվտանգությունը դառնում է բոլոր խմբագրական մարմինների, խմբագրատների գլխացավանքը, և նման խնդիրներից խուսափելու համար հաճախ մերժվում էր առաջարկը՝ նրանց գործուղելու սահմանային կետեր կամ պահանջվում գրություն, համաձայն որի՝ խմբագրակազմն ազատվում էր լրագրողի կյանքի անվտանգությունն ապահովելու պատասխանատվությունից ռազմական թեժ կետում իր վտանգավոր առաքելությունն իրականացնելու ընթացքում:

Ահա և դարի ևս մեկ կարգախոս:

«Մարդիկ, մի կրակեք լրագրողների վրա: Նրանք գրում են, ինչ կարող են... »

Ժամանակակից աշխարհում, սակայն, քաղաքացիներն ի զորու չեն լսելու և ընկալելու դառը ճշմարտությունը: Մինչև տեղի չունենա քաղաքական հասարակության գիտակցության շրջադարձ, մեզ մնում է պարզապես օգտվել տարբեր երկրներում ձևավորված հանձնաժողովների ծառայություններից, որոնք հակված են ապահովելու հենց նրանց անվտանգությունը, պաշտպանելու լրագրողներին սպանություններից

(ինքնաթիռներում կազմակերպվող թռնավորումներից, իրենց իսկ տան մուտքում կամ գնացքներում կազմակերպվող դավադրություններից):

Ագրեսիայի դերը ևս պատահական չէր ընտրված: Տեղեկատվական պատերազմները մեր օրերում ևս, ի համեմատ խաղաղ ժամանակահատվածի, մեծ հաճախականություն ունեն: Այնպես որ, անգամ մասնավոր, կորպորատիվ թերթերը կարծում են, որ թվացյալ անորոշության մեջ էլ կա պահանջարկ՝ հետաքննող լրագրողների վերապատրաստման: Փաստն այն է, որ հնարավորություն ունենալով լինել տեղեկատվական պատերազմում՝ լավ հակահարված կարող է տալ միայն լավ նախապատրաստված զինվորական լրագրողը: Ուստի անձնական և կորպորատիվ զինվորական հրապարակումները կարող են դառնալ «զորավարժարան» լրագրողի տեղեկատվական պատերազմի մեթոդների և հնարքների մշակման համար: Այդ տեխնիկական հնարքների տիրապետումը կօգնի լրագրողներին ստեղծելու գործելու նախնական եղանակներ, իսկ մասնավոր, կորպորատիվ զինվորական հրատարակությունների ստեղծումը՝ իրական ուղեցույց՝ զինվորական, ռազմական և իրավական կազմակերպությունների և կառույցների համար: Որպես հետևանք՝ դա մի հարց է լրագրողական հրապարակումների արդյունավետության:

Բաց թողնել լրագրողին դեպի ժամանակակից տեղեկատվական միջավայր, որտեղ հաճախակի տեղի են ունենում տեղեկատվական բախումներ և հակամարտություններ, առանց համապատասխան տեխնիկական հմտությունների տիրապետման, նշանակում է անձին կամ ակնհայտորեն դարձնել հլու, հնազանդ ինչ որ անբացատրելի համակարգի, կամ էլ նրան դարձնել ծառայողական ոլորտի անձ: Զինվորական լրագրությունը այդպիսի չվարժված մարտիկների ցուցաբերած գործունեությամբ կորցնում է իր դեմքը: Ուստի հարաբերությունների հաստատումը սպայական անձնակազմի հետ թերևս լրագրողի գործունեության կարևորագույն բաղադրիչներից է պատերազմական հարաբերությունների գոտում:

Լրագրողը, մանավանդ զինվորական լրագրողը, ցանկանում է ոչ միայն լավ կատարել իր մասնագիտական պարտականությունները, այլև ողջ մնալ, որի համար պետք է պահպանի համապատասխան անվտանգության որոշակի միջոցառումներ, որոնք կարելի է անվանել հակամարտության որոշակի կանոններ և ցուցումներ՝ ինչպես ապահովել շփումներ պատերազմող կողմերի հետ, ինչպես պաշտպանվել հարձակումներից, ինչպես կարողանալ որսալ ինֆորմացիայի լավագույն ու արդյունավետ ժամանակը և այլն, ինչպես նաև՝ կարողանալ ստանալ տեղեկատվություն: Այս ամենը մշակվել է զինմամուլի անդամների ձեռք բերած ռազմական փորձի շնորհիվ: Լրագրողի ներկայությունը պատերազմական իրադարձությանը բնութագրում է նաև զինվորականների հետ ունեցած հարաբերությունները: Որպես կանոն, նրանք լրագրողներին իրենց դաշնակիցը չեն համարում, իսկ երբեմն էլ ստեղծվում է պարադոքսալ

իրավիճակ, որտեղ տիրող իրադրության մասին ավելի հեշտ է ինֆորմացիա ստանալ հակամարտությունը կեղծող ռազմական հարաբերությունները հրահրողներից և ահաբեկիչներից, քան զինվորական հրամանատարությունից: Պատահում էր նաև այնպես, որ զինանձնակազմը կանխում էր իրադրության մասին օբյեկտիվ ինֆորմացիայի ձեռք բերումը: Լրագրողները պետք է ձգտեն առավելագույն օբյեկտիվության և իրադարձությունների լուսաբանմանը: Դա առանձնապես կարևոր է, երբ խոսքը վերաբերում է պատերազմին:

Պրագմատիկ նկատառումներից ելնելով՝ այստեղ արտացոլվում է նաև լրագրողի բարոյականությունը, արտացոլվում են նրա անձի, կերպարի ստվերոտ և լուսավոր կողմերը:

Մամուլի ցանկացած ներկայացուցիչ, հայտնվելով պատերազմում, պաշտպանված է, ծայրահեղ դեպքում՝ ձևականորեն կամ օրենքով: Այն հանդիսանում է միջազգային իրավունքի օբյեկտը, թեև աստիճանաբար շատ հաճախ նրա իրավունքները կործանարար ձևով կարող են խախտվել: Հատկապես մեծ է տարբեր ոլորտի ռիսկերի սպառնալիքների հավանականությունը սոցիալական և ռազմական հակամարտությունների թիրախում, թեժ կետերում աշխատող լրագրողների համար:

Ակնհայտ է նաև այն փաստը, որ զինվորական մամուլի և ռազմական լրագրողների գործունեությունը կհեշտանա այն ժամանակ, երբ աշխարհում տիրող լարված իրավիճակը կմեղմանա, իսկ ռազմական հակամարտությունները կնվազեն:

Եվ ահա ուսումնասիրելով այն երևույթի տարաբնույթ կողմերը, թե ինչպես է լրագրողն իրեն դրսևորում պատերազմի ընթացքում, պարզվեց, որ նրա վարքն ու ներկայությունը զինվորական հակամարտության գոտում ունի որոշակի առանձնահատկություններ և նկարագրվում է որոշակի նշանակալից պահերով: Լրագրողի, հատկապես զինվորական, խնդիրը պատերազմի ընթացքում շատ լուրջ է և յուրաքանչյուր տարի գրանցում է սրացում: Զինվորական լրագրողը դարձավ տեղեկատվական ռազմական գործողությունների և այդ լարված գոտու բաղկացուցիչ մասը, այդ պատճառով հակամարտող կողմերի համար այն դիտվեց հարմար թիրախ, կամ գրգռիչ գործոն: Առաջին հերթին՝ լրագրողների դեմ հանցագործությունների թիվն ավելանում է օրեցօր: Լրագրողներին սպանում են, գերեվարում, նրանք հայտնվում են բանտում կամ դառնում ահաբեկիչների պատանդը: Որքան շատ պատերազմներ, այնքան զոհեր՝ լրագրողների սպանություններ: Սրանով էլ բացահայտվում է, որ այսօրվա լրագրողը զինվորական հակամարտության լիիրավ անդամն է, ինչպես և զինվորը: Դա փաստում է անդրադառնալ արցախյան զինվորական լրագրության պատմությանը:

Գրականություն

1. *Ա.Հակոբյան*, «Մարտիկ», Թերթի համառոտ անդրադարձն արցախյան լրատվական համակարգում», Արցախի Պետական Համալսարան, Գիտական տեղեկագիր 1 /27/, Ստեփանակերտ – 2013թ.
2. http://www.liveinternet.ru/users/4741089/post229395073
3. Մարտիկ /ԼՂՀ ԻՊԿ պաշտոնաթերթ/, թերթի լրակազմ, 20.08.93թ,էջ 3
4. Նույն տեղում:
5. Մարտիկ թերթի արխիվ, 23.08.93թ, «Մեկ ազգ՝ մեկ նպատակ», էջ 2
6. *Ս.Ռ.Հասրաթյան*, «Ղարաբաղյան պատերազմ», 2001, Երևան, «Ամարաս» տպագրատուն, էջ 33
7. *Հրանտ Ալեքսանյան*, «Ճանաչված երկրի լրատվությունը», «Ոգի Նահիրի», հրատ Ստեփանակերտ 2011, էջ 85
8. http://nachali.narod.ru/zhurnal.html
9. Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտե /ԿԽՄԿ/, Թեժ գիծ, «Օգնություն լրագրողներին վտանգավոր գործողություններում», E-mail: csc.mos@icrc.org, փետրվար, 2009թ.:
10. http://periodico.ru/na_voine/opasnaya1.php
11. Նույն տեղում

Военная журналистика и военные журналисты в современном мире (особенности сбора и подготовки информационных и аналитических материалов в зоне военных действий)

А.Акопян

Резюме

Всемирная история военной журналистики еще полностью не дописана, хотя насчитывает уже несколько столетий, имеет свои традиции, тенденции и направления, как и журналистика любой другой области.

Часто военная журналистика становится частью стратегической информационной борьбы в зоне эскалации, и по этой причине рассматривается противоборствующими сторонами как удобная цель – раздражающий фактор.

Исследуя различные стороны этого явления, то, как журналист проявляет себя в военное время, выясняется, что его поведение и присутствие в зоне военного противостояния имеет свои особенности и определяется значимыми моментами. Во-первых, изо дня в день увеличиваются преступления против журналистов. Их убивают, арестовывают, берут в плен, в заложники. Все это позволяет полагать, что сегодня журналист является полноправным участником боевых действий, как и солдат. Об этом

свидетельствует и история арцахской военной журналистики. Известно, что начиная с XIX в. представители журналистики играли наиболее важную роль, знакомя общественность с событиями, происходящими в стране и за ее пределами. Иногда, в процессе своей деятельности, журналисты докапывались до самых глубин опасных событий, выявляя военные, политические или экологические преступления.

Очевидно, деятельность военной прессы и журналистов облегчится тогда, когда разрядится напряженная ситуация в мире и уменьшатся военные противостояния.

Military Journalism and War Reporters in the Modern World
(feature of collecting and preparating of information and
analytical materials in a zone of military operations)

A.Akopyan

Summary

The world history of military journalism still completely isn't added though it totals some centuries, has it`s traditions, tendencies and directions, as well as journalism of any other area.

Often military journalism becomes a part of strategic information struggle in an escalation zone, and for this reason is considered by warring parties as the convenient purpose – an irritating factor.

Investigating the various parts of this phenomenon, how the journalist proved himself in a wartime, it became clear that his behavior and presence at a zone of military opposition had it`s own features and was defined by the significant moments. At first, crimes against journalists increase day by day. They are killed, arrested, taken to prison, in hostages. All this allows to believe that today the journalist is the full participant of operations, as well as soldiers. The history of Artsakh military journalism testifies to it also. It is evident that since XIX century journalists played the most important role, acquainting the public with the events occurring in the country and abroad. Sometimes, in the course of the activity, journalists got to the depths of dangerous events, revealing war, political or ecological crimes.

It is obvious that activity of the military press and journalists will be facilitated when the intense situation in the world will be discharged and military oppositions will decrease.

ՀՏԴ *Լրագրություն*

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Գ. Մարդյան

ԶԼՄ-ի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ընտրության հարցում միջազգային փորձն առաջնորդվում է այն սկզբունքով, որ հարկ է հայցվոր կողմին հնարավորություն ընձեռել նախքան դատարանում բողոքարկելը՝ դիմելու իրավունքները ոտնահարած մարմնի վերադասին կամ պետական լիազորված անկախ մարմնին[1]: Այս պահանջները տեղ են գտել ԼՂՀ ՏԱ օրենսդրության մեջ, որովհետև մասնագիտական գործունեության ժամանակ լրագրողների իրավունքներն առավել հաճախ ոտնահարվում են տեղեկատվության ազատության հետ կապված իրավահարաբերություններում: «ՏԱ մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է պաշտպանության երեք ձև.

ա) վերանայում վերադասության կարգով

բ) լիազորված պետական կառավարման մարմնի միջամտություն

գ) դատական կարգով:

Առաջին տարբերակը մամուլին հնարավորություն է տալիս խնդիրներ ծագելու դեպքում հարցը բողոքարկել պետական մարմիններում՝ ներքին ընթացակարգի համաձայն և նոր միայն դիմել պետական լիազորված անկախ մարմնին՝ օմբուդսմենին: «Օմբուդսմեն» բառը թարգմանվում է որպես ժողովրդի (կամ՝ ժողովրդական) պաշտպան, կիրառելի է նաև «հասարակական պաշտպան» ձևը: Տարբեր երկրներում տարբեր անվանումներ են նախընտրելի, այդ թվում՝ մարդու իրավունքների գծով լիազոր, հասարակական վերահսկիչ, խորհրդարանական կոմիսար և այլն: Ամենատարածվածը շվեդական «օմբուդսմեն» ձևն է, որին ընտրում են պետությունն ու հասարակությունը, և որի անկախ գործունեության համար ստեղծվում է համապատասխան օրենսդրական բազա: Օմբուդսմենը իրականացնում է գործադիր իշխանության գործունեության սահմանադրական վերահսկողություն, նպաստում է վարչական կամայականություններից քաղաքացիների իրավունքների պաշտպանության բարելավմանը և թուլացնում պետության ու քաղաքացու հարաբերություններում առկա լարվածությունը:

Արցախում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2005թ. մարտին: Պաշտպանի թեկնածությունը կարող են ներկայացնել ԼՂՀ նախագահը կամ պատգամավորները: Ըստ ԼՂՀ Սահմանադրության 119-րդ, 120-րդ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածների՝ մարդու իրավունքների պաշտպանը

[1]Դոյդոյան Շ., ԶԼՄ և օրենսդրություն,«Ասողիկ» հրատ., Երևան, 2007, էջ 78:

անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, պետական ծառայողների կողմից մարդու խախտված իրավունքների պաշտպանությունը և վերականգնումը: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի նպատակն է աջակցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական ապահովման կատարելագործմանը և ԼՂՀ օրենսդրության ներդաշնակեցմանը՝ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին:

Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից (ձերբակալվածներ, կալանավորվածներ, զինծառայողներ): Պաշտպանին դիմելու իրավունք ունեն նաև պաշտոնատար անձինք՝ ֆիզիկական անձանց իրավունքների խախտման դեպքում: Օմբուդսմենին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չի կարող հանգեցնել բողոք ներկայացնողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցների կիրառման կամ որևէ խտրականության: Ինչ վերաբերում է պաշտպանի գործունեությանը միջամտելուն, ապա պաշտոնատար անձանց կողմից պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, պաշտպանին սպառնալը, վիրավորանք հասցնելը առաջացնում են պատասխանատվություն:

Խոսելով մարդու իրավունքների պաշտպանի որոշումների ազդեցության մասին՝ նկատենք, որ մարդու իրավունքների հարցերով զբաղվող մարմիններն ունեն հարկադրելու մեխանիզմներ, սակայն մարդու իրավունքների պաշտպանի առաջարկներն ավելի շատ խորհրդատվական բնույթ ունեն, այսինքն՝ իրավասու են առաջարկել համապատասխան պետական մարմիններին կարգապահական, վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության ենթարկել այն պաշտոնատար անձին, որի որոշումներով կամ գործողություններով խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները: Պաշտպանը կարող է դիմել հանրապետության նախագահին, օրենսդիր և գործադիր մարմիններին, որոնք իրենց լիազորությունների շրջանակներում նպաստում են օրինական որոշումների կատարմանը: Որպես իրավական գործառույթ կատարող մարմին՝ կարևոր նշանակություն ունի օմբուդսմենի քաղաքական և ֆինանսական անկախությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից լրագրողների համար նպաստավոր միջավայրի լավագույն հատկանիշ է պետական պաշտոնյաների նկատմամբ մեղադրանք առաջադրելու լիազորությունը, որը թույլ է տալիս լրագրողներին իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով բողոքարկման այլ միջոցների չդիմել:

Մամուլի ազատության պաշտպանության նպատակով հայցվորը իրավասու է դիմել դատարանին, եթե պետական մարմիններում և լիազորված անկախ մարմնում բողոքն արդար և անկողմնակալ լուծում չի ստացել:

Իրավախախտումների դեպքում կարելի է դիմել դատարան՝ առանց պաշտպանության առաջին երկու ձևերին դիմելու: Նկատենք, որ արդար դատավարության իրավունքի պաշտպանությունից կարող են օգտվել բոլոր քաղաքացիները, այդ թվում լրագրողները: Առանձնակի կարևորություն ունեցող գործոն է դատական իշխանության հակակշռման միջնորդությունը, որը հնարավորություն է ընձեռում վերահսկելու գործադիր և օրենսդիր մարմինների գործողությունները, որպեսզի վերջիններս անօրինական ձևով չխոչընդոտեն լրագրողների իրավունքները գործադրելուն:

Հանրապետության մասշտաբով լրագրողական շահերը պաշտպանելու նպատակով նախադեպ չի գրանցվել՝ կապված հավատարմագրման, լրատվամիջոցի գործունեության դադարեցման, տեղեկատվության ազատության սահմանափակման հետ: Նման իրավախախտումների առկայության դեպքում օրենսդրական դաշտը պաշտպանության տակ է առնում լրագրողի իրավունքները և պատասխանատվություն է նախատեսում մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու համար: Վերջին տարիներին լրագրողի նկատմամբ պետական պաշտոնյայի անօրինական գործունեության առիթով որևէ դատական գործ չի հարուցվել: Ի դեպ, դատարանների քաղաքացիական և քրեական գործերով դատավարության կարգը սահմանվում է ԼՂՀ Քաղաքացիական ու Քրեական դատավարության օրենսգրքերով, և շահագրգիռ լրագրողը սահմանված կարգով իրավունք ունի դիմել դատարան իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար

Արցախում, ի պաշտպանություն լրագրողների իրավունքների, պատասխանատվության հետևյալ մեթոդները կարող են կիրառվել խոսքի ազատության իրավունքը ոտնահարելու պարագայում.

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածել կամ տարածելուց հրաժարվել հարկադրելը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինսապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Եթե նույն արարքը կատարել է պաշտոնական անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ ենթակա է պատասխանատվության ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա (ԼՂՀ Քր. օր. հոդված 164):

2. Անձին տեղեկություն ներկայացնելիս պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով (Քր. օր. հոդված 148):

3. Զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժանկետով (Քր. օր. հոդված 149):

4. ԶԼՄ-ի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից երկու տարի ժամկետով (Քր. օր. հոդված 154.5):

5. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելու դեպքում առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով («Վարչ. իրավախախտ. վեր.» ԼՂՀ օր.):

Լրագրողների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ երաշխիքներ են պարունակում «Զանգվածային լրատվության մասին«, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ԼՂՀ օրենքները: «ԶԼ մասին» օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում որպես հասարակական պարտք կատարող անձ պաշտպանվում է ԼՂՀ օրենսդրությամբ: Նշյալ օրենքում ներառված են արգելող այն դրույթները, որոնք խախտում են իրավահավասարության, օրինականության, արտահայտվելու ազատության սկզբունքները.

1. Գրաքննությունը

2. որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ

3. լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը

4. խտրականությունը լրատվության համար անհրաժեշտ սարքավորումների և նյութերի քաղաքացիական շրջանառությունում, այդ թվում՝ հրատարակչությունների միջոցով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը երաշխավորում է հեռուստառադիոհաղորդումների ազատությունը. «ԼՂՀ-ում երաշխավորվում է հեռուստառադիոհաղորդումների ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը և արգելվում է հեռուստառադիոհաղորդումների գրաքննությունը» (հոդված 4): Սրան հավելում է օրենքի 19-րդ հոդվածը. «Արգելվում է պետական իշխանության մարմինների, պետական պաշտոնյաների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց

կողմից հեռուստառադիոընկերությունների գործունեությանը միջամտելը, բացառությամբ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում»:

Տեղեկատվական իրավունքի պաշտպանությունն ամրագրված է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում, որն անօրինականությունների դեպքում նախատեսում է պատասխանատվության անվերապահ կիրառում. «Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի (պետական գաղտնիք, մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիություն, բժշկական, փաստաբանական գաղտնիք և այլն)՝ տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև՝ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն» (հոդված 14): Սույն օրենքի գործողությունը տարածվում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալների հաղորդման վրա, սակայն այս պարագայում օրենսդրությունը վարչական կամ քրեական պատասխանատվություն չի նախատեսում:

Վերոբերյալ քրեական, քաղաքացիական և վարչական իրավադրույթներն ուղղված են պետական կառավարման համակարգում մամուլի՝ որպես հասարակական կարևորագույն ինստիտուտներից մեկի պաշտպանության գերխնդրին: Ազատ արտահայտվելու և հասարակական շահերն իրագործելու նպատակով մամուլի ակտիվ մասնակցությունը հետապնդում է ժողովրդավարական բարեփոխումների իրականացում: Արցախում ժողովրդավարության գաղափարները դեռևս ընկալվում են ոչ միանշանակորեն և այդ առումով իրականության մեջ անելիքներն ավելին են: Ինչպես նկատել է ԱՄՆ նախագահ Ջ.Ադամսը. «Եթե խոսելու լինենք մարդկության ճակատագրի բարելավման մասին, ապա փիլիսոփաները, աստվածաբանները, օրենսդիրները, քաղաքական գործիչներն ու բարոյագետները պետք է լիովին ըմբռնեն, որ մամուլի կանոնակարգումն իրենց առջև ծառացած ամենադժվար, ամենավտանգավոր և ամենակարևոր խնդիրն է լինելու»[1]:

ԼՂՀ-ում ընդունված օրենքներն ու իրավական ակտերը հիմք են տալիս ասելու, որ ժողովրդավարական կառավարում իրականացնելու համար գործում է բավարար օրենսդրական դաշտ: Սակայն միայն իրավական նորմերի ընդունումը բավարար չէ մամուլի ազատությունը երաշխավորելու և ժողովրդավարություն իրականացնելու համար: Եթե ԶԼՄ-ների իրավական կարգավորման մեխանիզմներն ունեն խորհրդանշական բնույթ, չեն գործում ներքին տեղեկատվական դաշտում, ասել թե՝ իրավակիրառ պրակտիկան նկատելիորեն զիջում է, ապա արդյունավետ չի դառնում արտաքին տեղեկատվական քաղաքականության պաշտպանությունը: ԼՂՀ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրադրությունը և միջազգային ասպարեզում մենկուսացվածությունն անմիջական ազդեցություն են թողնում

[1] Կլոդ-Ժան Բերտրան, Մամուլի ազատության պաշտպանության երաշխիքներ, « Վան Արյանհիրատ», Երևան, 2000, էջ 10:

արտահայտվելու ազատության վրա՝ խոչընդոտելով տեղեկատվական հասարակություն ունենալուն: Տարիներ շարունակ օտար պետությունների տիրապետության տակ գտնվելով՝ երկրամասում պահպանվում են պաշտոնական քարոզչությունը և խորհրդային լրագրության ավանդույթները: Լրագրողները չեն պահանջում կառավարման մարմիններին՝ հարգելու իրենց իրավունքները և ազատությունները, խուսափում են անօրինականությունների դեպքում դատական և արտադատական պաշտպանության մեթոդներից օգտվելուց: Նշյալ և այլ հանգամանքներ խոչընդոտում են լրատվադաշտի մասնագիտական արհեստավարժության բարձրացմանը: Կարևոր նախապայման ենք համարում արևմտյան առաջադեմ չափանիշների յուրացումը, որոնք հարիր են ազգային հոգեկերտվածքին և ուղղված են ԼՂՀ պետականության անվտանգության պաշտպանության գերխնդրին:

Внесудебная и судебная защита СМИ в НКР

Г. Мардиян

Резюме

В данной статье анализируются особенности эффективных средств правовой защиты журналиста в Арцахе, изучается международный опыт и сверхзадачи по защите прессы, как одного из важнейших общественных институтов. В теме излагаются конституционные и законодательные гарантии свободы слова, в частности, законы «О защите прав человека», «О массовой информации», «О свободе информации», «О телевидении и радио» и дополнителные правовые докумнты.

Extrajudicial and Judicial Protection of the Mass Media in NKR

G. Mardiyan

Summary

The article discusses the choice of the effective means of the legal protection of a journalist in Artsakh, the research of the international experience and the ultimate issue of the protection of the press as one of the most important social institutes. In the article the constitutional and legislative guarantees of speech freedom, the laws: concerning “On the protection of human rights”, “Mass Media”, “Freedom of information”, “TV and Radio” and supplementary legal documnets are analyzed.

ՀՏԴ *Մանկավարժության տեսություն և պատմություն*

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ռ. Աղաջանյան

Մանկավարժական գիտության կարևորագույն խնդիրներից մեկը բազմակողմանի ու ներդաշնակ զարգացած անձնավորություն ձևավորելուն նպաստելն է, որը կարելի է իրականացնել միայն դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցում ցուցաբերելու պայմաններում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ առումով բոլոր հիմնահարցերը լիովին բացահայտված, լուսաբանված ու հիմնավորված չեն: Հարկ է նշել, որ այսօր մեր դպրոցներում, հատկապես արդի պայմաններում, անտեսված է արդարացի ու տեղին երգիծական խոսք օգտագործելու հնարավորությունը: Ներկայումս դպրոցական պրակտիկայում երգիծական խոսք ասելն ընդունված է որպես վիրավորանք, մինչդեռ դիպուկ խոսքը պետք է դառնա մտածելու ու փոփոխվելու առիթ: Իհարկե, խոսքն ավելորդությունների մասին չէ:

Դաստիարակության հիմնահարցեր ուսումնասիրողներն (Յու. Բաբանսկի, Ա. Պոտլաս, Ս. Մանուկյան և ուրիշներ) ընդգծում են, որ սովորողները պետք է ցուցաբերեն քննադատական վերաբերմունք: Այս խնդրի լուծմանը նպաստող կարևոր ուղիներից մեկը պետք է համարել տեղին ու արդար երգիծական խոսքի առկայությունը, որը պետք է լինի նաև ուղղություն տվող ցուցում: Երգիծանքը՝ որպես դաստիարակության գործոն դիտարկելու հարցի ուսումնասիրությունն ունի տեսական և առավելապես գործնական նշանակություն: Առանց այդ հարցի արմատական լուծման դաստիարակության հետ կապված շատ ու շատ հարցեր մնալու են թերի:

Մենք գտնում ենք, որ երգիծական խոսքը դաստիարակության գործոն դիտարկելուն մեծապես կնպաստի երգիծանքին նվիրված պարբերականների նպատակների ու բովանդակությունների, ինչպես նաև հրատարակված ծաղրանկարների ուսումնասիրությունը:

150 տարիների ընթացքում (1794-1944թթ.) աշխարհի մեծ թվով քաղաքներում հայ պարբերականների մասին ընդհանուր տեղեկություններ ունեցող ցուցակներից արժանի է հիշատակել Ա. Խառատյանի («Արևմտահայ երգիծական մամուլը» Հ. Պարոնյանի խմբագրությամբ) հրատարակած «Մեղու» (1872-1874թթ), նրա շարունակությունը՝ «Թատրոն» (1874-1877թթ), «Լույս» (1879-1880թթ), «Ծիծաղ» (1883թ.) Գ. Լևոնյանի, Հ. Պետրոսյանի, Ա. Կիրակոսյանի ու Մ. Բաբլոյանի և այլոց աշխատանքները: «Երգիծանքին նվիրված պարբերականներն իրենց բովանդակությամբ սերտորեն

շաղկապված են հայ իրականության հետ ու յուրովի լրացնում են հայ մամուլի ամբողջականությունը»[1]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հայ պարբերականներն ընդգծված ուշադրություն են նվիրել մանկավարժական գործընթացի հիմնահարցերին, անդրադարձել են հասարակական կյանքի այնպիսի կողմերին, որոնք իրենց բնորոշ թերություններով դառնում են ծիծաղի առարկա, արժանի են վերացման: Այդ նպատակով օգտագործվել է բացասականը ժխտելու գաղափարը և դարձել է հետադիմականի դեմ պայքար մղելու զենք: Կյանքի երգիծական կողմն ընկալելու և դրան անհրաժեշտ ուշադրություն նվիրելու նպատակով դատապարտվել են կյանքի արատավոր կողմերը, օգտագործվել են դիպուկ խոսքեր, կոմիկականի գեղագիտական կատեգորիան, տարբեր բնույթի բովանդակալից ծաղրանկարներ, ոչնչացնող չափավոր ծաղր և այլն: Երգիծական տաղանդով օժտված են եղել Հակոբ Պարոնյանը, Երվանդ Օտյանը, Լևոն Կամսարը և ուրիշներ: Հայ հեղինակներին բնորոշ է եղել իրականության թերությունները ներողամիտ ծաղրով ներկայացնելու պրակտիկան: Նրանք միաժամանակ նշել են թերությունները վերացնելու, դրանք դրականով փոխարինելու ուղիներ: Նրանց գործունեությունում գերիշխել է թերություններին կատակախառն հրճվանքի երանգ հաղորդելու պրակտիկան: Երգիծանքին նվիրված հայ պարբերականներ հրատարակելու բնագավառում անգնահատելի է Երվանդ Օտյանի դերը: Նա զգալի ավանդ ունի «Ազատ խոսք» (1901-1908թթ.), «Ազատ բեմ» (1903-1906թթ.), «Կտակ» (1905թ.), «Կասափնատ» (1910թ.), «Սև կատու» (1912թ.), «Մանանա» (1913-1914թթ.), «Իգնատ աղա» (1919-1920թթ.), «Երգիծական տարեցույց» (1921-1922թթ.) երգիծական բովանդակություն ունեցող պարբերականների հրատարակման գործում, պարբերականներ, որոնք երգիծանքի հզոր զենքով ծաղրել են սուրբ գաղափարներն արատավորողներին և ընդգծել են թերություններն ուղղելու ուղիներ: Այսպես, օրինակ՝ «Ազատ խոսքի» նպատակը եղել է երգիծանքի միջոցով եգիպտահայ կյանքի ստվերոտ կողմերի, ազգային ջոջերին մերկացնելը: «Մանանա» պարբերականը հրատարակվել է 52 տետրերի տեսքով, որոնք հիմնականում գրել է Ե. Օտյանը: Հոդվածներից են՝ «Վաճառականի մը նամակները», «Մեր երեսփոխանները», «Սիմոն Զաւարեան», «Ժամանց» և այլն: «Երվանդ Օտյանն օժտված էր մեծ երգիծանքի բոլոր տվյալներով՝ խոր կենսաճանաչություն, հարուստ գիտելիքներ, սուր միտք, սկզբունքայնություն, համարձակություն, ճոխ ու ճկուն լեզու, նաև առասպելական աշխատունակություն... առանց քեն կամ ոխ, ատելություն կամ նախանձ խառնելու ծիծաղին մեջ, որովհետև ծիծաղը սուրբ, աստվածային է»[2]: Հայկական ինքնուրյուն մանկավարժություն ստեղծելու

[1] Բաբլոյան Մ.Ա. (կազմող) հայ պարբերական մամուլը, Երևան, 1956,470, էջ 5:
[2] Այդ մասին մանրամասն տես,Հայ նոր գրականության պատմություն, Հ., 5, Երևան, 1979, 1014, էջ 669:

մասին Ա. Մանդինյանը գրել է. «Մենք մեր իսկությամբ օտարի կապիկներ չպետք է դառնանք, պետք է ստեղծենք մեր հայկական մանկավարժությունը, այո՛, հայկականը»:[1] Հայկական մանկավարժությունն ուսումնասիրելու մասին Ա. Ծավարշյանը գրել է. «Այդ պատմությունը դեռևս ուսումնասիրված չէ հանգամանորեն և մի քանի մանկավարժների հայացքներ են շարադրված: Ահագին քանակությամբ նյութեր, որոնք սփռված են հայկական հարյուրավոր ձեռագրերում, ավելի քան 150 տարվա հայկական պարբերական մամուլի բազմաթիվ օրգաններում, դեռևս ուսումնասիրված ու պարզաբանված չեն»[2]: Մեր կարծիքով դա ամենից շատ վերաբերում է երգիծանքին նվիրված պարբերականներին, երգիծանքը դաստիարակության գործոն դիտարկելուն: Այդ առումով ուշագրավ է նաև «Հայ մանկավարժական մամուլը» աշխատության մեջ նշված հեղինակների (Ա. Աբրահամյան, Գ.Հարությունյան, Ա. Մկրտչյան) խոսքի նշանակությունը. երգիծական խոսքը դիտարկել են որպես դաստիարակության գործոն և գնահատել են ավելի քան 33 պարբերականների գործունեությունը՝երգիծական խոսքի դերով: Այդ հեղինակները պարզապես հեռու են մնացել համանման գաղափարներ կրկնելու անհրաժեշտությունից: Ուսումնասիրությունները հաստատում են, որ հայ իրականությունում երգիծական գործեր ստեղծող հեղինակների քանակը փոքր չէ և նրանք ստեղծել են երգիծաբանության պահանջներին համապատասխան ու երգիծաբանական տեսակետից արժեքավոր գործեր: Բացառություն չեն կազմել նաև հայ պարբերականների շուրջը համախմբված հայ հեղինակները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշ քիչ թվով հայ հեղինակների երգիծական դիպուկ, արդար ու տեղին խոսքը, ինչպես նաև ծաղրանկարները դարձել են դաստիարակության գործոններ: Ինչպես նշեցինք որոշ հեղինակներ իրենց ուսումնասիրություններում փորձ են արել երգիծական խոսքը դիտարկել որպես դաստիարակության գործոն, սակայն առ այսօր գիտամանկավարժորեն հիմնավորված չէ երգիծանքը որպես դաստիարակության գործոն դիտարկելու հիմնահարցը և պատմամանկավարժական աշխատությունում լուսաբանված չէ: Մեր կարծիքով սույն հետազոտությունը բովանդակելու է դաստիարակության դրվածքը կատարելագործելու նոր հնարավորություններ: Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ որոշ հեղինակներ փոփոխությունների համար հիմք են ընդունում տարբեր պատճառներ և գտնում են, որ հենց այդ փոփոխություններն էլ կապում են դաստիարակության հետ: Եթե հիմք ընդունենք փոփոխությունները որպես դաստիարակություն ընդունելու տեսակետը, ապա կարելի է հաստատել, որ երգիծանքը դաստիարակության

[1] Այդ մասին վկայում է նաև պրոֆեսոր Արամ Աբրահամյանը՝ Բնագիտամաթեմետիկական կրթության մեթոդական հարցեր, Երևան,1984,76, էջ 6,7:

[2] Այդ մասին տես, Արամ Աբրահամյան, Գ.Հարությունյան, Ս. Մկրտչյան, Հայ մանկավարժական մամուլ, Երևան, 2010,203:

գործոն է կրկնակի առումով, նախ՝ ցույց է տալիս թերության առկայությունը, ապա՝ հուշում է նաև այն փոփոխելու ուղին: Այդ առումով մարդուն օգնության է գալիս ինքնադաստիարակությունը, որի համար ընդգծված ուղի են համարվում երգիծական խոսքն ու ծաղրանկարները: Կարելի է հիմնավորված համարել, որ հայ պարբերականներն իրենց երգիծական խոսքերով ու ծաղրանկարներով ձգտել են մաքրել բարքերը, ընթերցողների գիտակցությանը հասցնել վնասակարը վերացնելու անհրաժեշտությունը, ընթերցողների ճաշակը գոհացնել երգիծական խոսքով, պայքարել ստի ու կեղծիքի դեմ, չթողնել, որ խարդախություններն անպատիժ մնան, հարվածել շինծու ազգասիրությանը և այլն: Մի՞թե այս բոլորը դաստիարակությանը ներազդող գործոններ չեն: Այդ առումով բավական է լսել հայ մեծ գրողների խոսքերը.

Լավությունն անպատիժ չի մնում նրա կողմից,
ում մատուցվում է այդ լավությունը:

Ավ. Իսահակյան

Երբ որ արջն է քո տեսուչը
Վայ քո հալին, պարտիզպան:

Ռաֆֆի

Երգիծանքին նվիրված պարբերականները խրախուսել են երգիծական գրականություն ընթերցելու անհրաժեշտությանը, այն համարել են ապագա կյանքը ճիշտ ուղիով տանելուն նպաստող գործոն: Անհրաժեշտ է ընդգծել, որ երգիծանքին նվիրված պարբերականներն ունեցել են ընթերցողների մեծ բանակ, պարբերականներն անցել են ձեռքից ձեռք և այլն: Պարբերականները պայքարել են հասարակության շահերին դեմ գործողների և անհատական շահերին ծառայողների դեմ, հաճախակի են անդրադարձել ընթերցողների կարծիքներին և խրախուսել են դրական որակների առկայությանը: Վաղուց էր հասունացել երգիծանքը որպես դաստիարակության գործոն դիտարկելու գաղափարը՝ անտեսելով վիրավորականն ու հայհոյախառը սրամտությունները և ցուցաբերելով քննադատական մոտեցում և, իհարկե, հեռու մնալով մտքերն աղավաղելու հնարավորություններից:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից էլ կարելի է եզրակացնել, որ քննարկվող հիմնահարցը պահանջում է համակողմանի ուսումնասիրություն, սակայն սույն ամսագրային հոդվածում հնարավոր չէ տալ դիտարկվող հիմնահարցի գիտական սպառիչ պատասխանը: Մեր հետազոտությունները հնարավորություն են ընձեռնել, թեկուզև համառոտակի, ամբողջական պատկերացում տալ հայ պարբերական (երգիծական) մամուլում քննարկված «Երգիծանքը որպես դաստիարակության գործոն» հիմնահարցի մասին:

Армянские сатиристические периодики и проблемы воспитания

Р.Агаджанян

Резюме

Исследование вопроса сатиры как фактора воспитания имеет теоретическое и, особенно, практическое значение. Рассмотрение сатирической речи как фактора воспитания, в значительной степени способствует целям и содержанию периодики, посвященной сатире, а также исследованию опубликованных карикатур.

Ряд произведений армянской юмористической периодики содержат интересный материал для исследования (изучения).

Armenian Humorous Periodicals and the Problems of Bringing-up

R.Aghajanyan

Summary

The study of the question of satire as a factor of bringing-up has theoretical and mostly practical meaning. We think that considering the humorous speech as a bringing-up factor will be greatly influenced by the study of the purposes and contents of periodicals devoted to the satire and the study of published caricatures as well.

A range of Armenian humorous periodicals contain interesting material for studying.

ՀՏԴ *Հոգեբանություն, Մանկավարժություն*

ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

Գ.Հայրապետյան

XX դ. 90-ական թթ. ամերիկյան հոգեբանության մեջ ի հայտ է եկել հուզական ինտելեկտը: Ջոն Մեյերը և Պիտեր Սելովենը[1] առաջինն են տվել այդ հասկացության գիտական սահմանումը և բազմակողմանի հետազոտել հուզական ինտելեկտի առաջին մոդելը: Նրանք սահմանել են հուզական ինտելեկտը՝ որպես մի կառույց, որը ներառում է սեփական կարողությունը և այլոց զգացմունքներն ու հույզերը ստուգելը, դրանք տարբերելը և օգտագործել այդ տեղեկատվությունը մտածողության և գործունեության ուղղորդման համար: Այն իր մեջ ներառում է չորս բաղադրիչ՝

1. հույզերի ընկալումը և արտահայտումը
2. հույզերի օգտագործումը մտածողության մեջ
3. հույզերը հասկանալը
4. զգացմունքները կառավարելը

Այդ բաղադիչները կազմակերպվում են մի հիերարխիայում և հետևողականորեն զարգանում են օնտոգենեզում: Նման բարդ երևույթի, ինչպիսին հուզական ինտելեկտն է, հաջող ուսումնասիրության համար անհրաժեշտ է օգտագործել համակարգված մոտեցում: Դրանում կարող է օգնել անհատականության անբաժանելի թեորեման, որը մշակել է Վ.Ս. Մերլինոմը: Նա կատարել է հետևյալ ուսումնասիրությունները 51 բուհական ուսանողների հետ: Յուրաքանչյուր խմբի մասնակիցների տրված են տարբեր ուղղվածություններ. մի խմբի մասնակիցները պետք է գովազդեին իրենց տրված խմիչքը՝ հաշվի առնելով, որ այդ խմիչքն ընդհանրապես համով չէր (հյութը շատ աղի էր), մյուսները գովազդում էին սովորական հյութ: Տեսագրությունը կատարվել է անհատապես: Ձայնագրության ներկայացումից հետո (խաբուսիկ ու արժանահավատ) առաջադրվել է մասնակիցներին ուսումնասիրել հետազոտությունները, ընդ որում, մի խմբի անդամները վեր են լուծել մյուս խմբի անդամների վարքագիծը. փորձը գնահատվել է 5-ի սանդղակի վրա (1-5), այնուհետև յուրաքանչյուր փորձարկվող անձ, որը հրահանգով խաբել է, հաշվարկվել է միջին բալով: Այսպիսով, ըստ հաշվարկների պարզվել է ցուցադրողի խաբվածությունը կամ խաբելու կարողությունը: Ուսումնասիրության երկրորդ փուլում առաջարկվել է շարքը ավելացնել հոգեբանական մեթոդով՝ բացահայտելով սոցիալական ինտելեկտը: Տվյալները մշակվել են մաթեմատիկական վիճակագրական

[1] Salovey, P., Mayer, J. D. Emotional intelligence / P Salovey, J. D. Mayer // Imagination, Cognition, and Personality. – 1990. – V. 9. – P. 185–211.

մեթոդներով: Արդյունքում բացահայտվել են խաբելու, սոցիալական դիրքորոշումների և սոցիալական ինտելեկտի[1] ունակությունները:

Ռուսաստանում ավելի հաջող ուսումնասիրությամբ հադես է եկել Լյուսինի հուզական ինտելեկտը[2], որը սահմանում է հուզական ինտելեկտը որպես «կարողություն հասկանալու իրենց և ուրիշի հույզերը և դրանց կառավարումը»: Ուսումնասիրությունն անց է կացվել համալսարանի և քոլեջի հետևյալ մասնագիտությամբ ուսանողների հետ՝ «Իրավագիտություն», «Պատմություն», «Տնտեսագիտություն»: Ուսումնասիրվողները բաժանվել են երկու խմբի՝ բարձր և ցածր, ներանձնային և միջանձնային հուզական ինտելեկտի: Բարձր ներանձնային և միջանձնային հուզական ինտելետի խմբում գրանցվել է 44 ուսանող, իսկ ցածրում՝ 60: Արդյունքները վեր են լուծվել Վ. Վ. Բոյկոյի մեթոդիկայով: Բարձր ցուցանիշներով ուսանողների խմբում միջանձնային և ներանձնային հուզական ինտելեկտի արդյունքներն ավելի բարձր են: Դա բնորոշ է հուզական բարձր ինտելեկտով մարդկանց , ովքեր հակված են հաջողությամբ գործել ընկերոջ ինֆորմացիայի բացակայությամբ, կարող են նախատեսել գործընկերոջ գործունեությունը, նրանք չեն շտապում խուսափել անձնական շփումներից, կարողանում են ստեղծել անկեղծության, վստահության մթնոլորտ: Այդպիսի մարդիկ ավելի հեշտ են գործում նոր սոցիալական հարաբերություններում, ավելի իմպուլսիվ են շփման մեջ:

Հուզական կուլտուրան մարդու ընդհանուր կուլտուրայի չափորոշիչներից մեկն է: Անձի զարգացման համար հույզերն ունեն նույնպիսի նշանակություն, ինչպիսին ինտելեկը, միտքը, խոսքը և այլ կատեգորիաներ: Հույզերի արտահայտման կուլտուրայում իր արտացոլումն է գտնում անձի լեզվական – խոսքային կապը շրջակա միջավայրի հետ: Ըստ այդմ, թե ինչպես է մարդն արտահայտում իր հուզական վիճակը, ինչպիսի հուզական միջոցներ է օգտագործում, կարելի է պատկերացում կազմել նրա դաստիարակվածության և հոգևոր որակների զարգացածության աստիճանի մասին:

---

[1] Мерлин, В. С. Личность как предмет психологического исследования: Уч. пособие к спецкурсу / В. С. Мерлин. – Пермь: ПГПИ, 1989. – 79 с.
Мерлин, В. С. Структура личности: характер, способности, самосознание / В. С. Мерлин: – Уч. пособие к спецкурсу. – Пермь: ПГПИ, 1990. – 110 с.
Мерлин, В. С. Психология индивидуальности: Избр. псих. Труды / В. С. Мерлин. – Ин-т практич. психологии; Воронеж: НПО МОДЭК, 1996. – 446 с.

[2] Люсин, Д. В. Современные представления об **эмоциональном интеллекте** / Д. В. Люсин // Социальный **интеллект:** Теория, измерение, исследования / Под ред. Д. В. Люсина, Д. В. Ушакова. – М.: Институт психологии РАН, 2004. – С. 29 – 36.
Люсин, Д. В. Новая методика для измерения **эмоционального интеллекта:** опросник ЭмИн / Д. В. Люсин // Психологическая диагностика. – 2006 – № 4 –. С. 3 – 22

Հուզական կուլտուրայի բաղադրիչներից է **հուզական ինտելեկտը:** Այն խթանում է մարդու անձնական հաջողությունը, ինչպես մասնագիտական գործունեության մեջ, այնպես էլ և շրջակա միջավայրի հետ հարաբերություններում, ընտանիքում և առօրյայում մարդկանց հետ շփման մեջ: »Հուզական ինտելեկտ« տերմինը (թեորեմա) նկարագրում է մարդու հնարավորությունների մի ամբողջ շարք՝ բնավորություն, տակտ, զգացմունքայնություն, մարդկայնություն, այն, ինչ Գյոթեն ավանել է »սրտի կրթվածություն«, սրտակցություն: Էմոցիոնալ ինտելեկտը կամ էմոցիոնալ հնարավորությունները կարելի է բնորոշել որպես ինքնազգացման ֆունդամենտալ կարողություն: Այն արտահայտվում է ուրիշների նկատմամբ ցավակցության ունակություն, հարգանքի և ուշադրության, ինքնակարգապահության և պատասխանատվության զգացման մեջ: Յուրաքանչյուր մարդ բնության կողմից օժտված է հուզական հնարավորություններով: Բայց երբեմն նրանք մնում են թերզարգացած: Հույզերի լեզուն ի հայտ է գալիս խոսքի առաջացումից շատ առաջ: Փոքրիկը ժպտում է մեծահասակի ժպիտին, քնքուշ վերաբերմունքին և լաց է լինում, երբ մեծահասակը ունքերը կիտում է կամ փոքրիկի հետ խոսում է կոպիտ ձայնով: Մայրն ի ր երեխայի հուզական ազդակներից շատ լավ գիտի, թե ինչպես և ինչ է զգում իր երեխան: Բայց մի՞շտ են արդյոք մեծահասակը և երեխան (5-6 տարեկան) հասկանում, թե ինչ է կատարվում իրենց հետ: Արևելյան իմաստությունն ասում է. «Չկա մեկը քեզ ավելի մոտ, քան ինքդ», «Քո ամենամոտ մարդը դու ես», իսկ եթե դու ինքդ քեզ չես ճանաչում, ինչպե՞ս կարող ես ճանաչել ուրիշներին:

Հուզական ինտելեկտն անհրաժեշտ է զարգացնել, կատարելագործել, որպեսզի հետագայում մարդը կարողանա ինքնավերագտնել, ինքնահաստատվել շրջապատող իրականության մեջ: Այդ խնդրի իրականացման մեջ մեծ ներդրում ունեն մայրենի լեզվի դասերը: Մայրենի լեզու ասելով՝ հասկանում ենք հայոց լեզվի ժամերը և մայրենիի ընթերցանությունը: Այն նյութը, որն առաջադրվում է գրքի հեղինակների կողմից՝ ըստ դասընթացների (ցանկացած ուսումնամեթոդական կոմպլեքս), կարելի է օգտագործել կրտսեր դպրոցականների հուզական ինտելեկտի զարգացման համար:

Վերլուծելով Պատվական Խաչատրյանի »Ծառի խնդրանքը« բանաստեղծության հատվածները՝ ընտրենք այնպիսի բառեր, որոնք կօգնեն մեզ արտահայտելու մեր հույզերը՝ ուրախություն, զայրույթ, սեր, հիացմունք, վախ, երջանկություն:

Մի՛ կոտրատիր իմ ճյուղերը,
Որդիներն են նրանք իմ ***հեզ,***
Ես այնպես եմ ***սիրում*** նրանց,
Ինչպես մայրդ սիրում է քեզ:

Տերև անգամ եթե պոկես

Սիրտս *ցավից կմոկտա,*
Թե որ դու ինձ չպահպանես,
Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա:

Հայերենի առածներն ու ասացվածքները ևս աշակերտի հուզական ինտելեկտի զարգացման աղբյուրն են: Հայոց լեզվի մեջ ներառելով այդ բանահյուսական ձևերը որոշակի թեմատիկայով՝ ուսուցիչը հարստացնում է սովորողների բառապաշարը դարձվածքներով՝ աշակերտի խոսքը դարձնելով առավել արտահայտիչ: Կան դարձվածքներ, որոնցում գործում են այս կամ այն զգացմունքները: Աշակերտներին ծրարի մեջ տրված են քարտեր, որոնցում գրված են հույզեր: Այդ նույն ծրարում կան թերթիկներ, որոնցում գրված են դարձվածքներ: Նրանց բաշխում են դարձվածքներն՝ ըստ իրենց պատկանող հույզերի խմբերի:

Հույզեր – ուրախություն, երջանկություն, հիացում, ծաղրանք, զայրույթ, ամաչկոտություն, սարսափ, վիշտ, զարմանք, մեղքի զգացում, գոհացում, զզվանք:

Դարձվածքներ - Աչքից կրկա թափել - զայրույթ:
Այրված սրտին մխիթարանք - գոհացում
Ահ ու դողի մեջ ընկնել – սարսափ
Աշխարհն իրենը լինել – ուրախանալ:
Բերանը բաց մնալ - զարմանալ

Նկարել դարձվածքները. «Աշխարհն իրենը լինել», «զայրույթից պայթել», «վախից դողալ», «թթու դեմք ընդունել», «հոգու հետ խաղալ»:



Ավարտին հասցնել դարձվածքները: Տրված են քարտեր: Քարտերի մի մասում գրված է ասացվածքի սկիզբը, մյուսում՝ ավարտը:

Մի՛ շտապիր խոսքով, այլ շտապի՛ր գործով:

Ինքդ նե՛ղն ընկիր, բայց ընկերոջդ փրկի՛ր:

Ուզում ես լավ ընկեր ունենալ, ինքդ լավ ընկեր եղի՛ր:

Ավարտին հասցրու ասացվածքը և բացատրի՛ր, թե ինչ ես հասկանում:

Հագուստի նորն է լավ, ընկերոջը՝ հինը - հարգանք, սեր, ընկերություն:

Նախ առուն թռի, հետո քեզ գովիր – պարծենկոտություն,վստահություն

Օտար երկիրը հայրենիք չի դառնա - կարոտ, հայրենասիրություն, պանդխտություն:

Դատարկ տակառը բարձր ձայն է հանում – անիմաստություն, անգրագիտություն:

Մայրենի լեզվի դասերը մեծ դեր ունեն երեխայի հուզական ինտելեկտի ձևավորման և զարգացման մեջ: Յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործություն ազդում է կարդացողի հուզական վիճակի վրա՝ ներսում կուտակելով դրական և բացասական հույզերի լիցքեր: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչն ունի հնարավորություն՝ անդրադառնալու սովորողների զգացմունքներին, զարգացնելու նրանց մեջ ցավակցելու կարողությունը, գնահատական տալու այս կամ այն հերոսի արարքներին: Մանկավարժի օգնությամբ աշակերտը գրական հերոսներին համեմատում է իր, իր ընկերների և շրջապատի մարդկանց հետ: Այսպես, կարդալով և վերլուծելով Զորայր Խալափյանի «Ծաղկուն պարտեզ» պատմվածքը՝ ուսուցիչը ոչ միայն ուշադրություն է դարձնում, թե ինչ արարք է գործել գլխավոր հերոսը (ճիշտ է վարվել, թե սխալ),այլ նրան, թե ինչպիսի հույզեր է ապրել պատմվածքի ամբողջ ընթացքի ժամանակ, ինչ է փոխվել նրա մեջ, ով է օգնել նրան դրանում.

- զգացում – պետք է ազնիվ լինել, արդար լինել, հոգիդ լցվի բարությամբ
- դաստիարակել «ուրիշի ունեցածի վրա աչք մի դիր» , «պետք չէ դատապարտել ուրիշին,իր կամքը ուրիշին պարտադրել» առածներով:

Հրաշալի է ասել Վ.Ա. Սուխոմլինսկին «Սիրտս նվիրում եմ երեխաներին» գրքում. «Եթե բարի հույզերը չեն դաստիարակվել մանկական տարիքում, ապա երբեք չեն դաստիարակվի, որովհետև դա իրոք մարդկային է, որը հաստատվում է հոգու միաժամանակ առաջին և ամենակարևոր ճշմարտության ճանաչման, միաժամանակ ապրումներ ունենալու և վշտակցման՝ մայրենի լեզվով հնչող նուրբ երանգների հետ»:

Развитие эмоционального интеллекта
в учебниках младших классов
Г. Айрапетян
Резюме

Одна из составляющих эмоциональной культуры - эмоциональный интеллект.

Эмоциональный интеллект формулируется как умение понимать свои и чужие эмоции и управление ими. Эмоциональный интеллект необходимо

развивать и совершенствовать, чтобы человек мог самоутвердиться в окружающей его действительности. В реализации этой задачи большой вклад имеют уроки родного языка, которые способствуют развитию эмоционального интеллекта у школьников младших классов.

The Development of the Emotional Intellect
in the Textbook for Junior Pupils

G. Hayrapetyan

Summary

One of the components of the emotional culture is the emotional intellect. It is defined as an ability to understand your and other people's emotions and control them. One should develop and improve one's emotional intellect in order to assert oneself in the surrounding reality. Native Language lessons play a great role in the accomplishment of this task and contribute to the development of the emotional intellect of the juniors.

Գրականություն

1. *Д. В. Люсин,* Современные представления об **эмоциональном интеллекте** / Д. В. Люсин // Социальный **интеллект:** Теория, измерение, исследования / Под ред. Д. В. Люсина, Д. В. Ушакова. – М.: Институт психологии РАН, 2004. – С. 29 – 36.
2. *Д. В. Люсин*, Новая методика для измерения **эмоционального интеллекта:** опросник ЭмИн / Д. В. Люсин // Психологическая диагностика. – 2006 – № 4 –. С. 3 – 22
3. *В. С. Мерлин*, Личность как предмет психологического исследования: Уч. пособие к спецкурсу / В. С. Мерлин. – Пермь: ПГПИ, 1989. – 79 с.
4. *В. С. Мерлин*, Структура личности: характер, способности, самосознание/ В. С. Мерлин: – Уч. пособие к спецкурсу. – Пермь: ПГПИ, 1990. – 110 с.
5. *В. С. Мерлин*, Психология индивидуальности: Избр. псих. Труды / В. С. Мерлин. – Ин-т практич. психологии; Воронеж: НПО МОДЭК, 1996. – 446 с.
6. *Р. Д. Робертс,* Эмоциональный **интеллект:** проблемы теории, измерения и применения на практике / Р. Д Робертс, Дж. Мэттьюс, М. Зайднер, Д. В. Люсин.// Психология. Журнал высшей школы экономики. – 2004. – Т.1, №4. - С. 3-27.
7. *P.Salovey , J. D. Mayer*, Emotional intelligence / P Salovey, J. D. Mayer // Imagination, Cognition, and Personality. – 1990. – V. 9. – P. 185–211.
8. *Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հերերյան,* Մայրենի լեզու, 4-րդ դասարան:
9. *Վ.Ա.Սուխոմլինսկի,* Սիրտս նվիրում եմ երեխաներին, «Լույս» Հրատարակչություն Երևան 1977:

ՀՏԴ 159.9 *Հոգեբանություն*

ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱԿՏԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԹՆՈՊԱՇՏՊԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Լ. Ղարախանյան

Էթնիկական ինքնանույնացման տեսակներից մեծ նշանակություն ունեցող ցուցիչ է կրոնական պատկանելությունը: Սոցիալ-էթնիկական կոնտեքստում արտացոլվում են կրոնի բազմաթիվ գործառույթները, որոնցից արժե առանձնացնել աշխարհայացք ձևավորող, կարգավորող /ռեգուլյատիվ/ գործառույթ: Վերջինս ենթադրում է հավատացյալ անձի ձևավորում ու առաջադրում համապատասխան սոցիալական վարքային ձևեր: Կրոնը կատարում է նաև փոխհատուցող գործառույթի դեր, և անձը լրացնում է առօրյա կյանքի չիրականացված նպատակների բացակայությունը: Ռուս ազգագրագետ Ս. Լուրյեն էթնիկական ավանդույթների և մշակույթի «կենտրոնական միջուկ» է համարում կրոնը[1]: Ավելին կարելի է ասել. կրոնական գաղափարախոսությունը կրում է ազգային, պետական նկարագիր, որը բովանդակում է ազգային, պետական հետաքրքրությունները: Եվ որքան ուժեղ է կրոնական գաղափարախոսությունը, այնքան կայուն է ազգային ինքնագիտակցությունը, արժեքային կողմնորոշումների ու կարծրատիպերի պաշտպանական գործառույթը:

Կրոնը՝ որպես էթնիկական ցուցիչ, ևս անդրադառնում է էթնիկական կարծրատիպերի ձևավորման վրա: Թուրքի էթնիկական ինքնանույնացումն, անշուշտ, բեկվում է կրոնական պրիզմայով, որի հետևանքով էթնիկական ու սոցիալական կարծրատիպերը ենթադրում են Ջիհադի /սրբազան պատերազմի/ սկզբունքայնությունը, ինչը նշանակում է նվաճում, գրավում, տիրացում և առհասարակ գերակայության հոգեբանական զգացում յուրաքանչյուր քրիստոնյայի նկատմամբ: Այսօր ևս մահմեդական կրոնը ձևավորում է այնպիսի կարծրատիպեր, որոնց պաշտպանական գործառույթները բացահայտորեն հիմնված են ագրեսիայի մեխանիզմի վրա: Մեջբերենք. «Ահ գցեք Աստծո թշնամիների և ձեր թշնամիների սիրտը» /Սուրահ 8.60/: «Կռվի ելեք նրանց /ոչ մահմեդականների/ դեմ /իմա՝ սպանեցեք նրանց/, և Աստված կպատժի /կտանջի/ նրանց ձեր ձեռքով, ամոթահար արեք նրանց» /Սուրահ 9.14/: «Ահ պիտի գցեմ անհավատների սիրտը, խփեցեք նրանց վզից վերև, ջարդեցեք նրանց բոլոր մատները: Խփողը դուք չեք, խփողն Աստված է»[2] /Սուրահ 8.13-18/: «Ղուրանն ընթերցողը զարմանքով կնկատի, որ «կռվել», «սպանել» բառերն ավելի հաճախակի են օգտագործվում, քան

[1] Психология: учеб. /В. М. Аллахвердов, С. И. Богданова П86 [и др.]; отв. ред. А. Крылов.-2-ое изд. М.: ТК Велби, изд-во «Проспект», 2005.- с. 189:

[2] Գայանեան Ա. Ռ. Իսլամ և ավետարան. Բարեկարգյալ հայեցակետ: -Գյումրի: Էլդորադո հրատ., 2006 էջ 22:

«աղոթելը»: Կարծում ենք, որ կրոնը որպես էթնիկական ցուցիչ, ավելի շատ նպաստում է հետերոստերեոտիպերի ձևավորմանը: Ուշագրավ է թերևս այն, որ մահմեդականների մոտ ագրեսիվ էթնիկական հետերոստերեոտիպերի, որոնց հիմքում ընկած է կրոնական ցուցիչը, վերջնական նպատակը ենթադրում է ինքնամաքրում, քանի որ ջիհադը /սրբազան պատերազմը/ և առհասարակ գյավուրների /անհավատների/ ոչնչացումը կրոնական պարտականությունների կատարում է և «կատարողի գործն ալլահի հետ է », ուստի «մաքրագործում է սիրտը»[1]:

Հայ գեղարվեստական գրականության մեջ ևս հանդիպում ենք այնպիսի դրվագների, որտեղ ընդգծվում է, թե ինչպես են կրոնական պատկերացումների շրջանակներում բացասական հետերոստերեոտիպեր ձևավորվում ոչ թուրքերի նկատմամբ՝ որպես էթնիկական կարծրատիպերի ձևավորման երևույթ: «Ուրբաթ օրերը թուրք կրոնավորը ոչ մի քրիստոնյայի չէր բարևում և այդ օրը ոչ մի քրիստոնյայի բարևին չէր պատասխանում»[2]: Մեր դիտարկումներից և ուսումնասիրություններից պարզվում է, որ Ղարաբաղի հայերի և ադրբեջանցիների միջէթնիկական շփումներում դրսևորված խտրականությունն ու ագրեսիան շատ հաճախ այն կարծրատիպերի ակտուալացման արդյունքն են, որոնց հիմքում ընկած էր կրոնական ցուցիչը:

Կրոնական նախապաշարմունքները հեռու են պահում մուսուլմաններին չթլպատված քրիստոնյայի հետ ամուսնանալուց: Խաչատուր Աբովյանի «Սոնայ, տարաբախտ աղջիկն…» բանաստեղծության մեջ ադրբեջանուհի Սոնան մերժելով կրոնական նախապաշարմունքները, խախտում է շարիաթը և ամուսնանում քրստոնյայի հետ, որը սակայն լքում է վերջինիս, իսկ մոլեռանդ հավատակիցները, որոնք չէին կարող նրան ընդունել իրենց հարկի տակ, սպանում են: Սա բնորոշ է մահմեդականությանը՝ օտարին կնության չտալ իրենց կանանց, և սա ունի խումբն ամրապնդող գործառույթ: Այս երևույթը նաև բարոյական ռեգրեսի /նահանջի/ տիպիկ օրինակ է: Ըստ էության, շարիաթը, որը թաբու է, կրոնական նախապաշարմունք է, ձևավորված ստերեոտիպերի համակարգ, որը ենթադրում է համապատասխան պայմաններում դրսևորվող վարքագիծ: «Բարոյազրկման գործընթացի հետևանքով անհատը, սոցիալական խումբը կամ էթնոսը վերադառնում են բարոյականության, վարքի, բարոյական կարգավորման ավելի ցածր աստիճանի»[3]: Այստեղ դիտվում է նաև էթնիկական կոգնիտիվ գործընթացի թուլացման երևույթը, որի ընթացքում թուլանում է պրոբլեմներ լուծելու և պրոբլեմային հարաբերություններ հաղթահարելու ընդունակությունը: Սրանք էթնոհոգեբանական իմացական /կոգնիտիվ/ երևույթներ են, որոնք գիտական ուսումնասիրման համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

---

[1] Գայանեան Ա. Ռ. Իսլամ և ավետարան. Բարեկարգյալ հայեցակետ: -Գյումրի: Էլդորադո հրատ., 2006 էջ 221:

2 Կայայան Ա. Իսլամի իմացություն, Երևան, Փյունիկ 1996, էջ 11:

3 Նալչաջյան Ա. Ա. «Էթնիկական հոգեբանության»Ե., 2003, 541 էջ:

Մահմեդական աշխարհում կնոջը սեփականություն դիտելու կարծրատիպը ևս ունի կրոնական հիմքեր: Այսպես, ղուրանը տղամարդուն կնոջից բարձր է դասում, «կնոջը խրատում է ենթարկվել ամուսնուն, իսկ տղամարդուն հորդորում ծեծել կանանց և ուղարկել իրենց անկողինը, եթե իրենց վատ են պահում կամ չեն ենթարկվում»[1]:

Սեռական գործողությունները միայն արական քնույթ համարելը ևս ձևավորում է կնոջը երկրորդական համարելու կարծրատիպը: «Իր էությամբ նա հող է, կարող են նրան ցանել և նա կծնի»[2]: Կինը դիտվում է որպես ագրեսիայի օբյեկտ, քանի որ տղամարդուն մղում է հեշտասիրության, իսկ վերջինս կորցնում է իր ինքնակառավարումն ու մտքի խաղաղությունը, Ալլահին հավատարմությունը, հասարակական հեղինակությունը՝ հակադրվելով ալլահի խոսքին: Կնոջը նվաստացնելու ստերեոտիպ է ձևավորում լոկ տղամարդուն ամուսնալուծության իրավունք վերագրելը: Շարիաթը ամուսնալուծված կնոջ խնամքին միայն ժամանակավորապես է թողնում երեխաներին: Երեխաները պետք է հոր խնամքի տակ լինեն: Ամուսնալուծության իրավունքը պատկանում է լոկ տղամարդուն, որ կարող է բաժանվել ցանկացած առիթով ու ցանկացած ժամանակ: Այս շարքը կարելի է երկար շարունակել:

Կրոնը՝ որպես էթնիկական կարևորագույն ցուցիչ, ադրբեջանցիների էթնիկական ինքնագիտակցությունում ամրապնդում էր արժեքների երևակայական անհամատեղելիության գիտակցումը, միջէթնիկական հարաբերությունների երևակայական անհաղթահարելիությունը և ապամարդկայնացման հիմքեր էր պարունակում հային աղջիկ չտալու կարծրատիպը. հայ տղամարդը թլպատված չէ, ինչն, ըստ ղուրանի, անթույլատրելի է: Երթուղային տաքսու վարորդ Թոֆիկը բավականին հաճախ էր հյուրընկալվում հայերի տանը և խոզի միս ուտում: Վերջինս հակասում էր ադրբեջանցիների կրոնական պատկերացումներին: Երբ Թոֆիկը տուն էր վերադառնում կինը նրան ստիպում էր լողանալ և հետո անկողին մտնել՝ կասկածելով նրան խոզի միս ուտելու մեջ: «Քո գործած մեղքերի համար մոլլաները /թուրք հոգեվորականները/ գիշերներն ինձ խեղդում են»: Կինը հոգեբանորեն նույնանում էր ամուսնու հետ և նրա փոխարեն մեղքի զգացում ապրելով կրում պատիժը: Ադրբեջանցիների էթնոցենտրիզմի ու էթնիկական անհանդուրժողականության օրինակները շատ են: Հյուրասիրությունների ժամանակ դրսևորված առանձին դրվագները հուշում են, որ էթնոցենտրիզմը առավել զարգացած էր թուրք կանանց մոտ: Սա նաև վկայում է խմբի կայունության մասին: Հայրս, որ ջերմեռանդ քիրվա էր համարվում, վաղուց էր նկատել, որ թուրք կինը նույն ափսեն, բաժակն ու գդալն է ամեն անգամ մատուցում: Հայի համար նախատեսված սպասքն առանձին էր պահվում, ինչը պատճառավորվում էր «հարամ է» դիրքորոշմամբ: Թուրք կնոջ

[1] Կայայան Ա. Իսլամի իմացություն, Երևան, Փյունիկ 1996, էջ 17:
2 Նույն տեղը:

կրոնապաշտությունը մեծացնում, ավելի էր ընդգծում էթնոհոգեբանական խզման աստիճանը: Վերջինս խորշում էր «անհավատ» տղամարդուց: Իսկ նրանց էթնոցենտրիզմը հաղթահարելու և հայ տղամարդու նկատմամբ արտահայտվող անհանդուրժողականությունը, թերևս կարելի է բացատրել այն պարզ իրողությամբ, որ նրանք վերջինիս հետ չէին ամուսնանում ու կապեր չէին ունենում: Թուրք տղամարդու և հայ կնոջ ամուսնությունները կային, ըստ որում համարվում էին ընդունելի: Ի դեպ, «թուրքը լավ կին պահող է» ստերեոտիպն առ այսօր էլ գործում է մինչև արցախյան շարժումը Ադրբեջանին սահմանակից գյուղերի կանանց շրջանում: Հայ տղամարդուն աղջիկ չտալու կրոնական պատկերացումներով պայմանավորված ստերեոտիպն, ըստ էության, կատարում է էթնիկական ինքնապաշտպանական գործառույթ: Ազգային հոգեկերտվածքը ձևավորող գործոնները /մշակույթ, ավանդույթներ/ ևս դառնում են ստերեոտիպերի ստեղծման ու արմատավորման առանցք: Տվյալ էթնոսին բնորոշող գերակա արժեքային կողմնորոշումների ձևավորմամբ տեղի է ունենում էթնիկական ավտոստերեոտիպերի ձևավորումը: Հոգեբանական նույն գործընթացն է տեղի ունենում նաև հետերոստերեոտիպերի ձևավորման պարագայում:

Թուրքի հարսանիքին հրավիրված հայերի համար պատրաստվում էր առանձին սեղան, որում նորից գործում էր «Հայը գյավուր է » /անհավատ/ կամ «Էրմանի շեյթան յոլունդա» /Հայը գնում է սատանայի ճանապարհով/ կրոնական հիմքեր պարունակող կարծրատիպը, որը խարանի էֆեկտ էր թուրքի գիտակցական կյանքում: Գարեգին Նժդեհը մատնանշում է թուրքին իր իսկ կրոնով ճանաչելու մասին. «Ալլահին վերագրված հատկություններով պէտք է ճանաչել թուրքը: Աշխարհի ամենասեռակենտրոն ժողովուրդն է նա, որի շնաբոյութիւնը սեռն իսկ փոխադրուած է երկինք»[1]:

Ադրբեջանցիների ու Ղարաբաղի հայերի միջէթնիկական հարաբերությունների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ առաջինների էթնիկական հետերոստերեոտիպերը սնուցվում էին կրոնական գաղափարախոսությամբ: Եվ այստեղ **էթնոմիավորող** հանգամանքների մասին խոսելն առաջացնում է բազմաթիվ հիմնախնդրային հարցադրումներ, քանի որ երկու էթնոսների էթնիկական սահմանազատման առանցքում ընկած են կրոնական ծագում ունեցող բացասական հետերեոստերեոտիպերը, որոնք նախապաշարվածության ավելի ուժեղ հոգեբանական պայմաններ են ենթադրում:

1. Այսպես, կրոնական պատկերացումներն անձի ու էթնիկական խմբերի էթնիկական ստերեոտիպերի ձևավորման աղբյուր են և նույնպես կատարում են էթնոպաշտպան գործառույթ:

2. Քանի որ ստերեոտիպացումը անձի սոցիալականացման բաղադրիչ է, ուստի էթնիկական մշակույթի, այդ թվում կրոնական պատկերացումների

[1] Նժդեհ Գ. Հատընտիր, Ե., Հայաստան 2001, էջ 381:

տրանսմիսիան ներառում է նաև էթնիկական ավտո և հետերոստերեոտիպերի փոխանցում /տրանսմիսիա/, որը, կատարելով իր պաշտպանական գործառույթը, կայուն է պահում էթնոսի մշակույթը և անհատի էթնիկական ինքնությունը:

3. Դրական կրոնական ավտոստերեոտիպերի առաջացումն անհատ էթնոկիրի և էթնոսի խմբային հոգեկանում բարձրացնում է խմբային ֆրուստրացիաների նկատմամբ վերջինիս հանդուրժողականությունը:

4. Բացասական կրոնական հետերոստերեոտիպերի առկայությունը նպաստավոր պայմաններում սրում է թշնամանքը հակառակ էթնոսի նկատմամբ /ֆացիլիտացիայի է ենթարկում/ միջէթնիկական կոնֆլիկտների առաջացումը ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակներում:

5. Կրոնական ստերեոտիպի պաշտպանական գործառույթն արտահայտվում է հոգեբանության մեջ հայտնի պաշտպանական մեխանիզմների համալիր գործունեության արդյունքում, որոնք յուրահատուկ ձևով դրսևորվում են ինչպես անհատ էթնոֆորի, այնպես էլ խմբային-էթնիկական մակարդակում: Ընդ որում կախված այն սոցիալ-հոգեբանական պայմաններից, որոնցում ձևավորվում ու էսկալացիայի են ենթարկվում ստերեոտիպերը, կարող են գերակայող դառնալ պաշտպանական որոշակի մեխանիզմներ /մի դեպքում ագրեսիան, մեկ այլ դեպքում՝ ինտելեկտուալիզացիան և այլն/:

Գրականություն

1. *Ա.Ռ. Գայանեան,* Իսլամ և ավետարան. Բարեկարգյալ հայեցակետ: - Գյումրի: Էլդորադո հրատ., 2006 674 էջ:
2. *Վ.Թոթովենց,* Կայնքը հին հռովմեական ճանապարհի վրա, «Սովետական գրող» հրատ. 1979, 91 էջ:
3. *Ա. Կայայան,* Իսլամի իմացություն, Երևան, Ֆյունիկ 1996, 192 էջ:
4. *Ա. Ա. Նալչաջյան,* Էթնիկական հոգեբանության, Ե., 2003, 541 էջ:
5. *Գ. Նժդեհ, Ե.Հատրնտիր,* Հայաստան 2001, 403 Էջ:
6. Психология: учеб. /В. М. Аллахвердов, С. И. Богданова П86 [и др.]; отв. ред. А. Крылов.-2-ое изд. М.: ТК Велби, изд-во «Проспект», 2005.-752с:

The Religious Conceptions as a Source of Development of Ethnic Stereotypes and their Ethnoprotective Function

L. Gharakhanyan

Summary

One of indicators of greatest importance among the forms of ethnic self-identification is religious belonging /devotion/. Numerous protective functions of religious are reflected in the social-ethnic context, and influences the formation of ethnic stereotypes which presupposes certain behaviour manifested in appropriate conditions. The following article deals with the separate points of religious conceptions as a source of development of ethnic stereotypes and with their ethnoprotective function.

Религиозные представления как источник развития этнических стереотипов и их этно-защитные функции

Л. Караханян

Резюме

С точки зрения этнической самоидентификации одим из наиболее значимых показателей является религиозная принадлежность. В социально-этническом контексте отражены многочисленные защитные функции религии, которая также влияет на формирование этнических стереотипов, что предполагает формирование определенного характера поведения в соответствующих условиях.

В данной статье рассматриваются отдельные положения религиозных представлений как источники развития этнических стереотипов и их этно-защитные функции.

ՀՏԴ 159.9 *Հոգեբանություն*

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԶՈՐԱՑՐՄԱՆ ՈՐՈՇ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Վ.Յարամիշյան

Շարքային կազմի պայմանագրային զինծառայողների վաղաժամկետ զորացրումը բանակի համար լուրջ խնդիր է, որի անտեսումը հղի է անցանկալի հետևանքներով: Հայտնի է, որ բանակը համալրող զինծառայողների մասնագիտական և համակողմանի պատրաստումը խիստ աշխատատար և ծախսատար գործընթաց է: Ամիսներ, երբեմն նույնիսկ տարիներ են պահանջ-վում՝ պայմանագրային զինծառայողներին զինվորական արվեստի գաղտնիքներին լիարժեք հասու դարձնելու համար, մինչդեռ նրանց վաղաժամկետ զորացրումը փոշիացնում է այդ ուղղությամբ գործադրած ջանքերը: Սակայն դա երևույթի միայն արտաքին կողմն է, քանի որ շատ ավելի անցանկալի ու վտանգավոր է բարոյահոգեբանական այն վնասը, որ կարող է հասցնել ծառայությունից չբավարարված ու զորացրման վերաբերյալ զեկուցագիր ներկայացրած զինծառայողը բանակի վարկանիշին ու հեղինակությանը: Ահա թե ինչու շարքային կազմի պայմանագրային զինծառայողների վաղաժամկետ զորացրման իրական պատճառները պարզելու, կանխարգելման ուղիներ գտնելու, դրա դեմ պայքարելու և անձնակազմի մարտական ոգու ու կայուն բարոյահոգեբանական վիճակի ապահովման նպատակով բանակի զորամասերում հետևողական աշխատանք իրականացնելու անհրաժեշտություն է առաջանում: Նման աշխատանքներն ուղղված են ըստ զինծառայողների կատեգորիաների (սպաներ, պայմանագրային ծառայության համար նոր զորակոչվածներ, «հին ծառայողներ», զորացրվողներ) շահագրգիռ քննարկումներ կազմակերպելուն, կարծիքների հավաքագրմանը, վաղաժամկետ զորացրման պատճառների վերաբերյալ զեկուցագրերի մանրակրկիտ հետազոտմանը: Նպատակն է հասնել նրան, որ յուրաքանչյուր պայմանագրային զինծառայող հասկանա ու գիտակցի զինվորական ծառայության բարձր արժեքն ու կարևորությունը: Արհեստավարժ բանակի կառուցման ճանապարհին մեր երկրի ձեռք բերած հաջողություններն ակնառու են, սակայն դրանից չպետք է հանգստանալ, այլ մշտապես փորձել ուշադրության կենտրոնում պահել առկա պրոբլեմները և խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում պայմանագրային զինծառայողների վաղաժամկետ զորացրման համար:

Սույն վերլուծության հիմքում դրված են Ն զորամասում կատարված հետազոտության արդյունքները: Պարզվել է, որ տվյալ զորամասի շարքային կազմի պայմանագրային զինծառայողների ընդհանուր թվից տարվա ընթացքում զորացրվել են 79-ը, այդ թվում՝ անձնական դիմում են ներկայացրել 46-ը, պայմանագրի պահանջները չկատարելու հիմնավորմամբ վաղաժամկետ զորացրվել են 10-ը, առողջական վիճակի բերումով զորացրվել է

1 զինծառայող, սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ՝ 3-ը և պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 19-ը: Եթե հարգելի պատճառներ համարենք առողջական վիճակը, սահմանային տարիքը լրանալը և պայմանագրի ժամկետը լրանալը, ապա ստացվում է, որ անհարգելի պատճառներով զորացրվել են թվով 56 զինծառայողներ, ինչը կազմում է զորացրվածների ընդհանուր թվի մոտ 70 տոկոսը, որը բարձր ցուցանիշ է և վկայում է որոշակի խնդիրների առկայության մասին: Այդ խնդիրների որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք կարելի է դասակարգել մի քանի խմբերի մեջ.

- խնդիրներ՝ կապված զինծառայողի անձի հետ,
- խնդիրներ՝ կապված ծառայության կրման պայմանների հետ,
- խնդիրներ՝ կապված միջանձնային փոխհարաբերությունների հետ:

Գրեթե բոլորը, ում հետ անց են կացվել առանձնազրույցներ, համոզված պնդում են, որ պայմանագրային զինծառայողների զորացրման պատճառները գտնվում են հասարակության և բանակի միջև առաջացած որոշակի հակասությունների մեջ, որն իր արտահայտությունն է գտնում ***զինծառայողի անձի*** ձևավորման վրա: Թեև ժամանակի ընթացքում բարձրանում է պայմանագրային հիմունքներով բանակ զորակոչվող երիտասարդների ֆիզիկական և մտավոր զարգացածության մակարդակը, սակայն նույնը դժվար է ասել նրանց աշխարհայացքի ու գաղափարական պատրաստվածության մասին: Պայմանագրային ծառայության համար բանակ զորակոչվող երիտասարդների արժեքային կողմնորոշումները երբեմն չեն համապատասխանում բանակային արժեքներին: Թեև Զինված ուժերի ու բանակի հեղինակավորությունն ու վարկանիշը մեր երկրում ավանդաբար գտնվում են բարձր մակարդակի վրա, սակայն արական սեռի քաղաքացիների մոտ դեռևս չի աճում բանակում ծառայելու ցանկությունը (8, էջ 114): Հավաքագրման ժամանակահատվածում նրանց զգալի մասն առաջնորդվում է շուկայական նյութապաշտության, անձնական շահի և հաջողության հասնելու դրդապատճառներով, իսկ բանակը, դրան հակառակ, պահանջում է ծառայության շահը բարձր դասել անձնականից, ունենալ կոլեկտիվիստական գաղափարներ: Ավելի պարզ ասած, ապագա զինվորների զգալի մասը բանակ է գալիս իր նյութական և սոցիալական խնդիրները լուծելու ընձեռված հնարավորությունն ի շահ իրեն օգտագործելու համար, սակայն, բախվելով բանակային հստակ ռեժիմին ու կանոնադրային պահանջներին, հաճախ նահանջում է: Հասարակությունն ու բանակը արդարությունը, ազնվությունը, ընկերականությունը, փոխօգնությունը, նվիրվածությունը և նմանատիպ այլ գաղափարաբանական կատեգորիաներ տարբեր կերպ են մեկնաբանում: Հետևանքը լինում է գաղափարապես թույլ պատրաստված զինծառայողների հոգեբանական խորը հիասթափությունը: Նորակոչիկներից շատերն այդպես էլ չեն կարողանում հարմարվել բանակային պայմաններին (5, էջ 61): Մտահոգիչ է, որ նման հակասություն կա նաև բանակի հին և նոր սերնդի զինծառայողների միջև: «Հին» ենթասպաներն ու սպաները, ինչպես նաև

ծառայության երկար ժամկետ ունեցող պայմանագրայինները, թերահավատ են լինում նոր համալրման նկատմամբ՝ գտնելով, որ նրանք ճիշտ չեն հասկանում զինվորական ծառայության իրական արժեքն ու կարևորությունը, իսկ նոր զորակոչվածները գտնում են, որ «հները» կյանքից հետ են մնացել: Արդյունքում պառակտվում է ոչ միայն պայմանագրային զինվորների ու սերժանտների, այլև երբեմն նույնիսկ սպաների համախմբվածությունը, և զինվորական կոլեկտիվներում առաջանում են հակամարտ միկրոխմբեր:

Ծառայության ընթացքում անխուսափելիորեն առաջ է գալիս զինծառայողի անձի ֆիզիկական և հոգեբանական լարվածություն: Լարված ու երկարաժամկետ մարտական հերթապահության հետ կապված զգացողությունները, հուզմունքը, զորացրվելուց հետո աշխատանք գտնելու, կայուն վաստակ ունենալու, ընտանիք կազմելու մտորումները հյուծում են զինվորի հոգեկան ներուժը, առաջ բերում անօգնականության զգացումներ:

Քննախույզ հայացքը կարող է նկատել, որ ***միջանձնային փոխհարաբերություններում*** առկա գրեթե բոլոր թերըմբռնումներն ունեն ծագումնաբանական նույն կամ գրեթե նույն մեխանիզմը: Հաճախ որևէ առիթից (ծառայությունից ուշացում, պարտքով դրամի փոխառում, հայհոյանք, դիրքում քնել և այլն) բռնկվում է վիճաբանություն: Եթե բարձր է ընդհանուր լարվածության աստիճանը, և զինծառայողները դարձել են դյուրագրգիռ, ապա նման վիճաբանություն կարող է սկսվել նույնիսկ առանց որոշակի առիթի կամ առիթները կարող են հորինվել արհեստականորեն: Առավել «ճարպիկ» զինվորները նման առիթներն օգտագործում են իրենց «ասը դնելու»՝ խմբում գերիշխանության հասնելու և առաջնակարգ կարգավիճակ ձեռք բերելու համար: Արդյունքում ծնվում է հակասություն ոչ ձևական լիդերների միջև: Նրանք հոգնեցուցիչ քննարկումներ են նախաձեռնում՝ փորձելով ինքնուրույն լուծել հակամարտությունը: Պետք է նկատել, որ գրեթե ոչ-ոք սահմանված կարգով վերադասին չի զեկուցում՝ համածառայակիցների շրջանում վատ համբավ չվաստակելու համար: Քանի որ «ընտրված» կամ ոչ ձևական առաջնորդները, որպես կանոն, հակամարտությունները հարթելու ունակություններ, փորձառություն և գիտելիքներ չունեն, ուստի կիրառում են «փողոցից» հայտնի մեթոդները՝ «ճիշտն ու սխալը», հայհոյանքը: Հոգեբանորեն թույլ պատրաստված կամ կանոնադրություններին վատ տիրապետող զինվորները հայտնվում են անելանելի վիճակում, և եթե ոչ-ոք նրանց օգնության ձեռք չի մեկնում, ապա միակ ելքը մնում է հոգեբանական նահանջը, փախուստն իրականությունից, տվյալ դեպքում՝ ծառայությունից հրաժարվելը: Պետք է նաև խոստովանել, որ պայմանագրային զինծառայողներով համալրված ստորաբաժանումներում կոլեկտիվ կարծիքներն ու տրամադրությունները, ինչպես նաև ավանդույթների մեծ մասը, որպես կանոն, ձևավորվում են «ներքևից-վերև», այլ ոչ թե «վերևից-ներքև» սկզբունքով: «Ճարպիկ» զինվորները փողոցից փոխառում կամ, որ ավելի վտանգավոր է, ինքնուրույն մշակում են իրենց չգրված օրենքները: Այդ օրենքների մեծ մասը նրանք ուղղակիորեն չեն հակադրում կանոնադրության

պահանջներին, այլ հարմարեցնում են դրանց: Օրինակ, ոչ ձևական կամ «կեղծ» հեղինակությունը կարող է իր «ճիշտը դնել»՝ դրա համար հիմնվելով կանոնադրական պահանջների վրա: Սա էլ հենց չգրված օրենքների կենսունակության պատճառներից մեկն է, քանի որ իրենց հերթին ձեռնտու են որոշ անպատասխանատու սպաների, ովքեր ի պաշտոնե պարտավոր են պայքարել նման երևույթների դեմ: Սպան, ինքն էլ չգիտակցելով նման իրավիճակի վտանգավորությունը, անխոհեմաբար գիջում, ուրիշին է ուղղորդում իր պաշտոնեական լիազորությունները՝ չգիտակցելով, որ մի «գեղեցիկ օր» վերջնականապես հեղինակազրկվելու է՝ կորցնելով անունն ու պատիվը: Պետք է նաև խոստովանել, որ վերադասի կողմից պայմանագրային զինծառայողներին ներկայացվող որոշ պահանջներ վերջիններիս կողմից ճիշտ չեն ընկալվում: Շատերին թվում է, թե սպայական կազմն է մեղավոր, որ իրենց սոցիալ- կենցաղային պահանջներն ամբողջովին բավարարված չեն (բնակարանային և զորանոցային պայմաններ, չհերիքող աշխատավարձ, հասարակական կարգավիճակի (ստատուսի) նվազում, գործունեության խիստ վերահսկողություն, առաջադրված խնդիրների բարդություն, հանգստի ոչ լիարժեք պայմաններ, իրավական անպաշտպանվածություն, երկարամյա ծառայության թոշակից զրկվելու վախ (ժամանակից շուտ ինձ կզորացրե՞ն, թե ոչ), ուստիև դիմում են հուսահատ քայլերի՝ զենկուցագիր ներկայացնելով զորացրվելու համար կամ պարզապես դասալքելով:

Նկարագրված իրավիճակը կարող է բարելավել սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ամուսնալուծված ծնողներ ունեցող ընտանիքներից, առողջական խնդիրներ ունեցող և այլ կարգավիճակով զինվորների անհատական առանձնահատկությունների նպատակային ուսումնասիրությունը, որն իրականացվում է զորամասերում, սակայն այս ուղղությամբ տարվող աշխատանքը չպետք է հանգեցվի զուտ հաշվառում իրականացնելուն: Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպես պետք է վարվել նրանց հետ հետագայում: Երբ զինծառայողը հրամանատարին պատմում է իր հոգսերի մասին, ապա հաստատ ակնկալում է, որ կլուծվեն իրեն մտահոգող խնդիրները, որը փաստորեն տեղի չի ունենում: Արդյունքում նվազում է հավատը հրամանատարի նկատմամբ: Հետաքրքիր է, որ նման իրավիճակը կարող է մեծացնել դժգոհությունը նաև սպայական կազմի մոտ, եթե նրանք իրենց ենթակաների խնդիրները լուծելու հնարավորություն չունենան: Հասկանալի է, որ եթե սպան բավարարված չէ իր ծառայությունից, ապա այդ զգացումները կփոխանցվեն ենթակա զինվորներին: Սպաները կարող են դժգոհ լինել նաև սոցիալական պայմաններից, հասարակության մեջ իրենց կարգավիճակի նվազումից, վերաբերմունքից, հաճախակի ստուգումներից, իրավապահների քաշքշուկներից: Այս տեսակետից կարևոր է օրենսդրական դաշտի հետևողական բարելավումը: Երիտասարդ սպաների նկատմամբ ուշադրության ավելացումը, որը կիրառվում է զորամասերում, ինքնին դրական երևույթ լինելով հանդերձ, կարող է որոշակիորեն ընկճել ավագ սերնդին դասվող սպաներին, ովքեր նույնպես ուշադրության և աջակցության կարիք

ունեն: Դժգոհությունն աճում է նաև այն դեպքում, երբ բարեխիղճ և անբարեխիղճ զինծառայողները միմյանցից քիչ են տարբերվում: Անբարեխիղճ զինծառայողները հաճախ մտովի ծաղրում են նրանց, ովքեր բարեխղճորեն կատարում են իրենց ծառայողական պարտականությունները: Երբեմն դրա համար առիթ են հանդիսանում այն հրամանատարները, ովքեր ունակ, բարեխիղճ զինծառայողներին ծանրաբեռնում են լրացուցիչ, այսպես կոչվող «հասարակական» առաջադրանքներով, մտածելով, թե անընդունակները չեն կատարելու: Ստացվում է այնպես, ինչպես ժողովրդական ասացվածքում. «Քաշող եզանն են խփում»:

Իրավիճակը կարող է բարդացնել նաև թույլ իրականացվող գաղափարադաստիարակչական աշխատանքը, եթե քիչ է տարբերվելու քարոզչական աշխատանքից: Հայտնի է, որ զորամասերում իրականացվող քարոզչական աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է հայրենիքի զինյալ պաշտպանի դաստիարակմանը, որն, իհարկե, ճիշտ է, սակայն, դրա հետ մեկտեղ, մերկապարանոց քարոզը, թե իբր «յուրաքանչյուր զինծառայող պարտավոր է մոռանալ իր անձը, իր ընտանիքն ու անձնվիրաբար ծառայել հայրենիքին», կարող է նվազեցնել գաղափարապես ոչ հասուն որոշ զինծառայողների ակտիվության խթանիչները: Չպետք է մոռանալ, որ հայ երիտասարդը ցանկացած իրավիճակում ծանր է տանում իր անձի կարևորության նսեմացումը, «ես»-ի և անհատականության կորուստը:

Պայմանագրային զինծառայողների մեծ մասն ընդգրկված է ***մարտական հերթապահության*** մեջ և ամեն օր առերես շփվում է հակառակորդի հետ: Նրանք պետք է հաշվի նստեն այն հանգամանքի հետ, թե հոգեբանական ու քարոզչական պայքարի արդիական ինչպիսի տեխնոլոգիաներ կարող է ունենալ խրամատից այն կողմ գտնվող հակառակորդը: Օրինակ՝ մեր զինվորն ինչպե՞ս է պատկերացնում հակառակորդի հետագա վարքը այն դեպքում, երբ նա խնդիր է դրել ժամանակային որոշակի կտրվածքում որոշակի կորուստներ հասցնել մեր զորքին, սակայն դիպուկահարների զանգվածային կրակն արդյունք չի տվել, իսկ դիվերսիոն-հետախուզական սադրանքները չեն հաջողվել: Պարզ է, որ հակառակորդը կմշակի և կիրականացնի այնպիսի գործողություններ, որոնք մասնագետներն անվանում են «տեղեկատվական-հոգեբանական»: Օրինակ, տողերիս հեղինակը հիանալի հիշում է, թե ադրբեջանական պաշտոնական լրատվամիջոցները (ոմն Լեյլա Յունուսովա) 1992թ. մայիսի 9-ից՝ Շուշիի ազատագրումից մեկ շաբաթ անց, երբ ազատագրվել էր նաև Լաչինի միջանցքը, ինչպես էին փորձում իրենց հանրության ուշադրությունը շեղել կատարված ակնհայտ փաստից՝ տենդագին հաղորդումներ տարածելով իբր «Շուշիում ընթացող փողոցային մարտերի մասին, որոնց ադրբեջանական «խիզախ զորքերը» («доблестные войска Азербайджана») քաջաբար պայքարում են Շուշիի յուրաքանչյուր տան ու փողոցի համար»:

Հոգեբանական պայքարի ժամանակակից միջոցները կարող են զինծառայողների մոտ առաջ բերել հուզական խանգարումներ,

հոգնածություն, գլխացավեր, ցավ (2, էջ 79): Դիրքային պատերազմը հիանալի հնարավորություն է այդպիսի հոգեբանական գործողությունների համար, որովհետև խրամատի հակառակ կողմում գտնվող զինծառայողներին միշտ բնորոշ են լինում լարված սպասողական վիճակները, այսպես կոչվող՝ «սպասողական նևրոզները» (9,էջ 41): Դիրքայիններն ակամա մոբիլիզացնում են իրենց հոգեկան հնարավորությունները՝ պատրաստվելու համար հակառակորդի անսպասելի գործողություններին: Ստեղծվում է հյուծիչ սպասողական վիճակ, որը կարող ձգձգվել օրեր: Նման դիսթրեսային հոգեվիճակը անտեսանելի որդի նման կարող է քայքայել չնախապատրաստված զինվորի հոգեկան կառույցը՝ նրան հասցնելով ծանր հոգեկան խեղումներ: Հավանաբար, պայմանագրային զինծառայողների վաղաժամկետ զորացրման պատճառներից մեկն էլ այն է, որ նրանք ստիպված են լինում լուրջ հոգեբանական պայքար մղել սեփական ապրումների ու ներքին հոգեկան խռովքի դեմ:

Հրամանատարների մեծ մասը հասկանում է, որ հարկավոր է ինչ-որ կոնկրետ քայլեր ձեռնարկել իրավիճակը բարելավելու համար, սակայն երբեմն մոռանում է, որ եթե զինվորները չցանկանան, ապա բոլոր ջանքերը մնալու են չիրականացված: Չի կարելի մոռանալ, որ սպաների ու զինվորների մեջ հաստատ կան այնպիսիք, ովքեր լիարժեք պատրաստ չեն Հայրենիքի անկախության ու նրա վտանգված սահմանների համար վտանգի ենթարկելու իրենց առողջությունն ու կյանքը: Ինչպե՞ս հայտնաբերել նրանց, կամ, եթե հայտնաբերվել են, ինչպե՞ս վարվել նրանց հետ: Հասկանալի է, որ եթե խնդիրն իրական է, ուրեմն լուծումն էլ ռացիոնալ պետք է լինի: Այստեղ չեն կարող օգնել ոչ հորդորները, ոչ սպառնալիքները, ոչ էլ պարբերական պատիժները, որովհետև ինչքան տույժերը խստացնենք ու պատժենք նրանց, ովքեր օգնության կարիք ունեն, ինչքան պնդողակները ձգենք, այնքան ակամա կարող ենք հող ստեղծել նոր, ավելի բարդ խնդիրների համար: Որո՞նք են թվարկված խնդիրների լուծումները.

1. Տարբերակներից մեկը պայմանագրային զինծառայողների մարտավարամասնագիտական պատրաստման գործընթացը ***հետաքրքիր, գործնական ու օգտակար*** դարձնելն է՝ մարտական գործողությունների առանձնակի դրվագների մոդելավորման ճանապարհով (4, էջ 42): Հարկավոր է մշակել մարտական ամենատարբեր իրավիճակների բազմազան տարբերակներ, անձնակազմը հրահանգավորել ոչ ստանդարտ իրավիճակներում հանկարծակի ծագած վտանգները չեզոքացնելու համար և դա կրկնել այնքան անգամ, մինչև կհասնեն ավտոմատ գործողությունների: Նման պարապմունքներ կարելի է անցկացնել մարտական հերթապահության նախապատրաստման ավանդներում, որտեղ անհրաժեշտ է արդյունավետ օգտագործել անձնակազմի բարոյահոգեբանական ապահովման ուսումնական կետերը:

2. Հարկավոր է մշակել և ողջ անձնակազմին ուսուցանել ***միջանձնային կոնֆլիկտները*** լուծելու հայտնի մեթոդները: Սպայական կազմին հատուկ

հրահանգավորել, որ եթե խուսափեն սուր, բարդ հարցերը լուծելուց, ապա այդպիսով զինվորներին կթողնեն միայնակ: Սպան պետք է իմանա, որ զինծառայողների շրջանում ինքնահաստատման համար մղվող պայքարը կարող է տվյալ պահին ուղեկցվել հայհոյախոսությամբ, երբեմն նաև ֆիզիկական բռնություններով, իսկ այնուհետև տեղ տալով հետաձգված կոնֆլիկտային իրավիճակների (1, էջ 50): Կոնֆլիկտը լուծելու երկու ուղի կա. 1. դրանք լուծել արագ և թույլ չտալ, որ զարգանան (խորանան) զինվորական միջավայրում, 2. ներգրավել երրորդ կողմին, կոնկրետ դեպքում՝ զեկուցել վերադասին (3, էջ 237): Այս ուղղությամբ սպայական կազմը դեռևս շատ անելիքներ ունի:

3. Անհրաժեշտ է հստակեցնել սոցիալական, ֆիզիկական, հոգեբանական և այլ առանձնահատկություններ ունեցող զինծառայողների հետ վարվելու կանոնները՝ ստորաբաժանումներում ձևավորելով այնպիսի նպաստավոր միջավայր, որում առանձնահատկություններ ունեցող զինվորները մշտապես կզգան հրամանատարական կազմի և համածառայակիցների հանդուրժողական, բարեհաճ ու ներողամիտ վերաբերմունքն իրենց խնդիրների նկատմամբ:

4. Հարկավոր է ***կարևորել սպա-հոգեբանների դերն ու նշանակությունը*** մարտի (մարտական հերթապահության) նախապատրաստման, վարման (կրման) և ավարտման փուլերում (ավելի մանրամասն տես 8, էջ 269): Նրանց հարկավոր է կոնկրետ խնդիրներ առաջադրել՝ հակառակորդի տեղեկատվական և հոգեբանական ազդեցությունից մեր զորքերի պաշտպանությանն ուղղված գործնական քայլեր իրականացնելու համար: Մոբիլիզացնել բոլոր ուժերը՝ կանխատեսելու, վերլուծելու և չեզոքացնելու համար հակառակորդի՝ հոգեբանական և տեղեկատվական պատերազմին բնորոշ այն գործողությունները, որոնք նկարագրված են տեսաբանների կողմից (ավելի մանրամասն տես՝ 10, էջ 511-519):

5. Պայմանագրային զինծառայողների ***հանրային կարգավիճակի բարձրացմանը*** կնպաստի պետական հոգածության ավելացումը և հանրային վերաբերմունքի բարելավումը: Յուրաքանչյուր զինծառայող պետք է հոգով ու զգացմունքով հավատա ու զգա, որ վերադաս հրամանատարությունն ու պետությունը իր հետ են, իր թիկունքում կանգնած, անհրաժեշտության դեպքում կօգնեն ու դուրս կբերեն դժվար իրավիճակից: Պետք է հմտորեն օգտագործել խրախուսանքի ու պատժի ճիշտ հարաբերակցությունը: Բարեխիղճ զինվորներին ակտիվացնելու համար կարելի է յուրաքանչյուր ամիս զեկուցագրեր ընդունել ստորաբաժանումների հրամանատարներից և բազմաբնույթ խրախուսումներ նախատեսել զինվորների համար: Ոչինչ այնպես չի ակտիվացնում մարդուն, որքան նրա ծառայության արդարացի գնահատականը:

6. Անհրաժեշտ է թիրախային փոփոխություն կատարել ***քարոզչական աշխատանքի*** ոճի և ուղղվածության մեջ՝ հայ զինվորին ներշնչելով, որ նրա անձը կարևոր է և նա պարտավոր է մշտապես հոգ տանել իր առողջության,

անվտանգության ու կյանքի համար: Հարկավոր է նրան բացատրել, որ պետությունը բոլոր միջոցառումներն իրականացնում է, որպեսզի հայ զինվորը լինի առողջ ու անվտանգ: Մարտական դիրքում (մարտի ժամանակ) հայ զինվորը պարտավոր է ամեն ինչ անել իր անվտանգությունն ապահովելու և իր կյանքը փրկելու համար, քանի որ նա հայրենիքին կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, եթե կենդանի է մնալու: Զինվորական կարգապահության անհրաժեշտությունը կարելի է հիմնավորել այսպես. «Զինվո՛ր, կարգապահությունն ամենից առաջ քեզ է հարկավոր՝ վտանգից խուսափելու համար»: Այսպիսով, ապահոված կլինենք հայ զինվորի ինքնահաստատվելու, ինքնադրսևորվելու, իր անձը կարևորելու հնարավորությունը, չենք վնասի նրա անհատականությունը և նրան կմղենք անձնուրաց ծառայության: Զորացրվող զինվորների հետ հարկավոր է զգույշ լինել, նրանց վերաբերվել այնպես, ինչպես հավասարը՝ հավասարին: Կարելի է նրանց նկատմամբ որոշակի մեծահոգություն և ներողամտություն ցուցաբերել, նրանց միայնակ չթողնել իրենց հոգսերի հետ:

7. Հաջորդ ուղղությունը անձնակազմի հետ տարվող աշխատանքում պարտականության, պատասխանատվության, պարտքի ու նմանատիպ (անձի ակտիվությունը նվազեցնող) գործոնների քարոզումից անցումն է դեպի ***անձի ակտիվությունը խթանող*** իրավունքների, ազատությունների, արտոնությունների մանրակրկիտ պարզաբանում (6, էջ 64): Չի կարելի մարդուն զրկել նրան ակտիվության մղող դրդապատճառներից: Դժվարության մեջ հայտնված մարդու համար անհեռանկարայնությունը կարող է կործանարար լինել: Սոցիալ-իրավական պաշտպանվածությունը, անվտանգության ու ապահովվածության զգացումները, խմբում հոգեբանական նպաստավոր միջավայրը զինվորների կողմից զինծառայության պայմաններին արդյունավետ հարմարվելու կարևորագույն նախադրյալներից են:

8. Անհրաժեշտ է հասնել նրան, որ յուրաքանչյուր զինծառայող ոչ թե պարտադրաբար, այլ ներքին մղում ունենա ինքնամաքրվելու, ինքնադաստիարակվելու, ինքնակրթվելու: Դրան կարելի է հասնել առաջարկվող մեխանիզմի կիրառմամբ, որի իմաստը հետևյալն է. յուրաքանչյուր հրամանատար պարտադիր գնահատական է տալիս և իր լիազորությունների շրջանակներում խրախուսում լավագույն զինծառայողներին: Ստեղծվում է հոգեբանական այնպիսի միջավայր, որում ***արժեհամակարգային կողմնորոշիչները հստակեցված են*** և անհատն իր անձնական հատկանիշները բարելավելու ներքին պահանջմունք ունի: Աշխարհի զարգացած բանակներում ոչ ոք ենթականերին ցուցադրաբար չի «դաստիարակում»: Այնտեղ զինվորներին ակտիվացնում են՝ մշակելով որոշակի չափորոշիչներ, որոնց նա պետք է բավարարի, եթե ցանկանում է ծառայողական աճ ունենալ կամ լրացուցիչ գումար վաստակել: Պայմանագրային սերժանտի համար գոյություն ունեն ավելի բարձր պահանջներ: Սերժանտը պետք է պտտաձողի վրա ձգվի ավելի, քան զինվորը:

Նույն կերպ գնահատվում է ստորաբաժանման կարգապահության վիճակը: Եթե զինվորը ցանկանում է ավելի շատ վաստակել, թող աչքի ընկնի մարտական պատրաստության մեջ և մարտական հերթապահությունում, և հակառակը՝ եթե լրացուցիչ վաստակի կարիք չունի, թող հերթապահությունից ազատ օրերին տուն գնա:

Նման ճկուն համակարգ ստեղծելով կարելի է խրախուսել զինվորների լավագույն ծառայողական դրսևորումները և հասնել նրան, որպեսզի պայմանագրային զինվորները ոչ միայն ցանկանան երկար ծառայել բանակում, այլև կարողանան այդ անել:

Некоторые психологические аспекты и пути предупреждения досрочных увольнений в запас военнослужащих рядового состава, несущих службу по контракту

В.Ярамишян

Резюме

Досрочное увольнение в запас военнослужащих рядового состава, несущих службу по контракту, является сложно решаемой проблемой для любой современной армии. Суть проблемы в том, что для подготовки военнослужащих по контракту государством и армией расходуются немалые средства, а преждевременное увольнение военнослужащих-контрактников по их инициативе сводит на нет эти усилия. В данной статье сделана попытка системного анализа психологических аспектов тех причин, которые служат основой для преждевременного отказа от службы. Автором разработаны и предложены некоторые пути разрешения данной проблемы. Обсуждаемые проблемы относятся к одной из трех групп перечисленных причин. Это проблемы, связанные с личностью военнослужащего, с условиями несения службы и со сферой межличностных отношений. Подчеркивается важность мобилизации усилий и согласования целенаправленных действий, предпринимаемых всеми структурами, в том числе, командирами, штабами, офицерами-психологами по улучшению условий несения службы.

Some Psychological Aspects and Ways of the Prevention of Early Transfers to the reserve of the Military Personnel of the Ordinary Structure Serving under the Contract

V.Yaramishyan

Summary

The early transfer to the reserve of the military personnel of ordinary structure, serving under the contract, is difficult solved problem for any modern army.

The problem essence is that for preparation of contract servicemen by the state and army considerable funds are spent, and the premature dismissal of the military personnel-contract employees, on their initiative nullifies these efforts.

In this article it is made attempt of the system analysis of psychological aspects of those reasons, which form a basis for premature refusal of service.

The author developed and offered some ways of permission of this problem. Discussed problems belong to one of three groups of the listed reasons.

These are the problems connected with the identity of the serviceman, with conditions of service and with the sphere of the interpersonal relations.

Importance of mobilization of efforts and coordination of the purposeful actions undertaken by all structures, including commanders, staffs and officers-psychologists on improvement of conditions of service is emphasized.

Գրականություն

1. *Զ.Ասատրյան,* Նախազորակոչային տարիքի անձանց հանցավորության որոշ հոգեբանական առումներ. «Հայկական բանակ» հանդես., 1 (47)., 2006թ.,
2. *Ս.Խուդոյան,* Հոգեբանական զենքը ժամանակակից աշխարհում. «Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութերը. Երևան. «Ասողիկ» հրատ., 2013թ., 275 էջ,
3. Կոնֆլիկտաբանություն, գենդեր և խաղաբարություն, Միավորված ազգերի կանանց զարգացման հիմնադրամ, Երևան, 2003թ., 320 էջ,
4. *Վ.Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանություն. Երևան. ՀՀ ՊՆ ԱՌՀԻ., 2009թ.-436 էջ,
5. *Մ.Մկրտումյան,* Նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները. «Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութերը. Երևան. «Ասողիկ» հրատ., 2013թ., 275 էջ,
6. *Վ.Բ. Յարամիշյան,* Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ԵՊՄՀ գրադարան, 2009թ., 156 էջ
7. Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու (Լ.Հ.Հարությունյանի խմբագրությամբ), Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005թ., 232 էջ,
8. *А.Г. Караяни, И.В. Сыромятников,* Прикладная военная психология-СПб: Питер, 2006, 480с.
9. *Н.И. Конюхов,* Прикладные аспекты современной психологии, термины, законы, концепции, методы, Москва, 1992г.
10. *Р.С.Немов,* Психология. Учебник. Высшее образование, Москва, 2005г.,

Բովանդակություն

Գ.Սահակյան
Չորրորդ կարգի մի գծային համասեռ համակարգի օսցիլյացիայի և ոչօսցիլյացիայի մի հայտանիշի մասին…… 3
Ռ. Մուսայելյան
Ասիմպտոտական կոորդինատներով մի մետրիկայի չընկղմելիությունը E^3 …….. 7
Տ. Հարությունյան
Ըստ Շտուրմ-Լիուվիլի խնդրի սեփական ֆունկցիաների վերլուծության ուգամիտության մասին…… 10
Ս. Ավետիսյան, Ա.Քոչարյան
Չորս երկարությամբ ցիկլերի մասին ռեգուլյար բլոկ-հիերարխիկ ցանցերում …… 23
Ռ.Առաքելյան
Թեորեմներ կանոնավոր բազմանկյան դիրքի վերաբերյալ…… 34
Վ.Առստամյան, Ռ.Ավետիսյան
Ուսուցման նոր եղանակների զարգացումը տեղեկատվական տեխնոլոգիաների բազայի վրա….. 41
Լ. Վարդանյան, Ս. Հայրապետյան, Ռ. Վարդանյան, Ա. Ավետիսյան
Արցախում աճող ուրց սողացողի (Thymus serpyllum L.) եթերայուղի հակաօքսիդանտային հատկության հետազոտումը…… 48
Ս. Աղասյան
Սովորական աղոթարարը (Mantis religiosa) ԼՂՀ էտոմոֆաունայում…… 56
Գ.Մարգարյան
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաջին անգամ հայտնաբերված ժանգասնկերի համառոտ նկարագիր..... 64
Ա. Հակոբյան
ԼՂՀ-ում տարածված որոշ դեղաբույսերի ֆենոլոգիական դիտումները և առատության աստիճանի որոշումը ……. 74
Ա.Թորոսյան
Անպտղությունը, դրա պատճառները և տարածվածությունը ԼՂՀ-ում…….. 83
Լ. Ղուկասյան, Գ. Մարգարյան
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հայտնի բնության հուշարձանների դասակարգումը 88
Հ.Կարապետյան
ՀՀ տարածքի ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարությունների ագրոէկոլոգիական գնահատականը 98
Վ. Բալայան
Հայության ազգային համախմբման գործընթացը 20-րդ դարի սկզբին..... 103
Ա. Հակոբյան
Շահ Աբբասի արշավանքները Արևելյան Վրաստան և իրանական գերիշխանության հաստատումը XIIV դարի սկզբում..... 110
Կ.Տովբին
Պոստմոդեռն կրոնականությունը ավանդական դպրոցի տեսանկյունից…….. 118
Ն. Իշխանյան
Ներտարածաշրջանային համագործակցությունը՝ Հարավային Կովկասում կայունության ապահովման համատեքստում…… 133
Շ. Հակոբյան
Զրային պետական կադաստրը որպես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության թվային տարածքային կադաստրի բաղկացուցիչ մաս..... 142

Ի.Պետրոսյան
ԼՂՀ զարգացման ռազմավարության որոշ հայեցակարգային մոտեցումները արտաքին տնտեսական տարածքի կոորդինատներում..... 149
Ա. Առստամյան
Կապիտալի զարգացող շուկաների վրա երկրի ռիսկի գնահատման գծային մոդելը..... 160
Ն.Խաչատրյան
Երգիծական համեմատությունը Վազգեն Օվյանի «Լեռնակերտ» երկում..... 167
Լ. Հովհաննիսյան
Արժանի ներդրում հայ բառարանագրության պատմության մեջ..... 173
Մ. Խանյան
Հ. Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը..... 175
Զ. Բալայան
Մուրացանի «Ռուզան» դրամայի քննամիտումները և նրա վերարժեվորման հարցը..... 193
Ն. Հովհաննիսյան
Կորուսյալ հայրենիքի բազմաձայնությունը Պ.Սևակի պոեզիայում. «Անառելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ»..... 209
Գ. Լալայան
Վարդան Հակոբյանի սիրերգությունը..... 220
Մ. Բաղդասարյան
Վահրամ Փափազյանի գեղագիտական հայացքները..... 225
Մ.Ստեփանյան
Անհատի ողբերգության թեման Յ. Վ. Գյոթեի ստեղծագործությունների համապատկերում.... 233
Ն. Ռ. Դավթյան
Կորստի մորմոք, նահանջ, ներգաղթելու հույս եզրույթը Պետրոս Հաճյանի «Հրամմեցեք, պարոններ» պատմվածաշարում..... 242
Ա.Բաղդասարյան
Ազատասեր արցախցու կամքի ուժի և վճռականության արտացոլումը Մ.Հովհաննիսյանի արձակում..... 252
Ա.Հակոբյան
Զինվորական լրագրությունն ու զինվորական լրագրողները ժամանակակից աշխարհում (տեղեկատվական և վերլուծական նյութերի հավաքագրման և պատրաստման յուրահատկությունները պատերազմական գոտում)..... 263
Գ. Մարդյան
Լրատվամիջոցների արտադատական և դատական պաշտպանությունը ԼՂՀ-ում..... 274
Ռ. Առաջանյան
Երգիծական հայ պարբերականները և դաստիարակության հիմնահարցերը..... 280
Գ.Հայրապետյան
Հուզական ինտելեկտի զարգացումը կրտսեր դպրոցականների դասագրքերում..... 285
Լ. Ղարախանյան
Կրոնական պատկերացումները որպես էթնիկական կարծրատիպերի ձևավորման աղբյուր և դրանց էթնոպաշտպան գործառույթ 291
Վ.Յարամիշյան
Շարքային կազմի պայմանագրային զինծառայողների վաղաժամկետ զորացրման որոշ հոգեբանական առումները և կանխարգելման ուղիները..... 297

Содержание

Г.Саакян
Об одном критерии осцилляции и неосцилляции одной линейной однородной системы четвертого порядка…… 3
Р.Мусаелян
Непогружаемость в E^3 одной метрики, заданной в асимптотических координатах…… 7
Т. Арутюнян,
О сходимости разложений по собственным функциям задачи Штурма-Лиувилля..…… 10
С. Аветисян, А. Кочарян
О циклах длины четыре в регулярных блочно-иерархических сетях…….…….…….. 23
Р.Аракелян
Теоремы о расположении правильного многоугольника……. 34
В. Арустамян, Р. Аветисян
Развитие новых методов обучения на базе информационных технологий…….. 41
Л. Варданян, С. Айрапетян, Р. Варданян, А. Аветисян
Исследование антиоксидантного свойства эфирного масла тимьяна ползучего (Thymus serpyllum L.), произрастающего на территории Арцаха……..……... 48
С. Агасян
Богомол обыкновенный (Mantis religiosa) в энтомофауне НКР..... 56
Г.Маргарян
Краткое описание ржавчинных грибов, впервые обнаруженных на территории НКР…… 64
А.Акопян
Фенологические наблюдения и определение степени обилия некоторых лекарственных растений, распространенных в НКР……. 74
А.Торосян
Бесплодие, причины и распространенность в НКР…… 83
Л.Гукасян, Г.Маркарян
Классификация известных природных памятников на территории НКР..... 88
Э.Карапетян
Агроэкологическая оценка поздневесенних и раннеосенних заморозков на территории РА.... 98
В. Балаян
Процесс национальной консолидации армян в начале 20 века..... 103
А.Акопян
Вторжение Шаха Аббаса в Восточную Грузию и утверждение иранской власти в начале XIIVв…… 110
К. Товбин
Постмодернистская религиозность:взгляд традиционалистской школы……. 118
Н. Ишханян
Внутрирегиональное сотрудничество в контексте обеспечения стабильности на Южном Кавказе……. 133
Ш. Акопян
Государственный водный кадастр как составляющая часть цифрового территориального кадастра Нагорно–Карабахской Республики…… 142

И. Петросян
Стратегия развития НКР на современном этапе в координатах внешнеэкономического пространства…… 149
А. Арустамян
Линейная модель оценки странового риска на развивающихся рынках капитала…… 160
Н.Г.Хачатрян
Сатирические сравнения в произведении В.Овяна “Лернакерт”…….. 167
Л. Аванесян
Ценный вклад в армянскую лексикографию..... 173
С.Ханян
Ованес Туманян и народное творчество…….. 175
З. Балаян
Критические мысли драмы Мурацана «Рузан» и вопрос ее переоценивания……... 193
Н. Аванесян
Многозвучие утраченной родины в поэзии П.Севака. «Несмолкающая колокольня» и «Трехголосная литургия»…….. 209
Г.Лалаян
Любовная лирика Вардана Акопяна…….. 220
С. Багдасарян
Эстетические взгляды Ваграма Папазяна…….. 225
С.Степанян
Тема личной трагедии в произведениях И.В.Гете…… 233
Н.Давтян
Термин горечь потери, отступления, надежды на иммиграцию в сборнике Петра Ачяна “Пожалуйте, господа”……. 242
А.Багдасарян
Отражение силы воли и решимости свободолюбивого арцахца в прозе М.Ованнисяна…… 252
А.Акопян
Военная журналистика и военные журналисты в современном мире (особенности сбора иподготовки информационных и аналитических материалов в зоне военных действий)..... 263
Г. Мардиян
Внесудебная и судебная защита СМИ в НКР..... 274
Р.Агаджанян
Армянские сатиристические периодики и проблемы воспитания..... 280
Г. Айрапетян
Развитие эмоционального интеллекта в учебниках младших классов…… 285
Л. Караханян
Религиозные представления как источник развития этнических стереотипов и их этно-защитные функции..... 291
В.Ярамишян
Некоторые психологические аспекты и пути предупреждения досрочных увольнений в запас военнослужащих рядового состава, несущих службу по контракту……. 297

MAINTENANCE

G. Sahakyan
The Oscillation and Nonoscillation Criteria for one Fourth Order Linear Homogeneous System..... 3
R. Musaelyan
The non-dipping in E^3 of one metric with asymtotic co-ordinates 7
T. Harutyunyan,
On the convergence of expansions in eigenfunctions of the Sturm-Liouville problem..... 10
S.Avetisyan, A.Kocharyan
On Cycles of Length Four in Regular Block-Hierarchical Networks..... 23
R.Arakelyan
Theorems of an Arrangement of the Regular Polygon 34
V. Arstamyan, R. Avetisyan
The Development of Information Technology on the Basis of New Teaching Methods..... 41
L. Vardanyan, S.Hayrapetyan, R. Vardanyan, A. Avetisyan
The Antioxidating Actions of Etherous Oil of the Thymus Serpyllum L..... 48
S. Agasyan
The Mantis Ordinary (Mantis religiosa) in Entomofauna of NKR..... 56
G.Margaryan
The Short Survey of the Rust Fungi Revealed in the NKR for the First Time..... 64
A.Hakobyan
Phenological observations and identifying the abundance of some medicinal plants common in NKR..... 74
A.Torosyan.
Infertility: its Causes and Incidence in NKR..... 83
L.Ghukasyan, G.Margaryan
The Classification of Natural Monuments in the NKR..... 88
H.Karapetyan
Agroecological Assessment of the Late Spring and Early Autumn Frosts in the territory of RA..... 98
V.Balayan
The Process of National Consolidation of Armenians at the beginning of the 20th century..... 103
A.Hakobyan
The Invasion of Shah Abbas to East Georgia and Confirmation of the Iranian Power at the Beginning of the XIIVcentury..... 110
K.Tovbin
Post-modern Religiousness from the Point of Traditional School..... 118
N.Ishkhanyan
Interregional Cooperation in the Context of Ensuring Stability in the South Caucasus..... 133
Sh.Hakobyan
Water State Cadastre as a Digital Territorial Component Part of NKR..... 142
I.Pertosyan
Some Conceptual Approaches to the development Strategy of NKR in the Coordinating of Foreign Economic Space..... 149

A.Arustamyan
The Linear Model of Country Risk Assessment on Capital's Developing Markets…… 160
N.G. Khachatryan
Satirical Comparison in V.Ovyan's «Lernakert» novel……. 167
L. Avanesyan
Valuable contribution to the Armenian lexicography…….. 173
S.Khanyan
Hovannes Toumanyan and Folk Art..... 175
Z. Balayan
Critical Thinking of Muratsan's Drama «Ruzan» and the Question of its Overvaluation……. 193
N. Avanesyan
Polysounds of the Lost Homeland in P. Sevak's Poetry. «Incessant bell tower», «Liturgy for Three»……... 209
G. Lalayan
Vardan Hakobyan's Love Lyrics……. 220
S.Bagdasarian
Aesthetic views of Vahram Papazian……... 225
S. Stepanyan
The Personal Tragedy in Works of Goethe…… 233
N.Davtyan
The Term Bitterness of Loss, Withdrawal, Hopes for immigration to the Collection of Peter Achyan «Come Gentlemen»……. 242
A.Baghdasaryan
Reflection of willpower and Determination of Freedom-loving People of Artsakh in the prose of M.Hovhannisyan…….. 252
A.Akopyan
Military Journalism and War Reporters in the Modern World (feature of collecting and preparating of information and analytical materials in a zone of military operations)…… 263
G. Mardiyan
Extrajudicial and Judicial Protection of the Mass Media in NKR…… 274
R.Aghajanyan
Armenian Humorous Periodicals and the Problems of Bringing-up…… 280
G. Hayrapetyan
The Development of the Emotional Intellect in the Textbook for Junior Pupils……. 285
L. Gharakhanyan
The Religious Conceptions as a Source of Development of Ethnic Stereotypes and their Ethnoprotective Function..... 291
V.Yaramishyan
Some Psychological Aspects and Ways of the Prevention of Early Transfers to the reserve of the Military Personnel of the Ordinary Structure Serving under the Contract …….. 297

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Գիտական տեղեկագիր
Ученые записки
Proceedings
2(28)
2013

Ստեփանակերտ
Степанакерт
Stepanakert

Հանձնված է տպագրության՝ 01.07.2013թ.:
Ստորագրված է տպագրության՝ 28. 10. 2013թ.
Ծավալը 39.25 տպ. մամուլ: Տպաքանակ 150:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5 հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86, e-mail printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական Հրապարակումներ – Գիտարակ տեղեկագիր.

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5, тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ: тел. (097) 34-01-86, e-mail printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house: tel. (097) 34-01-86, e-mail printery.asu@mail.ru,
website: www.asu.am – Scientific publications – Proceedings.